



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.


We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search


Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>











ԳԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԱԴՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Խ Ր Ի Մ Ո Ւ Հ Ա Յ Ո Ց

1918
1919
1920
1921
1922
1923
1924
1925
1926
1927
1928
1929
1930
1931
1932
1933
1934
1935
1936
1937
1938
1939
1940
1941
1942
1943
1944
1945
1946
1947
1948
1949
1950
1951
1952
1953
1954
1955
1956
1957
1958
1959
1960
1961
1962
1963
1964
1965
1966
1967
1968
1969
1970
1971
1972
1973
1974
1975
1976
1977
1978
1979
1980
1981
1982
1983
1984
1985
1986
1987
1988
1989
1990
1991
1992
1993
1994
1995
1996
1997
1998
1999
2000
2001
2002
2003
2004
2005
2006
2007
2008
2009
2010
2011
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022
2023
2024
2025
2026
2027
2028
2029
2030
2031
2032
2033
2034
2035
2036
2037
2038
2039
2040
2041
2042
2043
2044
2045
2046
2047
2048
2049
2050
2051
2052
2053
2054
2055
2056
2057
2058
2059
2060
2061
2062
2063
2064
2065
2066
2067
2068
2069
2070
2071
2072
2073
2074
2075
2076
2077
2078
2079
2080
2081
2082
2083
2084
2085
2086
2087
2088
2089
2090
2091
2092
2093
2094
2095
2096
2097
2098
2099
2100

Kushnerean, Ker 160

Patmutiwn yaghtala - 763

... 100 Can. Kheim...

Հ. Բ. Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ


Խ Ր Ի Մ Ո Ւ Հ Ա Յ Ո Ց

Ա. ՃԱՆԱՊԱՐԿՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆ

Բ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԷՌՈՒՍԻՈՑ

234 p.

Գ. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի ԿԱՄԵՆԻՑ



ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

1895

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

655
FREN
655
BUBR

Փոքրիկ հասարիս մէջ անհոփելով կը հրատարակենք, ինչպէս խոստացեր էինք, մեր հանգոցեալ ֆուշներեան Հ. Քերովթ վարդապետին քանի մը մանր, ու ազգային նոր պատմութեան տեսակիտով հետաքննական երկասիրութիւններն, որ արդէն տպագրուած են ի Բազմապէս հանդիսարանի:

Կը սիրենք յուսայ թէ սգալի մահուամբ տարածամ մեզմէ յափշտակուած Հանգոցեչոյն շիրմին վրայ, իր գրչովն ու սրտիւ հիշուած ու մեզմէ դրուած այս պատկն՝ պիտի հաճոցանայ իր մերձաւոր սիրելեաց և բազմաթիւ բարեկամաց և ծանօթից, որոնք մեծարողք իր աստուածանուէր եռանդեան և հանձարոյն. մեզի հետ սզացին անոր մահը, և անով փշրուած ամեն իրաւացի յոյսերը:

Հրժեշտ
ՀԻՆՄ
655
1.11.99

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ԹԵՂԵՆՍԻՍԻՈՑ ԴԵՊ Ի ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ

28 Ապրիլի — 26 Մայիսի 1884 :

«Յայնժամ (ԴՊ դարուն) զօրացաք մեք (Հայք)
» և բազմացաք, և շինեցաք զգիւղս և զգաւառս .
» Իշխանք և ազնուականք, Ի Ղարապաղարին !
» սկսեալ մինչև 'ի Սուրխաթ և 'ի Ֆէօզուխ,
» 'ի Լբրին և 'ի դաշտս լի արարին վանօթիւց և
» եկեղեցեաց . . . շինեցաք տունք հարիւր հազար և
» զեկեղեցիս հազար . և 'ի սնն անականաց տա-
» րըսպեցին 'ի քաղաքն Ֆէօզուխ » :

ՀԻՆ ՂՐԻՄԵՑԻ ՅԱՅՍՄԱԽՈՐԴ

Ա

Ի ԲՐԵՒ ԵՍՈՒԱԶԱԲԱՆ ՈՒԹԻՒՆ .

Բազմաթիւ ազգային գրաւոր յիշատակարաններէ և վաւերական քարուկիր աղիւսակերտ շէնքերէ, որոց ոմանք դեռ ևս կանգունք՝ այլք կիսակործան, գիտեմք որ ԴՊ դարուն, նոյն և 'ի մօտաւոր անցելում՝ Հայոց մի մեծ գաղթականութիւն բնակած է Տաւրիոյ Թերակղզւոյն մէջ, Եթէ ճանապարհորդ

1. Յիշատակարանի մէջ յիշուած անունները, այժմ ոմանք սակաւ մի այլայլած, ոմանք բոլորովին տարբեր կը հնչին . Ղարապաղարն՝ այժմեան Խարասուն է, Սուրխաթն՝ Էսկե-Ղրիմ . Ֆէօզուխայն՝ Թեօզուխ կամ Քեֆէ քաղաքն :

մի՛ վերը յիշած յիշատակարանին ցուցած ճամբովը՝ այժմեան Թէոդոսիոյ արևելեան ծայրէն (արգելա-նոցին կողմէն) սկսելով՝ սարերուն վրայէն անցնի երթայ՝ ՚ի Սուրխաթ (Հին-Ղրիմ), և անտի անտառաց միջէն և սարերուն վրայէն դէպ՝ ՚ի Ղարապազար (Խարասու), անձամբ կարող է ստուգել յիշատակարանիս վաւերականութիւնը: Վասն զի այդ ճամբուն վրայ գրեթէ յամենայն քայլափոխի կը գտնայ հին հայրենի յիշատակաց ցանկալի՝ մանաւանդ և ցաւելի՝ մնացորդքը. անտառաց մէջ, սարերու ծայր ամրակուռ եկեղեցիք, անապատացեալ վանքեր, տխրատեսիլ գերեզմանոցք՝ սևացեալ և մամուապատ քարերով, ՚ի միջի որոց մեծ խնամքով փորուած և քանդակուած խաչքարինք՝ մեսրոպեան տառերով:

Տեղ տեղ մեր նախնեաց տանուտէր իշխանաց և բարեպաշտ տիկնանց և օրիորդաց Նուր-Մելէքներու և Կուսիկեանց շինել տուած ականակիտ աղբերք՝ կ'անցընեն ճանապարհորդին ծարաւը, և այլ ուրեք մեր պապերուն խնամով տնկուած և մշակուած պարտէզներն՝ դեռ ևս կ'ընծայեն առատապէս քաղցրահամ պտուղներ:

Ի մօտաւոր անցելում՝ Տաւրիոյ հայաբնակ և հայախօս քաղաքներն և աւաններ, այժմ այլալեզու ժողովուրդք կը բնակին: Կէսք-Թէփէ, Նախջուան (այժմ Քոհնիչքա), Սուլթան-Սալա, Թօփու, Օրդալան, Խշլաւ, Սովուք-Սու, երբեմն մեծամեծ հայաբնակ աւաններուն մէջ, այժմ բնաւ հայ չկայ. Մողկան¹ և Քեմճակ (Գամճակ) վանքերն՝ այժմ բոլորովին անապատացել են. Կազարաթ, մեծ գիւղը

1. Մողկան՝ Խշլաւ գիւղին մէջ վանք էր Հայոց. Քեմճակ, Հին-Ղրիմու անտառին մէջ, եկեղեցիք՝ Ս. Աստուածածին:

որ երբեմն ծուխ էր Ս. Նշան վանքին Սուրխաթու՝ և բնակարան հայկազն իշխանին Մուղալենց, որ ըստ ձեռանէ Գենուացոց՝ իւր զօրքերով կը պահպանէր զաւանը և զՍուրխաթ իւր վանքերով ընդդէմ այլազգեաց յարձակմանց, այժմ՝ դերբկաց կոյտ մի մեր առջև կը ներկայացընէ :

Այժմ թերակղզւոյս մէջ 8000 էն աւելի չեն հայկազունք, որք մեծաւ մասամբ քաղաքաց մէջ կը բնակին և առեւտրով կը պարապին . շատ թաթարաբնակ, ռուսաբնակ և գերմանացի գեղերու մէջ ևս խանութպանք՝ մեր ազգայինք են . համեմատութեամբ բազմաթիւ են Սիմֆերոպոլի, Նարասուի և Օր-Բազարի հայկազունք : Գիւղատէր և այգետէր հայեր ևս կան, այլ մշակ կամ գիւղացի ազգայինք բոլորն ևս գաղթած են յԵկատերինեայաւ գաւառ 1778 ին՝¹, ուր շինած են Նոր Նախիջևան քաղաքը, չորս կողմը հինգ մեծամեծ հայաբնակ գիւղերով . ահա 'ի տես այդ երբեմն Տարիացի հայկազանց՝ ելայ 'ի ճանապարհ այս տարի (1884) :

Եթէ այս մեծ գաղթականութիւնը եղած չլինէր ասկէ 114 տարի առաջ՝ ի Ղրիմէ, այժմ հին յիշատակարանիս գրութեան համեմատ բիրաւոր հայախօս ժողովուրդ մի, հազարաւոր եկեղեցեօք պիտի շէնցընէր զծովապատն Տարիա . . . :

1. Ոմանք 1776ին, այլք մի տարի վերջը կը դնեն գաղթականութեան սկիզբն . այլ մեր վերը յիշուած թուականն ստոյգ կ'երևի և համաձայն ընդ պատմութեան :

Բ

Ի ԿԵՐՁԷ ՄԻՆՁԵՒ ՅԹԱՅՂԱՆ .

Ռուսաց մեծ Փոռչքին կոչուած շոգենաւով մեկ-
ցանք 'ի Թէոդոսիոյ, մի քանի Նախիջևանցի երիտա-
սարդ բարեկամաց հետ 'ի 28 ապրիլի, զիշերուան
ժամը տասին . միւս օր առաւօտուն արևածագին
հասանք 'ի Կերջ : Որովհետև մեծ նա է Փուչքին,
նաւապետն զգուշացաւ նեղուցէն ներս մտնել, այլ
կանգ առաւ բաց ծովուն վրայ, առաջին կարգի մեծ
բերդերուն դիմաց, որք կը պաշտպանեն զնեղուցը :
Արդէն ինձ 'ի վաղուց ծանօթ էր տեղին, և չկար
ինչ անսովոր կամ հետաքրքրութեան արժանի .
այն պատճառաւ՝ նախն խորը, առաւօտեան քաղցր
քունը կը քաշէի . սակայն երբ մեծ շառաչմամբ խա-
րխիս ձգեց նաւն, և կը սպասէր որ փոքր շոգենաւ
մի գայ՝ Կերջի ճանապարհորդները կրելու համար,
հարկ եղաւ ինձ անուշիկ քունս ընդմիջելով փութալ
'ի վեր՝ նաւուն տախտակամածին վրայ :

Ի ծովէ շունի Կերջայն ակնապարար և հաճոյա-
կան երևոյթը, ինչ որ կ'ընծայեն Եայլթա և այլ
գիւղորէք հարաւային ափանց Ղրիմու . սակայն հան-
դարտ կապուտակ ծովը, մեղմիկ և ջերին՝ ծովային
գոլորչօք տամուկ օղն, մայիսի առաւօտն, նոյն
և դիմացաւ բարձրացած Միհրդատ կոչուած բլուրն
ստորոտի մանեկաձև ձգուած տներով, թոքի և ա-
չաց ոչ անհաճոյ ազդեցութիւն կ'ընէին : Հարկ եղաւ
սպասել զմեզ կրելի նաւուն՝ Փուչքինի վրայ : Ան-
ախորժ վիճակ է մարդուս համար՝ աչքը մի կողմ
յառած սպասելը, յակամայ կամս մեք այդ վիճակին

մէջ կը գտնուէինք. սակայն մարդուս դիրքը, թէ պէտեւ ժամանակ մը կապուած և անազատ ևս լինի, այլ միտքն միշտ սզատ է. եթէ այն միջոցին մարմնով Ենիգալէի նեղուցին դիմաց անգործ սպասելու դատապարտուած էի, այլ մտացս համար չկար արգելք Նախիջևան երթալ գալ, նոյնպէս մինչև ցհեաւորն Անի: Այլ հանգումանք պարագայից շատ չհեռացուցին միտքս այդ ափունքէն: Կը ներին ինձ անշուշտ արգոյ ընթերցողք, եթէ ես աստ մտացա՞ծին ցնորիք հայ ճանապարհորդի՝ սակաւ մի զբաղեցնեմ զիրենք, մինչև որ զմեզ կրելի նաև գայ:

Անձին փորձով անշուշտ ամեն ոք գիտէ, թէ շատ անգամ մի վանկ, մի բառ, մի անուն՝ մարդուս միտքը որ տեղուանք կը տանի. իմ դիմացս մի պատմական մեծ անուն, լերին յատկացեալ, կանգնած կեցած էր, Միհրդատայ Եւպատորի փեսայի կամ քեռառն՝ մերս քաջին Տիգրանայ Արշակունւոյ: Ի պատմութենէ գիտեմք՝ որ Միհրդատ Եւպատոր տիրած է թերակղզոյս, փրկչին թուականէն 80 տարի առաջ, Քերսոնիսեան հզօր հասարակապետութենը, Վոսփորեան թագաւորութեան հետ ՚ի միասին, որոյ մայրաքաղաքը դիմացս կեցած էր, մարդ կացուցանելով իւր աշխարհին կամ թագաւորութեան Պոնտոսի:

Կերթի հին անունն Պանտիկապէոն է, քաղաքհինգ-բազնաց. ե՛րբ կամ յորոց կրած է այդ անուանափոխութիւնը, յայդմ զանազանին կարծիք դիտնոց: Այլ ես Տիգրանայ փեսին վրայ կը սքանչանայի մտքը, որ 2000 տարի անցնելէն լերջանգամ կը տիրէր երկուց ծովուց Սևին և Ազախու, լեռնահանգէտ անուամբն: Արդեօք, կ'որոճայի մտք թուրքաց կէչ (անցք) բնուն է, որ այս քաղաքս կը

կրէ իւր վրայ, իբրև յատուկ անուն. այլ երևակայութիւնս զիս այնպէս կ'ուզէր համոզել՝ որ հայերէն կիրձ բառը լինի, իբրև նեղուց գործածուած. վաշ ցնորից երևակայութեան... այնպէս ինձ կ'երևար որ Միհրդատ անմիջապէս թերակողզույս տիրելն վերջ 'ի ձեռն Դէոփանդոսի զօրավարին, եկած է հոս 'ի Սինոպայ, կողակցին հայկազն բամբոլին հետ 'ի միասին, և երբ պերճանօք կը յայտնէ իւր կամքը ընկերոջ՝ թէ կ'ուզէ՞ այդ երկուց ծովուց միջավայրքն հաստատել իւր գահը, փոխելով 'ի Սինոպայ. խոհական բամբոլին մեղմելու զելով քաջին յոխորտ բարքը, կը յայտնէ թէ « Ինքն այն տեղ նեղուց կամ կիրճ մի կը տեսնէ » : Քաջն Միհրդատ հասկնալով թագուհոյն միտքը՝ կիրճ կամ կերջ կը կոչէ տեղին, և լերին իւր անունը կը սեփականէ, և շուտով թագաւորանիստ քաղաք կը լինի կերջ :

Շատ անգամ երևակայութեան զծած պատկերը քան զրնականը կը գերազանցէ, զի երևակայութիւնն զունոց և ներկերու խնայութիւն անել շախորժիր. անհրաժեշտ է որ Միհրդատ այդ բլուրին վրայ շատ անգամ ելած է թագուհոյն հետ 'ի միասին. զի զբօսանաց մի միայն յարմարաւոր գիրքն է կերջի. այլ ինձ 'ի ծովէ այնպէս կ'երևէր, որ բլրիս բարձրագոյն կէտին վրայ կանգնած է տիտանայինն Միհրդատ, Պոնտոսի իշխող. շուրջմայ արժանաւոր ախոյեան, Տիգրանայ համապատշաճ փեսայ. զլուխը փետրազարդ սաղաւարտ, զրահաւորեալ հսկազիտակ մարմնով, ալ ոտքը ամուր կոխած նոր տիրած հողին վրայ, և բազուկը զէպ 'ի ծով պարզած, իբրև թէ զրուցէր 'ի ձախմէ կանգնած թագուհոյն, « Տես որպիսի՞ քաջի ունիս բազդ հարսն և թագակից լինելու ». իսկ թագուհին համապատշաճ քաջի

առնն, նոյնպէս բարձրագիտակ, այլ կանացի և վայելչական զեղով, ծիրանեաց և շղարշներու մէջ, իբրև յաւերժ հարսնուհի, քմծիծաղով հաճիլ կը ձեւացնէ. այլ 'ի սրտէ անշուշտ կը զրուցէ՝ թէ « Այդ փառք՝ նոր չեն ինձ համար. զի քոյր եմ « մեծին և քաջին 'ի թագաւորս՝ Տիգրանայ Ար- « շակունոյ »: — Մինչդեռ այս կարճ միջոցին, որ հազիւ քառորդ մի ժամու տեւեց. Միհրդատ անունը իբրև ելեկտրական կայծ մի կը մղէր կը տանէր միտքս՝ Հնադարեան պատմութեանց մէջ, փոքրիկ շոգենաւր մեծին մերձենալով, որոյ հազիւ կայմը կ'երևնար, վարէն 'ի վեր կը սուչէր 'ի Աերջ նաւորդաց՝ թէ ժամանակ է մեկնելու. հապճեպով պարկիկս առած՝ իջայ փոքր նաւուն վրայ, որ շուտով հատուց զմեզ 'ի Աերջ:

Սա երկուց ծովուց մէջ, նոյն և երկուց աշխարհաց (Վովկասու և Ռուսաստանի) վաճառաշահ և Ղրիմու բազմամարդ քաղաքաց մին է. իւր բնակիչքն 22,000 Սևաստապոլեան պատերազմէն վերջը՝ տէրութիւնն մասնաւոր խնամք դարձուցել էր այս քաղաքիս վրայ, իբրև պատերազմական նշանաւոր կէտ մի. բերդը Ռուսաստան աշխարհի առաջնակարգ ամրութեանց մէկն է, որ զնեղուցը կը պաշտպանէ. յետին արևելեան պատերազմին միջոց, երբ թուրք մարտիկ նաւերն ումրակոծեցին անպատպար ծովափնեայ քաղաքները Եւպատորիա և Թէսդոսիա, չհամարձակեցան Աերջի մօտենալ:

Հայկազունք սակաւաթիւ են քաղաքիս մէջ, այլ ունին փոքրիկ վայելչաձև եկեղեցի՝ հանգերձ փոքրիկ ուսումնարանով:

Նոյն օրը՝ կիրակի երեկոյին՝ փոքր շոգենաւով մեկնեցայ 'ի Աերջէ դէպ 'ի Պերտեանաք, ուր հարկ

եղաւ ինձ Պնալ մինչև ցՅ մայիսի: Նոր քաղաք է Պերտեանսք, բնակիչքը 14,000, Ազախու ծովու վրայ. ցորենի մեծ վաճառականութիւն ունի: Եւրոպացիք ունին մեծամեծ վաճառաշահ տներ, և ցորեն գնելով յԵւրոպայ կ'ուղարկեն. ազգայինք սակաւաւոր են հոս, և չունին առանձին եկեղեցի. թէպէտ ծովը ոչ բազմաթիւ, այլ վայելչաձև է հռովմէականաց եկեղեցին:

Շարաթ օր, ամսոյն Յ ին, առաւօտեան ժամըութին մեկնելով քաղաքէս շոգենաւով, վեց ժամէն հասանք Եկատերինեսյաւ գաւառի, (Ղրիմնցի գաղթական Յունաց) մայր քաղաքը Մարիապոլ, որ և Մարիամու քաղաք, 'ի պատիւ հրաշագործ պատկերի Տիրամօրն, զոր 'Ղրիմու Պահչէսերայի վանքէն հոս փոխադրուելուն պատճառաւ՝ այդ անունը տուած են քաղաքին. բնակչաց թիւը 10,000 մեծաւ մասամբ Յոյն են, որ և նոյն տարին Նախիջևանու ազգայնոց հետ գաղթած են 'ի 'Ղրիմէ. սղբա գրեթէ ամենքը ձկնորսութեան կը պարապին. փոքրիկ ծովուն ամեն անկիւններուն և խորշերուն մէջ ձգած՝ տարածած են ցանցեր և ուռկաններ. թուխու 1 ձկան զանազան տեսակները, իրենց համեղաճաշակ կիթերով, տեղացւոց ապրուստի, միանգամայն վաճառականութեան մեծ և շահարբեր նիւթ են. բաց աստի՛ կան քաղաքիս մէջ իտալացի ցորեն ժողովող տներ: Աէս օրէն վերջը ժամը երկուսին հասանք հոս, և որովհետև նաւը մինչև երեկոյեան ժամը տասին պիտի սպասէր բեռ տալու և բեռ աւնըրու համար, իջայ քաղաքը պտտելու: Քարուխիճ ճանապարհին ուղղութեամբ գնալով փոքրիկ

(1). Esturgeon.

այլ բարեձև մի եկեղեցի առաջ հանդիպեցաւ. մտայ ներս, տեսայ որ կաթողիկոսց եկեղեցի է. շէնքին ձևը, կոկոթիւնն այնպէս կը ցուցընէր, որ եկեղեցւոյս ժողովուրդն թէպէտ քիչ, այլ ունևոր մարդիկ են: Եկեղեցւոյն ծառայն ինձ ծանօթ մէկն էր, որոյ հրաւիրանօք՝ մտայ քահանային տունը. ծերունի երէցն ընդունելով իմ յարգութիւնս՝ հարցուց ուսերէն թէ « Ի՞նչ ազգէ ես », մը լեզուաւ կարելի է խօսիլ հետդ » այդ հարցմունքը ինձ տարօրինակ երևցաւ, իբրև թէ ինքն ամենայն լեզուաց տեղեակ, ամեն ազգին հետ կարող է իւր լեզուաւ խօսիլ. փոքր մի նինգութեամբ՝ կամ լաւ ևս պատժել ուզելով փրանկ երիցուն մեծախօսութիւնը, պատասխանեցի թէ « Հայ քահանայ եմ, Նախիկ » « Ղևան կ'երթամ գործով, և թէ շատ հաճելի է « ինձ հայերէն խօսիլը »: — « Խնդրում եմ, նստէք ». ասաց փրանկ երէցն: Դորա հայերէն խօսիլն այն աստիճանի զիս շփոթեց, որ հազիւ զարմացումս զսպելով, շնորհակալ եղայ, ծերը զուարթանալով և իւր յաղթանակին վրայ սիրտը գոհ, ձեռքը երկնցընելով՝ օդոյն մէջ կիսաբոլոր ձև մի անելով, հայերէն այս խօսքերը կ'արտաբերէր, « Եւ քարոզեալ և աւետարանեալ » զմայլեցայ, մնացի յալթահարեալ՝ ծեր երիցուն դիմաց. հայերէն սկսայ շարունակել խօսակցութիւնը, այլ նա ինձ բացատրեց ուսերէն, որ շատ տարի առաջ Աժտերխան քահանայութիւն անելով՝ ազգայնոց հետ շատ յարաբերութիւններ ունեցել է, որով և սորվել է հայերէն, այլ ապա երկար միջոց չխօսելով՝ կորուսել է վարժութիւնը: Պատուական ծերոյն մօտ քանի մի ժամ մնալէն վերջը՝ դարձայ 'ի նաւ. որ երեկոյեան 11 մնալով անդ, գիշերով մեկնեցաւ 'ի Մարիապոլէ և առա-

ւօտը դեռ նոր բացուած՝ հասանք յԵյսք քաղաք, որ ինչպէս Պերտեանսք՝ նոր քաղաք է, այլ ազգայինք ինչպէս աստ նոյնպէս և ՚ի Նոզայսք ունին եկեղեցի, որոց ժողովուրդը Նախիջևանցւոց հատուածներ են: Այս կողմերս գրեթէ ամեն քաղաքաց մէջ կը գտնուին ազգայինք, որը ՚ի միասին համընդ, պէտք է լինին 10,000 բաց ՚ի Նախիջևանէ: Նոր-Չերքասքի, Ստաւրպոլի, Եկատերնետարի և ապա դէպ ՚ի Կասպից ծով՝ Ղզլարի մէջ կան բազմաթիւ Հայք, որ մեծագոյն մասամբ վաճառականութեան կը պարապին: Որովհետև Եյսքի նաւամատոյցը քաղաքէն բաւական հեռու չինուած է, և նաւը շատ չի մնար հոն, այն պատճառաւ քաղաք կարող չեղայ գնալու:

Եյսքէ մեկնելով՝ ճիշդ կէսօրին հասայ Ազախու ծովուն հիւսիսային ծայրը, Թայդան կոչուած քաղաքը: Քաղաքիս անունը թաթար նշանակութեամբը՝ սահած կամ սպրդած կը թարգմանի հայերէն. և յիրաւի, բարձրադիր ցամաքն իբրև թումբ՝ կամ լաւ ևս հրուանդան սահած իջած է ՚ի ծով: Բուսք Թականրոկ կը կոչեն որ ետանկիւնի-եղջիւր կը նշանակէ: Չկայ ազգային եկեղեցի աստ՝ այլ բաւական հայկազունք կան ՚ի քաղաքիս, զորս կը հովուեն Նախիջևանու երիցունք, զի երկաթուղւով երկու ժամուան ճանապարհ է աստի ՚ի Նախիջևան:

Թայդանի բնակչաց թիւը 30,000, այլ ինքն առաւել մեծ և փառաւոր քաղաքի երևոյթ ունի, փողոցները լայն և ընդարձակ, երկու կողմը մեծա մեծ շէնքերով և ծառաստան ճեմելեզք զարդարուած. սակայն սորա անցեալն աւելի չքեղ է քան ներկայն. մերձաւոր դրացին Դոնեան Ռոստով

յախշտակած է նորա վաճառականութիւնը, նա օր ըստ օրէ կ'աճի և սա երթալով կը մեղմանայ: Ի պատմութեան նշանաւոր է Քայդան այնու՝ զի հոն վախճանած է յաղթողն Ա. Նապոլէոնի՝ Աղէքսանդր Ա. Կայսր Ռուսաց 1828 ին: Արքային պալատն, որում 'ի դարձիս այցելութեան ելայ, անշուք է և կարասին շատ հասարակ. ասկէ 80 տարի առաջ, այն անշուք կարասեօք բաւականացել է աշխարհիս մեծագոր իշխողներէն մին, մինչդեռ այժմ մեր գաղթական Նախիջևանցի տանուտե-րանց բնակութիւնն և կարասիքն շատ աւելի վայելուչ են և ճոխ: Քեղեցիկ է կայսեր պղնձաձոյլ արձանն, որ բարձր պատուանդանի վրայ կանգնած է քաղաքին մեծ հրապարակին վրայ. մեծ և ընդարձակ է քաղաքին զբօսական պարտէզը:

Գ

ԱԶԱԽՈՒՄՈՎ.

Ընդհատեալ ճանապարհորդութեամբ 20 ժամ ճանապարհորդելէն վերջ, ընդ երկայնութիւն ծովուս 'ի հարաւոյ դէպ 'ի հիւսիս, կ'արժէ քանի մի տողեր նուիրել այս ծովուս. ես այնպէս կարծեմ որ այս ծովակս իւր աշխարհագրական դրիւքն և ձևով հետաքրքրական է՝ եթէ ոչ ամենուն, այլ գոնէ աշխարհագրութիւն ուսանող համրակաց: Ինքք փոքր, այլ ծով անունը կը կրէ հաւասար մեծամեծ ծովերու. դիրքը՝ Եւրոպայի մի անկիւնը, ազաւախ թևի նման կայած է Սև ծովուն՝ զոր աւելի լիճ կարելի է զրուցել քան թէ ծով.

երկու մեծամեծ գետեր կը թափեն սորա մէջ հե-
ռաւոր աշխարհներէ բերած ջրերը, Գոն հիւսի-
սային կողմէն և Քուպան հարաւէն: Երկայնու-
թիւն ծովակիս 340 հազարամետր և լայնութիւն
240. յատակը խոր չէ, այն պատճառաւ միայն փոքր
նաւեր կարնան վրան շրջել, տափակ յա-
տակներով. շատ տեղ երկու կողմէն ցամաքը կ'ե-
րևայ. հանդերձ այնու, մեծ և անտանելի կը լինի
ալէկոծութիւնը և լի վտանգօք. շատ անգամ 5
և 6 ժամուան ճանապարհը, օրերով շեն կարող
կտրել անցնիլ. անհնարին կը լինի ծովային հիւան-
դութենէ բանուողներուն վիճակը. զի անհանդարտ
կահակները ոչ մի բոպէ հանգիստ չեն շնորհեր
հիւանդաց: Լատինացիք Palas Meotis կոչել են
զնա, արևելեան կողման եղէգնուտներուն պատ-
ճառաւ: Ծովակին ջուրը պղտոր է և զեղնագոյն,
աւելի գետի ջուրի յատկութիւն ունի քան ծովու,
մանաւանդ գետաբերանաց մօտ տեղուանք. կը
խմեն և կը գործածեն բոյսեր ջրելու:

Գենուացիք ԺԲ դարուն տիրած են ծովուս և
չրջակայ աշխարհին, և իրենց հետքը ցարդ թօ-
ղուցել են գեղեցկաչէն աշտարակներով: Ծովակիս
համանուն (Ազով) փոքրիկ քաղաքին մէջ նահա-
տակուած է յալազգեաց հայկազն Սահակ պատա-
նին, որոյ վկայաբանութիւնը նստրագիր գրուած
գտայ Նախիջևանու ձեռագիր Յայսմաւուրաց մէ-
կուն ետևը, որ կը պահուի Ս. Լուսաւորիչ եկե-
ղեցոյն պահարանին մէջ:

Թայդանէ կարելի էր փոքր շոգենաւով Գոն գե-
տին վրայէն գնալ 'ի Ռոստով, այլ որովհետև կէսօ-
րէն վերջը անմիջապէս ժամը երեքին երկաթուղւոյ
ընթացք մի պիտի մեկնէր 'ի Թայդանէ Ռոստով,

ընտրեցի ցամաքի ճանապարհը: Ժամադրեալ ա-
տենին մեկնեցաւ ընթացքը: Պայծառ և զեղեցիկ օր
մի էր, երթալով կը մօտենայի նպատակիս, երկու
ժամէն պիտի լինէի հայանուն քաղաքին մէջ, և
պիտի տեսնէի, երբեմն մեզ նման Անեցի և ապա
Տաւրիացի, իսկ այժմ Նախիջևանցի համազգի և
համհիրակ եղբարքը:

Թէպէտ և երկար շէր ճանապարհը, սակայն և
այնպէս կառքին պատուհանէն դէպ 'ի շրջակայից
վրայ նայելով, կ'ուզէի գաղափար ստանալ, այդ
Եկատերինեսլաւ գաւառին քաջաբերութեան և այլ
հանգամանաց վրայ: Կը տեսնէի յաջմէ Գոն գետն՝
հեղած զեղած, անկանոն ընթացքով, տեղ տեղ
լրերը մինչև հորիզոնին կը հասնէին. որոց միջէն
տխրատեսիլ կորացեալ ուռիք, արմատներն և ճիւ-
ղերուն կէտը շրոց մէջ, իսկ միւս կէսն՝ օդոյն մէջ
երերագին, լալական և տրտմալի տեսիլ մի կ'ըն-
ծայէին. ուսնեացս նման աւաղելի դրոց մէջ էին
ցիր ու ցան ձկնորսաց հիւղերը, անկարգ և անկա-
նոն ձևով կը տեսնէի հեռուն՝ Գոնեան Խաղախաց
գիւղերը: Ի ձախմէ դաշտ էր և անապատ. մշա-
կութիւնը սակաւ. անտառ կամ պարտէզ քիչ ան-
գամ կը հանդիպէին աչացս: Ինչ զգալի հակա-
պատկեր անցեալ տարուան ճանապարհորդու-
թեանս և այս տարուանին մէջ. հոն Փոտոլեան և
Քիւեի գաւառները և առ հասարակ Ուքրայիս,
Թէպէտ և աշնանային տարագի մէջ, այլ ամե-
նուրեք կեանք և մշակութիւն կը տեսնէի. դաշտը առ-
հասարակ արօրագիր՝ մշակուած, ամեն կողմ պլոտ-
դատու պարտէզներ, կանոնաւորեալ անտառներ.
մինչդեռ հոս ամայի և խոպան: Սակայն հոս ելք
ճանապարհին՝ հայ ուղևորի համար լի մխիթարու-

թեամբ. մինչդեռ հոն կոտրի և լքանի հայ սիրտը ազգութեանս իսպառ կործանումը տեսնելով: Հոս հայաչէն և հայախօս հազարաւոր ժողովրդով քաղաք մի կ'ելնայ ընդ առաջ ճանապարհորդին հինգ մեծամեծ հայարնակ գիւղերով. խօսքս Նոր-Նախիջևանու համար է: — Այլ մեք դադրեցնել լով առ ժամս մեր ուղևորութեան պատմութիւնը, քննենք թէ ի՞նչ պատճառաւ Հայք թողլով զՂրիմ եկած են այս տեղ, ի՞նչպէս եկած են, և ո՞րք եղած են նոցա առաջնորդք:

Դ

ՀԱՅՈՑ Ի ՂՐԻՄԷ Ի ՆԱԽԻՋԵԻԱՆ

ԳԱՂԹԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌՆ.

Օրինաք բնութեան՝ մարդս կը սիրէ իւր ծնած և մեծցած տեղը. և քիչ են այն անհատներն՝ որք թողլով իրենց ջննդեան վայրը՝ աստանդական կեանք վարեն: Ինչպէս առանձին մարդ, նոյնպէս ժողովուրդ մի, ազգ մի, բնական կերպով չէ կարող թողուլ լքանել իւր պապենական աշխարհքը, և երթալ օտար տեղ, անծանօթ երկնից ներքև տուն և բնակութիւն հաստատել: Այդպիսի բանի ձեռք զարնելու համար՝ մեծ և հարկեցուցիչ պատճառներ կարևոր են. ինչպէս մեր տարաբաղդ Անցելոց պատահած են, ժամ, հուր, թուր: Ղրիմեցի Հայոց իրենց 400 տարուան՝ ծնած, սնած և մշակած բարեբեր և գեղեցիկ աշխարհքը, երկորդ հայրենիքը Ղրիմը՝ թողլու և երթալու հիւսիսային աշխարհաց մէջ բնակութիւն հաստատելու

համար, թէպէտ վերը յիշած պատճառաց և ոչ երեքին մէկը կար, այլ ուրիշ շորրորդ մի՝ որոյ այժմ քաղաքականօրէին անունը կու տան, ստիպուած է թողով զՂրիմ, տարագիր գնալու յօտար երկիր։ Ժամանակին՝ ինչպէս պիտի տեսնենք՝ բողոքած են Հայք, այլ նոցա բաղոքը լսելի եղած չէ։ Քաղաքականութիւնն բռնի պահանջած է նոցանէ այդ զոհողութիւնը, և նոքա կամայ և ակամայ յանձն առած են զայն։

Մինչդեռ Թաթարը տակաւին կը տիրէին թե՛ բակղզւոյս, ոչ միայն ՚ի Հայոց, այլ և յամենայն քրիստոնեայ Ղրիմաբնակ ժողովրդոց, պահանջուած է այդ զոհողութիւնն. այլ Թաթարք չեն պահանջողը, նոքա կը ստիպուին թողուլ զքրիստոնեայս որ ելնեն Ղրիմէ. քրիստոնեայք հնազանդելով հզօրագոյն կամաց՝ կը թողուն ու կ'երթան։ 1778ին Թաթարաց երբեմն հզօր և քանդիչ ազգը, առաւել հզօրագունին ձեռքը խաղալիկ դարձել էր, այն է Ռուսաց քաղաքականութեան։

1774ին թէպէտ և Ղրիմ առանձին խանութիւն էր Թաթարաց, այլ քաղաքական անընդմէջ յարաբերութիւն ունէր Թուրք իշխանութեան հետ. Բարձրագոյն Դուռը կը վաւերացընէր յիշխանութեան՝ ՚ի Թաթարաց ընտրուած իշխանը կամխանը՝ Քիւչիւկ-Քայնարճըրի՝ դաշնադրութեամբ, զոր նոյն

1. Բուլղարաց աշխարհին մէջ մի փոքր քաղաք է որ այսու դաշնադրութեամբ պատմական նշանակութիւն ստացաւ. դաշնացա զօրութեամբ ստացաւ Ռուսաստան նոր երկիրներ և Հանսպարճ դէպ ՚ի Սև ծով։ Թաթարք անկախ հրատարակուեցան, և Ռուսաստան ՚ի Թուրքիա բնակող քրիստոնէից պաշտպան Հանդիսացաւ, որ և կողմակի պատճառ եղաւ առաջին արեւելեան պատերազմին։

աարին ստորագրեցին Կատարինէ Բ. Կայսրուհին Ռուսաց և Համիտ սուլտանն թուրքաց, Ղրիմ ինքնազուլու և անկախ իշխանութիւն հրատարակուեցաւ: Այս դէպքս թաթարաց իշխանութեան կործանման նախադուռն եղաւ. ինչպէս նաև Ղրիմու քրիստոնէից գաղթելուն սկզբնապատճառ:

Ռուսաստան երկար ժամանակէ 'ի վեր աչք օւնէր այն ծովապատ և քաջաբեր աշխարհին վրայ, որոյ տիրողք 1240-1389 իրենց իշխանութեան տակ առել էին Ռուս Մոսկուայի նախարարները՝ որոց հարկադիր լուծը հազիւ 1481 ին կարող եղել էր վերցընել իւր ազգէն իւան Գ. սակայն և այնպէս Ղրիմեցի թաթարք, մինչև ցԺԶ դար, ըստ կամաց կամ աղիկամի յարձակմամբ միշտ նեղութիւն էին դրացի ազգաց Ռուսաց և Լեհաց: Ռուս քաղաքականութիւնը որոշեց որ տիրելով թաթարաց աշխարհին, ապահովէ իւր սահմանը, որ մինչև ցԺով պիտի հասնէր, որով և Եւրոպայի հետ 'ի հարաւոյ ևս անընդմէջ յարաբերութիւն պիտի ունենար:

1774 ին յաղթութիւնը Ռուսաց կողմը լինելով, տէրութիւնը առաջարկեց Բարձրագոյն Գրան իրեն նպաստաւոր դաշնագրութիւն, որ ականայ ընդունելի եղաւ թուրքաց¹: Դաշանցս զօրութեամբ տիրանալով Ռուսք Կերչի, Ենի-Քալէի, Ազովի և Քիմպուրունի, և տակաւ առաջ վարելով առաջարկեցին թաթարաց իրենց զօրաւոր պաշտպանութիւնը ընդդէմ Օսմանեանց:

1. Այս սլ և սլ յետագայ տեղեկութիւնք մասամբ կը շարունակուի Ծ. Խառթախայի Քրիստոնէութիւնի Ղրիմ կոչումած պրակէն որ հրատարակուած է ի Սիմֆերոպոլ, 1861 ին:

Ղրիմ անկախ երկիր լինելով միայն իրեն կ'իյնար իւր իշխանը կամ խանը ընտրելն. Ռուսաց քաղաքականութիւնն այս ընտրութեանս մէջ ևս ձեռք երկնցուց, և այնպիսի մէկուն ընտրութիւնը յաղոցուց, որ յետոյ իւր ձեռաց մէջ յարմար գործիք կամ խաղալիկ դարձաւ. այդ մէկն էր Շահան-Պերէյ, Թաթարաց վերջին խանը: Թաթար մուզանները (Նախարարք) հասկնալով բանին էութիւնը և հետեանքները՝ շատ կը հակառակին. այլ պաշտպանին զէնքը կը ստիպէ զիրենք, սկսած գործը գլխաւորելու. այս գործիս համար Ռուսաց քաղաքականութիւնը բաց 'ի զինուց, մեծամեծ գումարներ ևս կը ծախէ, մուզաններն կաշառելու համար: Թուրքիոյ հետ Թաթարաց յարաբերութիւնք կը դադարին. Ղրիմու բարեբեր մասը դեռ ևս ազատ խանին Շահան-Պերէյի ձեռքն է. այլ նա իւր մեղկ կառավարութեամբ և թոյլ բնաւորութեամբ, անկարող կը լինի տիրաբար իշխելու, և զուրկ իւր նախորդաց Բաղուներու և Իւզբէկներու արութենէն, ատելի կը լինի իւրոց և անարգ օտարաց առջև:

Այս միջոց ժամանակին՝ ռուս քաղաքականութիւնը անխոնջ կ'աշխատի, որ ազատ խանը ոչ միայն իւր պաշտպանութեան կարօտ, այլ և դրամական ևս նպաստ ընդունի, իբրև սպասաւոր արծաթոյ: Ռուսեանցեւ զօրավարն վերոյգրեալ նպատակին հասանելու մի միայն յարմար միջոց կ'առաջարկէ ռուս պետութեան, Ղրիմու մէջ բնակող երկրագործ մշակ և արուեստաւոր Հայերը և Յոյները հանել անտի, որպէս զի երկիրն անմշակ մնալով՝ սնանկանայ խանին գանձարանը, և ակամայ ստիպուի ոտնիկ ստանալ ի Ռուսաց:

Իշխանաբար կը պահանջէ կատարինէ 'ի Եւ-
հան-Պերէյէ քրիստոնէից գաղթելու առաջարկու-
թեան կատարումը. վատ խանը չի համարձակիր
մերժել կայսրուհւոյն առաջարկութիւնը: Այլ որով-
հետեւ քրիստոնէից ևս ինքնակամ յօժարութիւնն
հարկաւոր կը լինի, կաշառք և այլ խաբեպատիր
միջոցք 'ի գործ կը դրուին, իբր թէ պիտի գան
այլազգիք քարուքանդ անելու զՂրիմ, և բոլոր
քրիստոնեայք ոտնակոխ պիտի լինին, եթէ չթողուն
չելնեն Ղրիմէ: Ռումեանցեւ իւր առաջարկութիւ-
նը յաջողցնելու համար, քրիստոնէից հոգեւոր առաջ-
նորդքը կը շահի իւր կողմը. խոստանալով նոցա
ամենայն ազատութիւն, միանգամայն մինչև ցմահ
հաստատութիւն իրենց առաջնորդութեան պաշտա-
մանց մէջ: Պատմութիւնը կը գրուցէ՝ որ Իգնա-
տիոս Յունաց մետրապօլիտը մեծ համակրութեամբ
կ'ընդունի Ռումեանցեւի առաջարկութիւնը, Հայոց
առաջնորդք՝ Պետրոս վարդապետ Մարկոսեան Լու-
սաւորչականաց և Տէր Յակոբ Վարդերեսեւիչ կա-
թօլիկացը՝ ծանր կը շարժին, անշուշտ հասկընա-
լով գործոյն ծանրութիւնը, միանգամայն և ակնա-
ծելով իրենց հօտէն:

1778 ին, ապրիլի 23 ին Ս. Զատկին օրը, Պահ-
չեսերայի (որ այն միջոց մայրաքաղաք էր Ղրիմու)
Յունաց Աստուածածնայ վանքին եկեղեցւոյ մէջ՝
Իգնատիոս Մետրապօլիտ կ'առաջարկէ քրիստոնէից
գաղթականութեան խնդիրը, շուտով կը տարածուի
այն ձայնը թերակղզւոյն մէջ, առհասարակ քրիս-
տոնեայք և ոչ քրիստոնեայք կ'ամբոխին ու կը շփո-
թին: Թաթարք հասկնալով որ այդ Ռուսաց
հնարքն է, կը բողոքեն խանին վատութեան դէմ.
քրիստոնեայք՝ իրենց առաջնորդքը կաշառակուրծ

կը համարին: Թողումք մեք Յունաց և Թաթարաց բողոքները, Թարգմանեմք միայն Հայոց տուած աղերսագիրը¹ առ Շահան-Պերէյ. « Մեք երեք « հարիրք տարիէ 'ի վեր Ձեր ծառայքն և հպա- « տակքն եմք, և գոհ կերպով կը բնակիմք Ձեր « տէրութեան մէջ, և երբեք անհանգստութիւն մի « կրած չեմք. այժմ կ'ուզեն քչել հանել զմեզ աստի: « Յանուն Աստուծոյ, մարգարէին և Ձեր նախնեաց՝ « կը պաղատիմք, այդ բռնութենէ ազատեցէք զմեզ « Ձեր ստրուկները, մեք միշտ աղօթող պիտի լի- « նիմք Ձեր կենաց համար առ Աստուած»:

Այս սրտառուչ աղերսագրոյն խօսքերը, եթէ բոլորը յանկեղծ սրտէ չհամարիմք, սակայն և այնպէս յայտնի ցոյցք են մեր պապերուն կրած տագնապին և վրդովմանց՝ և միանգամայն նախահոգ սրտին: Թողուլ տուն տեղ, դարևոր իրենց հայրե- նիք դարձած աշխարհքը, այգիներ, անտառներ, պարտէզներ և գեղեր, և որ առաւելն է սրբաչէն եկեղեցիներ, իրենց լուսաղբիւրներով և հոգեհա- տոր սիրելեաց գերեզմաններով, և երթալ անծա- նօթ աշխարհք, որոյ ժողովրդոց ոչ բարբը և ոչ լեզուն կը հասկընան, շատ դժար և անտանելի բան է: Շահան-Պերէյ ոչ իրեն հաւատարիմ հպա- տակաց, Հայոց, աղերսը կը լսէ և ոչ Թաթարաց բողոքներուն տեղիք կու տայ, այլ անտարբեր աչօք կը դիտէ իւր և իւր աշխարհին կործանումը: Թա-

1 Խառնախառն ուսու թարգմանութենէն:

2 Վերջին և մեծ գաղթականութենէ ևս հաշուելու լինիմք, որ եղած է 1330 ին մինչև 1778, յորում ելած են Հայք 'ի Ղրիմէ, աղերսագրին մէջ վերոյիշեալ երեքհարիւր ամաց հաշիւն 448 տարի կը լինի:

Թարք՝ խանէն նեղացած իրենց ոխը կ'ուզեն 'ի քրիստոնէից հանելու. մինչև որ թողուն ելնեն քրիստոնեայք 'ի Ղրիմէ, շատ վիշտ և նեղութիւն կը կրեն թաթարաց ձեռքէն. կանայք ծակամուտ, արք հրացաննին ուսերուն վրայ, անքուն կ'անցընեն գիշերները. իսկ առաջնորդք քրիստոնէից, իբրև շարեաց մակարդ, ծպտեալ և անծանօթ տունէ տուն կը պահուըտին, որ չգիտնան թաթարք ուր լինելին: Այդ վերջին պարագայից ահն այնպէս սաստիկ ահացուցել է մերոց սրտերը, որ շատ տարի անցնելէն վերջը, մինչև ցայսօր ևս, պառաւունք՝ անշուշտ 'ի լրոյ՝ սուկալով կը պատմեն այն դէպքերը, որ եթէ չթողուին և շէնէին 'ի Ղրիմէ՝ ա՛մէնքը թաթարաց և այլազգեաց թուրին բերանը պիտի ինկնային:

Վերջապէս այլ ինչ հնարք կամ դարման չգտնելով, կը յօժարին Հայք գաղթել 'ի Ղրիմէ, և իրենց առաջնորդաց միջոցիւ կ'առաջարկեն տէրութեան խնդրական ձևով հետևեալ պայմանները. որոց յօժարելով տէրութիւնն և այլ արտօնութիւնք ևս վրան աւելցընելով, միւս տարին կը շնորհէ իրենց պարգևագիր Ողորմածագոյն քան: Հայք կը խընդրեն Ե) Որ տէրութիւնն յանձն առնու վճարելու իրենց՝ պարտիզից, այգեաց և այլ անշարժ կայից գինը 1. Բ) Նոյնպէս վարուցաններու գինը՝ զոր 'ի դաշտին պիտի թողուն. Գ) Վճարել թաթար մուզայից իրենց պարտքերը. Դ) Զիրենք և իրենց

1 Գեղեբու վրայ խօսք չկայ, զի արդէն Տէրութիւնը խոտաացել է տալ նոցա իբր 80.000, Գի-Ի-Բէն հող Նախիջևանցի Հայոց: Նոյնպէս առանձին յիշատարիմեսուս գաղթող հայ կաթալիկաց, որք հրաժարելով այդ հողէն դարձել են 'ի Ղրիմ:

չարժական կայքը արքունի հաշուով տեղափոխել և Գարձեալ ճանապարհի պիտոյքնին հոգալ, և երբ հասնին սահմանեալ տեղը, շնորհել արքունուսացանելու կարևոր հունտը, և մինչև նոր ցորենը հասնելուն՝ տալ իրենց ապրուստ. ճանապարհին ոչ որ շխուէ գիրենք, և տեղերնին հասնելէն վերջը հոս հոն տեղափոխուելու շտիպուին:

Տէրութեան կողմանէ քրիստոնէից տրուած պարգևագիրը՝ մագաղաթի վրայ տպուած է ուսու և հայ լեզուներով, և ոսկի մեծ արքունի կնքով կնքուած 1778, նոյեմբերի 4. զոր Կատարինէ Բ. ստորագրած է. նորանէ վերջ հետզհետէ, իրենց թագաւորութեան միջոց՝ ստորագրութեամբ վաւարացուցած են Պաւել, Ա. Ալեքսանդր, Ա. Նիկոլայոս: Մեր օրերը՝ այն է (1868) Ալեքսանդր Բ թագաւորութեան միջոց, երբ հասարակաց գիւնուրագրութեան և այլ բարեկարգական օրէնք հրատարակուեցան 'ի Ռուսաստան, ինչպէս այլ զանազան ժողովրդոց արտօնութիւնք, նոյնպէս մեր Ղրիմեցի և Նախիջևանցի հայկազանցը, հասարակաց օրինաց ենթարկուեցան, և Հայք ևս սկսան գինաւոր տալ:

Ե

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Այս ծանր և մտատանջ խնդիրը 3-4 ամիս մեր պապերը, բարոյապէս և նիւթապէս տաղնապելէն և վրդովելէն յետոյ, վերջապէս կը յանձնուի առ Սուրբով մեծ զօրավարն (ապա կոմս Իտալիոյ), որ

խնամով հոգայ գաղթելոց կարևոր պէտքերը : Ազովի գաւառապետը 6000 սայլեր կը ղրկէ նոցա կարասիքը վերցընելու . Եկատերինեսլաւ գաւառը կը սահմանուի գաղթական քրիստոնէից տեղի բնակութեան . Յունաց՝ Ազախու ծովուն եզերքը, ուր կը շինեն Մարիամպօլ քաղաքը . Հայոց լուսաւորչականաց՝ Դօն գետին հիւսիսային ափանց վրայ, ուր է այժմ՝ Նախիջևան քաղաքը . Հայոց Կաթուղիկաց՝ որը սակաւաթիւ եղած են, բնակութիւն կը սահմանի գաւառին համանուն Եկատերինեսլաւ քաղաքը, ուր ապա գաւառապետն կը նստի, և այժմ է մեծ քաղաք Տնեբեր գետոյն վրայ : Գաղթականաց առաջին խումբն կը մեկնի 'ի Ղրիմէ յ18 յուլիսի (1778), երկրորդն 'ի 20 օգոստոսի, երրորդն որ և վերջինն 'ի 28 սեպտեմբերի :

Կը մեկնին, այո՛, հայկազունք 'ի Ղրիմէ, իրենց դարևոր հայրենիքէն, այլ մինչև որ կանակնին դարձընեն, և դէպ 'ի հիւսիս առաջ վարեն ճամբանին, ինչ կը կրէ, ինչ կը զգայ այդ տարարող գողովուրդն : Մինչև ցայժմ գտնուած չէ հայ գրիչ մի, որ ստորագրէ մանրամասն այդ աղետարչ բաժանումը, որ անշուշտ կարի սրտառուչ եղած պիտի լինի :

Վերջին անգամ կը ժողովին Հայք իրենց եկեղեցեաց մէջ, զորս ամենայն խնամքով իրենք և իրենց նախնիք ամրակուօ շինած են, այնպէս որ իբրև ցաւիտեանս ժամանակաց որդւոց որդի պիտի վայելեն զանոնք . որոց ամէնն ունին իրենց սրբազան և պատմական նշանակութիւնը . Ս. Խաչ և Ամենափրկիչ վանքեր, ապաստանարան սրբատէր արեղայից և գպրատէր գրչաց . Զարխափան և Ս. Կարապետ, որ այլազենից մէջ՝

չարէն պահպանուած՝ կարենան ամուր պահել
Հայք սուրբ հաւատքը. Ս. Նիկողայոս գմբէթաւոր
եկեղեցին՝ ՚ի յիշատակ հազարաւոր նահատակաց
կոտորելոց ՚ի կէտիկ Ահմէտէ (1478). դարձեալ
սրբոց ձիաւոր զօրավարաց՝ Գէորգայ. Սարգսի և
Թորոսի, որ ՚ի կարեւոր ժամու երազ հասնին իրենց
բարեխօսութեան ապաւինելոց. և այլ որ մէկը
ասեմ, եկեղեցի շատ, և ամէն մէկը զատ զատ
նպատակաւ շինուած: Ահա այդ սրբաշէն եկե-
ղեցեաց մէջ կը ժողովի հայ ժամասէր ժողովուրդն՝
վերջին պատարագը լսելու, և ապա թողուլ լքա-
նելու այդ տաճարները՝ յանդարձ յօտարութիւն
գնալու համար: Ո՛րչափ արցունք, քանի՛ սրտա-
ճմիկ հառաչանք, որպիսի՛ հրաժարական սրտա-
խօսիկ Բարով մնայքներ շեն մրմնջած նոքա, սրբաշէն
խորանաց, խաչանիշ սիրելեաց գերեզմանաց... և
այլն, և այլն:

Երբոր ժամարարը բեմէն կը ժանուցանէ Հա-
յոց՝ թէ աւարտած է Ս. Խորհուրդը, կարող են
ելնել գնալ ՚ի տաճարէն, « Երթայք խաղաղու-
թեամբ » գրուցելով, անշուշտ ոչ մի, այլ շատեր
կոտրած սրտով մտածել են իրենք իրենց. « Ո՛ր
երթանք, որո՞ւ թողունք մեր Ս. Եկեղեցիքը, Լոյս-
Պարոն և Ֆաանկուլի նահատակաց շիրիմքը ».
չատ մարց սրտեր անշուշտ դող ելած են այդ Խաղա-
ղութեան խօսքերէն, շուարել մնացել են թէ ի՞նչպէս
թողուն և երթան իրենց հոգեհատոր զաւակաց
ոսկերք և նշխարքն այլագգեաց ձեռքը: — Այլ
սակայն կամայ և ակամայ հարկ է գնալ: — Մի
կողմանէ երէցը « Տէր ուղղեա՛ » կը մաղթէ, միւս
կողմանէ, դպրաց դասն « Ճանապարհ բարի Քրիս-
տոս », տխուր կ'եղանակեն. եկեղեցեաց երէց-

փոխանք կը զետեղեն սնդուկներու մէջ արծաթազործ և արծաթապատ խաչեր և աւետարաններ, սկիհներ և բուրվառներ. այլք՝ պատերէն իկեցընելով սրբալոյս մեռոնիւ օծեալ պատկերքը՝ կը պատեն պատտառներով: Եթէ կարելի լինէր շալակել տանել զեղեցկաշէն եկեղեցիքը, անշուշտ կը տանէին¹: Ինչ որ կարելի եղած է՝ տարել են. մասնաւոր շնորհակալութեան արժանի են ծանրագին մագաղաթեայ ձեռագիրները² խնամքով տանելնուն համար, որք ցարդ Նախիջեւանու եկեղեցեաց պահարաններուն մէջ կը պահուին:

Վշապահին ներկայ և անստոյգ ապագայ: կը թողուն կը մեկնին Հայք՝ իրենց 400 տարուան հայրենիքէն. այլ այն երկար տարեաց պարագայիւք յօղուած կապերը, մէկ հրամանաւ կամ քաղաքականութեան մի հարուածով շեն քակուիր. կը դառնան՝ կը դառնան ետևնին կը նային, մինչև որ քաղաքաց և գիւղից հետքը, Ս. Եկեղեցեաց խաչերը հորիզոնին հաւասարին: Երբ ամենայն ինչ կ'անհետանայ, հեղձամղձուկ սրտերնին ամուր կը կնքեն նչսնաւ Ս. Խաչի, որ արդէն մեզի ընդդէմ ամենայն ցաւոց և վշտաց ապաւէն տրուած է, և առաջ կը վարեն ճանապարհներն: Պառուներ և այլ անկարող ծերեր՝ կարասեաց սայլերուն վրայ կը թկտած, նոյն և մատաղերամ մանկտին կա-

¹ Շատ եկեղեցեաց քանդակազործ դռներ և այլ շատ մարմարեոնէ գերեզմանաց խաչքարինք տարել են հետերևին դազթական Հայք:

² Ճանապարհորդութեանս զլիաւոր նպատակն այդ ձեռագիրքն էին, յորս կը յուսար Սիսուանի Համագրութեան Հեղինակն դանել տեղեկութիւնս ինչ՝ նոյն գրուածին նա մար:

նայք աղջկունք ոտքով, և համեստութեան քօղը գլուխնին, տանուտէրք և երիտասարդք երկայնախոնկ կօշիկնին վեր քաշած, գօտիններն ամուր կապած, գեղացիք տրեխնին զսպած, տրտում տխուր առաջ կ'երթան օտար և անծանօթ աշխարհք: Կարծես Իսրայելի նոր բանակ մի է, որ եգիպտական բանութենէ փախստական կ'երթայ: Սոցա առաջ նորդք թէպէտ հանգոյն Մովսիսի բազմապատիկ վտանգներու ենթարկուած 'ի թաթարաց, այլ չունին ոչ Մովսիսի քաջութիւնը և ոչ նորա լուսապայծառ դէմքը, որպէս զի նոցանէ պատկառին ժողովուրդք: Արդեօք այսօր պատճառը հազարաւոր յոռքիներն են, որովք վարձատրած է զնոսա ոռւս տէրութիւնն¹. այլ ես չեմ կարող հաւանիլ որ Տէր Պետրոս և Յակոբ վարդապետները թողլով հետիոտս իրենց հօտը, իրենց կառքերու մէջ բազմած առաջ գնացած լինին: Որպէս և իցէ՝ Հայք իրենց այս միջոցիս առաջնորդաց վրայ՝ ոչ այն ատեն և ոչ ապա ժամանակ անցնելէն, չեն ունեցեր այն գոհացուցիչ համակրութիւնը, որում, ըստ իմ կարծեաց, արդար կերպով մտածելով՝ մեծապէս արժանաւորք են. վասն զի բազմապատիկ վտանգաց ենթարկուած են այդ սեւազրուխ առաջնորդք, մինչև որ թաթարաց վերջին կատաղութենէ ազատեն իրենց հօտը: — Զրուցենք քանի մի խօսք եւս այդ առաջնորդաց մասին:

1 Առաջնորդք գաղթականաց ստացել են 'ի տէրութենէ. Իզնատիոս Մետրապօլիտ 6550 ր. Պետրոս վարդապետ 2820 ր. Յակոբ կանոնիկոս 1250 ր. զարնեալնոցա կառքերու և ձիերու համար տուած է տէրութիւնն 2770 բուզի: Խառթախայ քրիստ. 'ի Ղրիմ:

Զ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԳԱՂԹԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՒԹ

Խառթախա՛ գաղթականութեան խնդրոյն առաջնորդութեան մեծ պատիւը Յունաց Իգնատիոս մետրապօլտին կու տայ բոլորովին. (ինքն ևս նոյն ազգէն է). և Հայոց առաջնորդքը ըստ ձեռանէ կամ իբրև երկրորդական անձինք կը դնէ: Մեք մեր կողմանէ ամբողջապէս այդ պատիւը յոյն մետրապօլտին ժառանգութիւն կը թողումք, սեփականելով ազգիս առաջնորդաց՝ կրած բազմապատիկ վիշտերը: Սակայն ազգիս վերջին ժամանակի զրիչք չեն յօժարիլ բոլորովին մետրապօլտին սեփանակել այն պատիւը. այլ մի մասն կը շնորհեն ժամանակին թեմակալ առաջնորդին Հայոց Ռուսաստանու, Յովսեփայ Երկայնարագուկ — Արղութեանց արքեպիսկոպոսին, որ թէպէտ անձամբ զուխ կեցած չէ գործոյս, այլ տէրութեան հետ բանագնացութեանց միջոց մեծ դեր խաղացել է. ինքն Արղութեանց սրբազան կը հաստատէ զայն յետագայ բանիւք. « Զամս երկուս 'ի գրունս մեծի կայսրուհւոյն դեզերեցաք »: Սա ինքն հանդիսապէս օրհնած է 1779 ին, նոր գաղթականաց Դօնի եղերք Նախիջևան քաղաքին հիմը, և ապա չորս տարի վերջը (1783 ին) քաղաքի կեդրոնը դրած է Ս. Լուսաւորիչ Հոյակապ եկեղեցւոյն հիմը, պարգև և յիշատակ թողլով եկեղեցւոյն արծաթապատ ընտիր գրչագիր աւետարան մի, ինքնագիր յիշատակարանաւ. յորում կը գրէ իրեն ով և ուստի վիճելը, և եկեղեցւոյն համար պերճանօք կը յա-

ւելու. « Ես հիմնարկեցի 'ի 1783 թուի »: Մի տարի վերջը դարձեալ այս Սրբազանս օրհնած է հիմն Ս. Խաչ վանքին Նախիջևանու, 'ի յիշատակ Ս. Նշան հին և հոշակաւոր վանքին Ղրիմու, հաստատելով անդ տպարան մի: Յովսէփ Սրբազան՝ մեր Ղրիմեցի գաղթականաց պիտոյքը հոգայէն վերջը, 1791 ին Բեսսարաբիոյ մէջ Գրիգորուպօլիս հայաբնակ քաղաքին ևս հիմունքը օրհնած է, և ազգիս մեծամեծ ծառայութեանց և միանգամայն տէրութեան հաւատարիմ հպատակութեանց 'ի վարձ՝ ստացել է 'ի պետութենէ վեղարին վրայ կրելու ադամանդեայ թանկագին մետրապօլտական խաչ մի և փիլոն (МАНТИЛ): Ապա 1779 ին կը ստանայ Ս. Աննայի առաջին կարգի ասպետական շքանշանը. և տարի անցնելէն վերջը (1800) բովանդակ ազգատոհմովն Ռուսաց իշխանազանց կարգը կ'անցնի, իբրև Նախարար քննազ: Չհեռանալով մեր նպատակէն՝ հարկ է յաւելուլ՝ որ թէպէտ պատերազմական միջոց ժամանակին, յորում Յովսէփ Սրբազան իբրև 'ի պաշտօնէ պաշտպան հանդիսացաւ հայկազանց Ղրիմու և Աովկասու, այլ սոցա վրայ յաւելլով իւր սեփական անձնական ձիրքերն, արթնութիւն մտաց, անխոնջ աշխատութիւն, վայելուչ և միանգամայն պատկանելի տեսիլն արտաքին՝ գրաւած են իշխանազանց ուշադրութիւնը, որով փառաց 'ի փառս յառաջադիմած է, շատ հեռու թողլով իրեն նախանձորդները:

Հայ հոգեորականի համար (չեմ ուզեր Մեսրոպատիպ ճգնազգեաց վարդապետները սոցա թուէն համարիլ) մի բան կը պակասէր Արղութեանց Սրբազանին, այն է ամբառնայն 'ի գերազոյն

աթոռ կաթողիկոսութեան, որում՝ ըստ գրութեան Արարատ օրագրի Էջմիածնի (1886) թիկնածու եղած է. սակայն երկինք այլազգ անօրինած են: Թէպէտ և ընտրութիւնն յաջողած է և 'ի շարս հայրապետաց ազգիս Յովսէփ Դ կաթողիկոս ամենայն Հայոց կը յիշուի, այլ նա յԷջմիածին չնստած՝ վախճանած է բաղմարդիւն կենօք 'ի Թիֆլիս (1801). մարմինը տեղափոխուած է յԷջմիածին, հանգչեցընելու 'ի քնարանի հայրապետացն Հայոց:

Ինչպէս կանխեցի գրեցի, Արղութեանց արքեպիսկոպոսն գաղթականութեան գործոյն մէջ անձամբ գլուխ կանգնած չէ, այլ այդ ծանր և վշտալի պաշտօնը կատարել է Պետրոս վարդապետ Մարկոսեան: Գաղթականք տեղը հասնելէն վերջը, վարդապետին անունը բոլորովին կը նսեմանայ Արղութեանցի փառաւոր անուան դիմաց. արգէն իսկ կ'երևի որ Պետրոս վարդապետ իբրև ըստ ձեռանէ ոմն գործ տեսած է, կամակատար կամ գործիք Արղութեանցի, այսինքն ազգիս տարագնացութեան ուղեկից, վշտաց և գանգատանաց վշտակից և կարեկից, փառաւոր հանդիսատարութիւնքը թողով սրբազան առաջնորդին:

Նոյնը կարելի չէ գրուցել Տէր Յակոբ վարդերեսեի վարդապետի համար. սա իբրև գլխաւոր գործող անձն, 80 տուն հայ կաթողիկաց առաջնորդելով յԵկատերինեպաւ քաղաքը, հիմն կը դնէ փայտաչէն Ս. Լուսաւորիչ եկեղեցոյն 1781 ին, և տասն և երկու տարի ազգիս վշտաց համբերութեամբ կարեկից լինելով, միջնորդ կը լինի տէրութեան, և բազում թախանձանօք յաջողընելով վերադարձի հրամանը, 1790 ին, վերատին

կ'առաջնորդէ իւր հօտին 'ի Տաւրիա, և կը բնա-
կեցընէ Թերակղզւոյս կեդրոնական քաղաքը՝ Խա-
րասու, նոյն արտօնութիւնքը զորս տէրութիւնը
գաղթական գնալնուն պատճառաւ շնորհել էր
ժողովրդեան, դարձեալ սեփականելով իւր հօտին:
Այդչափ վիշտ և նեղութիւն կրեւէն յետոյ, այն
բազմարդիւն վարդապետն պատճառաւ ժողովրդեան
անհամաձայնութեան՝ կը թողու իւր հօտը, և կը
հեռանայ վշտազին դարձեալ յԱկատերինեսպաւ
գաւառի մի գիւղի մէջ, և հոն կ'անցընէ իւր ծե-
բութիւնը, ու կնքէ բազմարդիւն և վշտալից կեան-
քը ¹: Կայսերական պարզեազրին զօրութեամբ,
գաղթականաց առաջնորդք՝ մինչև կենաց վերջը՝
իրենց պաշտօնին մէջ հաստատ պիտի մնան. Տէր
Յակոբայ այդպէս հեռանալը յայտնի կը ցուցընէ՝
որ անկարելի եղել է նմա մնալ իւր պաշտօնին
մէջ. և Իձ տարուան միջոց կրկին անգամ տեղէ
տեղ գաղթող ժողովուրդը, որք շատ ու շատ զօ-
հողութեանց և զրկմանց ենթարկուած են, ան-
շուշտ՝ անձեռնհաս բարձրագոյն իշխանութեանց
դէմ մաքառելու, իրենց համբերատար հովուին
դէմ ըմբոստացել են, որ աշխատած է միշտ կա-
տարել ժողովրդեան կամքը. խօսքիս մեծամեծ
ապացոյց մի է Հայոց կաթողիկաց վերագարձն

¹ Շատ տարի անցնելէն վերջէ (1859) Խարասուի Գե-
րարզոյ Հ. Վրթանէս վարդապետն Պուտուրեան, մար-
մարէ քանգակագործ տախտակ մի յարմարցընել կու տայ
Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մօտից ձախակողմը, պատին
մէջ, կոփել տալով բարեացապարտ Տէր Յակոբայ կիսա-
զատակերը. տախտակին վերի կողմը դրել տալով վարդա-
պետին անունը, պարզեազրին ստացումը և մահուան
տարին:

’ի Խարասու: Երբ տասնուերկու տարի անցնելէն վերջը դարձեալ կու գան Հայք ’ի Ղրիմ, և քարուքանդ կը գտնեն աշխարհքը, և երբ կը յիշեն որ յԵկատերինեսլաւ հազարաւոր տեսեսքի՞ն հոգիեր, զոր տէրութիւնն ձրիարար իրենց պարգևել էր, և իրենք կարող չեղան շահուիլ, անշուշտ դարձեալ ոչ սակաւ գանգատ և տրտունջ հասուցել են Տէր Յակոբու ականջը. արդեօք տրտունջ միայն. անտարակոյս նա ժամանակին յորդորած է ժողովուրդը որ մնան յԵկատերինեսլաւ, և աշխատին արդիւնաւորել իրենց տրուած հողը. այլ ուսմիկ ժողովուրդն միշտ անցեալը կը յիշէ, և այդ պատճառաւ շատ անգամ իւր ներկայն և ապագայն կը թշուառացընէ: Եթէ Խարասուցի հայ կաթողիկ ժողովուրդն մնար յԵկատերինեսլաւ, որ այժմ մեծ և վաճառաչահ քաղաք է, և գիտնար արգիւնաւորել իրեն տրուած հողը, այսօր մեծամեծ հարուստ վաճառականներ պիտի լինէին Հայք, և պիտի ունենային իրենց ձեռքը ցորենաբեր դաշտեր:

Սակայն ըստ օրինակի ուսմիկ մարդկան, աւելորդ է անցելոյն վրայ ափսոսալը. այժմ ևս եթէ Հայք չափաւորեալ կենօք շտտանալով, աւելի աշխատասիրութեամբ գործեն, դարձեալ իրենց հանգիստ ներկայիւ՝ լաւագոյն ապագայ պիտի կարենան պատրաստել իրենց սերնդոց:

Է

« ԶԲ գեղեցիկ իմ կորուսեալ հայրենիք.
Ո՛վ լեռնառակ տղետաւոր եւ քաղցրիկ » :

Իտալացի բանաստեղծին այս երկու տողերը, զորս դրած է Բարեւազուց գետոյն եզերք տարազրեալ Իսրայելացուց բերանը, յոյժ վայելչական էին մեր գաղթական եղբարց ալ, երբ ընդ երկար ճանապարհորդելով հասան իրենց խոստացեալ երկիրը, Գօն գետին հիւսիսային ափանց վրայ: Աչք մի կու տան նոքա այն վայրենի և անծառ անապատին, որոյ ծայրը հեռուն երկնից հետ կը միանայ, ուր չիք ոչ լեռ, ոչ բլուր և ոչ անապատ ամայի. ուր միայն տեղ տեղ շամբեր և եղէգնուտներ կ'երևան ամառ ատեն, վասն զի Գօն գետն վեր բարձրանալով գարնան իւր թումբերէն՝ կ'ողողէ երկիրը ցմեծ տարածութիւն, և ապա տակաւ յետս քաշուելով ճախճախուտներ կը թողու այս դին այն դին: Զայս ամենայն տեսնալով տարագիր հայկազուն Տաւրիացիք, կը լքանին, կը կտորի սրտերնին, աչքերուն առաջ կը բերեն իրենց կորուսեալ հայրենիքը՝ հեշտին ելևէջներով, հոյակապ մայրաքաղաքն Կաֆա՝ իւր 36 ծովահայեաց և գմբէթագարդ եկեղեցեք, այգիներով և պարտէզներով, Սուրխաթ նսեմաստուեր խիտառխիտ անտառներով, և անոնց մէջ վանքերով և արեղայից հողետներով. Կէօք-Թէփէ՝ բարձրաբերձ ժայռերով, Սուլտան-Սալա, Թոփլու, Օրդալան, Սօվուք-Սու, Սուղայիա, իրենց կանաչագեղ բլուրներով, այգիներով, պտղատու պարտէզներով, անտառներով, կը հառաչեն նոքա սրտերուն խորե-

րէն. երթալով կը բազմապատկի նոցա դիմաց հե-
ռաւոր Տաւրիոյ գեղեցկութիւնը, կը հալի նոցա
սիրտը երբ կը յիշեն որ անդարձ պիտի լինի ի-
րենց պանդխտութիւնն, « ո՞վ յիշատակ աղետաւոր
և քաղցրիկ »: Ար նզովեն այն ժամը՝ յորում թո-
ղին զՂրիմ, կ'երդնուն որ անպատճառ վերա-
դառնան ու վայելեն իրենց պապենական այգի-
ներն ու պարտէզները. կը բողոքեն կը պաղատին,
այլ լսող չի լինիր: Քանի մի գերդաստանք ինչպէս
Տէօրվէթեանքը կ'անցնին յԵկատերինեսլաւ իրենց
կաթուղիկ եղբարց մօտ, և ապա նոցա հետ 'ի միա-
սին կը վերադառնան 'ի Ղրիմ. այլք ոմանք զի-
շերախառն կ'ուզեն վերադառնալ փախչելով, այլ
սոցա առաջ պատ կ'ելնեն Խաղախաց սուիքը: Ա-
մայ և ակամայ կը խոնարհին առ ժամն ճակա-
տագրին անողոք օրինաց: Յովսէփ սրբազան՝ նո-
ցա թեմակալ առաջնորդը շատ յորդոր և խրատ-
ներ կու տայ, որ Ողորմած կայսրուհւոյն կամացը
հնազանդին. մեծահանդէս կ'օրհնէ ըստ զծա-
գրեալ յատակաձևոյն նոր շինուելիք քաղաքին հի-
մունքը, և հին՝ միանգամայն ցանկալի անուամբ
կը կնքէ քաղաքը Նախիչևան կոչելով: Այս կը լինի
1779 ին, Ղրիմէ ելնելուն երկրորդ տարին.
կ'անցնին ամիսներ, կ'անցնին տարիներ, տապա-
կէզ ամբարանց՝ խստաշունչ ձմեռներ կը յաջորդեն,
կու գայ գարուն. կը յիշեն գեղացիք իրենց Ղրի-
մեցի համանուն ՝ գեղերն անտառազարդ բլուր-

1 Նախիչևանցի գեղացիք իրենց գեղերուն թաթարա-
նշխան անուններ առած են, 'ի յիշատակ իրենց կին բնա-
կութեան Զալթըր (Օրդալան), Մեծ Սալա, Սուտան - Սա-
լա, Թոփաի և Նիսվիթա. այս վերջինս թաթարահնչելեան
չէ, և Ղրիմու մեջ լսած եմ մինչև ցայսօր այդ պնունով գեղ:

ներով, ուր գոյնզգոյն ծաղկունք հազարներով կը բացուին, ուր անտառք կը հնչեն սոխակին և սարեակին գեղգեղներով, դարձեալ կը բորբոքի նոցա մէջ Ղրիմ դառնալու փափաքը, ասիներուն մէջ կ'առնուն զատիկ կոչուած փոքր միջատը ու կը հարցընեն կողկողագին « Ղրիմին ճամբան որն է » . անբան մեջատը չփոթած՝ մի այս և մի այն կողմը կ'երթայ :

Ղրիմեցի գաղթականաց մի մասն, կորուսեալ Հայրենեաց ցաւով, միանգամայն շկարենալով դիմանալ օդոց խստութեան, այդ անսիրելի աշխարհքին մէջ կը փակեն աչքերը . մնացեալք տակաւ կը հասկնան որ իրենք շատ անզօր են մաքառելու հզօր իշխանութեան դէմ . միւս կողմանէ հզօրագոյն ևս հարկ մի կը ստիպէ զնոսա՝ ի Ղրիմ վերադարձի ցնորքն մէկ կողմ դնելով՝ աշխատութեան ձեռք զարնել . այդ հարկն էր կարևոր ապրուստի և առտնին պիտոյիցը : Նեղը ինկած Նախիջևանցին, և ըստ վկայութեան նոցա, « ասեղով հորեր փորելու ստիպուած », կը սրէ գեղացին իւր խոփը, և թազախաց աշխարհին հողն տակն ու վրայ կը բերէ քաղաքացին, ըստ բնատուր հանճարոյ, վաճառականութեան ձեռք կը զարնէ, և շահաւոր կերպով իրեն կը ծառայեցնէ Դոնի ալիքը . Սիրերիայէ սկսեալ մինչև ցնասպիական ծով, քաղաքէ քաղաք, տօնավաճառէ տօնավաճառ կը յաճախէ Նովկորոտ, Թարքով, Քիեվ, Փոլթաւա, կաշի, մորթ, ճարպ, իւղ, բուրդ, երկաթ, ածուխ, ցորեան, ձուկն և այլ և այլ ձեռագործ ապրանքներ՝ կ'առնու կը ծախէ, և քիչ ժամանակի միջոց այնպիսի նոր վաճառաշահութեան դռներ կը բանայ այն վայրենի աշխարհին մէջ, որ օտարք

կը նախանձին, կ'ուզեն Նախիջևանու քաղաքացի գրուիլ, այլ Նախիջևանցիք Կայսրուհւոյն շնորհած պարգևագրին զօրութեամբ՝ կը մերժեն օտարաց մուտքը 'ի Նախիջևան: Այս է ահա պատճառը, որ Նախիջևանու մօտ, Ռոստով կոչուած աննշան բերդը կամաց կամաց 100,000 բնակչով մի մեծ քաղաք կը դառնայ. ուր բնական ճամբով կ'անցնի Նախիջևանու առևտուրը. սակայն Ռոստով գիտնալով որ շնորհիւ Նախիջևանու է իւր գոյութիւնը, տակաւ մօտենալով բարեկամութեան ձեռք կը կարկառէ. Նախիջևան իր առանձնաշնորհութիւնքը և ամփոփութիւնը պահելու մտքով, հեռու կը բռնէ զինքը. այլ կու գայ ժամանակ և արդէն մօտ է, որ այդ երկու քաղաքներ իրարու պէտք է խառնուին. զգուշանալին այն է՝ որ մեծը զփոքը չկլանէ բարոյապէս:

Ը

Ն Ա Ր Ն Ա Ի Ի Զ Ե Ի Ա Ն

Մայիսի 6ին, ժամը կէս օրէն վերջ հինգ և կէս հասայ Նախիջևանու դրկից Ռոստով մեծ քաղաքը. այլ զի վախճանս մեծամեծ քաղաքաց ժխորիւ զուարճանալ չէր՝ իսկոյն փոքրիկ կառք մի վարձեցի 'ի Նախիջևան գնալու: Ռոստովի սալայատակ մեծ փողոցներէն անցնելու միջոցիս, երկու կողմը բարձրացած աղիւսակերտ վայելչաձև տներուն վրայ էր աչքս, մանաւանդ հարուստ խանութներուն վրայ, որոց ճակատը կը տեսնէի զարդարուած սկէտառ վերտառութիւններով: Ար

դէն գիտէք՝ որ Ռոստովի վաճառականութեան մի մասն Նախիջևանցի Հայոց ձեռքն է. սակայն և ոչ մի հայազիր վերտառութիւն չգարկաւ աչքիս բաց յայտմանէ, հայերէն մականուանքն ևս այլայլած գտայ, այլ և յախուան կերպով թարգմանած. նոյնպէս գեղեցիկ եան վերջաւորութիւնը ոչի փոխուած: Շատ կարելի է որ Նախիջևանցիք, կամ Ռոստովցի հայկազունք՝ այդ մասնկանց և վերջաւորութեանց խնդիրը բժախնդրութիւն համարին. սակայն ազգային ոգւոյ նախանձախնդիր մարդը, փոքրէն մեծը գուչակելով՝ անկարելի է որ չվշտանայ: Ո՛ր են այժմ ասկէ երկու հարիւր տարի առաջ մեծանուն և փարթամ Երանովիչ, Վարդերեսելիչ, Ակորովիչ, և այլ լեհաստանի հայկազուն վաճառականներն և ազնուականներն. չէ որ նոքա տակաւ հեռանալով յազգութենէ՝ բուրովին օտարացան լեհանալով:

Առաջ գնալով, քաղաքին արուարձաններուն կը մօտենայի, և ահա տափարակ դաշտին վրայ յերևան եկաւ հայարնակ Նախիջևան քաղաքն իւր կանոնաւորեալ փողոցներովն և զմբէթազարդ եկեղեցեօք, բարձրաբերձ զանգակատամբ, որոց գաթան ոսկէգօծ խաչերը դէպ՛ի մուտս խոնարհած արևուն ճառագայթներէն գեղեցիկ կը ցուլային:

Նոյն օրը թագաժառանգ պայագատին Նիկոլայոս Ալեքսանդրովի ծննդեան օրը լինելով, բոլոր քաղաքը եռագոյն դրօշակներով զարդարուած էր. օրը հանդարտ և ջերին, փողոցաց մէջ բազմութիւն զրօսասիրաց, այլ որ սխրալին և քան զամենայն ինչ ինձ հաճոյական, ամէն կողմանէ Հայոց բարբառը կը լսէի, գրեթէ ամէն տեսածս

հայկական տիպար էր, յոյժ ախորժեցի և անմոռանալի զգացմամբ տրոփեց սիրտս, երբ Ս. Լուսաւորիչ փողոցէն առաջ գնալով՝ յանուն Սըրբոյն կանգնած հոյակապ եկեղեցին դիմացս ելաւ, 'ի ճակատուն կրելով ազգիս լուսատուն վայելչանկար պատկերը, անհրաժեշտ Տրդատ Թագաւորն Հայոց՝ առաջի Սրբոյն ծնրադիր:

Անցեալ տարի աշնան, օգոստոս 20, Փոտոլեան գաւառին մէջ հայաչէն Կամենից քաղաքը մտնելու միջոցիս, բոլորովին տարբեր զգացումն կրած էի, քան ինչ որ այժմ զգացի. հոն քարակարկառ երկյարկ բերդի զոնէն կ'անցնէի Հայոց քաղաքը մտնելու համար, իսկ աստ անբերդ և անդուռն՝ հայութեամբ կենդանի քաղաքին մէջ ազատ կը շնչէի. հոն ինչպէս եղանակն աշնան, նոյն և ազգիս աշունը կամ ձմեռը պիտի տեսնէի, իսկ աստ՝ ազգս գարնան վիճակի մէջ, ուր էր թէ երկայն լինէր այդ գարունը, և երկարագոյն ևս ամառն յաջորդէր նմա: Երկու քաղաքներս ևս Անեցի հայկազանց շէնք, օտար աշխարհաց մէջ՝ մին ԺԻ դարուն շէնք, քարաչէն պատեր չորս կողմը, որոց պտոյտը ջրալիք խրամ, որպէս զի թշնամին ազատ մուտք չգտնէ, մինչ երկրորդս ազատ յաճէ թշնամուոյն, անպարիսպ և անխրամ ԺԸ դարուն վերջերը շինուած: Առաջնոյն մէջ Հայկազունք երկար տարիներ իրենց դերը փառաւոր կերպով խաղալէն վերջը՝ քաշուել են, իսրայելի¹ որդւոց թողլով Թատրը, իսկ աստանօր նոր կը սկսին ազ-

1. Այժմ Կամենիցի վաճառականութիւնը Հրէից ձեռքն է՝ միջոցեւ երբեքն Հայոց ձեռքն էր ինչպէս քաղաքին, նոյնպէս և աշխարհին վաճառականութիւնն:

գայինք դպրութեամբ լուսաւորեալ, ազգիս անունը արգոյ ընծայելու օտարաց առջև:

Նախիջևան հայաբնակ քաղաք է 16,000 բնակչով, որոց թէպէտ իբրև կէսն օտարազգի կը համարուին, այլ քաղաքին մէջ հայ տարրն է տիրողը, Յնացեալք ծառայ մարդիկ են: Նախիջևանի հայ բնակչաց վրայ խօսելով մեզ հարկ կը լինի սակաւ մի ուղիղ նպատակէն խոտորելով, ընդհանուր գաղթական Հայոց թիւերով զբաղել, որ կարծեմ հետաքրքրական լինի ընթերցողաց: Խաթաթախա՝ վաւերական աղբիւրներէ հաւաքելով, ընդհանուր գաղթական քրիստոնէից թիւը՝ որ ելած են 'ի Ղրիմէ 1778 ին՝ 31,386 կը դնէ. այս ժողովրդոց կէսը (եթէ ոչ և աւելին) Հայք են, զի քիչ վերջ ազգային գրիչք 3000տուն Հայոց կը գրեն. եթէ տուն գլուխ հինգ հոգի հաշուելու լինիմք, Հայոց թիւը 15,000 կը լինի: Այժմ՝ Նախիջևան 8,000 կը հաշուի քաղաքին ազգայնոց թիւը, նոյնչափ կամ սակաւ մի պակաս՝ Նախիջևանու հինգ գեղերուն բնակիչք, ընդ ամէնը բոլոր հաշուով՝ Նախիջևան իւր գեղերով 16,000 հայ Անեցի գաղթականք, եթէ սոցա վրայ աւելցնեմք 5,000 Ղրիմեցի Հայք, որք դարձել են Եփեսոսեցիներու, կը լինի 31,000: Ազովեան կամ Եփեսոսեցիներու գաւառի շատ քաղաքաց մէջ և Կուրան գետի վրայ ցրուած Հայերն, հաւանական է որ Յը կամ 10ը հազարի հասնին. որով Ղրիմէ ելնող հայ գաղթականաց թիւը, 'ի միասին հաշուելով վերադարձողները, կը լինի 30,000: Հարիւր տարուան միջոց կրկնապատիկ եղած է Հայոց թիւը, որ թէպէտ օտար ազգաց ազգահամարին նայելով չէ մխիթարական, այլ այս պէտք

է 'ի նկատի ունենալ, որ բազմաթիւ եղած է՝ մինչև Եկատերինեսուրաւի կլիմային վարժելու հայ մեռելոց թիւը: — Այլ մեք դառնանք 'ի Նախի- ջեան:

Քաղաքը հեռուէն դիտելով՝ չափաւոր տարա- ծութեամբ քրիտոսնեայ քաղաքաց երևոյթ կ'ըն- ծայէ, որոյ հաւաստիք են վեց եկեղեցեաց կաթու- դիկէք և զանգակատունք: Բուսականութեան մա- սին շատ աղքատ է քաղաքս, որոյ վրայ այժմ նոր կը սկսին խնամք տածելու: Քաղաքիս ներ- քին և կամ բարոյական կառավարութիւնքն յու- սալիր ապագայ կը խոստանայ հայ սերնդոց, դպրու- ցաց յաճախութիւնն, որոց վրայ մեծամեծ գումարներ կը ծախեն, պիտի հաւաստեն որ մի գրածս. այժմ ևս մօտ հազարի երկսեռ ուսանողք դպրոցաց, ինչպէս քաղաքին նոյն և եկեղեցեաց կենդանի զար- դարանք են, իրենց միաձև զգեստներով:

Այլ ես դեռ փոքրիկ կառքով առաջ կ'երթայի, դէպ իմ ասպնջական մեծարգոյ Եպիփան Պո- պոյեանցի տունը, որ արդէն 'ի վաղուց ինձ ծա- նօթ էր և բարեկամ: Պ. Պոպոյեանցի դունը Ս. Լուսաւորիչ փողոցին վրայ, գեղեցկաչէն տանց մին է. առաջ գնալու միջոցիս աստի և անտի շատ հայերէն բացատրութիւնք յականջս կը հասնէին, որք թէպէտ ինձ համար նոր չէին, վասն զի մե- ծաւ մասամբ նոյն է Նախիջեանու հայ բարբառը Ղրբմեցոյն հետ, սակայն և այնպէս այդ հեռաւոր աշխարհին մէջ, և այն 'ի փողոցի, Հայոց լեզուն լսելը ինձ շատ ախորժելի կու գար. ուշադրու- թեամբ մտիկ կ'անէի՝ որ բառ մի ուշադրութե- նէս չվրիպի. մին բարձրաձայն կ'ասէր ընկերին. « Հածէ ինա բանը գիտիսու, սախըն շմոռանաս »:

ընկերը կը պատասխանէր. « Ատ Բնչ կայածի է, հիչ կը մոռնամ եղիլ է, ատ շատ ինթեռէսնի բան է ու ». երրորդ մի « Ան իրկուն սատ (զրօսարան) կու գան ». չորրորդը կը պատասխանէ « Օխթնի ութնի արայլիս խայրէթ կ'անիմ գալու, առաջ չիմ կարնալ ». ասոնք և այլ ասոնց նման աչայ - մաչայ, ափաչ - քափաչ, ձորով - մորով բացատրութիւնք, որոց քչէն կարելի է մնացեալն գուշակել. Այս ևս հարկաւոր է աւելցընել, որ Նախիջևանցիք իրենց համար առանձին զատ քաղաք և բնակութիւն ունենալով, յօտարաց ամենեկն կանածութիւն չունին, և տան և փողոցի մէջ ամենեկն տարբերութիւն չեն դնել. շատ անգամ տան մէջ և այն՝ ցած ձայնով լինելու բացատրութիւնք կամ խօսք, հրապարակներու վրայ բարձրաձայն կը հնչեն : Այլ ինձ, այս պարագայիս մէջ, ամենայն բառ, ամեն հայկական խօսք կամ զրոյցք քաղցր կը հնչէր. այդպէս սիրելի է սովորութեան օրէնքըն, և ախորժելի հայրենեաց յիշատակն :

Հասայ շուտով մեծարգոյ բարեկամիս տունը, որոյ սիրալիր հիւրընկալութիւնն առաջին վայրկենէ մինչև մեկնելու օրս, մեծապէս զիս պարտաւորած է : Նախիջևանու արժանի յիշատակի շինութեանց վրայ խօսելէն առաջ մի քանի խօսք զրուցեմ դոցա աշխարհաբար լեզուին վրայ, որոյ աղաւաղմունքն արդէն քանի մի բառով քիչ մ'առաջ յիշեցինք : Այդ բարբառոյն վրայ յիրաւի երկարօրէն խորհրդածել կարևոր է. զի այդ այն սրբազան աւանդն է՝ զոր յընթացս 600 տարինեբու պահած է իրեն սեփական յատկանիչ Անեցի ոստանիկ ժողովուրդն, որով կը զանազանի յօտարաց, որով կը տածէ ոգի ազգի և սէր հայրենեաց :

Թէպէտ ուամկին բերանը աղաւաղ ևս երևնայ, բազմութեամբ թաթար և ռուս բառերու. այլ հիմը և արմատը գեղեցիկ է և վայելուչ և քաղցրահնչիւն քան զամենայն գաւառական բարբառ հայկական լեզուիս: Եթէ հայագէտ մի ուշադրութեամբ միտ դնէ, կրթեալ և հայրենագէտ Նախիջևանցւոց երիտասարդաց և օրիորդաց, որք հայկական տառերն նազանօք և փափուկ հնչելով կը խօսին իրենց անեցի լեզուն, թօթափելով եկամուտ խորթաձայն օտարտի բառերը, կրնայ ստուգել զրուցածիս ճշմարտութիւնը:

Ոմանք նոր հայագէտք, իրենց նորահնար լեզուով պանծացեալ համարձակ կը գրեն պախարակելով քանի մի օտարամուտ բառք Նախիջևանցւոց բարբառոյն՝ ի բերան սերտած. այլ լեզուաց կանոնը և կազմը քննողին յայտնի է գեղեցկութիւնը Անեցւոց բարբառոյն: Բացատրութեան անկարօտ ճշմարտութիւն մի է. որ որչափ ազգ մի կրթուի և յղկուի՝ նոյնչափ այն ազգին լեզուն մատենագրութեամբ կը կոկուի: Նախիջևանցիք և Ղրիմեցիք գերահռչակն Անայ Բագրատունի ոստանիկ ժողովրդեան մասն են. ինչպէս քաղաքն Անի աննը ման է գեղեցկութեամբ, այլոց քաղաքաց աշխարհիս մերոյ, նոյնպէս կը վայլէր որ լինի նորա ժողովրդոց բարբառը: Թաթարաց լուծը և այլ օտար ազգաց ազդեցութիւնը եթէ տակաւ Նախիջևանու բարբառէն վերցուի մաքրուի, անշուշտ այդ բարբառը ամենայն աշխարհիկ բարբառէ աւելի քաղցրահնչիւն և ճկուն պիտի հանդիսանայ: Նախիջևանցիք այդ բանին դրօշն վարժապետաց կամ հեղինակութեանց կարօտութիւն չունին. շատ գեղեցիկ, միանգամայն ախորժալուր հնչմամբ կը խօ-

սին քաղաքին կրթեալ մասն . այդ գործոյն համար մեծ գիտութիւն և մեծ խելք ևս հարկաւոր չէ . ամենայն հայկական ականջ կը զանազանէ որ աւելի ընտրելի է խորդաձայն թաթար բառերուն տեղ՝ կոկ հայերէնը գործածել . ինչպէս շրտրխի տեղ՝ հիւ մայ , այսպէս մայայի տեղ՝ բուրուվին , ասիայ թափայի տեղ՝ անապարելով հեշպէրի տեղ՝ հարկաւ : Նոյնպէս վերջին ժամանակի ուս եկամուտ բառերուն տեղ նորա հայկականը գործածել . գրագէտ Նախիջլանցին չի գրուցել սիքստոտրիչն , այլ թացութիւն խոնաւութիւն , չի գրուցել ուշիցա , այլ փողոց . ոչ փշոջատ , այլ հրապարակ . ոչ քոչոչա , այլ կառավար : Ըստ իմ կարծեաց Նախիջլանու հին և ընտիր աշխարհաբառին խանգարման մեծապէս պատճառ կրնան լինել , գեղերու ոմանց մէջ գտնուած կովկասցի ուսուցիչք . նախ սոքա տղայոց զարգացումը հարկաւ քանի մի տարի ետև կը ձգեն , զի ոչ տղայք վարժապետին գրուցածը կը հասկնան , և ոչ վարժապետը տղայոց լեզուն . երկրորդ հաւանական է որ շատ անգամ տղայոց գեղեցիկ անեցի բացատրութիւնք՝ անիմանալի լինելով վարժապետաց համար , ծաղրածութեան նիւթ կը լինին 1 : Որչափ գովելի բան կը լինէր , եթէ Նախիջլանցիք շուտով իրենց դպրավանուց և այլ վարժարանաց մէջ գեղերու և քաղաքին ուսումնարանաց համար վարժապետ պատրաստէին . որով մեծապէս՝ փոքր տղայոց իրենց մայրենի գեղեցիկ աշխարհաբար լեզուաւ զարգանալուն պատճառ կը լինէին :

1 . « Մանի մանի մի տուլ » կովկասցւոյն անիմանալի է . « խելքս մտն կու զայ » , նոյնպէս անսովոր կովկասցոց . « Ճրագ անցուր . » մարտի տեղ . « ապուլ տուց լեռնէ վար » , թողուց , և այլն :

Թ

ԵԿԵՂԵՑԻՔ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՔ ԵՎԱՒԻՋԵՒԱՆՈՒ

Նախիջկան շէն և պայծառ վեց եկեղեցի ունի քաղքին մէջ. Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցին իւր ընդարձակութեամբ և ճոխութեամբ կը գերազանցէ զայլս. 'ի միջավայր քաղքին շինուած է՝ մեծագործ և հոյակապ, չորս կողմը ծառաստան, զոր կը շրջապատեն դրսէն երկաթեայ ճաղք, լայնանիստ է կաթողիկէն, արտաքոյ և 'ի ներքոյ նկարեալ. բարձրաբերձ է զանգակատունն՝ որ մտից գաւթին վրայ կ'ամբառնայ: Եկեղեցեաց ճարտարապետութիւնն առ հասարակ տեղական կամ ուսական է, աւելի պիտոյից և յարմարութեան ուշ դարձուած է՝ քան թէ գեղեցկի և վայելչութեան. այս գատողութիւնս բոլորովին սխալ կը լինի գերեզմանոցի Ս. Կարապետ նորաշէն եկեղեցւոյ մասին, որոյ վրայ առանձին խօսիլ հարկ է: Քաղաքիս եկեղեցիք աւմէնք ալ ունին մտից առաջ մեծամեծ գաւիթներ, որոց վրայ կը բարձրանան զանգակատունքն. յաջմէ պահարան, յորում կը պահուին ընդ այլ եկեղեցական սպասուց՝ բազմաթիւ գրչագիրք. 'ի ձախմէ ժամակոյի կամ պահապանի համար սենեակ մի: Եկեղեցեաց ներսի կողմէն, մտից դրանց վրայ կան վերնատուններ. ընդարձակ է եկեղեցեաց մէջն և առհասարակ մաքուր կը պահուին. դասը զատուած է եկեղեցիէն, խորանները միշտ բարձրաբերձ խաչկալներով զարդարուած են, ուր բաց 'ի խորանին պատկերէն, այլ շատ պատկերներ կան, յորոց ոմանք

արծաթի հանդերձիւք պաճուհեալ են. խորանաց ետի կողմը, 'ի միջավայրին մի մեծ խաչ, վրան փրբկ շահան արձանով, և ընդ այմէ ընծայարան, խաչկային ետևի կողմը: Սեղանից վրայ բաց 'ի արծաթապատ խաչէ և աւետարանէ՝ կայ ըստ Ռուսաց եկեղեցեաց՝ եօթնաշահեան աշտանակ մի:

Նախիջևան հասնելու երկրորդ օրը՝ արգոյ բարեկամիս հետ՝ առաջին այցելութիւն Ս. Լուսաւորչի տաճարին տուինք, ուր արդէն պատարագն առաջ գնացեր էր, այլ 'ի միջավայր դասուն կանգնած ալախօսիկ դպիրն՝ իմ ուշադրութիւնս գրաւեց, իւր ախորժալուր երգեցողութեամբ: Անմիջապէս ժամէն վերջը ծանօթանալով եկեղեցւոյն աւագ երէց Տէր Խաչատուր Զարիֆեանի հետ, մտանք պահարանը, ձեռագիրքը աչքէ անցընելու համար: Լուսաւորչի պահարանը անհամեմատ կերպով հարուստ է գրչագրօք, քան այլոց եկեղեցեսցը, ուր կան երկու հարիւրէն աւելի գրչագիրք, ըստ մեծի մասին հոգևոր գրեանք: Մեծայարգ են երեք մագաղաթեայ աւետարանք՝ Կիլիկեան յիշատակարանօք. կան և 'ի Կաֆա գրուած պատկերազարդ աւետարանք, որոց նկարք ներկայացընեն փրկչական առակները. այս պատկերք նկարչութեան արուեստի մասին՝ գերազանց երևցան ինձ՝ քան մինչ ցայսօր տեսածներս հայկական ձեռագրաց մէջ, որ թերևս արդիւնք լինի մերայնոց ընդ Գեւուսացւոց ունեցած յարաբերութեանց. բաց յայցանէ Լուսաւորչի պահարանին մէջ կը գտնուին ընտիր Ճաշոցք, Յայսմաուրք, Ճառընտիրք, երկու օրինակ Սարգիս Ենորհալի, Գանձարանք, Շարականք, Պատարագամատոյցք, ընդհանրապէս մաքուր գրուած, որոց երեք շորրորդ մասը 'ի հաշակառոյ

մայրաքաղաքն Կաֆա և 'ի հոյակայն Սուրբաբ գը-
րեալք, ընդ հովանեաւ զանազան եկեղեցեաց, 'ի
ձեռն փցուն և մեղսամեղ երիցանց և արեղայից:
Չեռագիրքս թղթատած միջոցիս, որոց կոկիկ և
վայելչաձև գրչութեանց վրայ ոչ սակաւ ախորժաւ
նօք կը զմայլէի, մտօք լատին բառերն կ'որոճայի
Sic transit gloria mundi. Երբեմն բազմաթիւ հայ
գաղթականօք, չէն հայ եկեղեցեօք և բազմագոյն
ևս հայագէտ հոգևորականօք պայծառացեալն Կա-
ֆա, այժմ նկուն և անփառունակ. շատք յեկե-
ղեցեաց հիմնայատակ, մնացեալ դատարկ, և նո-
ցա ծուխն և ժողովուրդ՝ աստ՝ Իօնեան աշխարհ-
քը շէնցընելու քուած:

Եթէ այդ ձեռագիրք, նոյնպէս և այլ եկեղե-
ցեաց մէջ գտնուածք, նոյն և որք առանձնակա-
նաց մօտ կը գտնուին, մանր քննուին, ոչ սա-
կաւ տեղեկութիւն կարելի է հաւաքել, ինչպէս
ազգիս ընդհանուր պատմութեան, նոյնպէս և աւե-
լի ևս Ղրիմեցի գաղթականաց մասին: Մեծա-
պատիւ Գրիգոր աղա Սալթիքեան, որ այժմ ար-
ժանաւոր քաղաքագլուխն է Նախիջևանու, խոս-
տացաւ Ս. Լուսաւորչի մօտ շինել տալ առաձին
գրատուն գրչագրաց համար, և հոն ժողովել այդ
թանկագին յիշատակարանները:

Երկու մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ
ազգիս Գրիգոր աղա այդ գրատան շինութեամբ.
մին՝ հաւաքելով 'ի մի տեղ ձեռագիրները, կոր-
սուելու և աստ և անդ ցիրուցան լինելու վտանգը
կը վերանայ. և երկրորդ՝ ազգիս զպրութեան
համար վաստակող անձին մեծ ղիւրութիւն կը լինի,
ամփոփ գտնելով այդ կարևոր գործիքը. կը փա-

ժագիմք որ օր մի ասալ իրագործէ Գրիգոր աղա իւր խոստմունքը 1:

Միւս եկեղեցիք որ Նախիջևանու այլ և այլ թաղերուն մէջ շինուած են, ինչպէս Ս. Համբարձման, Ստուաժամօր, Ս. Նիկողայոսի, Ս. Գէորգայ, Ս. Թորոսի, մասնաւոր յիշատակութեան արժանաւոր բան չունին: Ի յիշատակ համանուն կաթայեցի եկեղեցեաց, անշուշտ շինած են Նախիջևանցիք, քաղաքին հիմն օրհնուելուն պէս՝ փայտաշէն եկեղեցիք, ուր և գետեղուած են Ղրիմէ բերած օրբազան համանուն եկեղեցեաց սպառքը և սրբազան անօթները, և ապա ժամանակ անցնելէն վերջ՝ փայտաշէնք 'ի քարաշէն փոխուած են: Ս. Լուսաւորչի ընդարձակ բակին մէջ անսնելով քառակուսի մատրանաձև փառքիկ անդուռն և անպատուհան շէնք մի, որ սրբոյն պատկերը կը կրէր վրան, հարցուցի թէ ինչ վախճանի համար է. ինձ պատասխանեցին թէ հին եկեղեցւոյն խորանին տեղն է, որ ոտնակոխ շինելու համար պատսպարել է Յովհաննէս ազա Փոփովեան 2:

Խորհուրդ կու տամ ես ամէն հայ ճանապարհորդի, նախ հեռուէն և ապա 'ի մօտոյ լաւ մի զննել գերեզմանոցի Ս. Արապետ նորաշէն եկեղեցին որ իւր ճարտարապետութեամբ և վայելուչ կոնաձև

1. Պ. Արապէա Եզեան արգէն 10-15 տարիներէ 'ի վեր դրած է Ս. Պետրոսուրգէն առ ակնաւոր Նախիջևանցիք, որ սոքա թանգարտն մի շինեն քաղաքին մէջ ամէն տեսակ հուսթիւններ պահպանելու համար. սակայն ցայսօր ժամանակի այս կարևոր բանին չոք տանոց չէ եղած:

2. Յովհաննէս ազա Փոփովեան այժմ հանգուցեալ 100000 ռուբլեաց դումար յօգուտ ազգային բարեգործական ևստատուութեանց, բաց յողութեան միջոց տուածներէն:

կաթողիկէիւ, երկնաշու կամարօք, բարձր սիւնե-
րով և քանդակազործ խարիսխներով և խոյակնե-
րով, կը յիշեցնէ կամ լաւ ևս կը պատկերա-
ցնէ աչաց դիմաց՝ տարաբազդն Անույ գեղեցկա-
գոյն եկեղեցեաց մին: Եկեղեցւոյն մէջ ամենայն
ինչ ազգային ճաշակով յարդարուած է, և հայու-
թիւն կը շնչէ. ազգային սրբոց կենդանագիրք կը
զարդարեն պատերը, Թագապսակ հայրապետք ազ-
գային տարազով, սրբակրօն վարդապետք վեղարիւ-
պողեալք: Աւագ խորանին պատկերը նմանութիւն
է Մուրիլոյ սպանիացի նկարչին՝ Աստուածամօր
անարատ յղութեան պատկերին. վերի կողմը նկա-
րուած է ամենասուրբ Երրորդութիւն, որ զհրա-
շագեղ Կոյսը կը պսակէ երկնային պսակաւ Թա-
գուհի երկնի և երկրի: Քրիստոնէական սուրբ հա-
ւատոյս մերոյ էական մասունք հանդերձ պատմու-
թեամբ Հայաստանեայց եկեղեցւոյ, յանդիման կ'ե-
րևնայ փոքր եկեղեցւոյս մէջ, որ կը կրէ զանուն
Ս. Կարապետի՝ պաշտպանի ազգիս Հայոց: Եկե-
ղեցւոյս ճարտարապետն եղած է Պ. Բաղտասար
Հազր-Բէգեան՝ հայ երիտասարդն, որ ճարտար
յատակագծին համար ստացել է վարձ արծաթի
միտալ Ս. Պետրբուրգի ակադեմիայէն. վերակացու
գործոյն եղած է Յովհաննէս աղա Խաթրանեան.
բովանդակ եկեղեցին շինուած է տրովք բարեպաշտ
տիկնոջ Ակուլինէ Աղաճանեան. 1883 ին Մակար
սրբազան, յետոյ կաթողիկոս ամենայն Հայոց,
հանդիսապէս օծած է: Ինքնին Յովհաննէս աղա,
ոգևորեալ կերպով խօսելով քննողիս հետ՝ եկեղե-
ցւոյ մասին, կը հարցնէր թէ « Օտարոտի իմն կամ
ոչ ազգային՝ արդեօք սպրդած է շէնքին »: Վասն
զի նա բանհցուցել է ամենայն ջանք՝ որ ամենայն

ինչ հայկական լինի. ես ազդեցի՝ որ «Բաց 'ի եօթնաջահեան աշտանակէն որ աւագ խորանին վրայ է, օտար բան չտեսայ. զի իմ տեսած տաւրիացի հայկական եկեղեցիք խորանին միջավայրը ունին մի խաչ, և երկուստեք երեք կարգ փոքր աստիճանաց վրայ՝ մի մի աշտանակ, ընդ ամէնն վեց աշտանակ»: Յովհաննէս աղա աւելցուց. «Եօթնաջահեան ոսկէզօծ աշտանակը 700 բուրլիով գնուած է, սակայն և այնպէս որովհետեւ չէ ազգային, փոխելը հարկ է»: Աթէ Յովհաննէս աղայի ոգւով լինէին միւս այլ գործող անձինք Նախիջևանու, աւելի պայծառ պիտի փայլէր ազգութիւն 'ի Նախիջևան: Սակայն և այնպէս չէն է ազգութեամբ Նախիջևան և կենդանի լեզուն ազգիս ամեն տեղ: — Այսչափ՝ եկեղեցեաց մասին:

Գպրոցաց մէջ անշուշտ առաջին տեղին պէտք է գրուէ դպրավանքն կամ թեմական դպրանոց վիճակին (Սեմինարիում), յոր դասական վարժութիւն կը ստանան ուսանողք՝ հմուտութեամբ հին յոյն և լատին լեզուաց, որոց աւանդողն և միանգամայն պաշտօնավար-տեսչի վարժարանին է Պ. Գալուստ Զարրխեանց՝ տասուերկու ազգային վարժապետօք:

Ապա արևեստական վարժոցը ընդ խնամով Պ. Ռաֆայէլ Պատկանեանցի, ազգային պուետի և հեղինակին Գամառ-Քաթիպայի:

Կոկոյեան գիշերօթիկ օրիորդաց ուսումնարան, յորում են 60 օրիորդք:

Հռիփսիմեանց կոչուած օրիորդաց վարժարանը, յորում 123 են ուսանող օրիորդք:

Միակն դպրոցը Ս. Համբարձում և Ս. Թորոս եկեղեցեաց մօտ՝ մանչերու համար:

Բաց յայսցանէ կան և ուս վարժարանք և մար-
դոցք, որոց մին թէպէտ և կրէ ազգիս երանելի
Թարգմանչաց անուանքը 'ի ճակատու, այլ եթէ
երանելեաց ոգին հոն չի տիրել, միայն պիտակ ան-
ուանքն՝ չեմ կարծել որ մեծ օգուտ բերեն Նա-
խիջևանցոց:

Ժ

Ս Ո Ւ Ր Բ Ի Ա Չ Վ Ա Ն Ք

Սուրբ խաչ Նախիջևանու հիւսիսային կողմը, քա-
ղաքէն եօթն վերստ հեռաւորութեամբ, ապառաժ
լեռին վրայ շինուած է. դիրքը վայելուչ է, այլ եկե-
ղեցոյն ճարտարապետութիւնը նոյն է՝ ինչ որ ու-
նին քաղաքին եկեղեցիք: Սորա հիմը օրհնած է
1784 ին Յովսէփ Արղութեանց. վանքը կամ ա-
ռաջնորդարանն նոյն ապառաժին վրայ շինուած են
անշուք սենեկներով. ապառաժէն քաղցրահամ ջրոյ
աղբիւր կը հոսի դէպ 'ի վար, ուր շինուած է ըն-
դարձակ պարտէզ: Վանքն ունեցել է ժամանա-
կաւ կոկիկ մի հայ տպարան, ուր և տպուած են
զանազան գրեանք. այժմ կարեւորութիւն չկայ
տպարանի, վասն զի Ռոստովի մէջ Պ. Յովհան-
նու Տէր — Արրահամեան տպարանը իւր արա-
գատիպ մեքենայիք, նոյնպէս և Նախիջևանու մէջ
Պ. Յարութեանը, կարող են տպել և հրատարա-
կել արագապէս ամենայն հայ մտաց և գրչաց ար-
տադրութիւնք: Կայ այժմ վանքին մէջ դպրոց կամ
կղերանոց, ուր քառասնիւ շափ աշակերտք, ընդ
խնամով մեծապատիւ վանահօր Տեառն Աիւրդի

Սրապեան՝ կը վարժին հոգևորական կենաց մի-
ջոցները ուսանելով և ազգային դպրութեանց մէջ
յառաջելով 1: Ապա ուսանողացմէ ոմանք բոլորովին
հոգևորական կենաց կը նուիրեն զիրենք, և այլք
Նախիջլեանու կամ այլ եկեղեցեաց մէջ դպրաց պաշ-
տօն կը վարեն:

Վանքիս եկեղեցւոյն մտից աջակողմեան պատին
այս յիշատակարանս կարդացի. « Ծնորհօքն Աս-
տուծոյ կառուցի զՍուրբ Խաչ վանքս, 'ի սմա զգրպ-
րոց և զտպարան, ես Սանահնեցի Արղութեանց
Շիօշ — Բէկի որդի, և սուրբ Էջմիածնայ նուիրակ
Ռուսաց երկրի Հայոցս ատաշնորդ Յովսէփ արք-
եպիսկոպոս, 'ի կայսերութեան ամենայն Ռուսաց Ե-
կատերինէ Ալէքսեյովնայի երկրորդի, և 'ի հայ-
րապետութեան Հայոց Տեառն Ղազասու, աշխա-
տութեամբ հոգևոր որդւոյ իմոյ Բայազիտցի Կա-
րապետ վարդապետի: Օծեալ եղև յամի Տեառն
1791 և 'ի Հայոց Թուականի 1240, 'ի սեպտեմ-
բերի: Այս յիշատակարանի մարմարինեայ քա-
ռակուսի քարը, ինչպէս կ'երևայ յետ 'ի հիմանց
նորոգութեան տաճարին՝ վերստին ազուցած են
որմին մէջ, վասն զի այլ նոր յիշատակարան մի կը
ծանուցանէ մեզ, թէ 1863 ին « ի հիմանց նորո-
գեցաւ այս Սուրբ Խաչ եկեղեցին՝ յորդորանօք
Գեբրպ. Տեառն Կարրիելի Այվազեան, հոգաբար-
ձութեամբ ՊՊ. Գէորգայ Խաթրանեան և Ալեք-
սանդրի Ալաճալեան »:

1. Այս դպրոցս Մարդասիրական ընկերութեան խնամով
և նպաստիւք կը յառաջադիմէ. իսկ այդ ընկերութիւնը իւր
արդիւնքներով, պտուղ է անխոնջ աշխատութեանց իմ ա-
պրելչականի, Պ. Եղիշեանու Պոյսիցեան:

ի նմանութիւն՝ կամ լաւ ևս ՚ի յիշատակ հին Ղրիմեցի Սուրբ Նշան վանքին շինած են Նախիջևանցիք այս նոր վանքս. այլ նախատիպը ոչ միայն իւր հնութեամբն՝ այլ և շատ մասամբ գերազայն է քան զնորս: Հնոյն վրայ մինչև ցայսօր յայտնի կ'երևայ հայկական ճարտարապետութեան ճաշակ, վսեմութիւն, գեղեցկութիւն և ամրութիւն. միով բանիս՝ ազգային պատմութեան տեղեակ ճանապարհորդը շօշափելով կը նշմարէ, որ այդ վեց դարուց վանքին շինութեան վրայ աշխատած են՝ զտարաբազդիկն Անի աննման գեղեցկութեամբ զարդարող քարակոփք: Այլ մեք դառնալով այժմ՝ դարձեալ Նախիջևանու Սուրբ Խաչին, Ղրիմեան Սուրբ Նշանի վրայ ՚ի ստորև խօսիլ կը խոստանանք:

Վանքի ընդարձակ պարտէզը՝ մի միայն ամառուան տաքին ազատ շունչ առնելու տեղ է Նախիջևանցուց համար. անշուշտ վանքին սրբազան հիմնադիրն այդ նպատակաւ տնկել տուած է այդ պարտէզը, որպէս զի Ղրիմու հովասուն լերանց և անտառաց սովոր ժողովուրդը հոս գալով՝ առնուկարօտը կորուսեալ հայրենեաց: Սրբազան առաջնորդն իւր նպատակին հասած է, այլ իմ կարծեօք Նախիջևանցիք անդր ևս անցած են հիմնադրին նպատակէն. զի Սուրբ Խաչ ոչ միայն Նախիջևանցուց գրօսարան դարձուցեր են, այլ հասարակաց ճեմելեաց տեղի երկուց քաղաքաց՝ Նախիջևանու և Ռոստովի, ուր սահմանեալ օրեր՝ կուգան երեկոյին խուռն բազմութիւն ազգայնոց և օտարաց, և մինչև ցկէս գիշեր կը գրօննուն վանքին պարտիզին մէջ, արք և կանայք, ուր կը հնչեն պարք երաժշտաց: Թէպէտ և ես անձամբ ականատես չեղայ այդ հանդիսից, այլ ՚ի պարտիզին տեսած տանխ.

տակամած չէնքն, յայտնի ապացոյց էին լսածնե-
րուս: Կարող չեղայ մտացս մէջ համաձայնելու այդ
երկու հակասական իրքն՝ վանք՝ հոգևորականաց
կրթութեան տեղի՝ և միանգամայն հասարակաց
զբոսարան: Թէպէտ և եղան զրուցողներ որ վանքը
այն առթիւ բաւական չափ կը ստանայ, այլ ես
զրուցեցի, (և միայն իրաւամբ կարծեմ և արդարու-
թեամբ) թէ պէտք չէ այն շահը՝ որ դպրաց բա-
րոյական փնաստլն լինի: Կարելի է սխալիմ, ըն-
թերցողն կարող է դատաստան կտրել: Ընդհան-
րապէս Նախիջևանու Սուրբ Խաչը շունի վսեմ
կերպարանքը, ինչ որ կ'ընծայէ ցայսօր Սուրբ Նշան
Ղրիմու որոյ վրայ կ'արժէ համառօտիւ խօսիլ առ-
թիւս:

Ղրիմեցի վանքին հին կոչումը Սուրբ Նշան է,
չինած յառաջին կէս ԺԴ դարու Ճենովացոց Ղրի-
մու տիրապետութեան միջոց, ոչ հեռի Սուրխաթ
քաղաքէն իւր անտառին մէջը Կազարաթ կոչուած
մեծ աւանին վրայ, ուր նստելով թեմակալ առաջ-
նորդք, հինգ հարիւր տարուան միջոց կառավարել
են թերակղզոյս հայասեռ ժողովուրդը: Կազա-
րաթ մեծ աւանը՝ ծուխ կամ վիճակ եղած է Սուրբ
Նշանի, որոյ ցարդ մնացած քարուքանդ դերբուկ-
ները՝ վկայ են զբուցածիս: Յիշատակարան մի
յանուանէ կը յիշէ հայաբնակ քաղաքներն և գե-
ղերը, որք էին ընդ իշխանութեամբ Սուրբ Նշանի
արքեպիսկոպոսին, և իրենց առատ տրուվք վերա-
նորոգել են զՍուրբ Նշան. ինչպէս հայասեռ ժո-
ղովուրդք « Կաֆայու, Ղարասույու, Պաղչասարա-
յու, Կէօզլէվու բոլոր գիւղօրէիքն, հանդերձ Ղա-
շանան... 'ի ժամանակս առաջնորդութեան Ադա-
մայ արքեպիսկոպոսի կղզոյս »: Ի Սուրդաթէ

(Հին - Ղրիմէ) գէպ 'ի Սուտաղ գնայու անտա-
ռամէջ ճանապարհէն նայելով շատ գեղեցիկ է վան-
քիս դիրքը, որ հեռուն լերուն վրայ, անտառա-
խիտ ծառոց միջէն խորհրդական ձևով յերևան կու-
գայ կրկնայարկ վանքն, խաչապսակ եկեղեցեանն,
վասն զի այժմ այդ երկու հաստակառոյց շէնքն
կանգուն մնացել են, իսկ յիշատակարանաց մէջ
յիշուած այլ շինութիւնք կործանել են հողուն հա-
ւասար: Անշուշտ ասկէ 300 տարի առաջ՝ երբ շէն
էր վանքս՝ և բաց 'ի ներկայ շէնքերէս՝ կային այս-
դին և այնդին անտառին մէջ կրօնաւորաց խղիկ-
ներ, լերան դարևանդին վրայ փորուած, և յորս
նստած բարեպաշտիկ արեղաներ՝ ամենայն ինամ-
քով կը գրէին և կ'օրինակէին սուրբ աւետարան-
ներ և այլ եկեղեցական գրեանք, ինչպէս կը գրէ
1347 ին գրուած աւետարանի յիշատակարան մի.
« Ի թիւ Հայոց ՉՂԶ կասարեցաւ սուրբ մատեանս
« աստուածախօս » աւետարանիս յաշխարհս շո-
« նաց, որ այժմ Ղրիմ ասի, 'ի մեծ և 'ի հոյա-
« կապ քաղաքն Սուրխաթ կոչեցեալ, 'ի հոգետ-
« ներս վերի, տռ ոտն Սուրբ Խաչին, և այլն »: Ես
այնպէս կ'երևակայեմ որ այդ միջոցներուն ան-
նման եղած ըլլայ հեռուէն Ս. Խաչի դիրքը, մա-
նաւանդ գիշեր ժամանակ, ուր բարձրադիր հողե-
տներէն շողջալով կանթեղաց լոյսը, աստղերու
նման, կը յիշեցնէին հայ ճանապարհորդին թէ հոն
հեռուն այդ աստեղներու առաջ նստած հայ ճգնա-
ւորներ կը տքնին օրինակելու աստուածախօս պատ-
գամները՝ մեզ 'ի ժառանգութիւն թողլու համար:
Թէպէտ հեռուէն տակաւին ևս կորուսած չէ Ս.
Խաչ իւր վանք և խորհրդաւոր տիպարը, այլ մօտէն
աւաղելի վիճակի մէջ է: Չկայ հոն այժմ վանահայր,

միակ պահապան մի կը հսկէ, այն երբեմն փառա-
տեսիլ վանքին տխրաժեսիլ և ծեփաթափ որմոց
վրայ, որոց ստուերին տակ կը հանգչին վանքին սըր-
բասուն հիմնադրաց ոսկերք, դարևոր կնձնիք, կաղա-
մախք, նշարիք և հացիք հաստարեստ բուներովն,
վկայք անցեալ փառաց, կարծես այժմ կ'ողջան վան-
քին ամայութեան վրայ՝ երբ յանկարծ գերեզմա-
նական լաւթեան մէջ կը փչէ քամին: Այլ կրկին
անապակ ջրերով յորդառատ լուսադրիւրք՝ անտար-
բեր անցեալ և ներկայ վիճակի վանացս՝ իրենց սառ-
նորակ ջրերով միակերպ կը հոսին: Վանքիս արժա-
նավայել փաղափար մի տալու համար ընթերցողաց,
'ի մէջ կը բերեմք Յակոբ վարդապետի կաֆայեցւոյ
գրած տողերը, որ բաղդունեցել է ականատես վկայ
լինելու վանքիս փառացն և ճոխութեան (1694):

Կամաւ Սուրբ Հոգւոյն սմբն գիտնական,
Յովհաննէս անուն շնորհիւ պետական,
Լեալ ես յաշխարհէն մեծ Սեբաստական,
Կանգնեալ հաւատով զվանքս Սուրբ Նշան:

Ունեւով ընդ իւր զփայտըն փրկչական,
Եկեալ 'ի յաշխարհս փառք մեծական,
Ամփոփեալ զմասն խնամք տեսնական,
Վերակառուցեալ զվանքս Սուրբ Նշան...

Բամբ ժողովրդոց մեծ և փոքրկան,
Անչափ բարութեամբ առ 'ի քեզ ուխտ զան.
Հողով և մարմնով ցնծան և խնդան.
Ապաւեն ազգիս աթոռ Սուրբ Նշան...

Արտաքոյ ներքոյ պատեալ ամրական,
Սըրբատաշ քարիւք ես կամարական.
Մեծ կաթուղիկէ, տուն արքայական,
Չեմեալ ճեմարան, ճարակ Սուրբ Նշան...

Ի միջի քում կան հաստատ ընակարան ,
Թէ և կարգաւորք կամ աշխարհական
Քեզ սպասաւորին միշտ ծառայական ,
Տերող , տենչալի տանար Սուրբ Նշան :

Կարգաւ բարբիս բազում օթեւան ,
7 Երթեկողաց տեղ տալընշական .
Դու ի ծոց նարին բազմեալ դովական
Հանգիստ կանելի , հաստատ Սուրբ Նշան :

Ֆարս ես , և ոչ կայ քեզ նմանական ,
Տեսաք և տեղեալ յոյժ հիացական ,
Ամենայն բարեպ լըցեալ լիական
Փառաք փառաւոր , փարթամ Սուրբ Նշան :

Արծաթ և ոսկի անօթ ընտրական ,
Բուռձառ և կանթեղ , խաչ , աւետարան ,
Շուրջառ և զտկաս , ուրար և բազպան
Զանազան զարդիւք զեղուն Սուրբ Նշան ..

Երկու ազրերք չուր համեղական .
Ատտեալ են մայրք զքե պարառական ,
Կաս դու 'ի միջի պերճով տեփական ,
Կարգաւեալ կայթեա , կայան Սուրբ Նշան :

Յանկան փափուքին աղինք ամենայն ,
Մենչե սյլազգիք առ սաբս քո զան ,
Մըռզա և պարոն համ Սուլզան և խան ,
Հիացեալ հային հիմանդ Սուրբ Նշան :

Թէպէտ և այժմ թափուր է Ս . Նըշան այն արծա-
թեայ և ոսկեայ ընտրական անօթներէն , այլ ունի
մեծ գիւղեր , անտառներ և այգիներ , որք տարուէ
տարի 6000 բուրլի եկամուտ կու բերեն , եթէ այդ
հազարաց վեցին մին ամէն տարի , այդ հին սրբա-
տեղւոյն վրայ ծախուի , թափած և փլածը ծեփուի
նորոգուի , դարձեալ կը շէննայ Ս . Խաչ , և ազգիս

Հին, փառաւորեալ, սրբազան յիշատակը երթալով չի կործանիր:

ԺԱ

ԳԻՒՂՈՐԷՐ Ե ԱՌԻՋԵՒԱՆՈՒ

Հինգ հայաբնակ գիւղեր կան Նոր-Նախիլաւ, նու շորս կողմը, 18-25 վերստ հեռաւորութեամբ քաղաքէն: Ամէն գիւղի մէջ կան նորաչէն ընդարձակ եկեղեցիներ և նոցա մտա գիւղացի մանկանց համար դպրատուններ: Եկեղեցեաց վերստին չի նութեան գլխաւորապէս պատճառ եղած է Սըրբազ. Գարրիէլ՝ առաջնորդ վիճակին, յորդորելով գեղացիները և ցուցնելով միջոցները:

Ի՛նժ-Սալա. Ս. Խաչ վանքէն դէպ 'ի արեւելեան հիւսիս, բանուկ ճամբով գնալով ընդարձակ հայաբնակ գիւղ մի կ'ելնէ ճանապարհորդին ընդ առաջ. այլ դեռ գիւղը չհասած՝ ճամբորդը արդէն կը ծանօթանայ գիւղացւոց տիպարին և տարազին՝ մասամբ և նոցա բնաւորութեան:

Հայ գիւղացին կը տարբերի Ռուս մտծիկէն, ինչպէս կերպարանքով, նոյն և զգեստուք. յաճախ նոցա վրայ կը տեսնուի կոճկէն կապայ մինչև ցծունկ իջած, մէջքերնին գօտի, ոտքերնին երկայնախոնջ կօշիկ, գլուխնին բոլորաձև գտակ, աշխատող մշակի համար՝ շատ յարմար զգեստ: Առհասարակ սքաւ քաշուած և անհաղորդ կերպ մի ունին. որով կը տարբերին ռուս պարզամիտ մշակէն, երկայն վարոց ձեռքերնին, չո՛ւ, չո՛ւ գրուցելով յառաջ կը վարեն սայլերը. այլ մտքով միշտ զբաղած

կ'երեւան, Երկայն խօսիչ ամենեւին չեն սիրեր ան-
ցող դարձողի հետ, նաև բարև տալու անգամ շատ
սովորութիւն չունին, եթէ Տէրտէր անգամ լինի
անցաւորը. մինչդեռ ռուս գեղացին հեռուէն յար-
գութեան նշան կու տայ իւր և այլ գեղերուն Տէր-
տիրով: Քանի մ'անգամ մասնաւոր կառքը կեցը-
նելով՝ խօսք խառնեցի Սալացի գեղացւոց հետ.
Նոքա շնորհքով հակիրճ պատասխաններ տալով
ճամբանին առաջ վարեցին: Երբոր հարցուցի ար-
գոյ ուղեկցիի Տէր Սարգսի Ոսկերչեան թէ « Ին-
չու մեր հայ գեղացին այդպէս անտարբեր կը վա-
րուի իւր հոգևորականաց հետ ». պատասխանեց
— « Այդ անդրադարձութիւնը ես ևս անելով հար-
ցուցի մի անգամ գիւղացւոյ մէկին, և այս պատաս-
խանը ստացայ իրմէն. Հովիւը պէտք է փնտռէ
ոչխարին, չէ թէ ոչխարը հովուին »: Յանդուգն
պատասխան՝ գեղացւոյ մի բերնի...

Սալա ամենէն բարեկարգն է Նախիջևանու գիւ-
ղերուն մէջ, փողոցը և տները կարգով, այլ ծառոց
չուքը կը պակասի. փողոցին վրայ են տանց պա-
տուհանները, և նոցա անմիջապէս մօտ՝ մտից դու-
ռը: Քարուկիր շինուած են տներն, տանց տախ-
տակեայ յատակը մաքուր ներկած, նոյնպէս պա-
տուհանաց շրջանակներն և դռներն. ընդարձակ է,
ընդունելութեան սենեակն: Սալայի մէջ մինչև 70.000
բուրլի կարողութիւն ունեցող գեղացիներ կան,
որք բաց 'ի վարուցանէ՝ առևտրով ևս կը պարա-
պին, և անպաճոյճ գիւղական կենճը կը շատա-
նան, եթէ տակաւ քաղաքային գեղծմունք մուտք
չգտնեն այդ գեղացւոց բնակարանաց մէջ, նախան-
ձելի է նոցա ապագայն: Գիւղին մէջ ամէն բանէ
առաջ աչքի զարնուողն է նորաչէն բարձրաբերձ եկե-

ղեցին, նոյնպէս բարձր զանգակատամբ: Աղի-
սակերտ, ընդարձակ եկեղեցին նուիրեալ է 'ի պա-
տիւ Արափոխման Կուսին. ինչպէս արտաբուստ՝
նոյնպէս 'ի ներքուստ պայծառ և շէն է, մանաւանդ
աւագ խորանը պատկերազարդ և ոսկեզօծ խաչկա-
լովը. այս եկեղեցին ոչ միայն գիւղի մէջ, այլ որ և
իցէ քաղաքի մէջ պարծանք կրնայ լինել իւր ժո-
ղովրդեան: Տեսայ հոն հին զրիմեցի խաչեր, ա-
ւետարաններ՝ յայսմաւուրք. ունի երկսեռ վարժա-
րան, ուր կ'ուսանին իբր 100 աշակերտք և աշա-
կերտուհիք: Գիւղիս աւագ երէցն, Տէր Յովհան-
նէս Աֆտանդիլեան, Եգերացի է ազգաւ (հայա-
ցեալ), որ բազում մարգասիրութիւն ցըցուց առ
մեզ. քանի մի ժամ մնացինք գիւղիս մէջ, եկե-
ղեցւոյն երէցփոխանն Եղիազար աղայ՝ իւր տունը
հրաւիրեց. և որովհետև ինձ հետաքրքրական էր
տեսնել գեղացւոց բնակարանը, յօժարութեամբ ըն-
դունեցայ հրաւերքը:

Համբաւաւոր է Նախիջևանու գիւղերուն մէջ
պատրաստուած գոմէշի սերը, արդէն լսած էի
գովեստ այդ սերի մասին, մայիսի գեղեցիկ օդը
և կանաչ դաշտին մէջ երկժամեան ճանապարհոր-
դութիւնը ֆայետեկով, զրգուիչ ազդեցութիւն մի
արած էր՝ իմ արգոյ ուղեկցիս, նոյն և իմ արտը-
ժակաց վրայ, ուստի Պ. Եպիփան խոհական ձե-
ւով իմացուց պառաւեալ երէցփոխանուհոյն՝ որ
գոմէշի սերով պատուել Ղրիմեցի հայր սուրբը՝
շատ վայելուչ կը լինի. ինձ հարկ եղաւ այդ մի-
ջոցին՝ իբրև շտող առաջարկութեան լուութիւն պաշ-
տել: Հազիւ մի կէս ժամ անցաւ, արդէն սեզա-
նի նստած էինք, հասաւ խոր պնակով համբաւեալ
սերը. աւելորդ է ասելը, որ բաց 'ի սերէն, ամե-

նայն գիւղական բարեօք լեցուն էր պատուական երէցփոխանին սեղանը. ճարտարախօս երեցփօխանուհին առջև դնելով սերին պնակը, լիարեւան և առատասիրտ կերպով, — « Կեր, հայր սուրբ կ'ասէր. ձեզի համար փնտուել տուի գեղին մէջ այս սերը, մեր գոմէշները այսօր շկթուեցան »: Հիւրընկալ տանտիկնոջ մարդասէր և քաղցր ընդունելութեան համեմատ գոայ ես այն տերը, համեղանաչակ և արժանի համբաւոյ: Յեղանի միջոց մեր խօսակցութեան զլիաւոր նիւթն Ղրիմն և նորա գեղորանքն էին, զոր ախորժելով մտիկ կ'անէին բարեպաշտ ասպնջականք: Հարիւր տարին անցել է՝ որ սոցա պապեր թողել գնացել են Ղրիմէ, այլ որդւոց որդի դեռ ևս վառ պահած են կորուսեալ հայրենեաց յիշատակը. Ղրիմ ասելու միջոց՝ մասնաւոր կերպով կը շնչտեն Նախիջևանցիք:

Յետ երկար խօսելու, շհամբերեց ևս տանտիկինն, և հարցական ձևով աւելցուց, — « Այս ոնց է, որ այս հայր սուրբին ամէն կալածին տեղովը կը հասկցուի. այդ ինչպէսնակ բան է »: — Այդոր պատճառը այն է, գրուցեցի, որ մենք ամէնքս Անեցի հայեր ենք, ու կալածիներս մէկ »: « Այդպէսնակ ասա », աւելցուց պառաւը գոհութեամբ սրտի: Բարեպաշտիկ պառաւը՝ միայն 'ի Հայաստանէ եկող արևելեան վարդապետներ տեսնելով, անշուշտ այս գաղափարը ստացել է, որ վարդապետաց իմաստուն խօսակացութիւնը կէսիկէս պէտք է անիմանալի լինին հասարակ մահկանացուաց:

Ընդունելութիւնը սիրալիր, խօսակցութիւնը զրւարթ. այլ հարկ էր ինձ առաջ գնալ 'ի Նիսովիթա գիւղ, որ եօթն վերստիւ հեռու է 'ի Սալայէ: Յե-

տինս ինձ աւելի հետաքրքրական էր իւր մէջը պահուած ('ի ժամանակս ճանապարհորդութեան վ. Հ. Մինասայ վ. Բժշկեան), նշանաւոր Յայսմաւուրքին պատճառաւ . յորում գրուած է Աննացոց դէպ 'ի Ղրիմ գաղթելուն պատմութիւնն : Այլ աւաղ որ փափաքս թերակատար մնաց, չգտայ այն գիւղին մէջ փնտռածս . կարող չեղան տեղացիք իմացընել ինձ գրքին ուր լինելը :

Այդ թանկագին յիշատակարանն ղանազան մասամբ փափաքելի էր ինձ տեսնել, զի այնոր մէջ ըստ վկայութեան Բժշկեան Հօր. բաց 'ի սրտաճըմլիկ պատմութենէ վշտակրութեանց տառապելոյ ազգիս, գծուած կայ ճիւղագիր ծառ մի տոհմի Պահլաւունի Արրահամ իշխանի, որ ամուսնացել է Մուղալեանց ազնիւ Գէորգի դստեր՝ Թագուհւոյ հետ, և որոյ ազնիւ սերունդք բարեպաշտիկն Աննա և եղբայր նորա Տրդատ հոգացել են մեզ յետնոց աւանդել Անեցի գաղթականացս պատմութիւնը գրել տալով նոյն յայտմաւուրքին մէջ : Եթէ այդ խնամոտ հայազատք հոգ տարած շինէին այս բանին, մի մեծ էջ մութ պիտի մնար տոհմային պատմութեան մէջ, և ամենայն ջանք յետնոցս՝ 'ի զուրգայն լուսարանելու 1 :

1 . Սրբա Աննա և Տրդատ Պալաւունիք շինել տուած են յառաջին կէս ժէզարու, Թէոդոսիոյ սարերուն մէկուն վրայ յաւարտի և ԲԲԷԽազար մի եկեղեցի, յորում հաստատած են տարուէ տարի « վասն սուրբ նահատակացն մերոց առնել ի սոյն եկեղեցւոյ գտնախմբութիւն » : Եկեղեցին նուիրած են յանուն Նիկողայոսի սքանչելագործ կայրապետի : Նահատակներն են 1478 ին անօրէն կէտիկ — Ահմէտի կոտորած կայկազունքը ի Թէոդոսիա :

Նիսպիրա ամենայն մասամբ խեղճ է քան զՍալա-
տները անկարգ և աղքատին, զուրկ բուսականու-
թենէ, եկեղեցին թէպէտ նորաչէն և աղիւսա-
կերտ, այլ աղքատին ներսի կողմէն. վարժատան
մէջ 37 բոկոտն՝ աշակերտք, միով բանիւ ամենայն
ինչ տխուր. և ճնշիչ ազդեցութիւն ունեցաւ իմ
վրայ: Եթէ շուտով եկեղեցւոյն երեցը Տէր Յովհան-
նէս Տէր-Սիմոնեան համակրելի քահանայն չգար
չհասնէր, անմխիթար և կոտորած սրտով հարկ պի-
տի լինէր ինձ մեկնելու 'ի գիւղէն: Հին նոր՝ ինչ
որ կար եկեղեցւոյն մէջ յետ միանգամ աչքէ ան-
ցընելու, գնացինք Տէր-Հօր անպանոյճ բնակարա-
նը, որ ոչ հեռի յեկեղեցւոյն՝ բարձրէն գիւղին վրայ
կը հայէր: Տէր Յովհաննէս վաթսնամեայ ոմն է.
թէպէտ ըստ վկայելոյ անձին հիւանդոտ ոմն, որ
արտաքուստ չէր ցուցընել, սակայն և այնպէս զը-
ւարթ և ճարտարախօս բնութեան տէր. անշուշտ
չնորհիւ զուարթ բնաւորութեան՝ համբերութեամբ
կը տանէր իւր ոչ նախանձելի վիճակին:

Մուխը աղքատ, առողջութիւնը կորսնցուցած,
գեղ տեղ, ուր դարման և ճար կը պակասի, և որ
մեծն է՝ զուրկ այն մխիթարութենէն, որով քա-
ջալերուած շատ երեցունք անտանելեաց կը համ-
բերեն, այն է ունկնդրութիւն և հպատակութիւն
հօտին: Տէր Յովհաննէս այս ամէն բանէ զրկուած՝
« Այսօր եթէ մեռնիմ՝ ցաւելու բան չունիմ, աչքս
յօժարութեամբ կը փակեմ » կը զրուցէր: Վշտա-
կից եղայ վշտամբեր Տէր տիրոջ, միանգամայն հե-
տաքրքրութիւնս կը շարժէր լսել իմանալ քանի մի
տեղեկութիւնք, և եթէ յորում մասին էր Տէր-
Հօր աւելի վիշտը. այլ հարցնել ինձ անպատշաճ
կ'երևնար, որ չիմի նոր վշտաց լինիմ պատճառ:

Սակայն ընդհանրապէս վշտացեալը ինքնին խօսե-
լու միջոցաւ դարման և մխիթարութիւն վշտաց կը
փնտռէ, ուստի առանց իմհարցընելու՝ Տէր-Հայրն
ինքնին սկսաւ. — « Ութ հարիւրի շափ կը լինի
ժողովուրդս, որք մեծաւ մասամբ Նողայ-Քաթար-
ներ են քրիստոնեայ դարձած ». այս լսելով իմ հե-
տաքրքրութիւնս բազմապատկեցաւ. — « Հայերէն
լաւ կը խօսին » հարցուցի: — Ի՞նչպէս չէ, պա-
տասխանեց Տէր-Հայրն, Հայ են ու կան »: Գիւ-
ղին իմ վրայ ազդած տխուր տպաւորութիւնը միգի
պէս հալածեցաւ Տէր-Հօր խօսելուն միջոց. ինչ-
պէս խօսողին՝ նոյն և նորա ժուխին վրայ համա-
կրութիւն մի սկսայ իմանալ: Նողայ-Քաթարներ,
քրիստոնեայ դարձած, հայերէն կը խօսին, և ըստ
բացատրութեան Տէր-Հօր « Հայ են ու կան », առ-
կէ աւելի ախորժալուր նոյն պարագային մէջ ինչ
լսելու և ոչ անգամ կարնայի երեւակայել: « Այցեալ
օր, շարունակեց Տէր-Հայր, համբերութիւնս հա-
տաւ ժամէն դուրս ելնելով ասի իրենց, որ եթէ այդ
բանը ուրիշ անգամ ևս անեն, պիտի յայտնեմ գրով
'ի Նախիջևան հոգևոր կառավարութեան ». — « Ի՞նչ
բան է, ինչու » հարցուցի: « Կու գան շպուխները
(ժխա մորճ) ձեռքերը, կկուզ կը շարունին ժամին դը-
րան առաջը, միակերպ խօսելով ծխաքարը շեն պա-
ղեցնել. երբ ժամէն վերջ կ'իջնամ մատաղը օրհնելու
միաբան ետևէս կու գան, մեծ ախորժակով կ'ու-
տեն, կը սրբեն մատաղը, կ'երթան բաներնին »:
Քարեպաշտ Տէր-Հայրը որովհետև այս պատմելուն
միջոց կ'այլալէր, « Մի վշտանաք. Տէր-Հայր, մեղ-
« մով գրուցեցի, դեռ լաւ չեն ըմբռնած Ձեր ժո-
« ղովուրդ քրիստոնէական սուրբ հաւատոյ ոգին,
« խրատուելու կարօտութիւն ունին ». իսկ մտքէս

կ'անցընէի, Թաթարը շուտով քրիստոնեայ և երկիւղած հայ չի լինիր, ժամանակ հարկաւոր է՝ որ նա իւր անվայել ունակութեանց հրաժարի:

Միւս կողմանէ Ղրիմեցի Թաթարը կու գային մտացս առաջ, որք արեակէզ դիմօք, ցանցառ մարուօք, ամառը տաքին՝ խոշոր մորթէ գտակ գլուխ նին, — զոր տեսնելով միայն՝ մարդ կը քրքրունի, — կարճ ծխափայտը բերաննին խածած, կը շարունին ուրբաթ օրեր մըզկթաց բակերուն մէջ, որը՝ ծալապատիկ քարայտակին վրայ նստած, որ՝ կկզած պատին ներքև, կծու ծուխը ներս քաշելով և փոխադարձ միակերպ ալ ու ձախ դին թուք արձակելով:

Մինչդեռ ես Տէր-Հօրմէ լսածներուս վրայ կը խորհրդածէի, նա վերստին սկսաւ խօսիլը առաջ վարել. — « Խօսքը մատաղի վրայ եկաւ, ասաց մտքէս անցածը զրուցեմ թող պրծի. դա գերեզմանոցի եկեղեցին՝ Ս. Կարապետի անուամբ օժտիլը լաւ բան չեղաւ »: Իսկոյն չհասկնալով Տէրտիրոջ միտքը՝ — « Ինչու լաւ բան չլինի, զրուցեցի. Սուրբ Կարապետ ազգիս պաշտպան մեծ « սուրբ է, իմ կարծեօք շատ լաւ բան արել են, « որ այն գեղեցիկ եկեղեցին՝ յանուն այն մեծ « սուրբին նուիրել են »: — Այդ չէ, պատասխալ նեց, Տէր-Հայր, իմ զրուցածս. հոն Ս. Կարապետ (գիւղին եկեղեցւոյն համար) մատաղը կը բաժնուի, հանդէսները առաջուանը չեն, մեր ուխտաւորք պակսեցան »: Հասկցայ Տէր-Հօր միտքը՝ նա կը ցաւէր իւր գիւղին եկեղեցւոյն ուխտը անջքանալուն մասին, զի ժողովուրդը կը բաժնուէր, և անշուշտ մատաղին դէրերը Նախիջևանու Ս. Կարապետին մասն կ'ելնէին. արդարացի էր Տէր-Հօր գանգատը:

Ահսակատար մխիթարութիւն մի տուի, զրուցածիս ինքս ևս համոզուած շլինելով: Սակայն և այնպէս անօգուտ էր ցաւիլը. Ս. Կարապետ եկեղեցին 'ի Նախիջևան շինելուն միջոց, Նիսովիթայի Տէրտիրոջ խորհուրդ հարցնող չէ եղած, և ոչ նորա անգուհութեան պատճառաւ պիտի փակէին այն եկեղեցին: — Երկու ժամ մնալով գիւղիս մէջ, երեկոյեան զովիկ օգով դարձանք 'ի Նախիջևան, մնացեալ գեղերուն այցելութիւնը ուրիշ օրուան թողլով:

Սալայի և Նիսովիթայի մէջ փնտռածներս չգրտնելով, կարելի էր միւս գեղերը զանց առնել, այլ որովհետև երկար ճանապարհ կտրելով անցնելով եկած էի 'ի Նախիջևան, որպէս զի յապագայն ցաւելու առիթ չունենամ, օր ընդ մէջ անցնելով, Համբարձման տօնին նախընթաց օրը՝ միւս երկու գեղերու այցելութեան ելանք, Արզոյ ՏէրՍարգիս Ոսկերչեան քահանային հետ 'ի միասին: Այն երկու գիւղերն, այսինքն Չալթըր (հին Արիմեցի ա նուամբ Օրդայան) և Թոփթի ('ի Արիմ Թոփուկը հնչէ) նախընթաց երկու գեղերուն կողմը կ'իյնան, Նախիջևանու արևմտեան հիւսիսային դին՝ այս երկուքն ևս բազմամարդ գիւղեր են, մէկմէկու մօտ, այնպէս որ մէկէն միւսը կ'երևայ, քաղաքէն երկու ժամու ճանապարհ հեռաւորութեամբ:

Մեծ Սալայէն յետոյ՝ բարեկարգ գիւղն Չալթըրն է. գիւղացիք ունեւոր են, եկեղեցին փառաշէն նուիրեալ 'ի պատիւ Համբարձման Փրկչին: Այլ այս գիւղին գիւղացւոց տարազը, ինչպէս ևս յետագայ Թոփթիի, աւելի հնաձև է կամ թաթառաձև, մինչդեռ Սալացիք՝ արք և կանայք, սկսած են Եւրոպական ձևոց յարմարիլ:

Հոս կանայք՝ ըստ հին Ղրիմեցւոց սովորութեան՝ ծաղկեայ կապաներ կը հագուին, գլուխնին լաշակ կապած, մազերնին ճակատնուն վրայ՝ փէրչեմ կամ փէրչամ կտրած. ետեւի կողմերէն կարգաւ բարակ հիւսուած մազերը մինչ ցգօտի կը հասնին, վզերնին և կուրծքերնին շարք շարք մանր և մեծ ոսկէ դրամք կը զարդարեն: Նոյն ձեւը կը հագնին և աղջկունք, միայն ուսու տարբերութեամբ որ սոցա հալւաին գոյնը իրենց դիմաց գունին համեմատ՝ աւելի պայծառ և ծաղկալից կը լինին: Ըստ հին իսրայելեան սովորութեան՝ տեսայ Նախիջևանու մէջ՝ որ աղջկունք մեծամեծ սափորներ ունեւուն վրայ առած՝ ջրհորներէն ջուր կը կրէին, հանգոյն Ռաքելի և Ռեբեկայ, իսկ մանչեր մեծ և փոքր մինչև ցծունկ բորիկ կապայ կոնակնին, գօտէպինդ, տրեխնին լաւ զսպած, դաշտի վաստակոց կը տարա պին. լուծ, եզ, վարուցան, կասուլ, կրել, այդոնք են նոցա գործերը:

Չայթըրցիք 'ի մշակութեան գերազանցել են քան զմիւս գիւղացիները. իրինց ցորենը, համեղ է և անուն քան այլոցը, այնպէս որ՝ 1880 ին Մոսկուայի հանդիսադրութեան (exposition) առաջին մրցանակի արժանի եղած են:

Քիւղիս երէցփոխանն՝ երիցուն հետ 'ի միասին՝ եկեղեցւոյն ձեռագիրքը և արծաթեղէնքը ցոյց տալէն վերջ, ըստ հայկական մարդասէր հիւրամեծութեան 'ի տուն հրաւիրեց զմեզ: Թէպէտ և այնպիսի զբաղանացօր՝ չէր վայելուչ ծանրութիւն լինել՝ զի գիտէի արդէն որ տնեցիք անպարապ գործի հետ են վաղուան զալու ուխտաւորները հիւրամեծարելու համար, սակայն և այնպէս կարճ միջոց եղաւ մտնել երէցփոխանին տունը: Ինչպէս կը գու-

չակէի՝ ճշդիւ կատարուեցաւ. երէցփոխանուհին անուշահոտ գաղաները հետզհետէ փուռէն կը հանէր, կարծ պանրով, կարագով և սերով զարդարուած սեղանը պատրաստ էր, կէս օրն անցնելու վրայ: Փորձեցի Չալթըրցոց ցորենը հայկական գաղաներու փոխուած, նոր հարած կարագով իւղաթուրմ, քաղցրիկ խորիսխի մէջ, և շատ համեղաճաշակ գտայ:

Քաղայից ձեռ փոխուած ինձ երևեցաւ, հարցուցի երէցփոխանուհւոյն թէ միշտ այդ ձևով են չալթըրցի գաղաները. նա փարատեց իմ տարակոյսս, թէ այդ նոր ձև է, հին ձևն՝ ինչպէս բացատրեց՝ ճիշդ նման գտայ Ղրիմեցի գաղայից:

Փութացի դպրոցաց այցելութեան զնալ, յորս 150 աղակերտք և աչակերտուհիք հայ դպրութիւն կ'ուսանին: Չալթըրցի դպրոցք ինձ բարեկարգ երևեցան քան այլ գիւղորէիցը. փոքր երախայք անսայթաք և գեղեցիկ արտասանութեամբ ասեն տէրու նսական աղօթքը և ապա աղերս առ Տիրամայրն « Անկանիմք », բազմութեամբ ճուացին մի քանի ազգային երգեր:

Վարժապետնին Պ. Պիճոյեան կը գանգատէր թէ տղայք՝ ամառը կանոնաւոր կերպով դպրոց շյաճախելուն պատճառաւ՝ կ'ընդհատի ուսմանց ընթացքը: Եւ ինչպէս յաճախեն... կը դիտէի ես այդ փոքր երախայից ձեռքերը և ոտից զուսպ տրեխները, որք առանց խօսքի, ինձ կը հասկցնէին որ այդ մատաղերամ հայ մանկտին, համարեա թէ յորրանէ դատապարտուած են հողի և տարերց հետ ծեծկուելու: Ազգմոսի փիւնիկեցւոյն արհեստէն առաջ՝ պէտք է նոքա ուսանին Ապենի դատապարտելոյն արուեստը. այն փոքր մանկրտին ի-

րենց երեսաց քրտինքով կ'ուտեն իրենց հացը : — « Վնաս չունի, գրուցեցի վարժապետին, թող ամառը աշխատին, եթէ ձմեռը լաւ սորվին՝ այն ևս բաւական է նոցա » : Մնաք բարով գրուցելով սիրուն և կայտառ հայ մանկութեան, նոցա պատուական Տէր-Հօր և վարժապետաց՝ առաջ գնացինք 'ի Թոփթի :

Սա ամէն գեղերէն բազմամարդն է. բնակչաց թիւը 3000 ի կը հասնի. այլ ինչպէս արտաքին ձևովն նոյնպէս և ներքին կառավարութեամբ քան զՍալա և զԶալթըր շատ յետամնաց : Տներուն մէջ կարգ չկայ, Ղրիմու հին Թաթարաց գիւղերուն ճիշդ տիպարը կը կրէ հեռուէն ևս, զի մի ահագին մոխրակուտի դէզ կը ներկայացընէ, բոլորովին զուրկ 'ի բուսականութենէ. եթէ նորայէն բարձրադիր եկեղեցին հեռուէն չերևայ, անկարելի կը լինի Թաթար գիւղէ զանազանելը : Մտեցանք եկեղեցւոյն, այլ դուռը գոց գտնելով՝ իջանք դէպ 'ի դպրոց, զոր մեծ եկեղեցւոյն համեմատելով՝ յոյժ փոքր ինձ երևեցաւ. և երբ լսեցի որ ուսանողաց թիւը հարիւրէն շատ աւելի է, զարմացայ թէ ինչպէս այդ փոքր շէնքին մէջ կը հաւաքի այնչափ բազմութիւն : Տղայ չկար ուսումնարանաց մէջ, զի կէս օրին տուն դարձելէին, պատուհանները և զըռները բաց էին. սակայն և այնպէս ապականած էր շէնքին օդը : Եկաւ երէցը, բացին եկեղեցւոյն դուռը. մտնելով ներս ընդարձակ տաճարին մէջ՝ ազատ շունչ առի. վասն զի այդ գեղեցկաչէն եկեղեցւոյն մէջ մարդ կը մոռանայ առ ժամն չորս դին պատող ճնշիչ առարկայքը : Աքեղ է եկեղեցւոյս պատու կերպարը և ոսկէզօծ աւագ խորանին խաչկալը, որոյ շինութեան համար գիւղացիք 10,000 բուրլի ծախք

արել են: Յակամայ կամս դառնալով դէպ 'ի Տէր-
Հօր, — « Լաւ չէր լինել, զրուցեցի որ այս խաչ-
« կալը ոչ այդչափ բարձր լինէր, և փոխանակ այդոր՝
« սակաւ մի գիւղին ուսումնարանը ընդարձակ լի-
« նէր, որով ուսանողք ոչ ապականեալ օդով չըն-
« շէին »: Տէրտէրը համաձայն էր կարժեացս. այլ
եղածը եղած էր: Նուիրած է եկեղեցիս յանուն Ս.
Սարգսի զօրավարին. բաց յայնմանէ՝ ջերմեանդն
ուխտաւորք Ս. Պարապլեեայ ևս մեծ յարգութիւն
կ'ընծայեն այս տաճարիս մէջ, 'ի յիշատակ Ս. Ուր-
բաթ Ղրիմցի եկեղեցւոյն, որ ցարդ կանգուն կե-
ցած է Թոփլու կոչուած գիւղին՝ մի սարի վերայ:

Երկրորդ օրը Համբարձման տօնն էր, արևը
դէպ 'ի մուտս կը խոնարհէր, հարկ էր մեզ փու-
թալ 'ի Նախիջևան. Թէպէտ և մնաց մի այլ գիւղ
որոյ կարող չեղայ յայց ելնելու, այն է Փոքր կամ
Սուլթան Սալա կոչուածը, այլ մեծերէն կարելի
էր գուչակել և փոքրին ինչ լինելը: Լսեցի որ այն
գիւղին նորաչէն եկեղեցին նուիրեալ է յանուն Ս.
Պէտրոզայ զօրավարի, և ունի ուսումնարան մի 32
աշակերտով:

Ներկայ տարւոյս (1886) մի նոր գիւղ ևս ձևա-
ցուցել են Նախիջևանցիք քաղաքէն 12 վերստ հե-
ռաւորութեամբ դէպ 'ի Թայդան գնացող ճանա-
պարհին վրայ, որոյ Եկատերինովքս ռուսահնչիւն
անուն տուած են: Անշուշտ այդ նորաչէն և 'ի
չարս Նախիջևանցի հայաբնակ գիւղերուն վեցե-
ւորդն՝ քան զհիները առաւել բարեձև կը լինի, այլ
դեռ չունի ոչ եկեղեցի և ոչ ուսումնարան:

Թոփթիի անապատացեալ և անրոյս երևոյթն՝
տխուր հետք մի Թողուց իմ երևակայութեանս
վրայ. 'ի դարձիս ֆայետոնին մէջ լռիկ նստած

մտախոհ լինելով՝ որ այդ մոխրակոյտներուն մէջ հազարաւոր հայ կեանք կը մահչի՝ զրկուած բնութեան այն հաճոյական վայելից՝ որ երկիրը առատ կ'ընծայէ սակաւ մի զարգացեալ և աշխատատէր մշակին:

Ոչ ծառոց հովանի, ոչ պտղատու պարտէզ, ոչ բանջարանոց, և ոչ սեխեստան, զուրկ են յայսմ ամենայնէ Թոփթիցիք, ցաւալի վիճակ: Այլ ո՛վ է այդոր պատճառը: Ըստ իմ կարծեաց եթէ քանի մի բանիբուն և գործող անձինք բանիւ և գործով առաջնորդ լինին Նախիջևանու գեղացւոց՝ քիչ տարիներու միջոց բոլորովին կերպարանափոխ կը լինին այն տիրատեսիլ և անապատացեալ գիւղերը: Սրինակ կարնան լինել երբեմն անբոյս և անդալարի գիւղերն Տաւրիոյ, յորս առաջ Թաթարք կը բնակէին, և այժմ Գերմանացիք դրախտ դարձուցին, մոխրակոյտ դէզերը ծածկուեցան անտառներուն և պարտիզներուն հովանեաց տակ. անգետ և անառու տեղուանք՝ փորեցին քաղցրաջուր հորեր, յարդածածուկ և խղճատեսիլ ցիր ու ցան անկանոն հիւղերուն փոխանակ՝ շինեցին կանոնաւոր յատակազծի վրայ կարմիր կղմինտրով ծածկուած տներ. փոխան ծոյլ Թաթարաց այլանդակ սայլերուն, որոց լիսուանց անախորժ ճունչիւնն ականջ կը խլացընէր, Գերմանացիք թեթևընթաց սայլեր և կառքեր կը գործածեն, որոց լծուած լայնաքամակ ձիանքն վայելչաձև խամութներով տեսնողին նախանձն կը շարժեն: Մի և նոյն երկրին հողագործք, առաջինք իրենց ծուլութեան և անհողութեան համար՝ կարօտութեան մէջ տուայտեալ, մինչդեռ յետինք ժրպիան մշակելով Թաթարաց գետինները, օր աւուր յառաջադիմելով կը ճո.

խանան և բարոյապէս կը տիրեն բնակած աշխարհաց վրայ:

Եւ այնպէս կարծեմ որ հայ գեղացին աշխատասիրութեան և մտաց զարգացման մասին՝ ոչ Քերմանացոյն և ոչ Ռուսին դիմաց կը խոնարհի. առաջնորդի պէտք ունի նա, մերձաւոր օրինակը և խրախուսիչ յորդորը շուտով կերպարանափոխ կարնան առնել Նախիջևանցի հայ տիրատեսիլ գեղերը: Եթէ ոչ այժմեան գեղացիք, այլ անշուշտ՝ իմ գեղերուն ուսումնարանաց մէջ տեսած փոքրիկ և կայտառ հայ մանկութիւնն՝ օր մի մեծնալով՝ պիտի իրագործեն իմ փափաքը. իրենց բարօրութեան համար:

ԺԲ

ՏՕՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԴԱՐՁ Ի ԿԱՅԱ

« Համբարձման երկուշաբթին, առէք զփոցը և զգերընդին »: զուրցելով շիրակացի առածը՝ ՚ի դաշտ կը հրաւիրէ զհայ մշակը՝ ատորացեալ ցորենը հնձելու համար. այլ Եկատերինեսալա գաւառի հայ մշակին համար դեռ շատ կանուխ էր այդ հրաւերը, մանաւանդ այս տարի (1884), զի Մայիսի 17-տան էր Համբարձման և դեռ ցորենք չէին հասկ կապել: Մեք թողով գիւղերը՝ ՚ի քաղաք դառնանք ներկայ գտնուելու տօնական հանդիսից: Նախիջևանու եկեղեցեաց մէջ, ըստ վաղեմի հայկական սովորութեանց, եկեղեցական պաշտամունք կանուխ կը լինին. ուստի առաւօտեան ժամը 8 ին

արգոյ բարեկամիս հետ, հետիոտս կամաց կամաց կ'երթայինք Համբարձման եկեղեցին. այն միջոցին միակերպ մեր քովէն կու գային կ'անցնէին գեղեցիկ և թեթեւընթաց ֆայետոսներ և արագավազ թեթեւ կառքեր ահիպարանոց և թանկագին ձիեր լծուած, որոց մէջ բազմողները հայկազուն տեարք և տիկնայք էին. որ ժամ կ'երթային Նախիջևանու բոլոր ծուխերէն, պատուելու այդ մեծ տօնը՝ համանուն եկեղեցւոյն մէջ: — Նախիջևանցիք սիրող և յարգող են եկեղեցական հանդիսից և ուխտագնացութեանց: Նախընթաց օրը ևս՝ մինչդեռ գիւղերէն կը դառնայինք՝ կարգ կարգ ուխտաւորք 'ի Զայթըր կ'երթային. զի գիւղին եկեղեցին ևս ի պատիւ Համբարձման Փրկչին կանգնած է: — Հասանք եկեղեցին. որոյ մտից առջև կարգաւ շարուած էին բազմաթիւ կառքեր, որոց լծուած ձիերուն մեծամեծ աչքերով կրակոտ նայուածքը, խրխինջը և դժփիւնը՝ մեծահանդէս և անսովոր իմն տօն կ'աւետէին. մտանք եկեղեցւոյ բակին մէջ՝ ուր ժողոված էր խուռն բազմութիւնն. հեռուէն մեղմ ներդաշնակութիւն պաշտամանց եկեղեցւոյ, բոցավառ ջահք՝ որք պատուհաններէն 'ի դուրս կը ցոլային խառն ընդ անուշահոտ բուրմանց խնկոց, յոյժ հաճոյական եւ բերկրալից մի զգացումն ազդեցին յիս: Ճեղքելով ժողովրդոց բազմութիւնը՝ արգոյ բարեկամս տարաւ զիս 'ի դաս, ուր կանգ առի այլերեալ և երկոքին աչօք լուսաւորեալ՝ մի երիցուքով: Սուրբ պատարագն առաջ կ'երթայր վայելուչ և բարեկարգ ձևով, նափորտապատ և սաղաւար:

1. Ղրխմեցիք և Նախիջևանցիք փոխաբերաբար լսուել կուրանալու մտքով կը գործածեն:

տեալ երէց մի, կրելով ուսոց վրայ արծաթապատ
և ծանրակշիռ վակաս մի կանգնած էր սեղանոյն
առաջ. ուրարուոր սարկաւազ մի՝ յալին բուրվառ
և ձախ ձեռքը մի նրագ վառ՝ կը վարէր պաշտօն
աւագի, սարկաւազի և կիսասարկաւազի ևս. վառ
զի միակ ինքը մնացել էր, և չկար իրեն օգնական :
Նախիջևանու պէս հայութեամբ բազմամարդ և շատ
հոգևորականօք քաղաքի (20 քահանայք և նոյնչափ
սարկաւազունք) կը վայելէր, ըստ իմ կարծեացս .
եկեղեցական պաշտամունքները, գոնէ մեծամեծ
տօներու օրեր, բազմութեամբ հոգևորականաց կա-
տարել. քանի՜ շքեղ պիտի լինէին նոյն օրուան տե-
սած հանդէսքն եթէ յալմէ և ի ձախմէ սեղանոյն
գոնէ վեց ուրարուորեալ հոգևորականք կանգուն
գտնուէին :

Ի միջավայրի դասուն շարուած էին դպրապե-
տին երկու կողմը՝ փոքր երախայք, որք դպրապե-
տին ձեռն շարժմամբ (ըստ եւրոպական ոճոյ)
ոգևորեալք երբեմն քան զչափն աւելի կը բարձրա-
ցնէին ձայներնին. որով չէին համապատասխանել
բեմէն ելած դաշնակաւոր և մեղմ ձայնից ժամա-
րարին և սարկաւազին. եթէ այդ փոքր դպրաց
երգեցողութիւնք չափու մէջ լինէին, ամենայն ինչ
ներդաշնակ և յոյժ վայելուչ պիտի լինէր :

Սակայն ՚ի դասուն անմիջապէս մօտս կանգնած
լուսաւորեալ աջօք անցեալ դարէ մնացեալ Տէր-
տէրը՝ իւր քաղցրիկ և դողդոջուն ձայնիւր իմ ու-
ղիս գրաւեց. նա զիս շէր տեսներ, զի զրկուած էր
լուսոյ ներգործութենէ, այլ այնպէս ներդաշ-
նակ և սրտախօսիկ ձայնիւ ամենայն պաշտամունք
մեղմիկ ձայնովն կ'երգէր, որ մինչև սրտիս խո-
րը կ'ազդէին. դեռ ևս ականջացս մէջ կը հնչեն


ծերուն՝ անտառաց Փիլոմելին նման մեղրածորան
հագագնեբրը:

Պատարագէն վերջ խաչալուայ հանդէսը պիտի
կատարուէր. ժանրագին շուրջառ մի տուին ծերուն
կանակը, որ շատ տարի ժողովրդապետի պաշտօն
վարել էր եկեղեցւոյն, և ինքն իբրև նոր ոմն իսա-
հակ լուսաւորեալ այգը, պիտի կատարէր այդ օրհ-
նութեան հանդէսը՝ առանց տեսնելու. ինչ կա-
րի ցանկալի էր ներկայ գտնուիլ այդ արարողու-
թեան ևս, այլ ժամը տասը անցել էր, օրով առաջ
հրաւիրուած էի Ռոստովի կաթողիկոսաց եկեղեցին
ժամաբար լինելու նոյն օրը. փոքրիկ կառք մի վար-
ձելով փութացի ՚ի Ռոստով, ուր խուռն բազմու-
թիւն ժողոված եկեղեցւոյն շորս կողմը կը սպասե-
ին, ՚ի թիւս որոց և բազմաթիւ ազգայինք: Մին-
չև երեկոյ ՚ի Ռոստով մնացի և նոյն օր կէս օրուան
ճաշը ունեցայ պատիւ վայելելու Պ. Յովհաննէս
Տէր-Արրահամեանի տան մէջ, որ ինչպէս կանխաւ
զուրցեցի, Ռոստովի մէջ մեծ հայկական տպարան
ունի, և ի վաղուց ինչ բարեկամ է: Երեկոյին
դառնալով ի Նախիջևան պատրաստուեցայ վաղուան
ճանապարհին, փոքր ուղւոյ պարկիս մէջ ամփո-
փելով աստի և անտի ընդօրինակած յիշատա-
կարանքս: Եւ որովհետև արդէն հրաւիրուած էինք
նոյն երեկոյին Եղիա Աղա Պալապանեանի տուն
բաժակ մի շայի (ըստ ուսուսաց բացատրութեան), ար-
գոյ Եպիփանու հետ գնացինք վերջին երեկոյն ան-
ցընելու մեր հին բարեկամին քով: Եղիա Աղա դա-
րուս հետ ՚ի միասին կը քայլէ, այլ դեռ ժիր, ա-
ռող է մտօք և մարմնով. նա Անեցի գաղթակա-
նացմէ չէ, այլ յետոյ ի Պարսկահայոց Նախիջևան
եկած. ինչպէս ինքն՝ նոյնպէս և հօրումոյն զաւա-

կունք՝ բարձր են հասակաւ և քաջառողջ կազմով, նոյնպէս ընչիւք և ստացուածովք: Աւելորդ է կարծեմ գուրցելը, որ բաժակ մի շայի հրաւերը՝ բազմազան քաղցրահաշակ ըմպելեաց փոխուեցաւ, և մեծածախ ընթրեաց սեզանը զարդարեցին Ազախու ծովու ազնիւ ձկունք՝ իրենց համեղահաշակ կիթերով: Գիշերուան ժամը Իձ ին, յայտնելով իմ օրտէ շնորհակալութիւնքս առ հասարակ ամենայն Նախիջևանցւոց, մանաւանդ անարգամեծար տանուտեարց և հիւրընկալ ասպնջականաց, դարձանք ՚ի տուն Պոպոյեանցի, ուստի առաւօտեան ժամը Յին յուղի անկայ, նոյն ճանապարհաւ որով հասել էի ՚ի Նախիջևան՝ վերադառնալ ի Կաֆա: Մեծապէս գոհ եմ որ չհանդիպեցայ Ազախու ծովուն անհանդարտ ալեաց կատաղութեան. երբ ի Կերջէ շոգենաւը կը յառաջէր դէպ ՚ի Թէոդոսիա, և կը պարզէր նաւուն առաջ Սև ծովու իւր կապուտակ ծոցը վէտ առ վէտ գեղեցիկ կոհակներով, յանկարծ միտքս եկան Ազախու պղտոր և դեղնագոյն անհանդարտ ալիքը, որ Եւքոսինոսի համեմատելով՝ շատ անախորժ և տգեղ երևցան: Տակաւ առաջ գնալով, ընդ առաջ մեր կ'երևէր (ըստ մեր ձեռագրաց բացատրութեանց) ծովադիտակ և հոյակապ մայրաքաղաքն Կաֆա, իւր այժմեան մերկազուխ սարերով, զորս մեր տնայէն նախնիք զարդարել են գմբեթազարդ տաճարներով, և յետոյ տնաւեր խուժանք քարուքանդ արել են և զԾովային Հայաստան (*Armenia marittima*) աւերակաց և դերբկաց կոյտեր դարձուցել են: Մինչդեռ Թէոդոսիոյ նաւահանգիստը մտնելով՝ կ'ուզէի զգալ այն մխիթարութիւնը, զոր ամէն ճանապարհորդ կը զգայ՝ յետ ամսօրեայ բացակայութեան ՚ի տուն վերադառնա-

լով, ամբոխեալ մտածութիւնք կը վրդովէին իմ միտքս, Թէոդոսիա, Նախիջևան, Կամենից, և ապա տարարազդիկն Անի միտքս կու գային, այդ քաղաքաց մէջ շատ ու շատ վշտեր կրել են Հայկազունք... « Տէր Աստուած, մտաց խորէն կը հառաչէի, երբ այդ տառապեալ ազգին գթած աշօք պիտի նայիս »:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԷՈՐԴՈՍԻՈՅ



ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԹԷՈՒՈՍԻԱ-ԿԱՅԱ ՔԱՂԱՔԻՆ ՏԱՐԻՈՑ

ԵՒ ԱԶԳԻՍ ԳԱՂԹԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ

Ա

ՅԱՌԱՋԱՐԱՆ ՈՒԹԻՒՆ

Գրոցս առաջին մասին մէջ խօսելով, փոքր ի շատէ. Անեցի Հայոց դէպ 'ի Ռուսաստան գաղթելուն մասին, մասնաւորապէս ի Նոր-Նախիջևան, անհրաժեշտ հարկ մի էր մեզ, խօսիլ նաև, ի Տարիա կամ ի Ղրիմ, և առանձինն ի Թէոդոսիա գաղթող ազգայնոց մասին. վասն զի այս քաղաքը, իւր աշխարհագրական դրիւք և շահաւճութեան յարմար ծովածոցով, սիրելիւմայր և կեդրոնատեղի եղած է Հայ գաղթականաց համար. և արդէն ի կամենից և ի Նոր Նախիջևան գաղթող հայկազունք աստի ի Թէոդոսիոյ շուքի գնացել են այն աշխարհները¹:

1. ի կամենից 1331 թն, Նախիջևան 1778 թն:

Անհրաժեշտ հարկը գրուցեցի. վասն զի թէ ի
Կամենից և թէ Նախիջևան անցողաբար և քիչ
ժամանակ մնացեր եմ, մինչգեռ ի Թէոդոսիա եր-
կար միջոց բնակելով, և աչքի առաջ ունենալով ազ-
գիս հին և նոր յիշատակաց արժանի շինութիւնք՝
որք այս կողմերս, քաղքին մէջ և դուրսը, ամէն
քայլափոխի՝ հետաքննին աչաց առջև կ'եննեն, ինչ-
պէս հնաշէն և հոյակապ եկեղեցիք, ամրակուռ
մատրուկք, քաղցրահամ ջրոց աղբիւրք, քարակոփ
խաչք և խաչքարինք հայ վերտառութեամբ . . . :
Բաց յայսցանէ հմտալից հետազօտութիւնք բանի-
րուն մարդկանց զՎազարաց աշխարհէ և առհասա-
րակ զՏաւրիոյ, յորս ազգիս գաղթականութեան մա-
սին, նորանոր տեսութիւնք յերևան կ'ելնան . ի վա-
ղուց ինձ գրգիւ կը լինէին՝ գրել և հաղորդել հե-
ռաւոր ազգայնոց, ի Ժ դարէ և այր Տաւրիացի
Հայ գաղթականաց տըխուր և այլ երբեմն միւի-
թարական պատմութիւնը, մատնանիչ անելով նոցա
յիշատակաց արժանի գործունէութիւնքը և աշխար-
հաշէն բարքը. որք յարակից են քաղաքիս ան-
ցելոյն հետ : Այլ որովհետև Թէոդոսիոյ ապագայն
երերուն դրութեան մէջ էր և նորա հզօր հարե-
ւանը և նախանձորդ Սևաստոպոլ՝ ամենայն միջոց
ի գործ կը դնէր, զԹէոդոսիա նկուն զրից մէջ
պահելով իւր վիճակը օր ըստ օրէ փառաւորելու,
ահա այդ դրութիւնը քաղաքիս՝ ինձ արգելք կը
լինէր հրատարակելու քաղաքիս և ազգիս մասին
հաւաքած տեղեկութիւնքս :

Այդ երերուն դրութիւն, անշուշտ իւր վախճանը
մտտեցած տեսնալով անցեալ տարի (1890) գնալով
զայրացաւ . գրեթէ համօրէն Ռուսաստան այդ խըն-
դրով պարապեցան . ոչ թէ միայն Ղրիմեցի լրագիրք

այլ և մայրաքաղաքաց ծանրակշիւ թերթերը Պետրբուրգի և Մոսկուայի՝ մի շարք երկար՝ յօդուածոց նուիրեցին խնդրոյս: Ընթերցողք անտարակոյս կը հասկնան որ՝ առանձնական երկու քաղաքաց շահերը չէին որ կը խօսեցնէին մայրաքաղաքաց թերթերը, այլ ընդհանուր ազգային շահը: Թէ ոգոսիոյ կամ Սեաստոպոլի, այս երկու քաղաքաց միոյն նաւահանգիստը բաց պիտի լինէր վաճառաւաճ նաւերու համար, հարաւային և միջին Ռուսաստանի բոլոր հում ապրանքը պիտի իջնէր այն նաւահանգիստը և անտի պիտի անցնէր յԵւրոպա, դիւրակենցաղ կենաց հազար ու մէկ տեսակ ապրանք Եւրոպայէ ի Ռուսաստան բերող նաւերուն միջոցիւ:

Սեաստոպոլ արդէն այդ առանձնաշնորհութիւնը կը վայելէր արեւելեան երկրորդ պատերազմէն վերջը. ուստի քաղաքացիք ամենայն ջանք և գործք ի կիր արկին այդ շահաւէտ առանձնաշնորհութիւնը ընդ միշտ իրենց քաղաքին սեփականելու:

ՍԵՒԱՍՏՈՊՈԼ ԹԷ ԹԷՈՂՈՍԻԱ

Վերնագրով երկայնաճառ յօդուածները պարզեցին խնդիրը, իւրաքանչիւր յօդուածագիր իւր մտաց համեմատ փաստեր ի մէջ բերելով: Սեաստոպոլցիք և նոցա հետ համաձայն այլ շատ նշանաւոր անձինք, որք բաց ի անձնական շահէ, բարոյապէս իրենք զիրենք պարտական կը ճանչնային Սեաստոպոլի շահը պաշտպանել, ձայն վերցուցին թէ՛ « Սեաստոպոլ արժանաւոր է ամենայն առանձնաշնորհութեանց, նա Ա. արեւելեան պատերազմին միջոց պատուար կեցած է Ռուսաստանի, յինքն

ընդունելով թշնամեաց բիրաւոր սումբերը. նորա ծովը և սարերը ներկուած են ազգին բիրաւոր երիտասարդաց արիւնով . Սեաստուպոլի շահը՝ բոլոր Բուաստանի շահն է» : Այս զօրաւոր ձայներու դիմաց, որք ընդարձակ աշխարհին մէջ ամէն անկիւնէ իրենց արձագանքը ստացան, աւելի զօրաւոր ձայն և փաստեր կարևոր էին ցուցանելու, որ առաջարկեալ խնդրոյն Թէոդոսիոյ նաւահանգիստը առաւել նպաստաւոր է : Սակայն այդ գործին ձեռնամուխ լինելու մեծ խոհեմութիւն և շրջահայեցութիւն կարևոր էին, միանգամայն աշխարհագրական և տնտեսական, նոյնպէս և պատմական հմտութիւնք, որպէս զի Սեաստուպոլի շահը մէկդի թողլով, նշանակուի Թէոդոսիոյ նաւահանգիստը առանձնաշնորհ վաճառաշահ ծոց Սև ծովու վերայ :

Եւ ահա այդ գործին ձեռք զարկաւ, և յաջողեցաւ, հայկազն Լէոնիդ Մազիրեան, Տէրութեան խորհրդականը (Conseiller d'Etat) որ կաֆայեցի է ծննդեամբ, և քեռորդի միւս այլ պաշտպանին Թէոդոսիոյ գերահանճար ծովանկարչի Յովհաննու Ավագեան :

Սորա՝ Մազիրեանի գրածը, նախ իբրև ծնունդ հայկական մտաց և ապա իբրև խոհական և իմաստալից փաստարանութիւն ներկայ խնդրոյս մասին, արժանի է օրագրիս հետագայ պրակաց մէջ ամբողջապէս հայ թարգմանութեամբ ի լոյս ընծայել :

Խոստացայ արդէն, քաղաքիս պատմութիւնը գրելու միջոց մատնանիչ անել ազգիս յիշատակի արժանաւոր անձինք և արարք՝ զրուցեցի որ քաղաքիս պատմութեան հետ յարակից են և մերայնոց

գործունէութիւնք: Վկայ խօսքերուս են արդէն, և ազգայնոցս տևողական գործունէութեան, անցեալ տարուան և ի մօտաւոր անցելում, աստ ի Ռուսաստան հանդիսացեալ նշանաւոր անձինք ազգիս...

Նաևահանգստի խնդրոյ մասին կազմուած յանձնաժողովը (որ կարելի է զրուցել վայելչապէս Վեհաժողով), զի կը նախագահէր ի ժողովին ինքնակալ կայսրն, անդամակցութեամբ թագաժառանգին, անդամ էր ժողովոյն և հայկազն նախարարն Դելիանով, ի նկատի ունենալով Պ. Մազիրեանի զրօժը, բազմութեամբ քուէից որոշեց, նշանակել թէժոդոսիոյ ծովածոցը բաց նաւահանգիստ վաճառաչի ուս և օտար նաւերու, Սևաստոպոլինը՝ որոշելով լինել կայարան ուս մարտիկ նաւերու. նորաչէն ծովաթումբերու և մեծամեծ ամբարանոցներու համար արքունի գանձարանէն վճարել մի լիանաւոր բուրլիներու գումարը: Այս որոշողութիւնը եղաւ 1890 Մայիս 14 ին. քիչ վերջը կայսերական հրովարտակը տպագրուեցաւ Ռուսաստանի բազմաթիւ թերթերուն մէջ, յորում բաց ի նաւահանգրատին խնդրէն կը ծանուցուէր շուտով սկսելի երկաթուղւոյ՝ մասին որ պիտի կապէ զթէժոդոսիա բոլոր Ռուսաստանի հետ ի դիւրութիւն վաճառականութեան: Այսպէս ուրեմն, երբեմն Գենուացոց ժամանակ, հայութեամբ վաճառաչահն թէժոդոսիա, դարձեալ քիչ տարիներու միջոց պիտի հասնի կամ գերազանցէ ծովային Հայաստանու՝ 2. Այլ

1. Այդ երկաթի ճանապարհի գործունէութիւնը սկսուած է 1890 թ, և աւարտած նոյն տարւոյ մէջ:

2. Առ Գենուացոյց Armenia Marittima կոչուած է կաթա:

մեք փութամբ տալ մի ընդհանուր տեսութիւն Թէո-
գոսիոյ ծովածոցին և այնոր ակերուն մօտ ազգիս
անցելոյն :

Բ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տարիական թերակղզոյն արևելեան ծայրը,
Սև ծովուն եզերք, շինուած է նախաքրիստոսեան
հին քաղաքը Թէոդոսիա . ի հարաւոյ, յելից և ի մտից
արևու կը բարձրանան կաւեղէն ըլուրներ, որոց
վերին մասը լերկ, այլ ստորին մասը ծածկուած
է քաղցրաճաշակ և գինեբեր այգիներով :

Մովը՝ յարևելից ման գալով, մտած է ցամա-
քին մէջ, մեր երկաթագիր (Տ տիռն) տառին
վերին կիսաձևով, որ և ընդարձակ տարածութեամբ
և խոր յատական ապահով նաւահանգիստ է
մեծամեծ նաւերու : Քրիստոսեան թուականէն 600
տարի առաջ՝ նշանաւոր եղած է Թէոդոսիա ծագ-
կեալ ծովային վաճառականութեամբ, այլ ի միջին
դարս, փոխելով իւր անունը ի Կաւա (Կաֆա), ի
ծայր փառաց հասած է Գենուացի և Հայ վա-
ճառականաց ձեռքով : Ի Ժ դարէ և այսր յա-
ճախած են Հայք այս վաճառաչա՛հ նաւահանգիս-
տը, որոյ վկայք են ցարդ մնացած քանդակագործ
և այլ գրաւոր աւանդութիւնք : Յառաջին կէս ԺԴ
դարու, կէս միլիոն հայասեռ ժողովուրդ, և ըստ
գրեւոյ մի հայկական յիշատակարանի, « Իշխանք
և ազնուականք » բնակութիւն հաստատած են

քաղաքին մէջ, նոյնպէս և քաղաքէս դուրս՝ սարերուն վերայ ու հովտաց մէջ, տառը ժամուան ճանապարհ, ընդարձակ տարածութեան վերայ, ի Թէոդոսիոյ մինչև ցՍ. Խաչ, հայկական քաղաքը (առ Գե. նուազուովք աղաւաղելով Սուրխաթ եղել է, այժմ Հին-Ղրիմ), և ի Ս. Խաչէ մինչև ցՂարապազար 66 վերստ հեռաւորութեան միջոց շինած են հարիւր հազար տուն, լեռները և սարերը զարդարել են խաչապսակ եկեղեցեօք և վանորէիք: Եկեղեցեաց թիւը մինչև հազարի կը հասցնէ հին յիշատակաբանը, « շինեցաք եկեղեցիս հազար » զրուցելով: Այս թիւը, անշուշտ շատերուն, չափազանցօրէն գրուցուած կ'երևի, այլ մեք որ ականատես եղած եմք բազմաթիւ կիսաւեր քարուկիր ազգային եկեղեցեաց, Ղրիմու սարերուն վերայ, այնպէս կը համարիմք, որ՝ եթէ ոչ հոյակապ եկեղեցեաց, այլ ամբակու և փոքրադիր մատրանց թիւը, կարի շատ եղած է 1330-1478 թուականաց միջոց: Այդ եկեղեցեաց մի մեծ մասը, բուն Թէոդոսիոյ մէջ շինուած են, հնադոյնք՝ Գենուացւոց պարսպին ներքնակողմը, նորաչէնք պարսպէն դուրս, հայկական պարսպին մէջ. և այլ շատեր պարսպէն ևս դուրս մնացել են: Այսպէս մեծ եղած է, Անեցի Ղրիմաբնակ Հայ Ժողովրդոց ժամասիրութեան և եկեղեցաշինութեան եռանդը ժամանակաւ: Շէն և պայծառ հնչած են այդ եկեղեցիք, յընթացս 148 տարիներու հայկական ժամասացութեամբ: 1478 թուականին շատ պակասց է Հայոց թիւը, որով և եկեղեցեաց մի մասը, անծուխ և աւերակ մնացել են. այլ վերջին դաղթականութիւն ազգիս (1778) ի Տարիոյ յԵկատերինեսլաւ, Դոնեան աշխարհքը, բոլորովին անմարդի և անհայ թողած է, երբեմն

Հայութեամբ Հոյակապն Կաֆա որով և եկեղեցիք դարցել են բոյն Ղըլկանց և բուէճից :

Սակայն աւերակն ևս Կաֆա, միշտ սիրային անկիւն մի գրաւած է Հայ անեցի գաղթականաց սըրտերուն մէջ, և մինչև ցայսօր քաղցրալուր կը հնչէ այն անունը Հայ ականջաց : Անցեալ դարու մի Հայ գրիչ պանծանօք կը գրէ :

« Կաֆա քաղաք ծովահայեաց, Եկեղեցիքը զարդարուած » :

Արդեօք ազգիս կրած բազմապատիկ միշտներն են, այս քաղաքիս մէջ այդ սիրոյ զգացման շարժառիթը, թէ բիւրաւոր նահատակաց արեան զետերը, որք ողորած են քաղաքիս հողն և գետին :

Որպէս և իցէ Թէոգոսիա քաղաքը յընթացս Հարբիւրաւոր տարիներու, բիւրաւոր ազգայնոց գործունէութեան ասպարէզ եղած է, և կ'արժէ ազգայնոց այս քաղաքին հին և նոր պատմութեան թանօթ լինել :

1. Որպէս զի ամէն տողի չհարկազրիւք ծանօթութեանք յաւելու, կը կանխեմք զբուցել, որ առաջիկայ պատմական յօդուած քաղել եմք գլխաւորաբար յիշեալ ազբիւրներէ :

Յիւսոսիւրան՝ Օգեստայի Հնագէտ ընկերութեան, ի սուս լեզու : Պարսոսիան Կազարաց աշխարհի Փիլիսո. Bruun. կաճաւորդ գիտութեանց, ակադեմիային Ս. Պետրբուրգի, ի Գազդ. լեզու : Անտիոյ Պարսոսիան Թիւրքոսիոյ Փ. Լազորիոյ ի գազդ. լեզու :

Ազգային ազբիւրք. Ճանապարհորդութեան ի Լիհո վ. Հ. Մինասայ Բոյլիան, և այլ անտիոյ յիշատակարանք :

Գ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՒԱՅԻ

Կաւայի հին պատմութիւն՝ անմիջական վերաբերութիւն ունի նախնայն Տարիկեան Քերսոնեօս անցից և մասամբ նաև առասպելապատում աւանդութեանց հետ։ Հաւանականաբար Քրիստոսի թուականէն շորս հարիւր տարի յառաջ՝ յոնիական գաղթականութիւնք եկած են այն կողմերը, հաստատուիլ բնակութեամբ և վաճառականութեամբ ի գաւառս որ ի ժամանակին՝ ծանօթ աշխարհին հիւսիսածայրն համարուած էին։ Իրենցմէ յառաջ, թերակըղզոյն ինչպէս նաև շորս կողմի գաւառաց բնակիչքն համարուած են Սկիւթացիք։ Պլինիոս և Ստրաբոն կ'աւանդեն թէ Տարիկեան թերակղզին ի ծովէ ելած է, և երկու հազար տարի յառաջքան զհասարակաց թուականն՝ Ասիոյ Տարոս լեռանց կողմանէ հոն գաղթած ժողովրդեան պատճառաւ Տարիկէ կոչուեր է։ Իսկ այլք Դիոդորի սիկիլիացոյ հետ կը համարին թէ զանազան ժողովուրդք ի վաղընջուց հոն հաստատած ըլլան իրենց բնակութիւնը և Սկիւթացիք կոչուած, որ ընդհանուր անուն մ'է կիմմերեանց և նոյն կողմերն եղող ուրիշ ժողովրդոց։

Նիւթերնէս դուրս է պատմական — ազգագրական խնդրովք զբաղիլ և զբաղեցընել։ Յիշեցընենք միայն թէ առասպելք՝ Սկիւթացոցմէ յառաջ ալ ուրիշ ազգ մը կը գնեն այն կողմերն, բուն կիմմերեանքը, ստոյգ կամ առասպելական, որոց

նախկին բնակութիւնն էր ըստ քերթողաց՝ հիւրա-
տեաց և տիրադին գաւառ մը, խիտ առ խիտ ան-
տառօք և արեգական ճառագայթից անթափանց
մշտնջենաւոր միգով և մառախղով պատած: Հա-
լածեալք ի Սկիւթաց ի Կիմմերեան Վոսփորէ, ե-
լան ի խնդիր նորոյ բնակութեան. և ընդ Եւքսի-
նեանն անցնելով ի Պոնտոս, մերձաւոր ազգաց և
ժողովրդոց վրայ ինկան ահաւոր արշաւանօք, և ըստ
Հերոդոտեայ՝ յարձակելով ի Փոքրն Ասիա, տիրե-
ցին Կիւքսարայ թագաւորութեան. ուր քսանևութ
տարի իշխելով՝ վերջապէս հալածուեցան յԱլիա-
դէս թագաւորէն Լիւդիոյ:

Տաւրիկեան թերակղզոյն նախնական ժամանա-
կաց կը վերաբերին Եւքսինեան Պոնտոսի այլ և
այլ քաղաքներն, որ վաճառականական և քաղա-
քական պատմութեան մէջ կարևոր և ազդեցիկ դեր
մը ունեցան. ասանկ՝ Պանտիկապէա (այժմու
Կերլ), Թէոդոսիա (Կաւակամ Քէֆէ միջին դարուց),
Քերսոն՝ որոյ դիրքը հիմակուան Սեւաստապոլի
մօտերն կ'իյնայ:

Ժամանակ անցնելէն ետքը՝ Պանտիկապէա, որ
Վոսփորոս սկսեր էր կոչուիլ՝ նեղուցին վրայ ունե-
ցած դրիցը պատճառաւ, յոնիական փոքրիկ թա-
գաւորութեան մը աթոռ եղաւ, ու կամաց կամաց
տարածեց ընդարձակեց իր իշխանութիւնն թովան-
դակ Քերսոնեսի և Եւքսինեան ծովու հիւսիսակող-
ման գաւառներու վրայ, ուր բազումք յիշխողաց
սկիւթացի ծագումն ունէին:

Մեծ ու զգալի եղաւ յոյն գաղթականութեանց
քաղաքակիրթ և բարերար ազդեցութիւնն այն կող-
մերու վայրենի բնակչաց վրայ. որով հին ժամա-
նակաց բարք և սովորութիւնք կրեցին իրենց կեր-

պարանափոխութիւնը, նոյն իսկ իրենց կրօնական պաշտամանց մէջ մտցնելով յունական դիցարանութիւնը. կրթութիւնն և ուսումն ալ ունեցան բաւական յառաջդիմութիւն: Առավորացիք Տարիոյ արեւելեան կողմեր տարածելով իրենց իշխանութիւն, շինեցին և բարգաւաճ ըրին զՊանտիկապէս յետօպակողման, իսկ ի կողմն Ասիոյ կանգնեցին միւս այլ քաղաք՝ զՓանակորիս: Միլեսացիք՝ Թէոդոսիա քաղաքին հիմնարկութիւնն ըրին, և այնչափ զօրացան՝ որ յաջողեցան վանել զՍոթիրոս Թագաւոր Առավորի: Բայց Յունաստան ի կէս Բ դարու (նախ քան զՔր.), կորսնցնելով իւր անկախութիւնը, Հռովմայեցւոց մեծազօր պետութեան մարդ կը լինի. տակաւ կը սկսին պոնտական պատերազմունք. պատմական մեծ մարդը, Միհրդատ Եւպատոր (յՊ դարու նախ քան զՔր.) ամուր Թոււմը կը կանգնի հռովմական հեղեղաց դէմ. և չի թողուր նոցա լէզէոնաց անարգել ստնակոխ անել իւր աշխարհը:

Սկիւթացիք յարմար ժամանակ գտնալով, իրենց արօրադիր խոփերը ի սուր և ի սուին կը ձուլնն. և Թէոդոսիոյ վաճառականութիւնը առ ժամանակ մի կանգ կ'առնու:

Միհրդատ մէկ կողմանէ՝ քաջապէս յետ կը մղէ Հռովմայ մեծանուն զօրավարները Սիլլա, Լուկուլլոս և Պոմպէոս. և միւս կողմանէ, իր Դիոփանդոս զօրավարին ձեռքով կը ջախջախէ Սկիւթացւոց ապստամբութիւնն, և Քերսոնեսեան հասարակապետութիւնը, հանդերձ Առավորեան Թագաւորութեամբ, Քերսոնիսիւ, Պանտիկապէիւ և վաճառաշահն Թէոդոսեաւ, իւր պոնտական Թագաւորութեան մարդ կը կացուցանէ առաջին դարուն սկիզբը նախ քան զՔր.:

Սակայն Պոնտացւոյն փառքը չի տեւել երկար-
Հռովմայ քաջ ախոյեանը, յաղթողն Սկիւթացւոց,
Քերտոնեան հասարակապետութեան և Վսովո-
րեան թագաւորութեանց նուաճողը, Եւպատոր, ա-
նարժան որդւոյն Փառնակի դաւաճանութենէն ընկ-
ճեալ կը զրաւի ի կենաց, և անոր ընդարձակ պոն-
տական թագաւորութիւնը Հռովմայ գինուց ներքե
կը նուաճի:

Թէոդոսիոյ վաճառաշահութիւնը Հռովմայեցւոց
կառավարութեան ներքե ևս կը բարգաւաճի. նա
իւր պարանքները, նաւերով մինչև 'ի Հռովմ' կը
հասցընէ, ինչպէս տարիացի տաւարաց համեղա-
ճաշակ միսը, փոքրիկ տակառներու մէջ ամփո-
փելով: Երոց ամէն մէկուն գին 400 արծաթի դե-
նար վճարելով, Հռովմայեցի սիրարեանք ախորժե-
լով կը ճաշակեն:

Սյլ միւս կողմանէ, որովհետե Թէոդոսիա թա-
տերատեղի կը դառնայ դրացի ազգաց խիզախմանց,
վասն որոյ նորա վաճառականութիւնը ժամանակ
առ ժամանակ կը մլնասի:

Հռովմայեցիք առաւել համակրութեամբ կը վա-
րուին Քերտոնիսացւոց հետ, զի նոքա արդէն հա-
տուած են Հռովմայեցւոց, և բարրառով և քաղա-
քակրթութեամբ մերձաւոր: Պանտիկապէա նա-
խանձու աչօք կը նայի Քերտոնիսացւոց վերայ, ու-
րոյ հետեանք կը լինին արիւնահեղ կռիւներ, Թէո-
դոսիոյ պարսպաց ներքե, որ այդ երկու քաղաքաց
մէջ տեղը կ'ինկնայ: Սկիւթացիք ևս խառնուելով
Քերտոնիսացւոց և Պանտիկապէի կռուոց մէջ, ոչ
Թէ միայն Թէոդոսիոյ վաճառաշահութեան, այլ

առ հասարակ Տաւրիոյ մշակութեան և յառաջադիմութեան արգել և մնաս կը լինի:

Ի վերջ կոյս առաջին՝ և ի սկիզբն երկրորդ դարու փրկչական Թուականիս, կը սուրան ի Թէոդոսիա, ընդ Տանայիս գետ, ասիական Ալան կոչուած բարբարոս ժողովուրդը, և Թէոդոսիոյ պարսպաց հետ, հիմն ի յարև կը կործանեն նորա վաճառականութիւնը: Հաւանականաբար այս միջոց ժամանակին համար է Նիկովիդիոյ հրամանատար Արիանոսի գրածը, որ կը կոչէ զԹէոդոսիա « Քարուքանդ քաղաք. որոյ պատմութիւնը յիշատակարանաց մէջ խնդրելի է »:

Այս յիշատակարանիս վերայ հիմնեալ, ոմանք ի գիտնոց, Թէոդոսիոյ հին պատմութիւնը աւարտեալ կը համարին. այլ մի նորագիւտ արձանագրութիւն, քանդակուած մարմարիոն սիւնի վերայ, կը ծանուցանէ որ՝ եղած է ի Թէոդոսիա, ի ժամանակս Թագաւորութեան Վոսվորի Տիրերեայ-Յուլիայ Տէյրանոսի « Պաշտօնեայ արքայի և վերակացու »¹:

Աստի մեք կը մակարերեմք. Թէոդոսիա՝ Քերսոնիսեան և Վոսվորեան խիզախմանց միջոց, եղած է ոտնակոխ և յԱլանաց քարուքանդ՝ առ ժամանակ մի, այլ սակաւ յետոյ դարձեալ գլուխ վերցուցած է. շնորհիւ իր աշխարհագրական գրից, երբ (այն է 200 թուին միջոցները) Գոթացիք հալածական կը վարեն ի Թէոդոսիոյ զԱլանները: Նոյն միջոցներուն Սարմատացիք ևս, Կիմերեան (Ենիքալէ) նեղուցէն մտնալով ի Տաւրիա կը տիրեն Պանտիկապէի. և կը սկսի երկրորդ հարստութիւն

1. Այս սիւնը գտնուած է ի կերլ 1843ին:

Վոսվորեան Թագաւորութեան: Կը փութան Հասկմայեցիք Սարմատացւոց ինքնիշխանութեան առջևը առնուլ ի Տաւրիա. 303 ին Կոստանդին Խլորոս, Դիոկլետիանոս կայսեր զօրավարը, Քերսանդասացւոց օգնութեամբ կը նուաճէ զՍաւրմատ Ը. Սարմատացւոց Թագաւոր: Նորա յաջորդը, Սավրմատ Թ. Թէոդոսիոյ սահմանադիտոյն վերայ կը զրաւի ի կենաց մենամարտելով մի քերսոնիացի շահատակի հետ: Յերկրորդ կէս Դ դարու, զարձեալ կը յիշուի մի Թագաւոր Վոսվորի՝ Սարմատացի ազգաւ, Ասասնգրոս Բ անուամբ. որոյ իշխանութեան միջոց, այն է 375 թուին, հեղեղարար կը սուրան յԱսիոյ Հոնք, նշանաւորը ի պատմութեան, իւրեանց քանդիչ բնաւորութեամբ, որք և վերջ կու տան Վոսվորեան Թագաւորութեան, կործանելով տաւրիացի շինանիստ քաղաքները: Այդ բարբարոսաց հարուածներուն ներքև շիջելափառ կը կործանի վաճառաշահն Թէոդոսիա, և կը մնայ երկար ժամանակ, նախ Ալանաց, ապա Գոթացւոց և հուսկ Հոնաց դերբուկներուն ներքև, մինչև որ գան մաքրելու նորա ափունքը շահավաճառ և օգտածարաւ Հայ և Գենուացի վաճառականք:

Դ

ՄԻՋԱԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՒԱՅԻ

Աւերակաց ներքև վերջ տուինք Թէոդոսիոյ հազար և երկերիւր տարուան համառօտ հին պատմութեան:

Հոնք քար քարի վերայ շթողլով ի Թէոդոսիա,

կ'անցնին յԵւրոպա, որոց արժանաւոր առաջնորդը « Գաւազանն բարկութեան Երկնից » Ատտիլա, ի ճանապարհին այլ շատ քաղաքներ ենթարկելով թէոդոսիոյ ճակատագրին՝ կը հասնի Իտալիա:

Հարիւր և աւելի ևս տարիներ, թէոդոսիա, նոյն և ամբողջ Տաւրիա՝ աւերակաց ներքև կը մնան:

ՅՕ1 ին կ'արչաւեն ի Տաւրիա յԱսիոյ Ուզրացիք և Բուլղարք. սոցա կարճատև տիրապետութեան վերջ կուտայ կայսրն Յուստիանոս Ա. դարձեալ զՏաւրիա Հռովմայեցոց իշխանութեան ենթարկելով. ծովահայեաց շատ տեղուանք կայսեր շինել տուած բոլորածև բերդերուն, նոյն ձևով, աշտարակները ցարդ կանգուն կեցած են¹:

Ի վերջին կէս Է դարու՝ մի նոր ժողովուրդ ևս մուտ կը գործէ ի Տաւրիա, կազար կամ Խազար անուամբ: Այս ազգը, համեմատ իւր երկրագործ բարուց, երկար միջոց ժամանակի կը տիրէ Տաւրիոյ դաշտային մասանց և Օրի դռնէն ևս դուրս կ'ընդարձակէ իւր իշխանութիւնը. տակաւ կը բաղմանան սոքա, այնպէս որ Տաւրիա, փոխելով անունը կազարիա (Ghazarria) կամ Խազարաց աշխարհք կը կոչուի: Սոցա շահաստանը կը լինի մօտ այժմեան հին Ղրիմու, կազարաթ, երբեմն կոչուած մեծ աւանը. մեք այժմ այդ մեծ աւանին սակաւաւոր նշխորք կամ մնացորդք միայն կարող եմք նշմարել, ի հին-Ղրիմէ ցՍուտաղ տանող ճանապարհին վերայ, և այն դետնին հաւասարած հիմունք և քարինք հին շէնքերու, որք մօտաւոր ա-

1. Ինչպէս ի Հալուչա, Ղրիմու հարաւային ափանց վերայ:

պագային հետախաղաղ պիտի կորնչին. չմտանամք աստ յիշելու որ՝ այդ մեծ աւանը ասկէ 200 տարի առաջ ծուխ համարուած էր Ս. Խաչ վանքին, որ բարձր լերան վերայէն կը գիտէր իւր ընդարձակ ծուխը, կազարաթ մեծ աւանը: Այժմ դարձեալ կանգուն Ս. Խաչ իւր տեղ, և 1890 ին վայելչապէս նորոգուած, ի ձեռն Պերապատիւ վարդապետին Խորէն Ստեփանէի, փոխանակ մեծ աւանին, գեղեցիկ ձորերուն և հովիտներու միայն կը տիրէ, որք ժամանակաւ բիւրաւոր Հայոց տեղի բնակութեան եղած են: Մէք այնպէս կ'ենթադրեմք, որ կազարաց բնակութեան միջոց ի Տաւրիա, գաղթած լինին աստ բազմաթիւ հայ ժողովուրդ, և ունեցել են իրենց եկեղեցիները և վանքերը. այս ենթադրութեանս պատճառները, զատ առանձին զլիսով կ'աւանդեմք ի ստորև, ի գիտութիւն սիրողաց ազգիս հին գաղթականաց պատմութեան:

Ի մետասաներորդ դարու կը դիմեն ի Տաւրիա Պեչէնէզ և Կոման կոչուած ազգերը, զորս կը հալածեն Մոնղոլ թաթարք, 200 ին վերջերը, առաջնորդութեամբ քաջակորով Բաղու խանին, որ էր թոռն, ի պատմութեան նշանաւոր Չինգիզ խանին, հաստատողի զիչխանութիւն Խըպչախաց, սակի - լոկատին:

Բաղու՝ Թէոդոսիոյ մօտաւոր, Սուրբայա այժմ Սուտաղ կոչուած հովտին եզերք, ապալեր սարերու վերայ կը հաստատէ իւր աթոռ, որոյ ստորտը կը խորտակին անզուսպ ալիք Սև ծովու. և ժամանակ առ ժամանակ կու սփռէ հեղեղօրէն դէպ ի Լեհաստան և ի Ռուսաստան, և գերելով գերփելով այն աշխարհները, նոցա կանայք Սուրբայա և Թէոդոսիոյ հրապարակաց վրայ ամօթալից և նախատեալ կը

տպասեն գերեհան Հայերու 1, որ զան և արժաթով
գնելով ազատեն զիրենք այդ տառապանաց վիճա-
կէն, և տանին իրենց ընտանեաց մօտ:

Բագուի Թոռը Մանգու-Ռէմիր, իւր սրբւոց մէջ
կը բաժանէ Թերակղզիս. և Օրան-Ռէմիրի ժա-
ռանգութիւն կ'ինկնայ Սուրխաթ քաղաքէն մինչև
Թէոդոսիոյ ափունքը 1286ին: Սուրխաթ կը լինի
մայրաքաղաք Օրան-Ռէմիրի. և սորա իշխանութեան
միջոց կը փոխուի նորա անունը ի Ղրիմ կամ Քը-
ռըմ. և որովհետև ժամանակ անցնելէն վերջ, բո-
լոր Թերակղզւոյն անուն կը դառնայ Քըռըմ, որ-
պէս զի մասը բոլորէն զանազանի, Հին մակդի-
րը կը գնեն քաղաքին վերայ, կոչելով Օրան-Ռէ-
միրի մայրաքաղաքը Հին կամ Էսկի-Քըռըմ:
Ուշադրութեան արժանի է, որ Սուրխաթի ա-
նուանափոխութենէն իբր 300 տարի առաջ Թէոդո-
սիա ևս փոխել է անունը և սկսել է կաւա-կաֆա
կոչուիլ: Աս երեք անուանց վերայ, այդ է Սոչը-
խար, կաֆա, և Ղրիմ առանձին գլխով պիտի խօ-
սիմք, բացատրելով նոցա ծագումը կամ ստուգա-
բանութիւնը:

1. Ինչպէս Օվանէս Պոկոսանովի 1879 ին:

Ե

Գ Ե Ն Ո Ւ Ա Տ Ի Ք Ի Կ Ա Ն Ա

Յայտնի է մեզ ի պատմութենէ որ Գենուացիք ժԳ դարէ սկսեալ մեծ դեր խաղացել են Կաֆայի մէջ, այլ ստոյգ չէ որ Թուականին նոցա ի ցամաք իջնալը ի Թէոդոսիա, և ոտից կռուան հաստատելը քաղաքիս մէջ, սակայն գիտեմք որ Թաթարաց իշխանութեան միջոց առաջին անգամ աստ ի ցամաք ելած են Գենուացիք: Հաւանելի կը թուի մեզ հնագէտ Իւրգելիչ պրոֆեսորին կարծիքը, որ կ'ենթադրէ թէ ի Կաֆա, 1204 ին, յետ առման Կ. Պօլսոյ ի Լասինաց եկած են խաչակիր իտալացի ասպետք, որոց մին Բ (Ռ) սկզբնանուն կրած է. վասն զի նոյն խուզարկութեամբ յերևան ելած մի յիշատակարան կը հաւաստէ որ ի սկիզբն ժԳ դարու Ռանանով իշխան մի ի Կաֆա, արտօնութիւն կը շնորհէ տարիացի քաղաքաց մէջ անմաքս վաճառականութիւն անելու: Այլ այդ իշխանը յայտնի չէ որ քաղաքէն լինելը՝ վենետկեցի է արդեօք թէ Գենուացի. զի այդ քաղաքացեաց նաւերն, անխտիր նոյն միջոցներն Սև ծովուն քաղաքներուն մօտ դեղերել են:

Այլ ի վերջին կէս ժԳ դարու. Օրան-Դէմիր Թաթարաց խանին իշխանութեան միջոց, Գենուացիք օրինաւոր պայմանագրով Կաֆա քաղաքը, հանդերձ իւր շահեկան ծովածոցով, իրենց կառավարութեան կեդրոնավայր կը ստանան. և այս է համառօտութիւն նոցա պայմանագրին ընդ Օրան-Դէ-

միրի: Ա. Գենուացիք կը պարտաւորին վճարել խա-
նին մաքս ի կաֆա մտած և ելած ապրանքներէն:
Բ. խանը կը պարտաւորի Գենուացւոց շտեմարաններ
և տներ շինելու համար բաժնել տալ երկիր, զոր
նոքա պարսպելով կարնան ապահովել իրենց ապրան-
քը: Գ. Ամէն ազգաց նաւերու գիմաց բաց և անար-
գել թողուլ կաֆայի նաւահանգիստը, Գենուացւոց
հեռաւոր աշխարհներէ բերած ապրանքը դուրս հա-
նելու համար:

Պ. Մուրզաքեւիչ « Գենուացի գաղթականու-
թիւնք ի Ղրիմ » գրուածքին մէջ կը հաստատէ
որ՝ « Թաթար խանք, ինքեանք հրաւիրեցին օտար
ազգերը, շէնցնելու Ղրիմու աւերակ քաղաքները-
այն միջոցներուն Գենուացւոց հետ Պիզացի և Վե-
նետկեցի վաճառականք ունէին իրենց նաւերը Աև
ժովուն վերայ. այլ Գենուացւոց քան զմիւսները
առաւել յօժարակամ ի Ղրիմ գիմելուն պատ-
ճառը, անշուշտ դարուս սկիզբը, ի կաֆա ցամաք
ելնող ասպետք լինելու են, որք կարողացել են գնա-
հատել երկրին շահեկանութիւնը »: Վերև ի մէջ
բերած պայմանագրիս համառօտութիւնը, կը լինի
ամուր խարիխ, որոյ վերայ կը բարգաւաճի տա-
կաւ Գենուացւոց ի կաֆա և ի Սոլդայա մեծա-
մեծ վաճառաշահութիւնը:

Շատ երկար կը լինէր եթէ աստ մանրամասն
գրելու լինէինք Գենուացւոց 200 տարուան միջոց,
աստ ի Ղրիմ, անցուցած շահաւաճառ և գործու-
նեայ կենաց պատմութիւնը, որ և դուրս է մեր
նպատակէն: Նոցա գործունեայ կենաց յիշատա-
կարանները, ցարդ՝ 500 տարին անցնելէն յետոյ,
կանգուն կեցել են ի Սոլդայա և ի կաֆա, վկայելով
անբարբառ զիրենք շինողաց մեծագործութեան:

Պատմութիւնը կը վկայէ որ՝ Գենուացիք այն երկերիւր տարուան միջոցին, մէկ կողմանէ ամրակուռ բերդեր չինել են, հեռաւոր արևելքէ բերած ապրանքներն ապահովելու համար, միւս կողմանէ անդադար յետ մղել են այն բերդերուն վերայ յարձակող թշնամիքը: Չի նոցա վերայ միշտ նախանձու աչք նայել են, տիրող և դրացի ազգերը, որք հուսկ յետոյ հասած են իրենց վախճանին կործանելով և աւերելով երկու Գենուացի ծովահայեաց և գեղեցկադիր քաղաքները՝ Սուդայա և Կաֆա, որոց բարօրութիւնը, Գենուացւոց կառավարութեան ժամանակ ծաղկեալ և նախանձելի եղած է:

Այլ մեք խօսիմք Գենուացւոց աջակից Անեցի Հայկազանց վերայ, որ և է նպատակ մեր այս գրութեան:

Ձ

ԱՆԵՑԻ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ Ի ՏԱՒՐԻԱ

Խնդրովս՝ թէ երբ արդեօք Հայկազունք անցել են ի Տաւրիա, ազգային հեղինակներէ առաջ, պարապել են օտարք:

Նախընթաց դարուս վերջերը թերակղզիս մարզ լինելով Ռուսաց պետութեան, կայսրուհին Կատարինէ Բ. նման Արչակունւոյն Վաղարշակայ, կը ցանկայ գիտել նոր նուաճած աշխարհին և նորա մէջ բնակող ազգաց պատմութիւնը, կամ ըստ բացատրութեան Խորենացւոյ, «կամ եղև գիտել սորա (Կատարինեայ) թէ ո՞չք և որպիսի արք տիրեալ են ի վերայ աշխարհիս, ... զքաջաց արդեօք,

եթէ զվատաց անցեալ ունիցի գտեղի »: Մար Ա-
բաս Կատինայ պաշտօնը կատարող կը հանդիսանայ
Սեստրենցեւիչ Բողոչ անունով համօրէն կա-
թօլիկաց մետրապօլիտը, այր ուչիմ և վարժ, լեհ
ազգաւ, որ կը գրէ Տարիոյ պատմութիւնը փրանկ
լեզուաւ, քաղելով մեծաւ մասամբ Բրոննսկի լեհ
հեղինակին « Թաթարաց պատմութենէն » . յորում
Բաղաւներու և Իւզրէզներու քաջագործութեանց
հետ կը յաւելու և նուաճեալ կամ ի Տարիա բնա-
կող զանազան ազգաց պատմութիւնը: Սորա գրածը
մինչև ցյետին ժամանակներս աղբիւր հաւատա-
րիմ պատմութեան Տարիոյ համարուած էր . այլ
որովհետև հապճեպ գրուածք է, վասն որոյ կը պա-
կասին ի նմա հետազօտութիւնք: Սրբազան Յով-
սէի Երկայնաբազուկ Արղութեանց ռուսարնակ
Հայոց մետրապօլիտն ևս ձեռք զարկած է գործոյս,
եթէ ոչ բովանդակ Տարիոյ պատմութեան, այլ
տարիաբանակ Հայկազանց մասին գրելու, որոյ բազ-
մապատիկ զբաղանքը չեն թողուցել գլխաւորելու
սկսածը: Սեստրենցեւիչ օգուտ քաղած է Արղու-
թեանցի թողած, յետ մահու, յիշատակարաննե-
րէն . զի կը գրէ յիւրում պատմութեան թէ Հայք
զաղթած են յԱնուոյ ի Ղրիմ 1340 ին: Անշուշտ
սրբազանը այն տեղեկութիւնը կամ Նախիթկանու
յայամաւուրքէն և կամ Սուրղաթի (Ս . Խաչ վանքի)
քարաքանդակ յիշատակարանէն հանած է . այլ յի-
շած թուականին մէջ, 10ը տարուան տարբերութիւն
կամ սխալ սպրդած է . զի յիշեալ ազգային յիշա-
տակարանք ի 1330 ին կը գրեն բիւրաւոր Հայկա-
զանց գաղթը ի Ղրիմ և ոչ 1340 ին: Մեծարգոյ
Փիլիպպոսի Բրիւն, բանասէր և հմուտ կանաւորագի
Պետրուրգի Գիտութեանց ակադեմիայի գլխածը,

մեր նայատակին յարմար և համաձայն գտնալով համառօտելով կը դնեմք աստ: 1 « Գիտնոց մեծագոյն մասը, որք զբաղած են խընդրովս թէ՛ երբ արդեօք բնակութիւն հաստատել են Հայք Ղրիմու մէջ, ընդունած են ընդհանրապէս, Սեօթրենցեւիչի կարծիքը, հանեալ ի յիշատակարանաց, յետ մահուն, Երկայնաբազուկ Արղութեանց իշխան արքեպիսկոպոսի: Այդ յիշատակարանաց համեմատ, Թաթարք՝ նուաճելով զՀայաստան 1262 ին, երկրին բնակչաց մեծագոյն մասը տարել բնակեցուցել են այժմեան Ղազանի Աժտերխանու գաւառաց մէջ, ուսկից նոքա անցել են ի Ղրիմ 1341 ին համաձայնութեամբ Գենուացւոց, ի Կաֆա և ի մերձակայս Սուտադի »:

Առանց մերժելու, որ շատ Հայեր կարող եղած են անցնել ի Ռուսաստան, աշխարհին Մոնգոլաց լուծին տակ ընկնալէն վերջ, որք ապա կտրելով անցնելով անապատները եկել են բնակութիւն հաստատելու Ղրիմու քաղաքաց մէջ: Մ. Իւրգեւիչ յայտնի կը բացատրէ որ՝ Հայոց գաղթականութիւնք եղած են այլևայլ ճանապարհներով, և արքեպիսկոպոսին ցուցուցած թուականէն շատ առաջ, այնպէս որ մեզի ուրիշ բան չինկնար, բայց եթէ հետեւի գիտնական հետազօտութեանց պատուական պրոֆեսսորին. վասն զի սերտ կապ ունին նորա զրոյցքը խնդրոյս հետ որով այժմ զբաղիմք:

Անդստին ի ՅԱ գարէ, տարաբաղդ ժովովորդք Հայաստանի, որ մասամբ ընկնեալ էին ի Քրդաց,

1. « Մոնթութիւնք պատմականք և տեղագրականք իտալացի գաղթականութեանց յաշխարհի Կազարաց », Պետրբուրգ 1866:

մնացեալ մասը, թէպէտ դեռ ևս անկախ յայլ իշխանութենէ, այլ արդէն սկսած էին լքանել իրենց հայրենիքը, մէկ կողմանէ պարտատեալ Սէլճուք Թրքաց յաճախակի յարձակումներէ, միւս կողմանէ յոյն կայսերաց հարստահարութենէն, որք միշտ պնդած են թէ Հայոց աշխարհքը իրենց պէտք է ենթարկուի:

1021 ին երբ Յովհաննէս Սենեքերիմ Վասպուրականի Թագաւորութիւնը թողլով, իւր իշխանութիւնը Վասիլ Բ. Յունաց կայսեր ձեռքը, քաջուեցաւ ի կապադովկիա, աշխարհին բնակիչքը շատ անգամ ստիպուեցան թողուլ լքանել իրենց ծննդական երկիրը:

Գրիգոր երէց՝ Հայոց ԺԲ դարու պատմագիրը. յայտնապէս կը մեղադրէ յոյները, պատմելով 1160 ին հանդիպածը, ուր ի միջի այլոց կը յաւելու. « Յունաց կայսերք ոչ մի բան արած չեն քրիտոսնէից ազատութեան համար, ընդ հակառակն իրենք պատճառեղած են, նոցա քաղաքներուն և գաւառներուն կործանման: Այդ իշխանապետաց շնորհիւ ահա հարկադրեցան Հայք լքանել իրենց հայրենիքը, անհաւատք զօրացան, և յաճախակի յարձակմամբ տիրեցին ամենայն կողմանց, սկզբան Արծնոյ, Մելիտիւնոյ, Սերաստիոյ և մայրաքաղաքին Անուոյ, ապա նոցա ջոկատները տարածեցին իրենց աշխարհակալութիւնը մինչև ցմերձակայս և. Պոյսոյ ¹ »:

Եւսիս և առաջ Հայք կը գաղթէին կայսրութեան ստիպական գաւառաց մէջ, այլ սխալ է կարծելը որ Հայք ընդ միշտ այն տեղուանք մնացին. զի կրօնական հալածանք և տակաւ Թրքաց յառաջ խա

զալը տօհական գաւառաց մէջ. հարկաւ կը ստիպէին Հայոց փնտռել իրենց համար ապահով ապաստանարան Տարիոյ յունական մասին մէջ և այլ հեռաւոր տեղուանք:

Ռայնալդի գրածին նայելով¹, Ղրիմեցի Հայկազունք ի փոքր Ասիոյ եկած են. բաց աստի յաճախակի յարաբերութիւնք ասիական Սև ծովուն նաւահանգստից, Ղրիմեցի նաւահանգստից հետ, անշուշտ իրենց կը քաշէին վաճառական Հայերը որք մինչև ցայսօր նշանաւոր են մեծ յարմարութեամբ ի տուրիառս:

Հուսկ յետոյ, Հայոց գոյութիւնը ի Սուտաղ շատ առաջ է քան այն թուականը, զոր կը ցուցանէ մեզ Արդութեան սրբազանը Հայոց ի Կաֆա բնակութիւն հաստատելու մասին. զի յոյն Յայսմաւուրքի մի յիշատակարան, որ արդէն շատ հեղ յիշուած է, կը հաւաստէ մեզ այդ իրողութիւնը:

Այդ յիշատակարանին հեղինակը կ'աւանդէ որ՝ մինչդեռ 1292 ին զատկական տօնը հանդիպած է ապրիլի 6ին, Հայք տօնած են ամսոյն 16 ին ծնազատիկ:

Արդէն առաջուրնէ շատ անչամ ունեցել են Յոյնք և Հայք մեծամեծ բանակուիք զատկական թուականի մասին: 1006 ին նոյնպէս Յոյնք տօնած են Ս. Յարութեան տօնը ի 6 ապրիլի, մինչ հայ տումարը յետաձգել է ի 13 նոյն ամսոյն: Այս պատճառաւ Մատթէոս Ուռհայեցի յանդիմանած է զՅոյները, որք իրենց յոխորտ յամառութեամբ

1. Nec Armeni... qui a Saracenis suis pulsi sedibus in Taurica Chersoneso agebant etc. Annal. Eccles. a. a. 1318

յառաջ տարել են Չատիկը, ի Մաղկազարդի կիւրակէն, հակառակելով Քրիստոսի. « Ձի աղանդ փրկիսօփայիցն հակառակամարտ է Նոգւոյն սրբոյ »:

Յոյն Յայամաուրքին յիշատակարանէն այս կը հետևի, որ ի Սուտաղ բնակելոց Հայկազանց թիւը շատուոր եղած պէտք է լինի, որպէս զի նոցա կարծեցեալ սխալմունքին վերայ ոչ դարձնեն միւս այլ որթոտաքս քաղաքացիք: Թերևս նոցա մոլորութեան միւս պատճառ ևս այս կը համարին զիրենք յանդիմանողք, զի նոքա սկսել էին մերձենալ կաթոլիկ Հռովմէական եկեղեցւոյն, ինչպէս արդէն նոցա եղբարք, որք ի վաղուց կը բնակէին Կաֆայի մէջ: Վասն զի այն քաղաքին մէջ, ըստ կարգադրութեան (règlement) 1316 ին հին հայ եկեղեցիք կային. յորոց մին խարխուլ վիճակի մէջ. թեմին արքեպիսկոպոսը յորում կը գտնուէր խարխուլ եկեղեցին արդէն ընդունած էր զգերագահութիւն սրբազանին Հռովմայ 1:

Հաւանական է որ՝ Սուղայա (Սուտաղ) ևս ունեցել է իւր Հայ — կաթոլիկ թեմակալ եպիսկոպոսը 1253 ին, որոյ մօտ հիւրընկալ մեծարանք վայելեր է փրանկ քարոզիչը Rubriques, զոր ինքը յոյն կը կարծէ. մեզ հաւանական չիթուիր, որ յոյն եկեղեցական մի իւր եկեղեցւոյն՝ մօտ բնակութիւն տայ փրանկ քարոզչին:

Բազմահմուտն իւրգեւիչ և Փիլ. Բրիւն, վերջ գրած փաստերով կը հաստատեն որ Հայք ժՊ դա.

1. Rainaldi, ad annum 1318. n. 13; 1321, n. 13.

2. Առ ժՊ դարէն քաղաքի եկեղեցին նորոգեցաւ 1883 ին, յորում պիտի Հայ կաթոլիկք կը պատարագեն:

րէն շատ առաջ բնակութիւն հաստատել են Տաւրիոյ մեջ:

Ինչպէս տեսանք՝ ԺԳ դարու ունեցել են թեմակալ եպիսկոպոսներ. և եթէ ԺԳ դարուն սկիզբները նոցա եկեղեցին խարխլել է, անշուշտ այդ եկեղեցին պէտք է լինի մի քանի հարիւր տարուան շէնք. զի հայկական քարուկիր շինուածք մի քանի տասնեակ տարիներու միջոց չեն խարխլիր. վկայ են զրուցածիս այժմ Ղրիմու սարերուն վերայ, հարիւր տարիէն աւելի անտէրունչ մնացած, դեռ ևս կանգուն Հայ եկեղեցիք:

Հայոց ի վաղուց գոյութեան ի Տաւրիա մի փաստ կարող է համարուիլ, կաֆայէ ոչ շատ հետի Սուրդաթ քաղաքին մերձաւոր անտառին մէջ դեռ ևս կանգուն Ս. Խաչ վանքը (ի հնումն Ս. Ալան, դեռ ևս առաջ Գամշակ կամ Քէմշակ անապատ). թէպէտ և այդ վանքը իւր գեղեցիկ եկեղեցեաւ ԺԳ դարու սկիզբները շինուած է (1330), այլ աւանդութիւնը մեզ կ'ապահովցնէ, որ այդ թուականէն շատ առաջ մի այլ վաղեմի հայկական վանք եղած է նոյն անտառին խորերը, որոյ հիմունքը ցարդ կեցել են:

Ըստ իմ կարծեաց, կաֆա քաղաքին միջավայր, դեռ կանգուն Ս. Սարգիս եկեղեցին, մեծ և զօրաւոր ապացոյց է Հայոց վաղեմի գոյութեան ի քաղաքիս. դա է այն աթոռակալ եկեղեցին՝ որոյ շուքին ներքեւ շատ բարեպաշտիկ արեղայներ և դպիրներ օրինակել են զանազան հոգևոր գրեանք յընթացս հարիւրաւոր տարեաց: Այդ եկեղեցւոյն ետևի կողմէն, ընդ մէջ որմին ազուցիկ խաչքարինք, յայտնի վկայ են եկեղեցւոյն շատ հին լինելուն, քանզի մինչդեռ բազմաթիւ խաչքարինք ԺԳ դարէ ի թո՛ւ:

նարհ, անազարտ ձեացել են իրենց տառերով, Ս. Սարգսի որմին մէջ ազուցեալները՝ մաշած և աւրուած են և չէ կարելի կարգալ նոցա թուականը: Նոյն իսկ եկեղեցւոյն դիրքը ի միջավայր Կաֆայի, նորա վաղեմի լինելուն յայտնի ապացոյցն է, վասն զի այլ ազգային եկեղեցիք քաղաքին կեդրոնէն հեռու կ'իյնկնան, և մեծաւ մասամբ այժմեան արգելանոցին մէջը և մօտերը, ուր և առանձին թաղ կազմելով, բնակութիւն հաստատել են հայկազունք որք 1330 ին բազմութեամբ եկած են ի Կաֆա Կեւնուացի իշխանաց համաձայնութեամբ: Այսպէս կը գրէ Ղրիմեցի մի Յայսմաուուրքի յիշատակարանը, « Գեասպան յղեն (Հայք) ի Ղաիմ առ իշխանն Չինիւիզաց, որ բնակէր ի մէջ Ֆուանկհիսարին Ֆէօդօսիու, ուխտ զնեն ընդ իշխանին Ֆէօդօսիու: Ելեալ ի յԱխսարայէ իշխանք և ազնիք և հասարակ ժողովուրդք, վառեալք զինու, պատերազմելով ընդ թաթարացն, ճեխեալ գան ի Ղաիմ. և բնակին ի Ֆէօդօսիա, ի Կազարաթ և ի Սուրխաթ և ի կողմանս սոցա. այս եղև ՉՀԹ թուին »:

Հայոց բնակութեան տեղ կը տրուի Ֆաէնկ հիսարէն դուրս դէպ ի հարաւային սարերը, զոր պարսպով պատելով ազգայինք, հոն բնակութիւն կը հաստատեն: Եիշեալ յիշատակարանը կը գրուցէ « Յահէ Հոնականաց (փոխանակ թաթարաց գրելու) պարսպեցին քաղաքն Ֆէօդօսիա »: Ահա այս պարսպին մէջ շինուած են մեծաւ մասամբ բազմութիւ հայ եկեղեցիք կամ մատրուներ. սակաւ են պարսպէս դուրս ձեացեալները, իսկ ի միջավայր քաղաքին միայն Ս. Սարգիս ունեցել է տեղի քաղաքիս և ապա ի նմա մեր ազգայնոց բանած դրէն կը հեռուցընեմք. որ Ս. Սարգսի շինութիւնը, շատ

առաջ է քան զվերջին գաղթականութիւնը. եկեղեցւոյ որմին մէջ զետեղուած և մաշած խաչքարինք կը հաստատեն եկեղեցւոյն բազմադարեան հնութիւնը, թերևս Գենուացւոց ի Կաֆա գալէն եւս շատ առաջ: Սակայն ոմանք կարող են առարկել, թէ ինչպէս այդ բազմադարեան եկեղեցին, Խփչաղաց և Թաթարաց յարձակմանց միջոց քանդողաց աչքէն վրիպել է, մինչդեռ իրմէ շատ վերջ շինուած Գենուացւոց Ս. Ագնէս փառաւոր եկեղեցին, որ քիչ հեռի եղած է Ս. Սարգսէ, և այլ շատ ազգային եկեղեցիք քարուքանդ եղել են:

Մեք այդոր պատճառ. Ս. Սարգսի խոնարհ անշուք դիրքը կը համարիմք. որ քաղաքին միջավայրն լինելովը հանդերձ, աչքի չի զարներ: Նորացածուն և անշուք դիրքը և շորս կողմի բարձր պատերը, ծածկել են զնա քանդիչ ձեռքերէ: Արդեօք մեր նախնիք կանխատես զգուշութեամբ չեն տուել Ս. Սարգսի այդ ցածուն դիրքը. ես այնպէս համոզուած եմ, որ հին Հայոց խահական զգուշութեան արգասիքն է ցարդ Ս. Սարգսի կանգուն մնալը: Վերջին և զօրաւոր աւայացոյց մեր ազգայնոց ժ դարու միջոցներ ի Կաֆա գոյութիւն ունենալուն, կը համարինք մի քար, որ համայնաջինջ ամանակին ժանիքէն պրծեալ, կը պահուի ցարդ Թէոդոսիոյ հնութեանց թանգարանին մէջ: Քառածալ թերթի ձեով՝ յասպիս քար մի է, վրան երեք խաչեր քանդակուած. միջինը մեծագոյն, որոյ պատուանդանին վերայ կը կարդանք. « Բարեխաւս է սուրբ Նշանքս Գրիգորին և իւր զաւակին »: Խաչին վերի կողմը կայ քանդակուած այս վաղեմի թուականը ՆՀՁ (1027):

Վ. Հ. Մինաս Բժշկեան, հաւատարիմ տեղա.

գրողն հայկազն յիշատակարանաց Տաւրիոյ, կը գրու-
ցէ թէ, « Թուի թէ զայս վէճ՝ բերեալ են աստ
(Հայք) յԱնուոյ և եղեալ յեկեղեցի ինչ »: Թուի
կը գրուցէ՝ տարակուսելով խաչքարին հնութեան
վերայ. վասն զի նոյն միջոցին դեռ ևս իրենն ծա-
նօթ չէին ոչ ԺԳ դարու բազմաթիւ Հայոց գոյու-
թիւնը ի Սուտաղ, և ոչ այլ նորանոր հետազօտու-
թիւնք գիտնոց. Հայոց հին գաղթականութեանց
մասին ի Տաւրիա: Հաւանական է ինչպէս այս
քարին, նոյնպէս և այլ շատ քարերու Չ. Պ. Չ և
այլն, թուականներով ի կաֆա փորագրեալ լի-
նելը:

Քանզի նոյն ինքն Բժշկեան վարդապետ, յեցեալ
հաւատարիմ յիշատակարանաց վերայ, ինչպէս
կոնդակին Գրիգորի ԺԲ քահանայապետին Հոռվ-
մայ առ Հայկազունս Տաւրիոյ (1318), որ 13 ամօք
առաջ է քան զմեծ գաղթականութիւն բիրաւո-
րաց ազգիս ի Տաւրիա, կը գրէ. « Չայնու ժամա-
նակաւ (1318), մեծանուն հանդիսացաւ ազգս մեր
ոչ միայն ի Ղրիմ, այլ և ի բազում տեղիս », մեք
թողով առ այժմ ազգիս մեծանուն հանդիսանալը
ի բազում տեղիս, յոյժ հաւանական կը համարիմք
որ ի Ժ դարէ և այսր միշտ հայկազունք բնակել
են Տաւրիոյ զանազան քաղաքաց մէջ:

է

ՍՈՒՐՂԱԹ, ԳԸՌԸՄ

ԵՒ ԿԱՅԱ ԱՆՈՒԱՆՑ ԵԱԳՄԱՆ ՎԵՐԱՑ

Ի կաֆայէ երեք ժամ հեռի, 27 վերստ գէպ 'ի արևմտեան-հարաւ, լեռներուն մէջ գտնուած փոքր քաղաքը, որ այժմ Նին-Ղրիմ անունը կը կրէ, առ Գենուացւոյք Սուրղաթ կոչուած է. նոցամէ առաջ և վերջը մինչև մեր օրերը, շատ Հայեր բնակած են այդ քաղաքին մէջ: Յ' ԺԳ դարու ալ Թաթարաց խաներուն մայրաքաղաք եղած է, որոց փոզերանոցին և պալատներուն մնացորդ մինչև վերջին ժամանակներս կեցած էին, այլ այժմ հետախաղաղ կ'որան: Ի հնուց նշանաւոր և մեծ քաղաք եղած է. մեր ձեռագիրք իբրու յատկանիչ կը գործածեն հոյակապ ածականը. Թաթարք ևս ԺԳ դարէ սկսեալ, իրենց լեզուով նոյն ածականը տուած են Սուրղաթի¹: Եամանակաւ հոյակապ եղած ըլլալուն տարակոյս չկայ. զի մեծ տարածութեամբ ցըրուած կը տեսնուին ցիր և ցան դերբուկք և մնացորդք հին շինուածոց, որոց մէջ նշանաւոր են ազգային հայեցակիտիւ, Չար-խափան Աստուածամօր եկեղեցւոյն աւերակք. համանուն կամրջին մօտ, և այլ դերբուկք բազանեաց և մզկիթից, նոյնպէս և ստորերկրեայ լայն քարուկիր անցքեր, քաղա-

1. Սերոյ կոչուած:

քին երբեմն հոյակապ լինելուն ապացոյցքն են¹։ Սմիճնով պրոֆեսորը, Պետրբուրգի հնագիտական յիշատակարանաց մէջ² քաղաքիս Սուրդաթ ա- նունը, աղաւաղմունք կը համարի հայ Ս. Խաչբա- ւերուն, զի մօտ է քաղաքիս վաղեմի հայկական Ս. Խաչ (Ս. Նշան) վանքը։ Եւ որովհետեւ Հայք յառաջ եկած են այս կողմերս քան զՔենուացիս, յայժ հաւանական է որ Սուրբ Խաչ բառերուն ա- ղաւաղմունք լինի Սուր-դաթ։ Անշուշտ սկզբան Կե- նուացիք այդ հայ բառերը իրենց կամ լատին լե- զուին տառադարձութեան կանոնով, գրած են Sarb-gateh, և ժամանակ անցնելէն յետոյ այս բառերուն մեջէն քանի մի բաղաձայն թօթափելով մնացել է Sar-gat։ Նոյն միջոցներ գրուած մագա- ղադի թերթ մի, որոյ վրայ հայերէն երկաթագիր գրուած տեսայ լատին պատարագամատոյցի մի մասը կը հաւատտէ թէ այն միջոցին դեռ լատին լեզուին մէջ չկայ Չ տառին հնչումը, զի գրած գտայ գրոյթս ին եկացելիսս, Չի տեղ Յ տառը. այ- սինքն ոչ եկելիսս։ Զարմունք չէ, այլ մանաւանդ շատ քնական, որ հայ անունը, անցել է առ Քե- նուացիս։ Քաց յայսմանէ դեռ քանի տեղ Ղրիմու մէջ իբրև տեղւոյ անուն, հայ բառեր կը գործա- ժուին, ինչպէս Օր քաղաքը (տիւ նշանակութեամբ)։ զի ցամաքէն Ղրիմ մտնողին, դէպ արևելք կ'ինկ- նայ։ Հարաւային ափանց վերայ Ալուշթայի մօտ փոքր ջրվէժ մի կայ որ ցարդ Զուր-ջուր անունը կը կրէ։

1. Աւերակքն Զար-խափանի գնեց մտտերս տիկին Աննա Ալվազեան և մտադիր է նորոգել այս սրբազան յիշա- տակը։

2. Արևմտեայց մասին մէջ 273, 1887 թն։

Այլ մեք դառնանք զարձեայ առ Ս. Խաչ (Սուր-
զաթ)։ ԺԳ դարուն երկրորդ կիսուն մէջ այս քա-
ղաքը իւր հին հայահնչիւն անունը կը փոխէ և կը
լինի Քըռըմ կամ Խըրըմ։ Գիտնոց մօտ քար գայ-
թակղութեան եղած է այս անունը, և ցայսօր ոչ ոք
չէ կարողացած գոհացուցիչ մի մեկնութիւն տալ։ Այս
պարզ և համառօտ անուանց մեկնութիւնը գտնա-
լու համար, ոմանք ի գիտնոց բազմադարեան հնու-
թեան մէջ թարթափելով կը հասնին մինչև նա-
խաջրհեղեան Նահապետին Նոյի, և նորա թոռան
Փամերի անուան մէջ նմանաձայնութիւն մի հե-
ռուէն գտնալով, աղաւաղմունք կը համարին, Քը-
ռըմ բառը Փամեր անուան. ոմանք ալ Քիմմերեան
Վոսլորէ ծագած կամ յառաջ եկած կ'ուզեն ցու-
ցանել։ Այլք աւելի մերձաւորապէս դիտելով տե-
ղոյն դիրքը, որովհետև լայն խրամի հեղքեր գեռ-
ևս կը նշմարուի քաղաքին շորս պտոյտը, (տաճկե-
րէն հեկտեք կամ խեկտեկ) նոյն բառէն ծագած
կը համարին Քըռըմ անունը. այս կարծիքէն է
Ռուսաց մեծանուն պատմագիրը Քառամզին։ Ան-
ցեալ դարու գրուած ազգային մի յիշատակարան
խօսելով Անեցի գաղթականաց մասին, կը յաւելու-
թէ Հայ գաղթականաց մի մասը կաֆայէ դէպ ա-
րեւմտեան-հարաւ գնալով քնակութիւն հաստատած
են . ի Ղաիմ = լեռնամիջի ու մեք այս երկրորդ
բառը ոչ իբրև ածական կ'առնումք Ղաիմի. այլ
իբրև թարգմանութիւն Ղաիմ, Խըռըմ կամ քըռ
բառին՝ որ ի թաթար լեզու ըլլուր կը նշանակէ։ Եւ
աստի կ'ուզեմք հետեցնել որ Քըռըմ անունը, որ
այժմ կը կրէ Տաւրիս կամ տաւրիական թերակղզին,
ոչ ի Փամերէ, ոչ ի Քիմմերէ և կամ խրամ
հեկտեկ բառերէն ծագած կամ յառաջ եկած է,

այլ թաթար լեզուի ջրն ըլուր կամ լեռ բառէն։
Եւ յիրաւի, եթէ մէկը ուշի ուշով քննէ թերակըղզ-
ւոյս պատմական ընթացքը, և հետագոտ ակնարկ
մի տայ, այժմեան Հին-Ղրիմ քաղքին դրեցը և
ապա սակաւ մի տեղեկութիւն ունենայ թաթարաց
լեզուին, կարծեմ դժուարութիւն չի կրել հաւա-
նելու մեր տուած մեկնութեան։

Թաթարաց պատմութիւնը մեզ կ'աւանդէ որ՝
զկնի մահուան Խփչաղաց նշանաւոր Բաղու խա-
նին 1288 ին, յաջորդել է նմա ի խանութեան Բե-
րեկա կամ Բուրզա 1. սորա յաջորդը Մանգութի-
մուր, ի կենդանութեան կը բաժանէ իւր խանու-
թիւնը ժառանգաց մէջ. այս առթիւ այժմեան
Հին-Ղրիմ (առ Գենուացւովք Սուրդաթ) նոյն և
ժովահայեացն Կաֆա, մասն կամ ժառանգութիւն
կ'ինկնան Օրան-Թիմուրի. այս բաժանմունքը կը
պատահի 1268 փրկչական թուականին։ Սորա՝
Օրան-Թիմուրի իշխանութեան միջոց առաջին ան-
գամ ի պատմութեան կը լսուի Քրտըմ բառը,
յատկացեալ տեղւոյ, այն է Աղարմըշ լերին ստորոտը
չինուած քաղաքին, այլ ոչ բովանդակ թերակըղզւոյն.
որոյ վերջը յատկացել է Ղրիմ անունը, փոխանակ
Տաւրիոյ։

Աղարմըշ (սպիտակափառ) լերին ստորոտը զըտ-
նուած քաղաքը, չըջապատուած է անտառազարդ
բլուրներով. օդը առողջարար, ջուրը քաղցրահամ
մեր ձեռագրին Ղաիմ լեռնամիջի բացատրութիւնը,
չատ յարմարաւոր է։

Արդ մեք կ'ենթադրեմք որ հայկական Ս. Խա-
չին և Գենուացւոց Սուրդաթի, նոր իշխեցողը Օ-

1. Ըստ ազգային պատմչաց։

բան-թիմուր, փոխելով տեղւոյն անունը, կոչած է Քրոզըմ, անելով զայն իւր խանութեան մայրաքաղաք. և այն ոչ մասնաւոր դիտմամբ, այլ յոյժ բնական կերպով: Եւ յիրաւի, Օրան-թիմուր նախամեծար համարելով Աղարմշի գիրքը, կանաչագարդ բլուրներով, — քան զծովահայեացն Կաֆայի — ուր և հաստատած է իւր ամուր, հարկաւ չէր կարող գոհ լինել հայացի Ս. Խաչ անունով կամ նորա աղաւաղմամբ (Սուրդաթ), այլ իւր սըրտին և թաթար լեզուին յատկութեանց համեմատ, պէտք էր մի նոր յորջորջումն տալ իւր մայրաքաղաքին. և ահա նա կը կոչէ զայն Քրոզըմ, այսինքն իմ շեռս կամ շեռտն իմ. որ համաձայն է օրտի զգացմանց նոր իշխեցողին և յատկութեանց թաթար լեզուին:

Խըռ կամ քըռ բառը կը նշանակէ բլուր. ինչպէս արդէն յայտնի է փոքր ի շատէ ամենայն արևելագիտաց ղմ, իմ, ում՝ մասնիկները կը նշանակեն, իբրու սաացական գերանունն իմ, օրինակի համար պաղղըմ (իմ այգիս), Էվիմ (իմ տունս), օղղուս (իմ որդիս). կամ այսպէս գրուցենք, այդ վերոյիշեալ մասնիկները մեր լեզուին ս դիմորոյին տեղ կը գործածուին թաթարաց լեզուին մէջ. որով եթէ երկու մասն բաժնեմք քըռըմ բառը՝ կը գտնեմք, քըռ (լեռ) և ըմ (իմ), լեռս. և ահա այդ անունը ԺՊ դարէ և այսօր փոխանակած է Սուրդաթ քաղաքին անուան, և մինչև ցայսօր ևս կը կրէ: Թուրք նախընթաց դարուն վերջերը տիրելով Տարիոյ, առ հասարակ նշանաւոր քաղաքաց նախնի հին յունական անուններ տուել են, ինչպէս Սելաստոպոլ, Սիմֆերոպոլ, Եւպատորիա, Քէոդոսիա: Այլ Սուրդաթ ունեցած չէ վերանորոգման

պատիւը. նա միայն մեր ազգային յիշատակարա-
նաց մէջ հոյակապ մակդիրովը գոհ կը լինի, տեղի
տալով Քրոբմ թաթարահնչիւն անուան: Այս
յիշած անուանափոխութեան խնդիրս, ըստ իմ
կարծեաց, յոյժ հաւանական և ամենարնական է.
Նմանօրինակ փոփոխութիւնք տեղերու անուանց,
կամ սրտամերձ և հաճոյական բացատրութիւնք,
քաղաքակիրթ ազգաց մէջ ևս կը գտնեմք. ինչպէս
mon plaisir, mon souvenir (իմ հաճոյք, կամ
յուշք), Новый свѣтъ (նոր աշխարհք): Տակու
Քրոբմ՝ Օրան-թիմուրի մայրաքաղաքին անունը
նորա իշխանութեան կամ բաժնին վերայ տարա-
ծուած է. յետոյ և ևս ընդարձակուելով, բովան-
դակ տարիական թերակղզոյն յատուկ անունը և
դած է Քրոբմ. և որպէս զի մասը բոլորէն զա-
նազանուի, Օրանի մայրաքաղաքին վերայ եկի
(հին) ածականը աւելցուցած են: Սակայն զրի-
մեցի թաթարք ցայսօր առանց եւրի ածականին
կը գործածեն Քրոբմ անունը Սուրդաթի տեղ, և
Բազար անունը կու տան Խարասուի, և չեն կոչել
ըստ Ռուսաց սովորութեան Խարասու-Բազար:

Մեզ այնպէս կ'երևի, որ վերը գրուցածներս
բաւական համոզիչ մեկնութիւնք են Քրոբմ անուան:
Թէպէտև մեր նպատակէն դուրս էր ճոխանալը
մի թաթար անուան վերայ, քանզի այդոր մէջ չկայ
մի հայացի հայեցակէտ, նա մանաւանդ թաթար իշ-
խեցողին կամքը նսեմացուցել է Ս. Խաչ հայկական
չքեղ անունը՝ այլ որովհետև մեզ մի պատմական
ստուգութիւն երևցաւ այս տուած մեկնութիւննիս,
և որովհետև ազգիս երկրորդ հայրենիք եղել են այս
տեղուանք յընթացս շատ դարերու, այն պատճա-
ռաւ մեզ իբր ստուգութիւն երևցածը կարևոր հա-

մարեցանք գրելու առթիւս, վերջ տալ ուզելով Հնա-
գիտաց տեղի և անտեղի մեկնութեանց և բացա-
արութեանց Քրոնմ անուան վերայ: Այլ մեք դառ-
նամք խօսելու մի ուրիշ անուան վերայ. որ ըստ
մեր կարծեաց, բոլորովին հայկական ունի տիպար,
և որոյ ստուգարանութիւն և ս ցայսօր անյայտ է,
այն է կաւա:

Ը

ԿԱԻԱ (ԿԱՅԱ-ՔԷՅԵ) ԱՆՈՒՆԸ

Քէտդոսիոյ պատմութեանս ընթացքին մէջ ընդ-
հանրապէս՝ և « Հայկազունք ի Տարիա » գլխոյն
մէջ մասնաւորապէս աշխատեցանք ցուցնելու, որ
Հայք ժ դարէ սկսեալ տարիական թերակղզոյն
մէջ բնակութիւն հաստատել են. ճիշդ ժ դարուն
մէջ առաջին անգամ կը լսուի ի պատմութեանս
Կաւա (Capha) անունը: Հնախօսից ամենայն ջանք
ի զուր ելած են, այս անուան ծագման կամ ստու-
գարանութեան մասին: Ոմանք տաճիկ քնաֆիր կամ
կեւառոք բառերուն համառօտութիւնը կը համարին
ՔէՅԷ տաճկահնչիւն անունը. և ապա առ մեզ,
տառադարձութեան կանոնով, ի կաֆա փոխուած.
այսք՝ քէֆ (հաճոյք)բառէն ածանցեալ կը համարին:
Մեզ՝ այս երկու մեկնութիւնք ևս անտեղի կ'երևան.
և փոխանակ ի տաճկերենէ ի հայ տառադարձելու
այդ անունը, այնպէս կ'ենթադրեմք, որ տաճիկք,

4. De administrando imperio. Կոստ. Պերփեռու-
ժենի:

Կտաւ հայահնչիւն անունը, ըստ իրենց լեզուին տառադարձութեան կանոնին ի ՔէՖէ փոխած են: Եթէ յանդգնութիւն չհամարին ընթերցողք, մեք այս անունն ևս, Քրտըմ անուան ձևով երկու մասն բաժանելով, այսպէս կարաւ, կ'ուզեմք մեկնել որ հայերէն կաւ և ա (փոխանակ զի գրուած) բառին և տառին բարդութիւնն է այս անուն:

Կաւ հայերէն կը նշանակէ հող, մանաւանդ բրուտի հող *terro glaisé*. ա տառը, ինչպէս յայտնի է ամենայն հայագիտաց, ցայսօր Հայաստանի շատ զաւառաց մէջ, փոխանակ է օժանդակ թային տեղ կը գործածեն. օրինակի համար փոխանակ մարդ է ասելու, կ'ասեն մարդ ա. երախայ է = երեխա ա. մեծ է = մեծ ա. փոքր է = փոքր ա և այլն. ուրեմն կաւա ասելով՝ հայերէն պէտք է հասկնալ կաւ է, կաւեղէն է. ցայսօր ևս, եթէ մէկը Թէոզոսիոյ քաղքի երեք կողմէն պատած բլուրներուն վերայ նայի, մանաւանդ անձրևէ վերջ, իսկոյն նոյն բառերը պէտք է գրուցէ կաւ է, կաւեղէն են Թէոզոսիոյ շուրջը պատած բլուրները:

Եւ որովհետև յընթացս պատմութեան քաղաքիս տեսանք որ ի Ժ դարու, նախ քան զԳինուացիս ի ցամաք ելած են աստ ի Թէոզոսիա՝ հայկանդունք և առաջին անգամ նոյն Ժ դարուն մէջ կը լսուի ի պատմութեան կաթա անունը փոխանակ Թէոզոսիոյ, ուստի այս հանգամանքներէն կը հետևցընեմք, որ Հայք ելնելով ի ցամաք, Թէոզոսիոյ մէջ և հայելով Ալանաց և Գլթաց ապա և Հոնաց աւերակներուն վերայ տիրող բլուրներուն որ կը պատեն զԹէոզոսիա, և միանգամայն միտք բերելով, այդ Հայ Անեցի ժողովուրդը Շիրակայ գեղազուարճ դաշ-

տերը, և Մաղկոցաց-Չորոյն ակնապարար տեսարանը, անշուշտ բացագանչել են, թէ՛ « Այս ի՞նչ թէոգոսիա, ի՞նչ տուրք Աստուծոյ, կաւ ա, կաւ է շորս գին »: Մեզ հաւանական կ'երևի որ ոյս բացագանչումը կամ բացատրութիւնը, ապա իբրև յատուկ անուն տեղւոյ անցել է առ Քենուացիս, որք ի սկզբան. ինչպէս հին յիշատակարանաց մէջ կը կարդամք, մեր 2 տառը քն գրերով գրել են. ապա մէկ է ֆօլ հուսկ յետոյ կարողացել են Հայոց օ (կէս վի ձայնով տառը) երկու ք ֆֆօլ ճիշդ հնչել կամ յարմարագրել:

Առ այժմ առաւել զօրաւոր փաստեր շունենալով մեզ հաւանական երևցածը, իշխեցինք իբրու մեկնութիւն կաւա կամ կաֆա անուան գրել, հայ լեզուէ յառաջըրելով բառիս ստուգութիւնը: Արդ եթէ մեզ հաւանական երևցածը գիտնոց ևս ընդունելի լինի, մինչև ցայսօր անյայտից կամ անծանօթից կարգը անցած մի պատմական քաղաքի անուան ծագումը, պարզուած և յայտնի կը համարիմք:



Թ

ՄԵՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի ԿԱՅԱ

ԱՌ ԳԵՆՈՒԱՑԻՈՎՔ

Այժմ մեզ անտարակոյս է որ՝ այս մեծ գաղթա-
կանութենէ առաջ կային ի Կաֆա, ի Սուրղաթ,
ի Սողայա բազմաթիւ Հայեր, իրենց վանքերով,
եպիսկոպոսներով և եկեղեցիներով, որք Վենուաց-
ւոց աջակից ոչ աննշան, այլ նշանաւոր և բարեկեցիկ
կեանք կը վարէին, որ և պատճառ կամ զրգիւ
եղած է այս մեծ գաղթականութեան ազգիս
յԱքոտէրայէ դէպ ի Կաֆա:

1239 ին Չաքարէ մեծ իշխանի որդւոյն Շահնշա-
հի պայազատութեան միջոց, որ կը տիրէր Ունոյ՝
Բագրատունեաց գեղապանծ շահաստանին, Չարմա
Խանն Թաթարաց, մեծ բազմութեամբ յարձակե-
լով քաղաքին վերայ, քիչ ժամանակամիջոցի անհնա-
րին կոտորած կը հասցնէ քաղաքացեաց, և դա-
րերու միջոց շինուած գեղապանծ քաղաքը աւե-
րակաց կոյտ կը դարձնէ. այս դէպքս ազգա-
յին ականատես պատմիչք արժանապէս ողբացել
են. Կաֆայեցի յայսմաւուրքին անանուն գրիչը,
ըստ օրինակի այլոց պատմագրաց, ողբալով քա-
ղաքին կործանումը և պատճառ բերելով թէ « ոչ
արգարութիւն գտանեցաւ ի մեզ... » (կը յաւելու)
« Բազումք թողեալ զուկէղօժ պալատս և զծաղ-
կաւէտ դալտս, զվանորայս և զեկեղեցիս աւեր,

« շուեալ եկին ի Սխասարայ, որ է ի մէջ Հաշտար-
« խանու և Ղազանու. ոմանք զնացին ի Ճուղայ,
« ոմանք ի Վան, և այլք ի Սիս: Եւ որք յԱխսարայ
« եկին, հրաման առեալ ի Թաթար խանէն ընա-
« կեցան անդ, ոչ բազում ժամանակս, որ էր զայս
« ԶԽԸ (1299) »:

Յիշատակարանիս խօսքերէն կը հետևի որ՝ յետ
կործանման Անույ ի Չարմա-Խանէ (1239) բազ-
մութիւն Անեցւոց անցել են ի Թաթարաստան,
քընթացս 60 տարիներու, և անդ միշտ նեղութիւն
կրելով Թաթար իշխեցողաց ձեռքէն, ազատութեան
մի հնարք գտնելու աշխատել են, և « անդ ընա-
կեցան ոչ բազում ժամանակս, որ էր զայս ԶԽԸ
(1299) »: Թէպէտ միին է սակաւ մի յիշատակա-
բանիս տուած բացատրութիւնը, այլ ես այնպէս
կը հասկնամ որ 1299 էն սկսել են Աքսէրայցի
հայերը բանագնացութիւնը օւնենալ Կաֆայեցի ազ-
գայնոց հետ, և այդ բանագնացութեանց հետեանք
եղած է բիւրաւորաց Գաղթը ի Կաֆա 1330 ին,
վասն զի կը յարէ յիշատակագիրը. « Մինչ նե-
» ղեալ եղեն ի Թաթարաց դեսպան յղեն ի Ղաթմ
» առ իշխանն Զինիւիզաց »:

Գենուացի իշխանին անունը չի գներ գրողը, առ
որ օւղղեալ են Աքսէրայցի հայ դեսպանը, այլ ու-
րովհետև նոյն միջոցին երկու իշխեցողք՝ կը յի-
շուին ի Կաֆա, Ալբերդոյ և Կոռադայ, սոցամէ-
միոյն իշխանութեան միջոց անշուշտ, եկած են հայ
դեսպանը ի Կաֆա և պայմաններով դաշինք զնելէն

1. Հստ ցուցակի գրոգիսսոր Իւրզէիքի Alberto Mal-
lone 1297 ին ընտրուած և Corrado de Roccio 1316-
1332:

յետոյ, եղած է բիւրաւոր Հայկազանց գաղթականու-
թիւնը յԱբսոլուտայէ: Յիշատակարանը կը յաւելու-
« Ուրիտ գնեն ընդ իշխանին Ֆէօդօսիու, երեալ ի
» յԱխտարայէ իշխանը և ազնիւք (Հայկազունք) և
» հասարակ ժողովուրդք՝ վառեալք զինու, պատե-
« բազմելով ընդ Թաթարացն ներկեալք զան ի Ղաիմ
» և ընակեն ի Ֆէօդօսիա, ի Աազարաթ և ի
« Սուրխաթ և ի հոզմանս սոցա. այս եղև ՉԾԹ
» (1230) Թուին »:

Ուշագրութեան արժանի են յիշատակարանիս
խօսքերը, « վառեալք զինու » գաղթականաց մէջ
բազմութիւն հայ զինուորաց եղած են, իրենց սպայ-
ներով, խմբավարներով և զօրագլուխներով. զի
քիչ ժամանակ վերջը, աստի ի Աաֆայէ 40,000 հայ
զինուորներ անցել զնացել են ի Փատուեան Աամե-
նից, պաշտպանելու այն հայկական քաղաքը, ընդ-
դէմ յարձակմանց Թաթարաց, լուծելով միանգա-
մայն Անուց կործանման վրէժը: Ըստ յիշատակա-
րանին « Պատերազմելով ընդ Թաթարացն ներ-
քեալք զան ի Ղաիմ »:

Անուշա Թաթարք ամենայն ջանք արել են, որ
ի Թաթարստան մնան, և բիւրաւոր հայ աշխատա-
ւեր ժողովուրդք, չէնցընեն և մշակեն իրենց ա-
նապատները: Սոյն այս գէպքը պատահել է 1778
ին ևս, երբ զրբմեցի հայկազանց հրաման եղել է,
Թաղու այն աղխարհքը և երթալ ընակիլ ի Ռու-
սաստան. տեղացի Թաթարք ամենայն ջանք ի գործ
դրել են, արդել լինելու Հայոց գաղթականութեան
ի Ղարիմէ, ալ ի զուր: Յիշատակարանիս գրուցած
տեղուանք, ուր հօծ խիտ առ խիտ ընակել են Հայ-
կազունք, արեւելեան — հարաւային մասունք են թե-
րակզուոյն. Աազարաթ և Սուրխաթ մօտ են Աա-

Ֆայի, Ղարապազարը 63 վերստ է ի կաֆայէ, սոյն միջոցին ի Սուղդա ևս բազմացել են հայկազունք. այնպէս որ ըստ յիշատակարանիս, ի դաշտս և ի լեռինս լցուցել են շէնքերով: « Յայնժամ զօրացաք մեք և բազմացաք և շինեցաք զգիւղս և զգաւառս այսինքն միանալով արդէն ի կաֆա, ի Սուրղաթ և ի Սուղդա հինէն բնակող ազգայնոց հետ: Եթէ այս ենթադրութիւնը չիւնի, յայնժամ բառը բոլորովին անյարմար և անտեղի պէտք է համարել, զի անդէն ի Թերակղզիս մտնալնուն պէս, իսկոյն բազմանալն և զօրանալն անկարելի է: « Շինեցաք « տունք հարիւր հազար, և զեկեղեցիս հազար, և « ի ահէ հոնականաց պարսպեցին ի քաղաքն Յէօ « դօսիա »:

Նոր եկող հայկազանց առանձին տեղի բնակութեան կամ Թաղ որոշուած է, և հաւանական կ'երևի, որ ուխտի կամ դաշանց գրին մէջ, դեսպանաց Հայոց ընդ իշխանին կաֆայի, այս ևս պայման դրուած է որ, Հայք պարսպեն իրենց Թաղը, ընդդէմ հասարակաց Թշնամեաց, այն է Թաթարաց զօրս յիշատակարանս կը շփոթէ Հոնաց հետ: Այս պարիսպը, քաղաքիս արևելեան ծայրը շինուած Ֆռէնկհիսար կոչուած Գեննուացի պարսպէն կցելով, ընդ հարաւ լեռներուն վրայէն հասուցել են Հայք մինչև ցհիւսիսային ծայր քաղաքին, որով քաղաքին հարաւային մասը՝ լեռանց ելևէջներով, եղած է Թաղ Հայոց: Այդ մասին մէջն են ցարդ ևս կանգուն մնացած ԺԲ—Գ դարը շինուած չորս հայոց եկեղեցիք, այլ շատերը հիմնադրատակ կործանել են: Այլ որովհետև բիւրաւոր գաղթականք այդ փոքր սահմանին մէջ կարող չէին ամփոփուիլ, այնպէս կը համարիմք, որ յիշատակարանիս մէջը յիշուած

« իշխանները և ազնիւները » ազգիս, Կաֆայի մէջ հաստատել են բնակութիւն, մայրաքաղաք անուանելով զնա, իսկ մնացեալ հասարակ ժողովուրդը և գիւղացիք սփռուել են մինչև ցլարապազար ցլուրդաթ և Կազարաթ, և մեծ բազմութեամբ ի Սոլդայա Գենուացւոց (Սուղդա), սակաւ յԵւպատորիա, յՕր և այլն: Հայաբնակ գիւղերուն մեծ մասը Կաֆայի մերձաւոր տեղուանք եղած են, ինչպէս Կէուք-Թէփէ, Սուլթան-Սալա, Նախիջևան (այժմ Քաինիքա), Օրթալան. Թօփու, Ղչլաւ, Սովուք-Սու և այլն:

Յայտնաւորաց ցցուցած ճանապարհին վերայ, ուր Հայք խիտ բնակութիւն հաստատել են, մինչև ցայսօր ամենածախ ժամանակին ձեռքէն մազապուր, կը գտնուին տակաւին, երբեմն զթերակըղզիս բազմամարդող և շէնցնող Հայոց հետքերը: զի յընթացս 550 տարեաց սուր և կոտորած և ապա աստի ևս այլ հեռաւոր աշխարհք խմբովին զաղթականութիւն ազգիս, մեծապէս տկարացուցել հայութիւնը Ղրիմու մէջ, այլ չեն կարողացած իսպառ բնաջինջ կորուսանել:

Ամենուրեք հայ եկեղեցեաց տխրագին աւերակք, ցիր ու ցան հայ յիշատակարանք, պատերու մէջ, սանդուխներու վերայ, աղբիւրներու ճակատ. ցայսօր Թէոդոսիոյ որ կողմը մարդ փորէ, անշուշտ երկրիս խորէն դուրս կը հանէ հայկական խաչքար մի, ազգային յիշատակարանով:

Բաց ի բազմաթիւ եկեղեցիներէ, բերդերէ և պարիսպներէ, հայախօս յիշատակարաններով, ազգայինք մասնաւոր ջանք արել են անջրգին Կաֆայի մէջ լեռներէն ագուգայներով քաղցրահամ Ղրբեր իջընելու, դրոշմելով աղբիւրներուն ճակատը, չի-

նողաց կամ շինել առևտրաց անունն կամ մակա-
նունն, ինչպէս « Մէլէքին և Քափանակին », որք
ցարդ կանգուն կեցել են :

Ազգայինք. ինչպէս ամէն տեղ, աստ ևս ի կաֆա
իւրեանց սեփական աչքարացութեամբ և հաւատա-
րիմ գործունէութեամբ օրրելի կը լինին քաղաքին
տիրող Քենուացւոց. ի նոցանէ Նախարար, Պարոն
և Իշխան պատուանուններով կը մեծարին. կ'ունե-
նան առանձին հայկական զինաւորք, պահակապանք
(gendarmérie) որք իրենց զօրագլխով կը կանգնին
պարիսպ ընդդէմ այլազգեաց յարձակմանց :

Արեղայք և անապատաւորք վանքերու մէջ, և
անտառներուն խորեր, զատ զատ հողատներու մէջ
կը քաշուին հեռացեալք ի զբաղմանց աշխարհի.
վանաց մէջ նշանաւոր են Քեմլակ կամ Քամնակ
անապատները, յանուն Աստուածամեր եկեղեցւով
ի Սուրխաթ, և Մողկան անապատը Ալլաւ գիւ-
ղին մէջ, ուր կը պարապին ուսմամբ, մշակելով
իրենց հետ բերած քաղցրիկ աւանդը և դրոշմը
հայութեան, այն է մեր նախնեաց ճոխ լեզուն :
Ընդօրինակած են այդ վանքերուն մէջ հարիւրաւոր
հոգեխօս գրեանք և շքեղ պատկերազարդել են
սուրբ կտակարանք :

Ազգիս մշակ կամ գեղացի մասը, խումբ խումբ
սփռել են Ղրիմու հովասուն լեռանց ստորտըք,
գեղածիժաղ անտառաց մօտերը, ուր կը բղխեն
քաղցրահամ աղբիւրներ, և այն տեղեր գիւղեր
և աւաններ սարքելով, ակօսաբեկ կը պատառեն
արգաւանդ դաշտերը :

Կաֆայի հարաւային մասը, դէպ ի սարերը, հա-
յաբնակ նոր քաղաք կը լինի բիւրաւոր հայ բնակ-
չք և կը կրէ անուն ժովային հայաստան, Սուրխաթ

քաղաքը իւր մերձակայ Ս. Խաչ վանքով՝ բոլորովին հայոց քաղաք կը դառնայ. Սուտաղ (Soldaja Սուզդա) իւր բազմամարդ հայութեամբ մեծ - Հա. յաստան անունը կը կրէ, որում կը վկայէ Եւգէնէոս Դ. Հռովմայ տրբազանին կոնդակը « ի կողմանս Մեծին Հայաստանու, ուր է եկեղեցին Սուզայեցւոց 1 » 1432:

Ժ

ԱՇԻԱՐՀԱՇԷՆ ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԻՒՆ

ՀԱՅՈՑ Ի ԿԱՅԱ

Հայութեան ժողկեալ միջոցն ի Ղրիմ՝ եղած է ի 1330 - 1475. բազմաթիւ ձեռագիրք այն ժամանակաց մէջ գրուած են, ամրակուռ մատրուք և եկեղեցիք նոյն միջոցին կառուցել են. շատ խաչքարինք նոյն ատեններ քանդակուած և կոփուած մինչև առ մեզ հասել են իրենց յիշատակարաններով: « Բարեխաւս են սուրբ նշանքս » այս կամ այն բարեպաշտ Հայուն, որ հեռի ի սիրելի Հայրենեացն՝ կնքեր է յօտար պանդխտութեան իր կեանքը: Քանի՛ որտաղին, հունոյական, միանգա՛սայն և տխրագին մտածութիւնք շեն յարուցանել հոյ սրտերու մէջ այդ սեւացեալ խաչքարինք. ոմանք եկեղեցեաց պատերուն մէջ աղուցած, այլք բարձր բերգերու

1. In partibus Armeniæ majoris, in quibus Soldajensis ecclesia sita est. Բրիւն էջ 58.

պարսպաց վրայ: Շատ անգամ ինձ պատահել է կանգ առնուլ այդպիսի խաչքարանց դիմաց, մանաւանդ Սուտադի գեներալի բերդին մեծ կրկնայարկ դրան ձախակողմեան որմին առաջ, ուր մեծ բարձրութեան վերայ, առանձնացեալ հայակոփ և հայաքանդակ քար մի, վկայէ վեցհարիւր տարիներով յառաջ՝ այդ տեղուանք Հայոց գոյութեան, որ Գեներալացոց հետ աջակից շինել են այդ աշտարակազարդ բերդը:

Մեր նպատակէն շեռանալու համար՝ Ապֆայի վրայ ամփոփենք խօսքերնիս:

Ինչպէս 1478ին Թուրքաց Ապֆայի տիրապետելու միջոց, նոյնպէս և անցեալ դարու վերջերը (1773) Ռուսաց ձեռք անցնելու պատերազմաց պատճառաւ՝ քարուքանդ եղած է Ապֆա, մեծամեծ շէնքերը հիմնայատակ, դռներուն և պատուհանաց չրջանակք և բարաւորք՝ իբրև նիւթ վառելի կամ վառելափայտ գործածուած են բնակչաց, ամենեւին ակնածութիւն շանելով ոչ ճարտարապետական ձևին և ոչ շէնքին հնութեան. և մինչդեռ այժմ, հարիւր տարի անցնելէն վերջ, ի հնութենէ մնացած կիսաւեր ու գրեթէ անպէտ շէնքերու վրայ մասնաւոր հոգ և հսկողութիւն կը լինի կառավարութեան ու քաղաքապետութեան խնամքը, հարիւր տարի յառաջ, հարկ է խոստովանիլ, անխնայ կերպով կործանուած և ոտնակոխ եղած են՝ քաղաքիս կարևորագոյն և փառաւոր շէնքերը: Հաւանութեան է որ եթէ անոնց յարգը չի ճանչցող տգէտ ամբոխն և ռամիկ՝ այդպէս անխնայ վարուած չլինէին Թէոդոսիոյ հին շինուածոց նկատմամբ, ո՞ր գիտէ դեռ քանի՞ գեղեցիկ յիշատակարանք կ'ունենայինք մեր ձեռքը, նոյն իսկ հայկական գաղթականաց պատմութեան մասին: Սակայն յետ կրկին և կրկին Ապֆայի աւեր-

մանց, դարձեալ աստ և անդ՝ մնացորդք հայրենի յիշատակաց քիչէն շատը մեզ գուշակել կու տան, և գեղեցիկ վայելչութեամբն զոր դեռ անկորուստ պահած են՝ կը քաշեն հետազօտ հայ աչքերը:

Անշուշտ այդ մնացորդաց մէջ առաջին տեղին բռնողը ազգային եկեղեցիք են. զի ուր և լինի հայ ժողովուրդ, որպիսի հանգամանաց մէջ ալ գտնուի, մինչև անգամ՝ ինքն երկրափոր նկուղներու մէջ ևս բնակի, կ'աշխատի որ Աստուծոյ տունը, կրօնքի ժողովարանը, եկեղեցին՝ գեղեցիկ և վայելուչ լինի: Ի հնութենէ մնացած դեռ եւս կանգուն կան Կաֆայի մէջ երեք ազգային եկեղեցիք. Ս. Սարգիս, հին աթոռակալ եկեղեցի. ինչպէս կ'անուանեն և կը գրեն ազգային յիշատակարանը. — Ս. Հրեշտակապետք, որ մայր եկեղեցեաց կը համարուէր ինչուան վերջին տարիներուս մէջ. — և Ս. Կարապետ, որ այժմ Ռուսաց ձեռքն է: Այս երեք եկեղեցեաց վրայ եւս ցարդ յայտնի կ'երևի ազգային ճարտարապետութեան ճաշակ և վայելչութիւն, և որք չեն կորուսած իրենց նախնական տիպարը. մինչ Ս. Գեորգի գերեզմանատան, և Ս. Աննա ի սարին, վերջերս նորագուելով, բոլորովին կորուսել են իրենց առաջին վայելչութիւնը:

ԺԱ

Հին Եկեղեցիքի ՀԱՅՈՑ. — ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ.

Սրբայն Սարգսի նուիրուած եկեղեցին, Կափայի ազգայնոց հին և նոր եկեղեցեաց մէջ հնագոյնն է, քաղաքին կեդրոն տեղին շինուած, և շատ ձեռագրաց մէջ, ինչպէս հիմայ ալ յիշատակեցինք, նշանակուած է իբր աթոռակալ կամ մայր եկեղեցի. ունի ընդարձակ բոկ չորս կողմը, որոց մի անկիւնը քաշուած է եկեղեցին, յոյժ համեստ ձևով. և որովհետեւ քաղաքին հրապարակին արեւըրտեան հարաւային կողմը կ'իյնայ, այն պատճառաւ կարծես խռոված, և կռնակ դարձուցած է դէպ ի քաղաք: Այդ բակին մէջ, ուր այժմ կայ տղայոց և աղջկանց համար ազգային ծխական ուսումնարան, հին ատեն, ըստ ազգիս սովորութեան, վանք և բնակութիւն եղած է արեղայից և վարդապետաց, ուր շատ արեղայք բազում ձեռագրեր օրինակել են՝ ընդ հովանեաւ Ս. Սարգիս տաճարին:

Եկեղեցւոյն դիրքը և տեղը, հանդերձ ընդարձակ բակով, քաղաքին մէջ տեղ չինուած, յայտնի ապացոյց են որ այս եկեղեցիս Գենուացւոց ի Թէոդոսիա գալէն առաջ շինուած է. վասն զի ԺԴ դարու հայ բազմաթիւ դաղթականութեան՝ Գենուացիք նշանակած են առանձին Թաղ Հայոց, այժմեան արգելանոցին տեղը և անտի դէպ ի հարաւակողմեան սարերը, ուր և Հայք նոր պատ քաշելով իրենց բնակութեան չորս կողմը, ապահովել են զիրենք ընդդէմ Թշնամեաց յարձակման:

բաց ի Ս. Սարգսէ միւս այլ եկեղեցիք, բոլորը կամ այդ պարսպածին մէջն եղել են, և կամ պարսպէն եւս դուրս, այլ ոչ քաղաքին կեդրոն տեղը:

Այս եկեղեցին հաւանական է որ յընթացս ութ հարիւր տարիներու՝ շատ անգամ նորոգուելով, այլապէս թիւններ կրած է, այլ զլսաւոր մասն եկեղեցւոյն՝ բնն և գաս, նոյն հին ձևով մնացել են, ոչ միայն ներքին կողմէն, այլ նայնպէս և արտաքին տեսքով. քանզի դրսէն եկեղեցւոյս պատին վրայ ազուցած քանի մի խաչքարինը՝ բոլորովին մաշուած են օղէն և անձրևներէն, և որոց վրայի տառերը սրբուած, որ մեծ հնութեան նշան է: Հայցոմէ վերջ Գենուացիք, ոտից հառուան գտնելով, կամ լաւ եւս՝ օրհանալով կաթայի, Ս. Սարգսի անմիջապէս մօտ, քաղաքին մեծ հրապարակին միջագայրը կը շինեն իրենց փառահեղ մայր եկեղեցին, ի պատիւ Ս. Ազնես կուսին, որ ըստ վկայելոյ պատմագրաց, իր գեղեցկութեամբ նշանաւոր եղած է ընդ համբէն Եւրոպա. հաւանական է որ՝ նախ քան զԳենուացիս, Յոյնք նոյն հրապարակին վրայ ունեցել են իրենց եկեղեցին, յետ Գենուացոց՝ թուրք գմբեթազարդ և փառաւոր մզկիթ կանգնել են Ս. Ազնէս եկեղեցւոյն հիման վրայ, նոյն տաճարին աւերակներով. իսկ մեր օրեր՝ Ռուսք՝ ճիշդ այդ մզկիթին տեղ, հին եկեղեցւոյն հիման վերայ շինեցին իրենց մայր եկեղեցին:

Ինչպէս տեսանք՝ ի հոլովել դարուց և ի փոփոխիլ տիրապետող ազգաց, եկեղեցւոյն տեղը բռնած է մզկիթ, և ապա դարձեալ տեղի տուած է եկեղեցւոյ, քաղաքի կեդրոնին վերայ. մինչդեռ

նոյն միջոց ժամանակին՝ Հայոց բազմադարեան Ս. Սարգիս եկեղեցին կը մնայ իւր սեպհականութիւն, և մինչև ցայսօր կանգուն գրեթէ նոյն ձևով՝ ինչպէս ասկէ ութ հարիւր տարի յառաջ: Եկել են ի Կաֆա Կազարը և Սարմատացիք, Խփչաղ և Քոման թաթարք, և այլն, քարուքանդ արել են քաղաքը իւր մեծամեծ շէնքերով, այլ կարծես թէ քանդողաց աչքէն վրիպել է սուրբ տաճարս իր անփառունակ ձևովը. օտարաց աչքին աննշան, այլ ազգիս՝ մանաւանդ Կաֆայեցի Հայկազանց համար յոյժ սիրելի և նշանաւոր. և պէտք է որ միշտ այնպէս լինի՝ իր դարերէ ի վեր ունեցած հնութեամբ և արժանաւոր արքայակալ անուամբ անդրստին ի հնոց: Անշուշտ շինողք տաճարիս, խոհական խորհրդով նախագուշակելով սպազայ աւերմունք և արկածք, զգուշացել են, ինչպէս յառաջ ալ կանխեցինք ըսել, խորանաց կամարները բարձրացընելու, ինչպէս այլ եկեղեցեաց. չունի եկեղեցիս երկնաբերձ կաթողիկէ՝ վեղարի ձևով, ինչպէս ունին յետաշէն եկեղեցիք: Առաջին գաղթական Հայք ի թէոդոսիա, քաղաքիս մէջ տեղը, չրջապատեալ ընդարձակ բակով, քարաշէն պարըսպաց մէջ շինել են ի ցածագոյն տեղւոյ, խոնարհ սրբավայրը, որպէս զի կարող լինին, առանձնացեալ յօտարաց, առանց աչքի զարնուելու, ժողովիլ սուրբ տաճարիս մէջ, կորուսեալ հայրենեաց սէրը նորոգելու, նախնի հարց և վարդապետաց լեզուով և հնագոյն արարողութեամբ իրենց յարգութիւնն ու գովաբանութիւնը, սրտի և հոգւայ պիտոյքը, վիշտերը և ցաւերը հեղու և տարածանելու առաջի երկնաւոր թագաւորին, որ ամէն տեղէ, ամէն լեզուով, իրեն դիմողաց ձայնը կը լսէ, կարեաց դար-

ման կը տանի և պիտոյքը կը հոգայ աստուածա-
խնամ սիրով սփոփելով, քաջալերելով և արտասուքը
քաղցրացնելով:

Յանցեալ դարու (1787 ին) ի Նոր Նախիջևան
գրուած ձեռագիր մի, Գիրք ժողովածոս¹ վեր-
նագրով, ի միջի այլոց կը գրուցէ Ս. Սարգիս եկե-
ղեցւոյ համար:

« Սուրբ Սարգիս յոյժ մեծ ժամ է.
Նախնեաց մերոց հաստատեալ է,
Եկեղեցեաց աթոռակալ է »:

Յոյժ մեծ ժամ բացատրութիւնը չափազանցու-
թեամբ տրուած կ'երևնայ այս եկեղեցւոյ. զի այժմ,
այն է ի վերջին նորոգմանն որ յամի 1888, թէ-
պէտև փոքրկացուցած է, այլ նորոգմանէն յա-
ռաջ ալ կարելի չէր այդ մակդիրով կոչել. այլ այս
բացատրութենէ կարող եմք գուշակել թէ այլոց
մեծութիւնն որչափ պիտի լինի. սակայն և այն-
պէս՝ ոչ իր ձևոյն կամ գեղեցկութեան, այլ վաղե-
մի հնութեանն համար, եկեղեցեաց աթոռակալ,
կամ այժմեան բացատրութեամբ մայր եկեղեցի
ճանչցուած է մինչև ցառալին Արեւելեան պատե-
րազմն Սեւաստոպոլի. այդ միջոց ժամանակին ան-
տէր մնալով, և եկեղեցւոյն երկրորդ մասին առիքն
մնասուելով, տակաւ խարխուլ վիճակի մէջ ինկած:

1. Եթէ չեմ սխալել, ձեռագրիս այս մասը որ կափայկ
եկեղեցեաց վրայ կը խօսի ընդօրինակուած է 1756 թուակա-
նին, նոյն քաղաքի մէջ գրուած Պատմութիւն Անի քաղաքի
ձեռն Աբրահամու բաբունապետի ձեռագրէն, և պահուած է
ի մատենադարանին Էջմիածնի:

եթէ այդ մասին (1888) գերապատիւ խորէն (Ք. Վարդապետ Ստեփանէ Հոգ չի տանէր, կամաց կամաց այդ հնաւանդ եկեղեցին եւս թէոզոսիոյ քառասուն կործանուած ազգային եկեղեցեաց կարգը պիտի անցնէր. այլ ժրաջան փայթ վարդապետին և ազգայնոց, օրպէս և օտարաց, առատ նուիրատուութիւնք, վերահաս կործանմանէ մը և ի սպառնապառ անշքութենէ ազատեցին այդ եկեղեցին:

Ներսի կողմէն երեք մասն կը բաժանուին ազգային եկեղեցիք Ատֆայի. նախ բեմը իւր դասով, ուստի մի աստիճանով ցածագոյն կ'իջնէ ժողովրդոց կամ հաւատացելոց կանգնելու տեղը: Այս երկրորդ մասը ընդհանրապէս փոքր է. և այն պատճառու ամենայն եկեղեցիք ունին և երրորդ մասն մի, որ ինչպէս եկեղեցեաց ներքին կողմէն երեք դռներով բաժնուած է եկեղեցւոյն բեմէն և դասէն, նոյնպէս և արտաքին կողմէն բոլորովին զատ է նոյն շէնքէն, երդիքը աւելի ցածագոյն և ժողովուրդք երկրորդ բաժանման դռներէն միայն կարող են տեսնալ պատարագ և այլ արարողութիւնք: Այս երրորդ մասին կանանց կողմ անունը կը տրուի. այլ արդեօք հին ժամանակն ևս այնպէս էր, կը տարակուսիմ. ինձ այնպէս կ'երեւի որ կաթայեցի նախնի Հայկազունք, հնաւանդ քրիստոնէական սովորութեան համեմատ, բուն սրբավայրը, հասարակաց ժողովրդեան կենալու տեղէն բաժնել են՝ որ չլինի օտար անհաւատք կամ թերահաւատք անպատուութիւն մի հասցընեն սուրբ խորհրդոց. անշուշտ երբոր օտակաւազը մեղմիկ եղանակաւ ազգ կ'անէր զպրաց, « Զգրունս ամենայն իմաստութեամբ և զգուշութեամբ » փակեցէք, դպիրք դռներն ևս վրայ կը

բերէին սրբազորութեան միջոց ի սուրբ պատարագին, որով օտարաց հետ ի միասին և բազմութիւնք ազգայնոց եկեղեցւոյն երրորդ մասին մէջ կը սպասէին, մինչև երկրորդ անգամ դռները բացուելուն:

Ի Թէոդոսիա՝ Ս. Հրեշտակապետք և Ս. Կարապետ. ի Հին Ղրիմ՝ Ս. Խաչ վանքի եկեղեցին բուլոն ալ վերոգրեալ բաժանմունքով շինուած են միայն այժմ Ս. Սարգիս եկեղեցւոյն այդ բաժանմունքը քանգուած է, և փոխանակ հին դռներուն՝ մեծ կամար մի կը բաժանէ եկեղեցին երրորդ մասէն: Այդ նորաձևութիւնը դարուս սկիզբները եղած է Ս. Սարգսի մէջ, որ Թէպէտ ամէն կողմանէ վայելուչ և ազատ տեւք ունի խորանը, սակայն եկեղեցին իւր վաղեմի ձևը կորուսել է ներքին կողմէն, այս մասամբ: Նոյն միջոցին մտածած են ազգայինք Ս. Հրեշտակապետաց եւս դռներուն բաժանմունքը մի մեծ կամարի վերածել. այլ բարեբազդարար. ճարտարապետը խորհուրդ չէ տուել, որպէս զի կաթուղիկէն՝ և զայն վեր բռնող կամարները չի խախտին:

Վայելչաձև են յոյժ Ս. Սարգսի երեք խորանաց ևս կամարները: Դիտելու արժանի է և այս, որ ազգային հին եկեղեցեաց ընծայարանները, երկու կողմէն խորանին դուրսն են, և ոչ խաչկալին ետևէն. ինձ այսպէս կ'երևի որ խաչկալին ետևը ընծայարան չինելը՝ Յունաց հետևողութեամբ մտած է նորաչէն ազգային եկեղեցեաց մէջ: Խորանին աջակողմեան ընծայարանին անմիջապէս մօտ կը գտնուի որմին մէջ շինուած մկրտութեան աւազանը, ինչպէս որ կը պատուիրէ Ս. Սահակ հայրապետ իր կանոնաց մէջ: Փոքր վարագուրի սովորութիւնն

ամէն հին եկեղեցեաց վերայ կ'երևի, այժմ միայն դադրած է ոմանց եկեղեցեաց մէջ. Ռուսաստանի մի քանի քաղաքներուն, որ կամայականութիւն է, և ոչ ըստ ազգային արարողութեան:

Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ

Այժմ Ս. Հրեշտակապետք համարուած է գլխաւոր կամ մայր եկեղեցի. որ թէպէտ Ս. Սարգսի նման քաղաքիս կեդրոնական տեղին շինուած չէ, այլ որովհետև աւելի ընդարձակ է և կաթուղիկէիւ և բարձրաբերձ կամարներով յօրինուած, և վերջին քանի մի տասնեակ տարիներու մէջ կիսաւեր վիճակ ունէր Ս. Սարգիս, բնականաբար Ս. Հրեշտակապետաց անցած է մայր եկեղեցի լինելու պատիւը, որ հնութեամբ շատ հին շէնք մը չէ, ինչպէս կը վկայէ քարաքանդակ արձանազրութիւնն:

Շինուած է եկեղեցիս հաշալ արդեամբք Աստուածատրոյ ուրումն և նորա ընտանեաց ի ՊԾԷ (1408), կաֆայի արեւմտեան կողմը բարձր դիրքի վերայ դրսի կողմէն բոլորովին անպսճոյճ. ունի հայկական կաթուղիկէ սկէզօծ խաչիւ պսակուած, այլ խաչին ձեւը ազգային չէ. և հաճեմատութեամբ կաթուղիկէն խոշոր է, կը յիշեցնէ տիրող ազգային ճաշակը, մինչ մի փոքրաձև խաչ թերևս աւելի համեմատ և վայելուչ կը լինէր ի ծայր կաթուղիկէին Հրեշտակապետաց: Եկեղեցւոյն ներսի կողմը վայելուչ է և գեղեցիկ, բարձրաբերձ և համեմատաչափ կամարներով, որոց վերայ կը հանգչի կաթուղիկէն: Վայելազեղ են և բոլորովին հայկական խորանները, բեմը և դասը. Ժողովրդոց կամ կանանց կողմը զատ շինուած է ցած երդիքով.

այլ կցուած է եկեղեցւոյն հետ, այս մասին մէջ կանգնող ժողովուրդը, երեք դրանց կամարաց մէջէն կարող է տեսնալ սրբազան պաշտամունքը: Ունի եկեղեցիս իւր անանուն նահատակը, որ պաշտպան է ընդգէմ շերմախաի:

Առ հասարակ Թէոդոսիոյ եկեղեցիք անզարգ են, և չեն համապատասխանել մի ձեռագրի մէջ գրու- նուած տողերուն.

« Քէֆէ քաղաք ծովահայեաց,
Եկեղեցիքը զարգարած »:

Անշուշտ այս տողերը գրողը՝ վերջին, այն է 1779 ին, Հայոց ի Ղրիմէ ելնելէն առաջ տեսել և գրել է Կաֆայի եկեղեցիներու զարդերու մասին, և հաւանական է ենթադրելը հետերնին տարել են բոլոր եկեղեցեաց զարդարանքը. և վերջին հարիւր տարուան միջոցին կարող չեն եղած եկեղեցիք իրենց նախկին յարդն ու զարդը ունենալ ժողո- վրդոց սակաւութեան պատճառաւ:

Ս. Կ Ա Ր Ա Պ Ե Տ

Սրբոյն Սարգսի և սրբոց Հրեշտակապետաց եկեղեցեաց վրայ համառօտ ակնարկս ընելէն վերջ, պատշաճ կը համարիմ լռելով շանցնիլ մի փոքրադիր, այլ յոյժ գեղեցիկ և վայելչադիր, երբեմն հայ եկե-ղեցւոյ մասին, ուր այժմ Ռուսք կը պատարագեն, այն է արգելանոցի Ս. Կարապետի կամ Ս. Օվա-նիսի մասին:

Արգելանոցը՝ որ քաղքին արևելեան ծայրը կ'իյ-նայ, շորս կողմանէ պարսպած, ժամանակաւ Հայոց

Թաղ եղած է, ուր խիտ բնակած են յԱքսէրայէ աստ գաղթող ժողովուրդը. այն պատճառաւ մերթ կը պատահի որ առաջին անգամ այս տեղւոյն յայցելնող Հայը կանգ կ'առնու այս կամ այն սանդուղին, քարին, պատին և կիսաւեր մի շէնքի քով. աչքերուն զարնուելով քարաքանդակ հայ տառեր. այլ երբ կամարակապ դռներէն ներս մտնելով կարգաւ կը տեսնէ երեք հայ եկեղեցիք, սիրտը կը տրոփէ: Առ ես խորհուրդ կու տամ մասնաւոր ուշադրութեամբ զննել երեք եկեղեցեացս միջինը. որ ցարդ վայելուչ ձևով կանգուն կեցած է իւր գեղեցիկ կաթուղիկէիւղա է Ս: Կարապետն, որոյ համար հին յիշատակարան մի գրուցէ.

« Ս. Օվանէս տեղըն ձոր է,
Կաթուղիկէն յոյժ յարմար է »:

Այս տողերուս մէջ յոյժ յարմար բառերը ճիշդ և տեղովը գործածուած են. յիրաւի այդ ձորակին մէջ, այդ համեստ և փոքրիկ եկեղեցւոյն վերայ, երկայնաձև և բոլորչի կաթուղիկէն փոքրիկ խաչիւ պսակեալ՝ յոյժ յարմար է: Համեստ բառը արտաքին ձևոյն իբրև տիպար կարելի է գործածել. այլ եկեղեցւոյն ներքին կողմն, մասնաւանդ երեք կամարակապ դռներէն զէպ ի դասը և բեմը, պէտք է գրուցել որ չքեղ է և հոյակապ, բարձր և վայելուչ, քանդակագործ և նախուն. ըստ իս, այս եկեղեցին իւր փոքրկութեամբ հանդերձ, մի չքնաղ գուհար է հայկական ճարտարապետութեան ի Կաֆա: Առաջին դռնէն ներս մտնելով, պէտք է երկու աստիճանով վայր իջնել. երկայնաձև սենեակ մի է այդ, կամարաձև յօրինուած, և ժողովրդեան տեղն

է. նստաւոր երեք դռներ ունի դէպ ի խորան, որոնք վերուստ ի վայր ծածկուած են գեղեցիկ քանդակներով, մանր նաշխերով. դրանց շեմերը, բարաւորները բանուած են, կամարներն ալ շատ վայելուչ ձև ունին. Այս կամարներէն դէպ ի խորան մտնողը՝ ականայ կը հարկադրուի գլուխը վեր վերցընել, մինչև ցտանջել պարանոցի, — ըստ բացատրութեան Թովմայի Արժրունայ. — վասն զի բարձրարեւ զատերը կամարակապ նեղնալով դէպ ի վեր, փոքրիկ կաթուղիկէն իրենց ուսերուն վրայ առած կ'երեւնան, որ իւր նեղ պատուհաններէն ազօտ լուսոյ ճառագայթներ կը սփռէ դէպ ի վայր: Խորանին վայելուչ գոգաձևին մէջ կ'իտով շափ յորմն ցցուած են խորաքանդակ կիսանդրիք երկոտասան առաքելոց, և ի միջին՝ Փրկիչն: Այս խորաքանդակ կիսարձաններուն վերայ յայտնի կ'երեւի ճաշակ քանդակագործութեան, որոնք թէպէտ թանձր կրով ծածկուած են, սակայն և այնպէս կրին տակէն, եւս կ'երևի շափակցութիւնն և համեմատութիւն, նոյն և վայելչութիւնն. յորոց զուրկ են կողմնակի պատերուն վերայ քանդակեալ Սրբոյն Կարապետի և Լուսաւորչի խորաքանդակք, մարդաչափ արձանք, խոշոր և անարուեստ քերչաց գործ:

Այժմ մեր ազգայինք՝ Ս. Սարգսէ և Հրեշտակապետաց եկեղեցիներէ զատ՝ ունին Ս. Գեորգ ե Ս. Սննա, քաղաքին հարաւային սարին վերայ, և որ ուխտաւանդի է, զի հոն թաղուած է ժամանակաւ Լոյս-Պարոն նահատակն:

Քիչ ետքը կարգաւ պիտի նշանակեմք Կաֆայի մէջ երբեմն գտնուած ազգային եկեղեցեաց առնունները, որչափ ինչ յաջողեցաւ մեզ գտնել՝ մի դար յառաջ գրուած ձեռագրէ մը: Այլ յառաջ քան զայս

հետաքննական ցուցակ մէջ բերելու՝ համառօտիւ իրօտինք կաթուղիկեայ Հայոց վերափոխման Սրբոց կաթին նուիրուած եկեղեցւոյ մասին, որոյ հարիւրամեայ յորելեանը կատարուեցաւ ի 1887 ի 18 օգոստոսի:

ԺԲ

ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅ-ԿԱԹՈՒԿԱՑ

Թէոդոսիոյ մեծ հրապարակին միջավայրը, ուր երբեմն չքեղափայլ կանգնուած էր առ Գեներալ-ուլք Սուրբ Ազնէս եկեղեցի Փրանկաց, և ապա բազմազմբէթ մզկիթ մսլիմանաց, այժմ շինուած է վայելչաձև մայր եկեղեցին Ռուսաց-յարևելակողմն կայ միւս ալ փոքրագոյն հրապարակ, և հարաւային ճակատը մի խորհրդաւոր շէնք. որոյ վրայ առաջին անգամ նայողը՝ խառնուրդ մը կը գտնէ քրիստոնէութեան կրօնի և իսլամութեան: Յաղթաձեւ քառակուսի շէնքը, որոյ վերայ լայնատարած կաթուղիկէն՝ իրրև հսկայի մը գլխոյն համեմատ փեղուրիւ մը զարդարուած, քովի բարձրադիտակ մտրայն, այս ամէնը մսլիմանութեան յայտարար նշանակք են. այլ ինչպէս ի ծայր կաթուղիկէին՝ մեր փրկութեան նշանը, նայնպէս և մտրայն խաչապսակ՝ կ'աւետեն որ այդ շէնք տաճար է քրիստոնէից:

1783 ին երբ Ռուսք կը տիրեն Թէոդոսիոյ, շատ սրբութեան տաճարաց հետ նաև Հայոց կաթուղիկաց բազմաթիւ եկեղեցիք՝ պատերազմական շփոթից միջոց քանդուելով կը կործանին: Եւ որովհետև

Հայոց մեծամասնութիւնն 1778 ին թողլով գլխիմ գաղթեթեր էին յիկատարիսլաւ, մնացեալ սակաւաթիւ Հայք միաբանելով ընդ Փրանկաց կը խնդրեն ի կատարինեայ Բ կայսրուհւոյ որ իրենց եկեղեցի շնորհուի այդ մզկիթը, որ ի ժամանակին միաթի մամխի անունը կը կրէր: Կայսրուհին՝ որովհետեւ Թաթարք և Թուրքք, թողլով քաղաքը աւերակաց կոյտ մի՛ կը քաշուին կը հեռանան, անտէր և անժողովուրդ մնացած երկու մեծագոյն մզկիթներուն մին կը շինորհէ Ռուսաց. և միւսը՝ վերը յիշուաց միաթի մամխիին՝ կաթողիկաց ընդհանրապէս: Կաթողիկք՝ չէնքին արտաքին ձեւը նոյն կը պահեն, միայն մահկին տեղ խաչը փոխանակելով: Իսկ ներքին կողմը կը յարմարցընեն քրիստոնէական պաշտամանց պատշաճական արդուզարդին համեմատ, ի միջավայրին՝ ուր էր միհրապը. սուրբ սեղան մը կանդնելով ու Ատուածամօր պատկերը զետեղելով: Այս կարևոր փոփոխութենէն հինգ տարի վերջը, 1787 օգոստոսի 33 ին, մեծահանդէս շքով կ'օծէ զայն յեկեղեցի կաթողիկաց՝ Ռուսաստանի համօրէն կաթողիկաց մետրապոլիտն Ստանիսլաւ Գեր. Սեստրենցեւիչ Բողուչ:

Գեղեցիկ է աւագ խորանին ճարտարապետութիւնն. ինչպէս ընդհանրապէս սուրբ տաճարին չէնքը, նմանութիւն մը բերելով եւրոպական եկեղեցեաց, թէպետև արուեստական անփառունակ պարզութեամբն շատ հեռի կը մնայ անոնցմէ: Ընտիր և ճաշակաւոր են նաև երկու կողմնական խորաններն՝ գոգաձև երու մէջ ագուցած յորմին, գեղեցիկ և Թանկագին պատկերներով. մին նուիրեալ յանուն սրբոյն Ատոնի Պատուացւոյ, և միւս՝ սրբոյն Յովհաննու Նեպուսուզին, երկուքն ալ նկարուած

ի մայրաքաղաքն Փրանկիոյ, ի մեծանունն և ի նար-
տարարուեստ Բէցղըման առև նկարչէ. որոյ գործ
է և խաչելութեան պատկերն՝ կախուած ընդ մէջ
երկու խորանաց, աւագին և սրբոյ Պատուացւոյն
խորանաց:

Եկեղեցւոյս առաջին ժողովրդապետն եղած է՝
ոմն Օգոստինոս քահանայ Ճէննառի, գենուացի,
ազգաւ իտալացի: Ինք եղած է, ինչպէս կը վկայէ
ի կռան արձանագրութեանց մատենին եկեղեցւոյ,
հիմնադիր Օտեսասայի կաթողիկաց եկեղեցւոյն. և
ապա առաջին ժողովրդապետ ի Թէոքոսիա յամի
1807 ի 24 նոյեմբերի. և շարունակեր է ի նոյն
պաշտաման մինչ ի վերջ 1819 տարւոյն. Սիմֆէրո-
պոլի քաղաքի ժողովրդապետի անուամբ ալ յիշա-
տակուած և արձանագրուած կը գտնենք զինքը:
Նոյն ատենէ մնացած եկեղեցական մատենից
մէջ՝ Ճէննառի քահանայէն ետքը՝ երկու կաթողիկ
հայազգի քահանայից անուանք ալ կը յիշուին. և
են տէր Գրիգոր Առսիկեան և տէր Սահակ Յովնա-
նեան որ ի յատուկ ստորագրութեանն կ'անուանէ
զինք ժողովրդապետ եկեղեցւոյն Եպատորիոյ (Վէ-
օղլէվ). կայ և Խաչատուր կանոնիկոս վարդապետ
մը Տուհայեան՝ ժողովրդապետ եկեղեցւոյն Խա-
րասուի:

1819 ին առաջին անգամ մուտ գտած է Թէո-
քոսիոյ եկեղեցւոյն արձանագրութեանց մէջ հայ
լեզուն. որ և այսպիսի սկզբնաւորութիւն ունի.
« Եւ Հ. Պողոս Տէրվիչեան՝ քահանայ եկեղեցւոյս
Վաֆայի ուղղափառաց » և այլն: Ինքն էր յուխտէ
Սնտոնեան հարց որ ի Լիբանան, և ժողովրդապե-
տական պաշտօնը կատարած է մինչ ի 1826: Հե-
տևեալ տարիէն կը սկսուին արձանագրութիւնքն

ուս լեզուաւ, ի ձեռն հոգարարձուի եկեղեցւոյս
Հ. Աթանաս քահանայի Խոտրիկեան մինչև ի 1830.
աստի մինչ ի 1832՝ եկեղեցւոյն և ժողովրդեան
հոգևոր խնամքն և առաջնորդութիւն կը վարէր
քիչ մը յառաջ յիշուած Եւպատորիոյ և Սիմֆերոպոլի
ժողովրդապետ Յովնանեան քահանայն. իսկ
1831 էն կը սկսին դարձեալ արձանագրութիւնքն
ի հայ լեզու Երեմեան տէր Յովհաննէս քահանային
ձեռքով: Մինչև ի 1840 ուրիշ քանի մի եկեղե-
ցականք վարած են առժամանակեայ կերպով զայդ
պաշտօն, և վերջապէս նոյն տարւոյն՝ Տաւրիոյ
առաջնորդ Բժշկեան Հ. Մինաս վարդապետի
առաջարկութեամբ վիճակաւոր եպիսկոպոսէն ժո-
ղովրդապետ դրուած է Հ. Յովսէփ Գարամուրզա
վարդապետ: Ամբողջ երեսուն տարուան միջոց՝
մինչ ի մահն (1840-70), եռանդուն բարեպաշտու-
թեամբ և ամենուն հաճութեամբն և արժանաւոր
մեծարանօք վարեց զայդ պաշտօն՝ բաղմնավաստակ
և բաղմնահմուտ վարդապետս, որ մայրենի հայ
լեզուին հաւասար յաջողութեամբ կը խօսէր նաև
իտալական, գաղղիական, ռուս, լեհ և թուրք
լեզուները. և Թէոդոսիոյ եկեղեցւոյս և ժողովը-
դեան բարոյական զարգացմանն նպաստաւոր երեւ-
ցած նաև նիւթական բարւոքման:

1887 տարւոյն օգոստոսի 18ին մեծաշուք հան-
դիտութեամբ կատարուեցաւ եկեղեցւոյս հարիւ-
րամեակը՝ իր առաջին վիճակն փոխելէն ու կրկին
քրիստոնէական սուրբ կրօնի պաշտամանց նուի-
րուելէն ետքը:

Յետ առաւօտեան ժամերգութեանց՝ յադաջ քան
զմիջօրէ ժամը տասնին, եկեղեցւոյն երեք զան-
գակներն իրենց քաղցրանուագ հնչմամբ չէն չէն կը

հրաւիրէին զհաւատացեալս՝ հարիւրամեկի կրկին յորեկինի հանդիսին մասնակից լինելու։ Ժամը տասնուկիսուն օկսաւ սուրբ պատարազն. հնչեց երգեհոն նուիրական մեղեդեօք, և կը ձայնակցէին գպիրք իրենց անոյշ երգերովն։ Առաջին աւետարանէն անմիջապէս ետքը՝ ժամարար քահանայն դարձաւ առ խոնեալ բազմութիւն հաւատացեալ ժողովրդեան, և շորհաւորելով հարիւրամեակը, համառօտիւ յիշեցուց նոյն նուիրական շէնքին պատմութիւնն ու կրած յեղափոխութիւններն. գրուածաց արժանապէս նախորդ ժողովրդապետին, Մխիթարեան Գարամուրզա Ն. Յովսէփ վարդապետին գործունէութիւնն ու աշխատանք ի վայելչութիւն սուրբ տաճարիս. և դառնալով զէպ ի սեղանն որ բազմութիւ ջահերով և ծաղկընկերով զարդարուած էր « Ասոնք ամէնքն, ըսաւ, մեր հանգուցեալ ժողովրդապետին աստուածանուէր եռանդեանն և փութոյն արդիւնք են »։

ԺԳ

ԿԱՏԱՏԻ ՔԱՌԱՍՈՒՄ ԵՒ ՀԻՆԳ ԵԿԵՂԵՑԻՔ

Հայոց վերջին և մեծ գաղթականութեան համառօտ պատմութիւնն, ոչ միայն ազգայնոց՝ Թաթարաց խումբերը ճեղքելով Վոլգայի հզերքէն մինչ ի տարիկեան թերակղզին գալը կը յիշատակեն, այլ հարեանցի մէջ բերելով նոցա ձեռքով եղած շինութիւնքն, կը հաւատարմացնեն թէ որպիսի ընդարձակ ասպարէզ մը եղած է երկիրն՝ ընդ հուր և ընդ սուր անցած ժողովրդեան մը, իրենց բնածին

հանճարով ու ճարտարութեամբ հանդիսանալու։ Ափսոս որ կը պակսին մեզ պատմական ամբողջ վաւերականք. որով կը բռնադատուինք ցրիւ աստի անտի հաւաքուած յիշատակարաններով զոհ ըլլալ։ Այսպիսի գրուած մը ձեռուընիս անցաւ, գրեթէ հարիւր տարի յառաջ գրուած ի նոր Նախիջեւան, յորմէ կը տեղեկանամք թէ մինչև անցեալ դարուն վերջերը դեռ կանգուն մնացած էին ի Վաֆա քսանըջորս եկեղեցիք, զորս յանուանէ կը յիշատակէ գրիչն։ Մէջ բերենք այդ իրաւամբ հետաքննական ցուցակը.

« Քէֆէ, կ'ասեն, մեծ քաղաք է .

Թաղաւորաց հաստատած է .

Քսանուչորս եկեղեցի է .

Քարերն ամէն սրբբառաւ է :

Քէֆէ քաղաք ծովահայեաց ,

Եկեղեցիքըն զարդարած :

— Սոչրք Աննա բարձրը տեղ է ,

Աստուածածին անոր քովն է

Վարդապետաց օթարան է .

Համարձոռն անկից վար է :

Սոչրք Թորոս բերդէն դուրս է .

Սոչրք Գեորգ ամենահաս է .

Հրեշտակապետ բերդէն ներս է .

Ամենեցուն բարեխօս է :

Սոչրք Նիկողոս սարի վրայ է .

Սոչրք Ակոբ հայրապետ է .

Սոչրք Խաչն անկից վեր է ,

Քրիստոնէից մեծ նըշան է :

Սոչրք Սարգիս յոյժ մեծ ժամ է .

Մարտիրոս որդւովըն զինուոր է :

Նախնեաց մերոց հաստատեալ է .

Եկեղեցեաց աթոռակալ է .

Սոսր Նասաորիչ կաթուղիկէ .

Հաւտացելոց մեծ պարիսպ է .

Հայոց ազգի հայրապետ է .

Հերձուածողացըն վանիչ է .

ՔէՖէ քաղաք ծովահայեաց

Եկեղեցիքըն զարդարած .

— Սոսր Յարոսրիսն բերդի քով է .

Քարէ խաչերըն խիստ շատ է .

Տասը սեղան չըջապատէ .

Մէկ քան զմէկըն պայծառ է .

Սոսր Աստուածածին նոր ժամ է .

Չորեք կողմը Հայոց տուն է .

Հաւատացելոց մեզ յոյս է .

Դատաստանին բարեխօս է .

Սոսր Անտոն փոքրիկ ժամ է .

Սոսր Նիկողոս տեղըն տիւղ է .

Սոսր Սիմեոն բերդէն դուրս է .

Մէջի նահատակն երկուս է .

ՔէՖէ քաղաք ծովահայեաց ,

Եկեղեցիքըն զարդարած .

— Սոսր Քառսուռնչ աննըման է .

Կաթուղիկէն խանէ խանէ .

Վերնատունըն բարձրման է .

Երկտասան աստիճան է .

Սոսր Կարապետ տեղըն ձոր է .

Քովըն կ'առնն մեծ ջըրհոր է .

Սոսր Մերկիանոս տեղըն սար է .

Քաջամարտ զինաւոր է .

Սոսր Օվանէս պատըն ցած է .

Չորեք կողմը պարըսպած է .

Սուրբ Օգոսենտ մեծ բըժիշկ է :
Սուրբ Օհաննէս տեղըն ձոր է .
Կաթուղիկէն յոյժ յարմար է .
Սուրբ Ստեփաննոս վրկայ նախ է .
Սա մէկ փոքրիկ մատուռ է :
Սուրբ Մինասն է գորաւոր ,
Նարաշէն գեղեցիկ տանար է .
Մէջըն կայ շորեփին կամար ,
Ուխտաւոր երթայ անհամար :
Քէֆէ քաղաք ծովահայեաց ,
Եկեղեցիքըն զարդարած » :

Նոյն ձեռագիր՝ յորմէ այս տեղեկութիւնը քաղեցինք, կը յաւելու թէ Հայք՝ քառասուն և հինգ եկեղեցիք ունեցել են ի Կաֆա. քսանութինն՝ պարըսպին մէջ, իսկ տասնուվեցն պարօպապատէն դուրս: Այս բազմաթիւ եկեղեցիք պիտի շկարծենք թէ մեծամեծ շէնքեր լինին. զի ի բաց առեալ մէկ քանին՝ մնացեալքն փոքրիկ մատուռներ են, ինչպէս կը վկայեն ցարդ մնացեալ աւերակք: Ուրիշ տեղ մ'ալ կ'ըսէ նոյն ձեռագիր. « Օսմանցիի թագաւորի այսքան մոռխարտէ խնդրեաց. տարւոյ տարի կու տայինք ամէն եկեղեցւոյ իւր կարողութեամբ. Ս. Սարգիս, տասնըմէկ սակի. Սանփէթրօ մէկ սակի... Ս. Ուրբաթ՝ չորս Ֆլորի... Ս. Երրորդութիւն՝ չորս Ֆլորի. և այլ կու ուղարկէին Ստամպուլ պատրիարքարանը. նա ալ թագաւորի դուռը կու տար, կ'ատէր թէ Ղրըմի եղեալ Հայոց ազգի եկեղեցիին մուխաթտէն է: Այսպէս էր մեր տղայ եղած ու մինչև ի տարիս եկածը »:

ԺԴ

ՊԱՐՈՆ-ԼՈՅՍ ԵՈՐ ԵԱՀԱՏԱԿ

Քեզ երանի կաճա քաղաք,
Ձի նոր նըշան քեզ երեւի.
Քոյ քահանայքըն ժողովին՝
Տաւենն ըզտաւն Պարոն-Լուսին:
Սուրբ Պարոն-Լոյս քեզ երանի,
Եւ քո զարմիցն որ ի մարմնի.
Դու Քրիստոսի վրկայ եղեր,
Պարժանք Հայոց տանս Արմենի:
Այս մըթացեալ ժամանակի
Դու լոյս եղեր մէջ աշխարհի,
Եւ սառնացեալ ձմերայնի
Վարդ և շուշան մէջ պարտիղի:

Ո՞վ էր այն երջանիկ նահատակը, որոյ տարածամ
և նախանձելի անմահառիթ մահը այս սրտաշարժ
տողերով կը գրուատէր մեզմէ երեք դար և աւելի
յառաջագոյն Վրթանէս անունով վարդապետն «յե-
տինս ի Քարողողաց¹» ինչպէս ինքզինքը կ'անուա-
նէ, որ տեսող և սքանչացող էր հանդիսի նահա-
տակութեանն, զմարմինն «անմաքուր բազկաւ իմով
գրկեցի և եղի ի տապանի»:

1. Անշուշտ ի կարգէ հայ Դոմինիկեան միանձանց, որ
բազմաթիւ էին ի ժամանակին ի Թերակղզւոյ Տաւրիոյ:

Կաֆայի հայ գաղթականութեան ծնունդ, պար-
ժանք ու պաշտպան նոր վկայ մ' է Պարոն-Լոյս
պատանեակն, որ դատաւորաց առջև հասակէն
վեր արիութեամբ դաւանելով զճմարտութիւն քրիս-
տոսական հաւատոյ, կարմրերփեան մաքուր ար-
եամբ դրաւ կեանքն, և սուրբ գերեզմանն հռչակա-
ւոր ուխտատեղի եղաւ, և է ցայսօր, յեկեղեցւոյ
սրբոցն Յովակիմայ և Աննայի, հաւատացեալ ժո-
ղովրդոց: Կաֆայի գաղթականութեան և իրենց
եռանդուն բարեպաշտութեամբ կանգնած եկեղե-
ցեաց վրայ խօսած ատեննիս, հարկ է համառօտ
նուէր մ'ալ ընծայել իր անմոռաց և փառաւոր
յիշատակին, քաղելով իր սրբական վարուց համա-
ռօտութիւնն ի Նոր Նախիջեւան պահուած Յայս-
մաւուրք գրքէ մը, զոր նոյն ականատես վկայն
վրթանէս վարդապետ շարագրած է:

Աստուածատուր անուն բարեպաշտ և ընտիր հօր
զաւակն էր Պարոն-Լոյս պատանի նահատակն,
սուղբան Սէլիմի Թագաւորութեան ժամանակ, և
ըստ գեղեցիկ բացատրութեան վկայագրին « ի
ձմեռնացեալ ժամանակի վարդ անուշահոտ երևեալ
ի մէջ աշխարհի, և վառեցաւ որպէս հուր ի սէրն
Քրիստոսի »:

Հայոց ՌԺԶ Թուականն էր, և Քրիստոսի սուրբ
աստուածայայտնութեան նրազալուցի օրը: Եւ ահա
յանկարծ մոլեգնեալ խուժան մը դիմեց այս ու-
թուտանամեայ պատանեկին վրայ, « որ էր մանուկ
տիգը, և տեսչեամբն գեղեցիկ, հասակաւ վայելուչ
և լեզուաւ ճարտար. աստուածային շնորհօքն զար-
գարեալ »: Կ'ամբաստանէին թէ ի քրիստոսական
հաւատոց հրաժարած ըլլայ երբեմն ի կէտզէվ և
այլազգութիւնն ընդունած. և կը բռնադատէին կը

ստիպէին որ թողու զՔրիստոս, կրկին դառնալով իրենց հաւատոց ուղղութեան: Այսպիսի սուտ և անիրաւ ամբաստանութեան շիկրցաւ հանդուրժել երջանիկ պատանեակն. նայեցաւ չորս կողմը խըռնեալ պաշարեալ անխորհուրդ բազմութեան. և արտասուալից աչուրներն վերցընելով յերկինս՝ գիմնց վստահութեամբ առ Քրիստոս, յորմէ երբէք զատուած բաժնուած չէր հոգւովն ու սրտով. ապաւինեցաւ յազօթս լուսաւորութեան մեծ Հօրն, որ համբերատար շարչարանօքն և աստուածուսոցց վարդապետութեամբ՝ անցաւոր ու աւօրեայ կենաց փրշալից ու բազմալտանգ ճանապարհին մէջ՝ ցոնցեր էր զչաւիղս փրկութեան, և վկայական մահուամբ իրենց արիւնը գնող սրբոց բազմութենէն սորված արիութեամբ՝ համարձակաձայն դաւանեց իր հաւատքը:

Վրայ հասան՝ բռնեցին կապկըպեցին զինքը, ու դատաւորին ներկայացընելով, սուտ վկայիք ալ կը ջանային իրենց ամբաստանութիւնը հաւատարմացընել: Այն բազմավրդով աղաղակին, վրէժխնդիր ու անմեղ արեան ծարաւի նախանձայուզութեան գոռում գոչումին՝ երջանիկ պատանեակն միայն անխռով և անյողողդ, նախավկային նման պայծառափայլ, հրեշտակատեսիլ և լի հոգւով սրբով, ցըցուց իրեն դէմ եղած ամբաստանութեանց սուտութիւնն և հաւատոցը անյեղլի հաստատութիւնն:

Այդպիսի անկեղծ խոստովանութեան առջև տկարացան անզօր մնացին սպառնալիք և աղերք, սաստ և խոստմունք, անգութ տանջանք և առաւատուր պարգեւաց յուսադրութիւնք: « Եթէ սրով սպանանէք զիս, կ'ըսէր, եթէ կրակով այրէք, խոստմանց ընդարձակ ծովուն մէջ զիս ուզենաք

խեղճել, ես զՔրիստոս Աստուած ոչ ուրանամս: Գատաւորը ճանչցաւ պատանեկին անմեղութիւնը. խանդաղատեցաւ անօր հասակին, և քրիստոնէից երաշխաւորութեամբ համոզուեցաւ ազատ թողուլ զինքն՝ գառնալ ի տուն ծնողացն:

Բայց այդպիսի արդարադատ վճռով մը չէին կրնար զօհ մնալ երանելոյն թշնամիքը. մանաւանդ թէ ալ աւելի զայրացած՝ դատելոյն հետ իրենց ամբաստանութիւնը դարձուցին նաև դատողին դէմ. և տեղոյն տանիչմանին կամ դէն պետին դիմելով՝ արդարութիւն և իրաւունք պահանջեցին՝ և այս կարծեաւ արդարութեան նպատակն ու վախճան՝ անպարտ պատանեկին անմեղ արիւնն էր: Համաձայնեցաւ դենպետը, հրաման զրկեց դատաւորին որ կրկին բռնել տայ զամբաստանեալն, և ստիպէ ի հաւատափոխութիւն. և եթէ անլուր գտնուի՝ մահուան պատուհասիւ վերցընէ զնա: Բռնադատեցաւ դատաւորն՝ իր համոզմանն վրայէն անցնելով, կատարել տրուած հրամանը. զրկեց ի տուն, բռնի ի դատաստան զնա կանչելով: Գորովալիր ծնողքն՝ ահաբեկ և զարհուրած, ջանացին թաքուցանել զպատանին ի տան. և երբ խնդրակը՝ ծնողաց ալ դէմ մահատաստ սպանալեզք վեր վայր կը փնտռէին զինքն, երանելի մանուկն ցատկեց դուրս պահուած տեղէն. յօժարակամ և յօժարափոյթ մատոյց ձեռքը կապանաց. ու մինչ ծնողք և ազգականք արտասուալից կը հառաչէին ու անմխիթար կը սգային այն ազնիւ գանձուն ու կենաց անհրաժեշտ ու անմխիթար կորուստը, ինք միայն ուրախ ու զուարթադէմ կը զատուէր անոնց գրկէն, կրկին կը ներկայանար դատաւորին: Յետին փորձ մը ըրաւ նա. աղերսաւ

նաց ու սիրագորով թելագրութեանց հետ՝ գրաւ պատանեկին առջեւ տխուր մահուան արհաւիրքը. կը յորդորէր խնայել զթալ այն կեանքին որ իրաւամբ այնչափ սիրելի էր և պատուական ամենուն: Բայց Յիսուսի քաղցր ու զմայլական հրաւիրանաց դիրալուր և դիւրանաց սիրտը՝ անխառով, անսասան, անտեղիտալի մասց առ ամենայն երկրաւոր ձայն և հրապուրանք:

Մահը՝ անդարձ հետեւանք մը պիտի ըլլար այդպիսի աստուածախրատեսոյս արիւթեան:

Այդ էր իր անդութ և անգորով թնամեաց սրտին փափաքը: Երանելի պատանեակն և իր կեանքն՝ ալ իրենց ձեռքն էր, մէկէն, ինչպէս կ'աւանդէ վկայագիրն, « առեալ ի մէջ իւրեանց՝ նեղէին զնա և կափահարէին և զգլուխն ծածէին. թքանէին յերեսն և ապտակէին, և նա էր ի մէջ նոցա՝ որպէս գառն ի մէջ գայլոց »:

Երբ դենպետին առջեւ տարին զնա, դատաւորէն աւելի ողբանօք խօսեցաւ, խրատեց յորդորեց, պարզենեւ ու մեծութիւն խոստացաւ. և տեսնելով թէ անոնցմէ ամենէն աւելի զօրաւոր կ'ազդէր ի նա սէրն քրիստոսանուէր, փոխեց լեզու. տանջանաց ու մահուան խիստ և անողբ սպառնալիքն ու վտանգը յիշեցուց. և պատանին չիվխցաւ, չիլքաւ կամ շտարակուսեցաւ. այլ « զուարթ և պայծառ դիմօք, անահ և աներկիւղ արար պատասխանի իւրաքանչիւր հարցուածոց նորա »:

Մանչեց բարկութեամբ դենպետն. ապտակի ուժգին հարուածով մը կարծեց ահաբեկել զպատանին. ուր նա՝ Հոգւով սրբով զօրացած՝ ճշմարիտ աչակերտ Քրիստոսի, միւս ծնօտն ալ դարձուց: Հասկըցաւ դենպետն թէ զուր լանք էր կարծելն

յաղթել անոր մտաց հաստատութեան . ուզեց զրկել առ օանճախ Պարոն-Լուսին . թ.երեւս նա աւելի բարեբաատ գտնուի փափաքելի յաղթանակը ձեռք բերելու . բայց հոն ալ՝ նոյն անվկանդ ամբութիւն ի պատանեակն , հաւասար կորանք պարտութեան :

Քանտին մէջ ուր ձգեցին զինքը , և մնաց յու . նուարի քսանըհինգէն մինչև ի հնգետասան մա . յիսի , քահանայք և բազմութիւն ժողվորդեան , և որ աւելի սրտաշարժ է , նաև հասակակից քրիս . տոնեայ մանկունք կը յաճախէին առ նա , կը խրախուսէին , կը քաջալերէին և սուրբ կապանքն համբուրելով՝ երանի կու տային նմա : Հոն ի բան . տին զօրացաւ նաև երկնահրաշ այցելութեամբ սրբոյ Լուսաւորչին , և հրեշտակաց Աստուծոյ , որ ըստ վկայագրին « ըստ նմանութեան մանկանց տղայոց երևէին նմա . այլ և տէր մեր Յիսուս Քրիստոս՝ բազում զօրօք և հրեշտակօք իջանէր յերկնից ի բանտն , և զօրացուցանէր զժառայն իւր զսուրբն Պարոն-Լոյս » :

Երանելոյն ծնողքն ամէն ջանք ըրին ազատել իրենց սիրելի որդեակը . սրտանմլիկ աղաչանօք , դրամոց և առատ պարգևաց խոստմամբ կը յուսա . յին ապրեցընել զնա ի մահուանէ . և նաւով Սեաւ ծովու վտանգաւոր ճամբան կտրելով զնացին մինչ ի Պոլիս , արտասուագին պաղատանաց ձայնը հա . սուցին առ թագաւորն , և ազատութեան հրամա . նագրով դարձան ի Կաֆա . բայց պատանեկին դէմ յուզուած ատելութիւնը այնչափ բուռն էր և սպառնալից , որ դատաւորք չհամարձակեցան այդ արքունի պատուէրը ի գործ դնել , և դատապարտե . ցին զնա ի մահ :

Գլխատման տեղը ուրախութեամբ կը գիմէր


բարերաստիկն Լոյս-Պարոն. և « բանակք հրեշ-
տակաց Աստուծոյ, — կ'ըսէ վկայադիրն, — շուրջ
եզնն զնովաւ. և տէր մեր Յիսուս Քրիստոս յայտ-
նապէս երթայր առաջի նորա, և ցոյցանէր նմա
զանթառամ պատկն. և սատանայ ամենայն դիւզքն
իւրովք ի հեռաստանէ կացեալ՝ կրճտէր զատա-
մունս իւր և ողբայր զկործանումն իւր՝ որ յաղ-
թեցաւ ի փոքր մանկանէ միովէ »: Երեք անգամ
ճամբուն վրայ կանկ առաւ դահիճն՝ խոստմամբք
հրապուրելով և մերձաւոր մահուան մը վախով
ուզելով ահաբեկել՝ իսկ նա ուրախ և զուարթադէմ
կը նայէր մերկացեալ սրոյն որ երեք անգամ շողայր
անմեղ պարանոցին վրայ, փափաքանօք անձկալով
այն ցանկալի մահուան:


Մայիսի հնգետասան ու մարերի ութերորդ օրն
էր յորում հանդիպեցաւ երջանիկ վկայիս նահա-
տակութիւնը, և մարմինը անթիւ բազմութեամբ
ամենայն քրիստոնեայ բնակչաց քաղաքին՝ ամփո-
փեցաւ պատուով:

Նոր Նախիջեանի Սուրբ Խաչ եկեղեցւոյ Գանձ-
արան զրքէ մը քաղենք հետեւեալ տողերը ի
գովեստ նահատակին:


« Սուրբ Պարոն-Լոյս ժողիկ' ծիրանի,
Կարմիր արեամբ ներկեալ ի մարմնի.
Սուրբ Պարոն-Լոյս նոր շող երփնարփի՝
Ասող առաւօտու նոր արուսեկի,
Սուրբ Պարոն-Լոյս նոր վարդ ի թըփի՝
Ի ձմերային սուղ ժամանակի.
Սուրբ Պարոն-Լոյս նոր ար խաւենի,
Տընկեալ ի գնացըս ջրոյն կենդանի.

Սուրբ Պարոն-Լոյս նոր շուշան հովտի
Նարգոս քրքրում զըմուռ ընդ հալուի.
Սուրբ Պարոն-Լոյս պարարտ ձիթենի
Նոր պատուաստեալ յորթըն հայրենի:
Սուրբ Պարոն-Լոյս մաքուր աղանի՛
Բարձրաթըռիչ որպէս զարժուի...





ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ



ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ ՀԱՅՈՑ¹

Ի ԿԱՄԵՆԻՑ ՓՈՏՈԼԵԱՆ

16 Օգոստոս. — 16 Սեպտեմբեր. 1883:

ՅԱՌԱՋԱԲԱՆ Ի ՏԵՂ

Լեհաստան աշխարհն՝ ժԱ դարէն սկսեալ՝ մեր ազգին Հայ գաղթականաց ապաստանարան եղած է. ուր մեծամեծ արասնութիւններ վայելած են բազմաթիւ ազգայինք, քանի քանի անգամ թողած իրենց հայրենիքը, իրենց փառաշէն Անին, երկրորդ հայրենիք ընտրած են այդ աշխարհքը : Նշանաւոր են ասոր երկու քաղաքները, Կալիցիոյ մէջ Իլվով (կամ ըսա մեր ձեռագրաց Լով) որ այժմ՝ գերմանական անուամբ Լեմպէրկ կը կոչուի, Փոտոլիոյ նահանգին մէջ՝ Կամենից, զոր Հայք շինած և շէնցուցած են, և 600 տարի Հայոց քաղաք համա-

1. Այսպէս է տեւոն պատկերին ընդ կամօրէն Լեհաստան, Matka Boska Armianska.

րուած է: Յամին 1876, հոկտեմբեր ամսոյն մէջ, ճանապարհորդութեան ելած էի յԵլվով, ուր ցարդ կանգուն կայ ազգային փառաւոր եկեղեցին, հանդերձ Լուսաւորչայ խորանով, ուր կը նստի և Հայոց արքեպիսկոպոս, յիւրում վեհարանին, ունի իրեն կղերանոցը, ուր կայ և ցարդ Հայոց կուսանաց վանք, որոյ մայրապետք օրիորդաց դաստիարակութեան կը պարապին: Նոյն ժամանակի թեմակալ առաջնորդն էր գերապատիւ Տէր Գրիգոր Ռոմաշան, որ մեծաւ մարդասիրութեամբ հիւրընկալեց մեր նուաստութիւնը: Ելվովցի Հայոց մէջ՝ այն ասան միայն երկու անձինք կային որ լաւ համարձակ կը խօսէին հայերէն, առաջինն անշուշտ ինքն էր Գերապատիւ Տէրն, իսկ երկրորդն՝ կուսանաց վանքին պառաւեալ Մայրը՝ Վարդուհի, որ մեծ հաճութեամբ ալ կը խօսէր ազգային լեզուն: Անշուշտ այժմ տեղացի երիտասարդ քահանայք ևս կը խօսին իրենց ընիկ լեզուով, վասն զի մեծ ջանք տեսայ ես նոցա մէջ հայերէն լեզուի մշակութեան, շնորհիւ Արհիապատիւ Հանգուցեայոյն: Գրաբար լեզուիս անսայթաքընթերցանութիւնը ժամասացութեան մէջ հաւաստիք են գրածիս:

Յիրաւի՛ ինչպէս ես, նոյնպէս կարծեմ ամենայն ազգային ճանապարհորդ, նոր տեսակ մի զգացումն կ'ունենայ, երբ Եւրոպայի անկիւն մի հանդիպի ազգային հաստատութեան մի, ուր ազգային լեզուն հնչէ ականջաց մէջ, ուր ազգային եկեղեցի մի ամբառնայ աչաց դիմաց: Այդ սրտամերձ և մտահաճոյ զգացումը՝ ո՛չ վսեմութեան, ո՛չ գեղեցկութեան և ո՛չ փարթամութեան զմայլումն կամ ախորժուճն է, այլ ներքին և բնածին իմն զգացումն, զոր շնն կարող տալու ոչ փառահեղ տանարք օտոտ-

րաց, ոչ երկնաբերձ կոթողք կամ բրգունք, և ոչ իսկ ներդաշնակ երաժշտութիւնք, զի առ այն, ըստ ռամիկ բացատրութեան՝ Մարդոս արիւնը կը քաշէ:

Ահա այդ զգացմամբ տրուիեց սիրաս, երբ զկնի տեսանելոյ Եւրոպայի հոյակապ տաճարները Ս. Պետրոս, Ս. Պօղոս Հռովմայ, Տիրամօրն Փարիզու, ոսկէգմբէթն Անկարոզաց (des invalides), Ս. Մարկոս Վենետկոյ, Մայր եկեղեցին Միլանու, Ս. Սոփիա Կ. Պոլսոյ, Ս. Ստեփանոս Վեննայի, տեսայ հեռուէն տխրագոյն եկեղեցին Հայոց Իլլովիայն զգացումը տասնապատկեցաւ՝ երբ վաղ առաւօտու երիցունք շարուած 'ի դասուն ժամասացութիւնք սկսան, վայելուչ ձևով, շարականները գնացք երգելով, այլ ամենայն բառ որոշ և գեղեցիկ արտասանելով: Այդ տաճարին մի անկիւնը քաշուած, ուշադրութեամբ կը փափաքէի միա դնել պաշտաման. սակայն հարկ է խոստովանիլ, թէ և անձամբ ներկայ, լսելիացս մէջ կը հնչէին հայկական բառեր, այլ մտօք բազմադարեան պատմութեան մէջ կը ծփայի, հազարաւոր մղոն հեռուն, Բագրատունիք, նոցա ոստանը Անին, և այլն, փոխն 'ի փոխ կը պատկերանային մտացս մէջ:

Ժամերգութենէ վերջը յայտնեցի սրտիս գոհութիւնը Գերապատիւ առպնջականիս, որ մեծապէս հաճեցաւ, և երկու օր մնալով յԻլլով երկաթի ճամբով գէպ 'ի Կամենից ճանապարհ ելայ: Հասայ Փոտ-Վոլոյիսկ, որ սահման է ընդ մէջ Աւստրիոյ և Ռուսիոյ. աստի Կամենից գնալու երկաթի ճանապարհ չկայ և ոչ խճաքար ճամբայ: Աշնանային անձրևոտ էր օդն, ճանապարհին ծանօթք զգուշացուցին զիս, զի վաթսուն վերստ պէտք էր կա-

ազգ գնալ 'ի կամենից, և այդ վաթսուն վերստը՝
անհնարին ցեխին պատճառաւ՝ երբեմն հարկ կը
լինի օրերով ճամբայ մնալ, անձրեւի ներքոյ: Սոչոյն
անհարթութեանց դէմ ևս՝ ճանապարհի լաւ պա-
տըսպարութիւն չունենալով, խոհեմութիւն համա-
րեցայ ուրիշ յարմար միջոցի թողուլ ի կամենից
ճանապարհորդութիւնս, և ուղղեցի ընթացքս Ստեփ-
սա և անտի 'ի Թէոգոսիս:

Հարկ եղաւ սպասել այլ ևս եօթը տարի և ան-
այս ամառ (1883) ամսօրեայ արձակուրդ և ան-
ցազիր, միանգամայն և յանձնարարական նաժուկ
մի տանելով, առ տեղական վարչութիւնս 'ի Վա-
մենից և 'ի Քիէվ, 'ի կողմանէ Արքունի հնագի-
տական ընկերութեան Օտեսսայի, օգոստոսի ամսոյն
14 ին, երեկոյեան շագենաւով ճամբայ ելայ 'ի Թէո-
գոսիոյ՝ յուխտագնացութիւն առ Տիրամայրն Հայոց
'ի Վամենից:

Օգոստոս 16 թէպէտ Ռուսաստանի համար ա-
չունք է, այլ Ղրիմու համար դեռ ամառն. սակայն
այն օրը՝ կարծես Ռուսաստանի աչունք կը շնչէր.
խոնաւ էր օգն, մութ և անլուսին գիշեր, աստ-
ղերն՝ իրրև ազօտ լապտերներ շարուած էին երկնից
կապոյտին վրայ, և 'ի խոնարհ դէպ 'ի հօրիզոն՝
քաղաքիս տանց ճրագներուն խառնուելով, շարու-
նակութիւն կը գործէին երկնաւօր լոյսերը՝ երկրա-
ւորաց, և երկօցունց անդրադարձութիւնը 'ի ծո-
վուն՝ երրորդ շարք մի էր լուսերու. սակայն և
այնպէս՝ այս երեք կարգ լոյսերն միանալով՝ չէին
բաւական գիշերուան մթութիւնը ոչ միայն փարա-
տելու, այլ և ոչ մեղմելու: Մութ գիշերն՝ մութ
մութ խորհուրդներ կը յարուցանէր մտաց մէջ:
Մերձաւորաց, բարեկամաց հրաժարականս տալով՝

առանձնացած էի նաևուն բարձրաւանդակին մի կողմը, երեակայութեանս մէջ կը պատկերանային բազմաթիւ Անեցի գաղթականք, որք իրր թէ Թէոփոսիոյ ամփանց վրայ վիստային. նոցա համար պատրաստ մակոյկները, կարծես ամփանց մօտ կ'երեւային անհանդարտ կոհակաց վրայ: Այս աշխարհն՝ որ ասկէ ութ դար առաջ թատր մի եղած է ազգիս զանազան ողբերգութեանց, այն այս ալիքներն (կ'որոճայի մտօք) իրենց շարակաց վրայ առած բիւրաւոր Անեցիք, տարած ձգած են 'ի հեռաւոր՝ հիւսիսական աշխարհներ: Հաւանական է որ մեծ մասն Անեցի գաղթականաց նոյն ճամբով անցել գնացել էին, որով ես երթալ մտադիր էի:

Բայց որչափ տարբերութիւն այժմեան և դարերով առաջ Անեցւոց հատած ճանապարհին մէջ: Ո՛ր այն ատեն շոգենաւ, ո՛ր շոգեկառք... բազմաթիւ ժողովուրդ մի հուրէ, թուրէ, ժածէ՛ փախստական, յօտարութենէ յօտարութիւն, հետերինն առած գերեզմանաց խաչքարինք¹ 'ի յիշատակ անգին վաղամեռիկ սիրելեաց, եկղեցեաց դռներ, հրաշագործ Չարխափան, Հաճկատար, Ոչխտակատար Աստուածամօր պատկերներ, կ'երթան և չգիտեմ ո՛ր . . . : Շոգենաւն երրորդ անգամ սուլելով՝ նաւամատոյցէն կը բացուէր դէպ 'ի ծով, այլ աչացս կամ լու ևս մտացս առաջ, դարձեալ նոյն հին Անեցւոց ստուերներ կը տարուբերէին: Մերք, պառաւներ՝ գաւազաններու վրայ կռթնած, շատ

1. Թէոփոսիոյ հեռութեանց Թանգարանին մէջ քառակուսի յոսպիս խաչքար մի կայ 857 տարուան յորում խաչին գատուանդանին վրայ, կայ փորագրուած. Բարխտա . . . Եսսրբ նաևն Գրիգորին և Իւր զատիքն. ՆՀՁ:

մանկամարդք և բազմաթիւ օրիորդք՝ « Առաւօտեան լուսնի նման յօնքերով՝¹ », և այլ շատ երիտասարդք նօրատէգ մօրուօք՝ « Սիրականթեղ և լուսափայլ աչերով », որը կը թիւփարէ, որը բեռներ կը կրէ... Առաջ գնացել էր նաւն, մութ-կապոյտ՝ այլ աստեղազարդ երկինքն վերև, ս'ի-կապուտակ ծոփն ստորև. ճանապարհորդք ամէնքն իրենց ննջարանները քաշուած, իմացայ որ ինձ ևս քաշուելու ատեն է. զի խոնաւ օդն կրնար վնասել: Ելայ նստած տեղէս, աչացս հանդիպեցաւ հիւսիսակողմն՝ երկնից վրայ մեծ արջ համաստեղութիւնն. որ անտարբեր՝ աղօտ լոյսը կու սփռէր ծոփուն երեսը. անտարակոյս ասկէ ութ դար առաջ սոյն այս համաստեղութիւնն իւր տեղը կեցած գիտած էր մեր Անեցւոց գաղթը:

Դու ինձ պատմէ երկնից Սայլիկ,
Մըտքէս ասի, կ'աղաչեմ քեզ.
Թուի որ այդպէս թառած երկինք
Ի ծով, ցամաք լոյս կու օրփռես.
Անշուշտ՝ տեսար, առաջ ութ դար,
Ծովուն երես երեր-տատան,
Մեր Անեցի քուրերն ու աղբար,
— Ո՞ւր գընացին կա՛մ ի՞նչ եղան: —
Դուն լըսեցիր նոցա գանգատ,
Անէժք և իղձք, լացն, հառաչանք,
Մըրմունջ սըրտից, երգ սիրակաթ.
— Ասա, դու ինձ մի խօսք միակ. —
Արդեօք նոցա սըրտին խորեր,
Դեռ կայ նըչան մի հայութեան.

1. Ռամկական զրիմեցի երգ.

Թէ չէ, աւանդ, բնաւ անտարբեր
Բոլորովին օտարացան :
Դուն լրսեցիր անշուշտ շատ հեղ
Նոցա բերնէ Անի անուն .
Եւ անըզայ, դու Եթնաստեղ,
Եղար նոցա սրբացաւերուն :
Օտար երկիր Թափառական,
Մեր եղբայրներ, անտուն, անտէր,
Ի ծով, ցամաք հալածեցան,
Դուն նայեցար միշտ անտարբեր :
Շատ պառականեր, այլ շատ ծերեր,
Տեսողք Անի շահաստանին,
Մինչև իրենց վերջի օրեր,
Անին մտքէ չըհանեցին :
Հարկաւ նորա երբ յիշէին
Այս մեծ քաղաքըն սիգապանծ,
Խոր կը խոցուէր հոյ սրբտերնին,
Այլ դու Յնացիր միշտ անըզած :
Այլ ես ըզքեզ վրկայ կ'առնում,
Ասող անբարբառ և անըզայ,
Ականատեսդ մեր ցաւերուն՝
Կեցիր քո տեղդ, մինչ ատեն գայ՝
Որ քու տեսած այդ թըլուառ ազգն,
Յօտարութեան ցանած ցըրուած,
Մէկ մ'արթըննայ ճանչնայ իւր յարգ,
Եւ նորոգի լուսով ուսմանց .
Այն ժամանակ դարձեալ այդպէս
Դուն անտարբեր երկինք թառած
Նայէ՛, լինիս ականատես
Յուսանորոգ ազգիս փառաց :

Սոյն և այսոր նման այլ մտածութիւնք գիրար

կը յաջորդէին մտացո մէջ մինչ քաղցրիկ քունն վերջ տուաւ ցնորից երևակայութեան:

Ա

ԵԱԼԸԹԱՅԷ ՄԻՆՉԵՒԻ ՅՕՏԵՍՍԱ

Առաւօտը մութնուլուսին՝ զմեզ կրող նաւն հասաւ Ղրիմու հարաւային ափանց նշանաւոր քաղաքը Եւալըթա՛, որ ամարանոց է արքայից Ռուսաց, ուր կը յաճախեն ամէն տարի հազարաւոր օտարականներ՝ կորուսեալ առողջութիւննին վերստին ստանալու, բարեխառն և ջերմին կլիմայի և առողջարար խաղողով: Երբ ահագին շառաչմամբ խարիսխ ձգեց նաւն ծովածոցոյն մէջ, իսկոյն վեր ելայ՝ վայելելու Եւալըթայի ակնապարար տեսիլը: Սա՛ յիրաւի իւր գեղեցիկ ծոցոյն մշտադալար լեռներով, գեղեցկաշէն ապարանքներով և ճենացի վերնատուններով, կրանիտեայ թումբերով, և այլն, բնութեան և արուեստի սակաւագիւտ տեսարանաց մին կ'ընծայէ. նորա 'ի ծովէ տեսիլն անմման է: Քաղաքն թեթև մշուշով քողարկուած էր, գունդագունդ ամպերն իրրև ասրաբեր գառանց խումբեր, քաղաքին կռնակը բարձրացած անտառին ծառոց գազաթը մակաղած էին: Մովը թէպէտ բոլորովին խաղաղ, այլ ոչ խոր յատակն արգելք էր մեծ նաւուն մօտենալու նաւամատուցին: Նաւուն այս

1. Նշանակելու կ'արժէ՝ որ Եւալըթա քաղաքի քաղաքը՝ երկոտասաներորդ դարու Նուզիացի իզբիս անունով աշխարհագիրն կը կոչէ ճալիթա տնուամբ:

գրիցս մէջ ճանապարհորդք առաւել զգալի կերպով կրնային վայելել բնութեան գեղեցիկ տեսարանը: Արևելք բոլորովին մանրչակագոյն հագուած էր. ծովուն երեսն՝ կարծես նոյն գունով երերուն մեծ կապերտ մի փռուած: Երկինք և ծով՝ մեծ պատրաստութեան մէջ էին, համարեա թէ մեծապատիւ հիւրի մի գալատեան սպասելով. սակայն ճշմարտապէս կ'արժէր այդ պատրաստութեանց՝ գալու հիւրն. արևելք տակաւ կարմիր, ասորաչէկ և փայլուն գոյն առաւ, քիչ ատենէն հոյ ճառագայթներ երեցան ծովուն երեսը, ճանապարհորդք ստիպուեցան կրկնադիտակնին վարառնուլ. զօրաւոր և հրաբորբոք աչք մի՛ կարծես նայեցաւ հորիզոնէն՝ որ շուտով սկաւառակի ձև առաւ. տեսնալու բան էր միգին և մշուշին հալածական փախչիլը, ծառոց վրայ մակաղեւալ ամպոց արագ արագ 'ի վեր բարձրանալը: Եայլթա՛ փոքրիկ քաղաքն՝ հիանալի տեւքով, խաչապսակ եկեղեցիներով, խումբ խումբ կոնաձև նոճիներով, դալարայեղց գիւղատուններով, ճեմելիքներով, իրրև մեծ ափսէի մի շարուած յախճապակի նաշխուն գաւաթներ. յայտնի և պայծառ երևեցաւ: « Ի՞նչ գեղեցիկ տեսարան, որպիսի՛ գեղապատկեր », կամայ և ակամայ, մեքենարար կը գրուցէին ճանապարհորդք, մանաւանդ 'ի միզապատէն և 'ի հեռաւոր հիւսիսոյ եկաւորք, որոց համար նոր և անսովոր էր այս տեսիլս, որք շնն տեսած ո՛չ յՈսկեղջերէ դէպ 'ի Պոլիս տանող հիանալու նեղուցը, և ո՛չ Նէապոլսոյ աննման ծոցը: Մինչև առաւօտեան ժամը ութ մնաց շոգեման 'ի Եայլթա, բեռ տալով և առնըլով, և ապա մեկնեցաւ 'ի Սևաստապոլ՝ ծովափէն քերելով:

Տակաւ Եայլթա ետև մնալով՝ մանրանկար պատ.

կերի երեւոյթ կը ստանար. իսկ առաջինս յերևան կու գային Լեւաիոյ արքունի ապարանք, Որիանտա՝ Կոստանդին Նախարարին Գիւղատունն, Ալուփքա՝ Վորոնցով (Ագուաեան) կոմսին կրանիտեայ դղեակն, և այլոց մեծամեծ իշխանաց ամարանոցք. մինչև որ հասանք ծովով Պայտառ կոչուած կրճին կամ լերանց անցքին ստորոտը: Նշանաւոր է այս տեղս. շատ ճանապարհորդք 'ի Տաւրիայ գալով, ծովու ճանապարհին կը նախադասեն ցամաքի երկար ճամբան 'ի Սևաստապօլէ Եւլըթա անցնելու, միայն այս կրճէն անցնելու հաճութիւնը զգալու համար: Վասն զի խիտ առ խիտ անտառները քարուխիճ և օձապտոյտ ճանապարհով անցնելէն վերջը, երբ կը հասնի ճանապարհորդն այս Պայտառ կամ Դուռն Պայտառի կոչուած անցքին բերան. յանկարծ առաջը կը բացուի համատարած ծովը, մէկ կողմանէ ալիքներն՝ հորիզոնին վրայ՝ երկնից կցելով, միւս կողմանէ կանաչագեղ բլուրները փայփայելով՝ անհանդարտ կոհակօք մինչև ցԵւլըթա:

Յառաջ վարելով ճանապարհը, կէս օրէն վերջը ժամը մէկին հասանք 'ի համբաւաւորն Սևաստապօլ: Այս քաղաքս առաջին Արևելիան պատերազմէն մինչև երկրորդն՝ քսան և վեց տարի անխնամ մնալուն պատճառաւ, ցարդ աղիտաւոր տեսարան մի կը ներկայացընէ ճանապարհորդին. մեծամեծ բազմայարկ անծածկ և աներդիք շէնքեր՝ իբրև մահազոյժ կանգուն կմախքներ, իրենց կոյր և անլոյս աչքերով և անլեզու բերանով, — անդուռն, և անփեղկ պատուհաններով, — յայտնի կը քարոզեն քաղաքին անցեալ փառքը, և առհասարակ անկառուն վիճակ իբաց աշխարհի: Նոյնը կը քարոզէ

Սեւաստապոլէ եօթը վերտ հեռաւորութեամբ շիջելափառն Քերսնէս¹, որ նախ քան զՔրիստոս հզօր հասարակապետութիւն, այժմ քարուքանդ հօղերու տակ ծածկուած:

Այլ ինքիրման որ նոյնչափ հեռաւորութիւն ունի 'ի Սեւաստապոլէ, որ երկաթի ճանապարհին վրայ կարկառեալ և իւր խոռոչաւոր քարահանքներով, նոր լեզուով հին և սրբազան խրատ մի կու տայ ճանապարհորդին: Խորհուրդ կու տամ, այդ տեղէն անցնելու ժամանակ՝ եթէ ոչ կօշիկներ հանել, գէթ զլուխ մերկացնել, բանալ. զի սուրբ է այդ տեղին ոռոգեալ քրտամբ և արեամբ առաջին դարու հայրապետաց հաւատոյս մերոյ: Հռովմայեցոց կայսրութեան ժամանակ 'Արիմ վայր աքսորանաց համարուելով Տրայանու և այլոց կայսերաց ատեն, շատագոյք քրիստոնէութեան, իբր քրէական յանցաւորք հոս աքսորուած են. ասա ճգնած և 'ի Քերսնէս ջրահեզց նահատակուած է Պօղոս առաքելոյն աշակերտ Աղեմէս, որ 'ի շարս Հռովմայ Սրբազանից երրորդն է զկնի Ս. Պետրոսի: Հոս՝ քարաժայռին մէջ քանդակուած սանդուխ մի՝ վեր կը հանէ զճանապարհորդը դէպ 'ի սրբոց խզիկներուր կան ժայռին մէջ կոփած քանդակուած կրկին գեղեցիկ վկայարաններ. յորոց վայելչագոյնն Ս. Աղեմայ անունը կը կրէ. աւանդութիւնն կը վկայէ՝ որ սեղանին վրայ, վայելչաձև խաչն՝ սրբոյն մա-

1. Ենորհիւ Կանդուցեալ (1883) փոխանախազակին Օտեսայի հնագիտական ընկերութեան Ն. Մուրզաքէշի, հին քաղաքին յատակը յերեւան ելաւ, տեղ տեղ միւսին և մտքմտքեան, քանդակագործ սեանց խաբիսիներ և խոյակներ, և այլն:

տանց գործը լինի: Այս մատուռն շատ գեղեցիկ է, համեմատ փուներով, և այլն: Այսոր մտ փոքրիկ մատուռ մի ևս կայ, որ Մարտինոս քահանայապետին կ'ընծայուի, որ նոյնպէս արքայութեան 'ի Հռովմայ 'ի քարահանքս ինքիրմանի:

Սևաստապօլ իր պատմական մահարձանօք՝ Քերտոնէսի և իրքիրմանով, Մալախով բարձամբ և հրաշլի նաւահանգստով 26 տարի երեսի վրայ մնալէն վերջը, այժմ վերստին տէրութեան մեծ խնամքով կը շինուի, կամ թէ գրուցեմ իբրև փիւնիկ հաւ՝ իւր մոխրէն կամ աւերակաց մէջէն՝ նորափետուր կը զարդարուի. վերջին երեք տարինբրուս միջոց 700 էն աւելի մեծամեծ շէնքեր, քան զառաջինս առաւել վայելչութեամբ կը փայլին: Կրանիտեայ սալայատակն՝ առաջուան կրախառն ամպի նման փոշին իջոյց, քաղաքին ամէն կողմ քաղցրահամ ջրոյ ազուգայք և շատրուանք՝ հարաւային բարկ արևուններգործութիւնը մեղմելով՝ ոգի կու տան դալարեաց և ծառոց, միով բանիւ այդ բնութեան նշանաւոր անկիւնն՝ սակաւ պիտի ստանայ իւր վայելուչ կերպարանը, եթէ վերստին քանդիչ ձեռք մի շապականէ զնա:

Շատ չի կենար նաւն 'ի Սևաստապօլ. երկու ժամէն մեկնեցաւ յԵւպատորիայ, ուր ժամը եօթին հասանք: Այս քաղաքս թէպէտ և ունի իւր առանձին յատկութիւնները՝ մաքուր և առողջարար օդոյն և քաղցրահամ ջրոյն հետ 'ի միասին կապտամորթ զառներ, որոց միսն քարցրահաշակ լինելէն զատ, անուանի և յարգի է սոցա մորթն ընդ համօրէն Ռուսաստան. մեծամեծ աղական լիճեր, և յօդացաւի դէմ աղային ցեխեր. սակայն և այնպէս Ղրիմու յետամնաց քաղաքաց կարգէն է, յամբ և

դանդաղ առաջ կ'երթայ: Նշանաւոր է 'ի սմա փառագմբէթ Խան-ճամին, 'ի Թաթարաց մնացեալ մըզկիթն. սակաւաթիւ են հոս ազգայինք, Էլմիածնական Հայք ունին վայելուչ եկեղեցի, իսկ Հայ-կաթօլիկք մատուռ մի փոքրիկ: Նաև ժամմի հոս մնայլն վերջը, յառաջ վարեց ընթացքը դէպ յՍտեաս, և 18 ժամ միակերպ ընթանալով՝ միւս կէսօր՝ ժամը 12ին հասանք յՍտեսաս:

Բ

ՅՕՏԵՍՍԱՅԷ ՄԻՆՉԵՒ ՅԿԱՄԵՆԻՑ

Ստեսաս՝ 'ի Ռուսաց Հարաշային գեղեցկուհի (южная красавица) վերաձայնեալ, զի հարաւային և նոր Ռուսիոյ մէջ նմանն չկայ, նոյնպէս ևս ընդ համօրէն Ռուսաստան, յետ մայրաքաղաքին Պետրբուրգի՝ բարեչէն քաղաքաց առաջինն է՝ վաճառաշահութեամբ ծաղկած: Իննսուն տարի առաջ Ստեսսայի տեղ (1794) Հաճի-Պէյ անունով փոքրիկ գիւղ և ամրոց մի կար, ուսկից՝ 'ի Լեհաստանէ և 'ի Ռուսաստանէ աւարն և կողոպուտ 'ի Տաճկաստան կ'անցնէր. զի Հաճի-Պէյ՝ Տաճկաց ամրոց էր: Այժմ այդ փոքր գիւղին և ամրոցին տեղ կանգուն կայ 350,000 բնակչօք փառաւոր քաղաք մի, որ նախանձորդ է Փրանկոց մայրաքաղաքին, յար և նման սալայատակով, ջրոց ազուգաններով ամէն կողմ, մարգերով, շատրուաններով, մեծագործ ճեմելեք. ունի իրեն արքունի պալատը (palais royal), համալսարան, թանգարան, հնագիտաց ընկերութիւն, փառաւոր շէնքեր, եկեղեցիք և այլն:

Եկեղեցեաց մէջ Հռովմէականաց եկեղեցին փառաշէն է, և յաճախութեամբ պատուական քարերու նմանութիւն կը բերէ Վենետկոյ ճոխ և վայելչազարդ եկեղեցեաց: Սակայն այնու ամենայնիւ, դեռ շատ հեռու է իւր նախատիպէն, շատ բան դեռ կը պակասի Փարիզի հասնելու: Վաճառականութիւնն մեծ է, մանաւանդ անգործ կամ հում ապրանքով, այնպէս որ տարուէ տարի Օտեսայի մէջ եղած շահավաճառն՝ որ 200 միլիոն բուրջեաց կը հասնի, կէսը՝ այն է 100 միլիոնն՝ արտասահման կ'երթայ, ցորեն, իւղ, աղ, բուրդ, և այլն: Օտեսա կէս օր միայն մնացի. օգոստոս 19, երեկոյեան ժամը իննին, երկաթուղւով ճամբայ ելայ դէպ 'ի Փոտոլիա: Օտեսայէ երկաթուղւով մեկնողաց 'ի Փոտոլիա՝ խորհուրդ կու տամ. եթէ անպատճառ փութալու հարկ չունին, ուրբաթ երեկոյի ընթացքով մեկնիլ, զի միւս օրեր՝ ինչպէս ինձ պատահեցաւ այս անգամ, իսրայելացւոց բազմութիւնն՝ բոլոր ճանապարհին մէջ անհանգստութիւն և նեղութիւն կը պատճառեն. աստի մինչև ցկամենից կը վխտան որդիք իսրայելի. իսկ կամենից՝ որ երբեմն Հայոց վաճառաշահ քաղաք էր, այժմ բոյն է շրէից:

ՅՕտեսայէ կամենիցի մերձաւոր երկաթուղոյ կայարանը Փրոսքուրով քաղաքն է, անտի ցկամենից հարկ է կառաք երթալ. միւս օր կէս օրին հասայ 'ի Փրոսքուրով. անկարելի էր նոյն օրը հասնիլ 'ի կամենից, զի դեռ 90 վերստ ճամբայ կար ընելու: Օտար և նոր աշխարհք էր ինձ համար Փոտոլիա, ցանկալի էր լոյս աչքով ճանապարհորդել. բարեպատեհ դէպք մի՛ այս նպատակին նպատաւոր եղաւ: Օտեսա ծանօթանալով Սթանբուլիչ

մտկանուամբ բժշկին հետ, յանձնարարական նա-
մակ մի տուաւ ինձ առ իւր եղբայրը. որ կալուա-
ծատէր էր Փրոսթուրովէ 'ի Կամենից ճանապար-
հին վրայ:

Երկաթուղւոյ կայարանէն կառք մի վարձեցի
մինչև Սթանբուլի գիւղը, որ 15 վերտտ էր, և երկու
ժամէն հասայ 'հոն: Ենորհակալութիւն մեծ՝
հիւրընկալ պարոնին, որոյ մարդասէր ասպընջա-
կանութիւնը վայելելով, գիշերս հոն անցընելէն
վերջը, վաղ առաւօտու ճամբայ ելայ: Սքն բարե-
խառն և քաղցր կը շնչէր, ցորենաչատ դաշտերն
հնձուած, այլ տակաւին որաններն բարդ բարդ,
դէզ դէզ դաշտաց վրայ էին:

Այն Փոտոլիա կամ Ռւքրայինա կոչուած աշխար-
հին մէջն էի, զոր տեղացի Փւքր-Ռուս Թարաս
Շեւչենքոյ քերդողն՝ զանազան գողտրիկ տողերով
երգած և գովասանած է. այն հացաչատ և ջրարբի
աշխարհն, որ համբարանոց է արեւմտեան Ռուսիոյ.
բաց կեցած էր առաջս. այս այն աշխարհն էր՝
որոյ ծոցը՝ ըստ քերդողին դղըչալով կը խայտայ
ալևորն Տներեր: Առաջ կ'երթայի՝ լայն ծառազարդ
ճանապարհին վրայէն, որոյ վրայ հովանի կ'առնէին
մեծամեծ բարտի, նշարի, կակդի և հաստաբուն
կեռասի ծառեր: Դաշտին մշակների նոյն պուետին
Շեւչենքոյի երգած « գառու մագերով Քողաքներն »
էին, « մրայօն և սևաչեայ Քողաքուհիք », ցորենի
որաները բեռնաւորած սայլերու վրայ 'ի կալ՝ կա-
սելու կը տանէին: Ճանապարհին վրայ մարդաչատ
զեղեր, բարեկարգ անտառներ՝ մերթ ընդ մերթ
իրարու կը յաջորդէին, պտղատու պարտէզներ ա-
ռատ մեծամեծ խնձորներով և տանձերով և այլ
պտղաք. փորձեցի այդ պտուղներուն համը, այլ

տեսքերուն համեմատ չգտայ. զի հարաւոյ բարկ արևուն ճառագայթներէն զուրկ լինելով, ոչ Ղրբ- մու պտղոց քաղցրութիւնը ունին և ոչ հոտը: Հանդիպած գեղերու մէջ մասնաւոր յիշատակելու արժանի է Թիննա կոշուածն, ուստի 40 վերատ է Կամենից, փառաւոր է գիւղիս եկեղեցին, և համ- բաւաւոր 'ի Փոտոլիա՝ հրաշագործ պատկերաւ Տիրա- մոր: Եկեղեցւոյն մեծապատիւ կանոնիկոս ժողովըր- դապետն Լըսեցքի, դրիմեցւոյ համար հետաքրքրա- կան դէպք մի կարդաց եկեղեցւոյն տարեգրութեան մէջ. զոր կ'արժէ հոս յիշատակել: Ասկէ 100 տարի առաջ ժամանակին ժողովրդապետն զրած է, որ Ղրբիմու վերջին Թաթարաց Շահան-Պերէհ խանն, Ռուսաց Թերակղզւոյ տիրելէն վերջը, Մոսկուա գնալու ժամանակ իջևանած է այս Թիննա գիւղիս մէջ, եկեղեցւոյս աւագ երէցն հիւրընկալելով զնա՝ ճաշ մի տուած է, առաջնորդարանին ետև մեծա- մեծ կակղի ծառոց ստուերին ներքև. դարևոր կակղիք դեռ ևս կանգուն, մեղմ հովիկին շնչելով, ներդաշնակ խօջիւն մի կը հանէին, իբր թէ հաս- տաւելով կանոնիկոսին կարդացածը. Շահան — Պերէհի համար այսպէս կը գրէր տարեգիրն. « Շատ կարգաւորեալ մարդ էր, լատին և իտալացի լեզուները համարձակ կը խօսէր »:

Պատուական կանոնիկոսն շթողուց՝ որ առանց իրեն մօտ ճաչելու՝ առաջ երթամ. երբ առացի թէ՛ Մութին կը մնամ. — Աւելի լաւ կը լինի, ասաց, զի ճրագի լուսով Կամենից « առաւել չքեղ կ'երևնայ, քան ցօրեկ ատեն »: Երեք ժամ մնացի գիւղիս մէջ, այլ գոհ եմ մեծապէս, զի պատ- կառելի երիցուն կենցաղավարութիւնն ինձ մեծա- պէս յինութեան պատճառ եղաւ: Քանի՛ քաղցր

է լսել բազմափորձ և խոհական վարդապետի խօսակցութիւնը:

Նախընթաց օրը Կամենիցի քառաձի ֆայետոն մի ուղևորներ բերելով 'ի Թիննա, պարապ յետս պիտի դառնար. աւագ երէցն խորհուրդ տուաւ՝ փոխանակ փոստի, այդ ֆայետոնը վարձել. կառավարն աժան գնով յօժարեցաւ տանել զիս, որով բաղդ ունեցայնոյն օրը օգոստոսի 20 ին, փառաւոր քառաձի ֆայետոնով մտնել, յետին ժամին, երբեմն մեր Անեցի Հայկազանց հոշակեալ քաղաքը:

Գ

Կ Ա Մ Ե Ն Ի Ց

Հեռուէն շերեփր Կամենից, Թէպէտ և բարձր ժայռի վրայ շինուած է. զի ևս բարձրագոյնք զնա կը շրջապատեն: Տասն վերստ մնացած, յաջմէ ճանապարհին կ'երևի Հայք (Արմեանէ) կոչուած գիւղն. որ ըստ վկայելոյ Անտոնի, հնախօսին Կամենիցու, Հայոց սեփականութիւն տրուած է ժամանակաւ (1280) Լեւոն Դանելովիչ Կալիցիոյ Նախարարէն, Հայոց նմա մատուցած մեծամեծ ծառայութեանց փոխարէն. աստի՛ ժամանակ անցնելէն վերջը գաղթեր են Հայք 'ի Կամենից:

Թէպէտ և այժմ գիւղիս մէջ Հայ չկայ, սակայն լակ Արմեանե անունն քաղցր կը հնչէ յականջս ազգայնոյ: Դեռ ևս առաջ գնալով՝ յերևան ելաւ Կամենից մասամբ, արուարձանօք, ապա իւր ամենայն պըրանօք, լուսաւորեալ 'ի վերուստ և 'ի ներքուստ:

Քաղաքն հեռուէն հիշող ամփոփատեր ձև ունի . բարձր ժայռի վրայ, խիտ առ խիտ փողոցներով, կարգ կարգ տուններով . այս ժայռն օրինաւոր կողքի մի է, որոյ շորս կողմը կը պատէ Սմոթաիշ գետնն, այնպէս որ քաղաք մտնելու համար, հարկ է կամրջէ անցնիլ : Տանց պատուհաններն կարգաւ լուսաւորած էին, զի յետին ժամ էր . հեռուէն կարծես յերկինք կը հասնէր նոցա լոյսն . այս լուսերն կ'անդարձաւնային Սմոթաիշի ջրերուն մէջ, այնպէս որ լուսաւոր գունտ մի կ'երևնար, համատարած և ընդարձակ մթութեան մէջ : Քաղաքս այս ձևոյն մէջ տեսնելով միտքս ինկաւ պատուական կանոնիկոսին խօսքն, և սրտանց շնորհակալ եղայ հեռուէն :

Փոտոլիոյ գլխաւոր քաղաքն է Կամենից, հին Պետրիշաւրոսի աւերակաց վրայ շինուած՝ Անեցի գաղթականաց ձեռքով, և 600 տարի ճանչցուած իբր Հայոց քաղաք :

Պարսպապատ է, բերդերով և աշտարակներով ամրացուցած . երբ կամրջէ մի անցնելով կրկնաշարկ բերդադռնէն ներս մտաւ մեր կառքն, ձիոց սմբակաց տրոփիւնն, բերդին խուլ արձագանգքն, օայլորդաց և կառավարաց կանչն և աղաղակ . չէն և մեծ քաղաքի տպաւորութիւն գործեցին : Թէպէտ և գաւառին գլխաւոր քաղաքն է, այլ մեծ քաղաք կարելի չէ զրուցել, բնակիչն հազիւ 20,000, տեղը նեղ, ժայռի վրայ կարգ ըստ կարգէ տներ : Տակաւ Սմոթաիշի միւս եզերը կ'ընդարձակի քաղաքն լայն փողոցներով և մեծ հրապարակներով : Հին, կամ Սմոթաիշի մէջ ամփոփուած Հայոց քաղաքն՝ Իտալիոյ հին քաղաքաց ձևն ունի, կրկին և եռայարկ տներ, սալայատակ նեղ փողոցներու վրայ . այդ

պատճառաւ օգն միշտ ապականած է, միւս գլխաւոր պատճառն օգոյն ապականութեան իսրայելի կեղտոտ որդիքն են, որ ամէն կողմ կը վխտան, քաղաքին կիսէն աւելի բնակիչքն Հրեայք են:

Այլ ինձ նոր հայրենիք երեցաւ այդ քաղաքն՝ նոյն հասած գիշերս. այդ սրտահաճոյ զգացմանս ուրիշ պատճառ չկայ, բայց եթէ պատմական ճշխութիւն և քաղաքործութիւնք հին կամենիցի ազգայնոց:

Կանգ առաւ զիս կրող Ֆայետոնն՝ ընդարձակ, երկայնաձև, սալայատակ հրապարակին արևելեան ծայրը, փառաւոր կրկնայարկ շէնքի մ'առաջ:

Այդ այն հրապարակն էր՝ յորում շատ դարեր վեր վար ճեմել են Հայք, զոր ցուցել են արևելեան վաճառքով, որոյ շորս կողմը փառաւոր տներով զարդարել են. այդ հրապարակին վրայ էր Հայոց դատարանն (Մագիստրատն), յորում հայ դատաւորք մահու և կենաց վճիռներ տուել են. այդ հրապարակին արևելեան ծայրը, դէպ 'ի Հայոց փողոցը, դեռ ևս կանգուն կայ Հայոց փառաւոր եկեղեցին, հրաշագործ պատկերաւ Տիրամօրն Հայոց: Այդ եկեղեցւոյն առաջնորդարանին կամ վարդապետանոցին դրան առաջ կանգ առած էր Ֆայետոնն. իսկոյն ընդ առաջ վազեց երիտասարդ մի, որ էր լուսարար եկեղեցւոյն, և իմ ճանապարհի պարկս կառքէն վար առնելով՝ առաջնորդեց ինձ առաջնորդարանին երկաթի դռնէն դէպ 'ի ներս, սանդուխներէ վեր ելնելով շէնքին երկրորդ յարկը, խնդրեց որ սակաւ մի սպասեմ. « Աւագ երէցն տունը չէ, ասաց, այլ շուտով կը դառնայ »: Մինակ մնացի քանի մի վարկեան այդ անծանօթ շէնքին մէջ, որ իւր ամրակուռ կազմածովն, երկայն

արահողն և առանձին առանձին սենեկներով, ամէն սենեակ որմնամէջ դարանով, յայտնի կը ցուցընէր յորոց և ինչ վախճանաւ շինուիլը: Նախ՝ շինողաց ճոխութիւնն յայտնի կ'երևնար, զի փող չէին խնայել ամրութեան և հաստատութեան մասին. իսկ առանձին դէմ ընդդէմ միմեանց սենեակներն իրենց դարաններով, անբարբառ կը գրուցէին որ իրենք արեղայից և վարդապետաց համար շինուած են: Այլ ես զճեր տեղ փնտռեցի այդ տանը մէջ երբեմն բնակող Ռոշքան, Մուրատեան, Ստեփանեան, Վարդերեսեան, Տէր - Գարրիէլեան, Թադոսեան վարդապետաց ստուերը կամ շուքը՝ որ մէկ անկիւնէ երևան...:

Շուտով եկաւ եկեղեցւոյն երէցն Տէր Առօրիս Շչեփայնաքի, լեհ ազգաւ, զոնէ այժմ այնպէս ճանչցուած. հաւանական է որ սա ևս հին Անեցւոց սերնդոցմէ լինի, այլ այնպէս այլայլած, որ քանի մի բառ հայերէն յօղելէն զատ, և մարդասէր հիւրընկալութենէն, որ ազգիս սեփական յատկութիւնն է, ամենեւին այլ նշան չունէր հայութեան:

Հարկ եղաւ ինձ այդ հայաչէն և հայարնակ վարդապետանոցին մէջ օտար լեզուաւ խօսիլ և հարցընել, մերձաւոր նպատակիս մասին:

Գիտէի արդէն որ կամենիցի վերափոխման Տիրամօր՝ Հայոց եկեղեցւոյն մէջ՝ մեծահանդէս ութօրէիւ կը տօնուի Աստուածամօր փոխման տօնն, համանուն եկեղեցւոյն մէջ տօնելով զփոխուած Վուսին 'ի Թէոդոսիա, կը փափաքէի մասնակցել նոյն տօնական հանդիսին 'ի տաճարի Աքանչեւազօրծ Տիրամօրս 'ի Կամենից:

Տէր Առօրիս ինձ իմացուց՝ որ վաղը վերջն է հանդիսին: Յօգնած էր ճանապարհէն, քաղցր

քունն (հայրենի ստացուածոց ներքե), որոյ եղանակին մէջ տարբերութիւն չկայ, վերջ տուաւ մեր պլախօս բարբառին:

Դ

ՈՒԹԵՐՈՐԻ ՕՐ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԻՆ

Աւաւտուն կանուխ իջնալով վանքին սանդուխներէն և անցնելով մէջ ընդ մէջ կրկին պարբարապատ բակերէ, մտայ աւանդատան դռնէն Աստուածամօր տաճարին դասուն մէջ. խուռն բազմութիւն եկեղեցւոյ մէջ ժողոված կը սպասէին. աւագ խորանը՝ որուն գոգաձևին մէջ զետեղուած է հրաշագործ պատկերը, ծածկուած կերպաս վարագոյրներու ներքե, բազում կերոններով բոցավառ կը փայլէր: Զգեստաւորեալ քահանայ մի, երկայն գաւազանով բացաւ վարագոյրը. ցոլացին երեսք հրաշափառ կուսին, և բազմութիւն հաւատացելոց, 'ի գուճս անկեալ առաջի Տիրամօրս Հայոց, ուրախութեան և ցնծութեան երգով լցին տաճարը: Սոյն այս օրն համարեա թէ ամբողջ 'ի պատիւ պաշտաման Աստուածամօր նուիրուած էր: Պատարագք, ժամասացութիւնք, երգք, նուագք, թափօրք և քարոզք, մէկզմէկ կը յաջորդէին առաւօտէ մինչև երեկոյ. սակայն այս ամենայն պաշտամունք օտար լեզուով կը լինէր: Դասին մի անկին քաշուած, փափաքելի էր ինձ հասուցանել յունկն Տիրամօրս՝ ուխտս և իղձս, աղերս և պաղատանք, սակայն վրդովեալ խորհուրդքս զիս կը տազնապէին. մերթ տխուր և մերթ զուարթ

մտածմունք իրարու կը յաջորդէին: Կը տեսնայի աչացս առաջ փառաւորեալ Հայոց եկեղեցի, Լուսաւորչի փառաւոր պատկերաւ, արձանով և արծաթապատ նշխարով զարդարուած. այլ այդ տաճարին մէջ և ոչ մի բառ հայերէն չէր հնչել, Լուսաւորչի լեզուն հասկըցող չկար, Լուսաւորչի որդիք անծանօթ էին իրենց լուսատու հօր բարբառոյն, կը կոտրէր սիրտս: Այլ միւս կողմանէ տեսնալով Աստուածամայրս Հայոց, փառաւորեալ 'ի բազմախուռն ժողովրդոց, հանգչած խորանին ոսկեզօծ գոգաձևոյն մէջ, բոցավառ կերոններ առաւօտէ մինչև ցերեկոյ առաջը բորբոքած, բուն պատկերին օրինակը վայելչաձև մի գահաւորակի վրայ յարմարցուցած, որոյ շորս ծայրը սպիտակագգեստ կուսանաց ուսերուն վրայ, որք թափօրին առջևէն պատկառանք կը կրէին, բազմութիւն ժողովրդոց գոհութեան երգի բերան, ձեռքերը վառեալ ճրագներով՝ տաճարին սրահները կը թնդացընէին, ուրախութեամբ կը լեցուէր սիրտս, և ես ձեռքի ճրագս վեր բարձրացընելով, թափօրին խառնուած մասնակցի կը փափագէի փառաբանչաց Տիրամօրս:

Քառակուսի է Տիրամօրս պատկերը, և կանգնուչափ մեծութեամբ տախտակի վրայ նկարուած է. ցորենատիպ է Աստուածամօր երեսաց գոյնն, աչքերը մեծ և զօրաւոր նայուածքով, ձախ գիրկն է Աստուածամանուկը. սև լաչակ գլխին առած, նոյնագոյն վերարկու՝ լայն թևերով հագած: Գլխոյն վրայ մանեկաձև վերտադութիւն մի կայ, զոր երեւակայութեամբ կարելի է կարգաւ՝ Աստուածամայր. այլ իսկապէս առ այժմ անվերծանելի, թերևս անլի վարժ և կիրթ աչքերու պէտք ունի:

տառերէն ոմանք մեծ նմանութիւն ունին մեր երկաթագիր տառերուն: Սակայն ակամայ կամօք պէտք է խոտովանիլ, որ պատկերին նկարչութեան եղանակը աւելի յունական է, քան թէ հայկական: Ոմանք այնպէս կը կարծեն, որ մեր նախնիք՝ Անեցիք՝ գաղթելու միջոց՝ 'ի Սեւաստօպօլ Տարիոյ ձեռք բերած են այդ պատկերն. այլ 'ի վերայ այս ամենայնի՝ Հայոց է Տիրամայրս, յազգայնոց և յօտարաց այնպէս ճանչցուած շատ դարերով: Այլք ոմանք Ս. Ղուկաս աւետարանչի մատանց գործ կը համարին, ուրիշ այլ պատկերաց հետ. այս կարծեաց զխաւոր պատճառը՝ ես այնպէս կարծեմ թէ են բազմապատիկ հրաշագործութիւնք, զորս հաճել է Աստուածամայրն ցուցանել պատկերիս միջոցաւ՝ Չերմեռանդն հաւատացելոց: Զի ազգիս մէջ աւանդութիւն կայ, որ պատկերի միոյ հրաշագործ լինելուն զխաւոր հանգամանքներէն մէկն ևս նկարողին սրբասէր վարքն են: Առ այժմ՝ սքանչելագործ պատկերիս մասին այսչափովս զոհ լինելով՝ խօսինք Հայոց եկեղեցեաց վրայ, որք ցարդ կանգուն կան 'ի կամենից. յետոյ մանր կը խօսիմք այս Հրաշագործ Պատկերիս վրայ:

Ե

ԵԿԵՂԵՑԻՔ ՀԱՅՈՑ

Կրկին են եկեղեցիք Հայոց 'ի Կամենից, մին փառաւոր և հոյակապ 'ի պատիւ Վերափոխման Աստուածամօր, ուր դրուած կը պաշտի Հրաշագործ պատկերն. երկրորդն Ս. Նիկողայոս անշուք մատուռ, որ այժմ Ռուսաց ձեռքն է:

Առաջինը՝ հին ատեն նուիրեալ է յանուն Աքան շելագործ հայրապետին, և երկրորդն 'ի պատիւ Աւետման Ս. Կուսին: Ահաւասիկ ինչ կը գրէ այս երկրորդիս մասին հնագէտն Ռոլլէ¹. « Երեքտասաներորդ դարու մնացած, որով յառաջ քան զտիրել քաղաքիս (Կամենիցի) Կորիաթովիչ նախարարաց, որք էին սերունդ Լիթվայի կոմսին. աշագործեան արժանի է վաղեմի սրբավայրս, որ շատ ու շատ յեղափոխութեանց ենթակայ եղած է: Այդ է, 'ի Հայոց յանուն Աւետման կուսին կանգնեալ եկեղեցին, որ այժմ կը կրէ զանուն Ս. Նիկողայոսի: Կը պակասին մեզ զբաւոր յիշատակարանք, որով չեմք կարող դրականապէս հաստատել անոր ԺԳ դարու լինելը. այլ Հայոց գաղթականութեան միջոցը 'ի Փոտոլիս, և նոյն իսկ

1. Հեղինակս գրուածոց մէջ Անտոնի տնունը կը զործածէ, որ է հմուտ հնագէտ ֆոտոլից պաւստին. գրած է Յէլ-թալ-բանդ ֆոտոլից և Վարդաղիտ վերնագրով ատարներ. գարձեալ Դորոնովիչ Ռուս երեքը գրած է ֆոտոլից Հայոց վրոց:

չէնքին նարտարապետութիւնը կը համարձակեն մեզ առ այն: Առաջին անգամ 1009 ին. Ռուս նախարարը հրաւիրած են զՀայո 'ի Քիւս, յօգնութիւն 'ի պատերազմունս ընդդէմ Խորխան Բալեւրաւի, որ այն ատեն արչաւելով կ'ապականէր նոցա երկիրը: Հայք 'ի Քիւս անցան ընդ այլ մասունս Ռուսաց աշխարհին և բնակեցան յԻվով և 'ի Լուցք:

Երկրորդ անգամ զՀայո յօգնութիւն կանչեց, Թաթարաց հետ մէկտեղ՝ 1280 ին Լեւոն Դաննելովիչ Կալիցքի, ընդդէմ պատերազմաց գրացի ազգաց. Հայք այն պատերազմերուն հաստ թիկունք եղած են Լեւոն Դաննելովիչի. զի իշխանս երկիրններով վարձատրած է նոցա ծառայութիւնները: Հայք հաստատած են իրենց բնակութիւնը Կամենիցի մօտ, այն տեղը՝ որ մինչև ցայսօր Արմեանէ կը կոչուի: Անշուշտ այս միջոցիս շինել են նոքա իրենց առաջին եկեղեցին, հին և քարուքանդ Պետրիդաւրի (Կամենիցի) աւերակաց վրայ, Թաթարաց տիրապետութեան միջոց... Ինչպէս չըջարնակ ժողովուրդք, նոյն և բնակիչք Արմեանէ գիւղին, աւանդութեամբ գիտեն՝ թէ գիւղին նախկին բնակիչքը գաղթած եկած են 'ի Հայաստանէ...: Հետևաբար կարող ենք ասել, որ գիւղիս նախկին բնակիչքը, թողլով իրենց ազգին անունը գիւղին ժառանգութիւն, անցած են 'ի Կամենից-Պետրիդաւրիս, և նորա աւերակաց վրայ շինել են իրենց բնակութիւնը: Յայտնի է՝ որ այն ատեն սակաւաւոր եղած են Հայք, զի նոցա երրորդ գաղթականութիւնն 'ի Հայաստանէ 1331 ին, բազմացուցած է նոցա թիւը, Կորիսթ իշխանի պայազատաց միջոց: Մեր կարծեմք՝ թէ Հայք թէպէտ և սա-

կաւաթիւ. նախ քան գերբորդ գաղթականութիւնը շինած են այս եկեղեցիս, թէպէտ և շունենամ յայսմ մասին գրաւոր ապացոյց մի: Ճանչնալով զՀայս և նոցա խիստ կրօնական սկզբունքը, շեմք կրնար համաձայնիլ, որ նոքա տեղւոյ մի վրայ հարիւր տարի բնակելով՝ շունենան իրենց աղօթա-տեղին, մինչդեռ այլ տեղուանք նոցա փոքրախումբ ժողովրդոց, ինչպէս Ղրիմու թերակղզւոյն մէջ կամ Կովկասու սարերուն վրայ՝ առաջին շինու-թիւնքը՝ եկեղիցիք են: Հուսկ ապա եկեղեցւոյս ճարտարապետական ոճը՝ որոշ և յայտնի ապացոյց մի է նորա խորին հնութեան¹:

Չուաձև է շէնքն, ճակատը վերուստ ՚ի վայր աւղղաբերձ հատած. ստուար պատերն անարգիլ յենարաններ ունի, լուսամուտներն սակաւաթիւ, երկու կողմէն մի հատ, փոքրադիր և անմիջապէս կից կամարին, որք աւելի բերդերու որմնածերպի՝ քան պատուհանի ձև ունին: Ի միջավայրի է եկեղեցիս, նորա շորս պտոյտը կան գերեզմանաբարինք, որոց շուրջը որմած: Եկեղեցւոյս շինողաց միտքը յայտնի կը ցուցընէ այդ որմածը. զի նոքա պէտք ժամանակին՝ նախատեսեցողած են՝ աղօթից նուիրեալ անկիւնս՝ ի բերդ փոխարկելու՝ ուր կարելի լինի պաշտ պանուիլ, պատերազմի իրաց անտեղեակ, յարձակող թշնամւոյն դէմ. դարձեալ այդ եօթնկանգնեան պարիսպն արգելք է թշնամւոյն, որ չի տեսնար ինչ կը լինի պարսպապատին մէջ: Բարձրաբերձ զանգակատան պակասութիւնը՝ ցոյց է այն ստոր-

1. Թեոդոսիա քաղաքին արգելանոցին մէջ գտնուած Հայոց դատարկ եկեղեցիներուն և այս եկեղեցւոյս շինու-թեան ոճոյն մէջ՝ շատ մերձաւոր նմանութիւն կը նշմարուի:

կարար երկիւղին, զոր միշտ կրած են և կը կրեն քրիստոնեայք, որոց հարկ կը լինի կանգնել իրենց աղօթատեղին այն աշխարհաց մէջ . . . : Ամենայն ինչ 'ի տաճարիս պարկեշտին է և աղքատ. չկայ առարկայ մի որ աչքի զարնէ : Տաճարիս ներքին կողմը նսեմ է և մթին, և այնպէս անձուկ որ հազիւ հարիւր մարդ կը հաւաքի : Գերեզմաննոցին արևելեան կողմէն եթէ դիտելու լինիս, այնպէս կ'երևայ՝ որ եկեղեցիս խորշի մէջ մտած է՝ շերանալու համար » : Այս է երբեմն Հայոց Աշտուհան Կոչսիև և այժմ Ռուսաց Ս. Նիկողայոս մաարան ստորագրութիւնը :

Մեր ազգային հատուկտոր յիշատակարաններէ ևս կ'երևի համաձայն կարծեաց Ռոյլէի, որ այս եկեղեցւոյս տեղ՝ վաղեմի փայտաշէն եկեղեցի մի կայ եղել. « Էր եկեղեցիս այս փայտաշէն, վաղուց և հին ժամանակի » . ուր ապա, նոյն հիման վրայ, 1597ին քարաշէն կանգնել են Կամենիցի ազգայինք : 1602ին հրդեհին միջոց՝ մեծ փնաս կրած է եկեղեցիս . զոր ապա բազում գովեստից արժանաւոր Պ. Միխնոյ երէցփոխանը նորոգել է . ինչպէս եկեղեցւոյս նոյն և եպիսկոպոսարանին երդիքը ծածկելով, և շորս պտոյտի պատը նորոգելով և սպիտակ բռելով : Այսպէս կը գրէ ՌԺԱԹՎ. յիշատակարանը, « Պր. Միխնոյ երեսփոխանն . . . վերևս ծածկել ետուր Ս. Աշտուհան Աստուածածնայ եկեղեցոյ . նոյնպէս և քարուկիր եպիսկոպոսարանին վերևս ծածկել ետուր . . . » :

Մինչև մեր դարուն սկիզբը (1811) այս եկեղեցիս ազգիս կառավարութեան ձեռքն եղած է, իրբև մատուռն կամ դուստր մեծ վերափոխման եկեղեցւոյն, և Հայ քահանայք եղած են ժամաւ

սացք: Յետոյ տրուած է յունածէս հռովմէադաւան Ռուսաց կամ ունիթից, որք և նուիրած են յանուն Սբանչեւագործ Հայրապետին, սորա այսինքն ունիթք 1840, մայիսի 15, Ռուսաց սինոդին հպատակելով. անցած է Հայոց եկեղեցիս Ռուսաց ձեռքը, ուր կը պատարագեն ցարդ նոցա երիցունք: Այս եկեղեցին նշանաւոր է ազգիս համար այնու ևս, զի գերեզման է սա ազգիս բազմավիշտ Հայրապետաց մէկուն. Միլթիսեղեկ Վաթողիկոսի, որ թողլով կաթողիկոսական աթոռը, շորս տարի վարած է յիլով թեմակալ եպիսկոպոսի պաշտօն, և ապա զալով 'ի Վամենից վախճանած է, 18 մարտի 1627ին. և թաղուած է այս եկեղեցւոյս մէջ, աւագ խորանին աջկողմը, հիւսիսային պատին ներքեւ, ուր ցարդ կ'երեւի պատին վրայ խորաքանդակ արձանը՝ ննջման ձևով, զլուխը հայրապետական թագ. յաջին աւետարան: Տապանաքարին շորս կողմը երկաթագիր կաթուղիկոսի անունը անվերծանելի էր, զի ինչպէս մահարձանը՝ նոյն և տապանագիրը ծածկուած գոտայ կրախառն կարմրագոյն ներկով:

Աւետման եկեղեցիէն քիչ հեռու, դէպ 'ի մեծ Հայոց հրապարակը, Հայոց փողոցին վրայ կանգուն կեցած է երբեմն Ս. Նիկողայ, այժմ Վերափոխման փառաւոր եկեղեցին Հայոց, որ յիրաւի՝ իւր մեծութեամբ, փառաւոր ճակատովն, վայելուչ և բոլորաձև կաթուղիկէիւ, բարձրաբերձ և լայնանիստ զանգակատամբ, շոյափելի և յայտնի կը ցուցնէ՝ զինքը կանգնողաց ճոխութիւնը, զարգացեալ ճաշակը, որ և միակ յիշատակ և արձան մնացած է Վամենիցի Հայոց մեծագանձ հարստութեան: Դեռ ևս անտիպ, այլ վաւերական մագաղաթեայ կտակագիր մի, որ վերջերս գտնուած

է Գամենիցի Հայոց դատարանին գրուածներէն՝ կը վկայէ որ այս եկեղեցւոյ տեղը 1398ին, Սինան Խութլու - պէյի որդի հայկազնն շինել տուած է փայտաշէն եկեղեցի մը յանուն Ս. Նիկողայոսի: Հետաքննական է յիշատակարանս շատ կողմանէ. յայտնի կ'երևի նորա մէջ շինողին՝ զգուշութիւնը, զի շինի՝ որ մի հայախօս և հայածէս ժողովարդը օտարանայ իւր հայրենեաց աւանդութիւններէն և կորսուի օտարաց հետ խառնուելով. այս է պատճէն կտակին. « Այս իմ կամաց և հաստատութեան անձին ձեռագիր է, Սինանի որդոյ Խութլու - պէյի, յաղագս որոյ կու տամ առաջի Աստուծոյ զգիրս զայս Լուսաւորչին սուրբ աթոռոյն և նահանգիս առաջնորդացն, ո՛վ որ պատահէ, (և այժմ տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի ամենայն Ըռուսաց և Ազախաց աշխարհի և 'ի ներկայ ժամանակս՝ հոգևոր առաջնորդ է նահանգիս և մեզ). վասն որոյ խոստացեալ էի շինել եկեղեցի յանուն որոյն Նիկաւղայոսի սրանչելագործ հայրապետին, և այժմ Աստուծոյ առաջնորդութեամբն յանկ ելեալ կատարեցաւ. և ես ըստ խոստման իմում նուիրեցի Աստուծոյ և Լուսաւորչին սուրբ աթոռոյն և առաջնորդի նահանգիս. և ազատ կու առնեմ 'ի մարմնաւոր տերանց: Ոչ որ իշխանութիւն շունի որ տիրէ սուրբ տաճարիս, ոչ ես, և ոչ իմ տունն, և ոչ իմ տղայք, և ոչ այլ ազգականք, ոչ հեռաւորք և ոչ մերձաւորք: Եւ ո՛վ որ յանդրգնի և տէրութիւն կամենայ առնել, սուտ է և անիրաւ յամենայն դատաստան, և տուգանս տացէ հոգևոր և մարմնաւոր դատաւորաց, և առցէ զանէժս զԱստուծոյ և զսուրբ առաքելոցն և հայրապետացն: Բայց միայն այս՝ որ թէ պատահէ՝ որ

յիմ զաւակացն և կամ յազգականացն քահանայ լինի, և Լուսաւորին հաւանութեամբն լինի, և Լուսաւորչի նա աթոռոյն հնազանդ լինի, նա հանց բաժին առնու 'ի յեկեղեցւոյն մտոցն, որպէս բնական երէց մի, այլ ոչ տէրութիւն առնէ եկեղեցւոյն: Վկայութեամբն Աստուծոյ և արժանա-հաւատ վկայից որ աստ պատահեցան:

Գրեցաւ գիրս 'ի Թվիս Հայոց (տեղի կնքոյ) Պիէ »:

Եկեղեցաշէն Պ. Սինանս գնած և ընծայած է Ս. Նիկողայոս եկեղեցւոյն գեղեցկագիր և ընտիր ճաշոց մի, որ ցարդ պահուած է եկեղեցւոյս դի-ւանին մէջ: Ճաշոցը գրուած է 'ի Թուականութեան Հայոց ԶՂԸ, յաշխարհն Հոնաց ('ի Ղրիմ), յեր-բեմն հոյակապ և 'ի հոշակաւոր մայրաքաղաքն Սուրիաթ, (այժմ ողորմելի գիւղաքաղաք, Հին կամ Էսկի Ղրիմ կոչուած), ձեռամբ Ստեփանոս երիցո: Ճաշոցիս կրկին հին յիշատակարաններէն վերջը, (առաջինը գրութեան ճաշոցին, երկրորդը՝ Սինանին նուիրատուութեան), մաքուր՝ բոլոր գրով գտայ գրուած. « Յամի Տեառն 1756, օրն յու-նիսի 28, սկսաւ շինումն եկեղեցոյս Կամենիցոյ Հայոց Ս. Նիկողայոսի, և աւարտեցաւ յամի Տեառն 1767, օրն առաջին յուլիսի, շինումն նոյնոյ եկեղեցւոյն: Յամի Տեառն 1767 օգոստոսի եղև բե-րումն Թափօրով հրաշագործ պատկերին Երանու-հոյ Կուսին՝ 'ի նոյն եկեղեցին »:

Ժամանակ անցնելէն վերջը՝ Սինանի շինել տուած եկեղեցին նեղ եկել է, այն պատճառի՝ ոմն Հրի-հոր՝ որդի Զատկի « յոյժ քրիստոսասէր » ընդար-ձակել է. « վասն զի փոքրագոյն էր եկեղեցիս այս. քանզի միշտ տեսանելով եթէ ոչ գոյր տեղի բա-

աական ժողովրդեանս 'ի միջի սորա, եզ. Հիմունս
սորա, այլ մեծագոյն... Պր. Հրիչորն և տիկինն
իւր Բանի Ազիզոյ իւրեանց սեպհական ընչիւք, և
արդեամբ և քրանաջան վաստակօք... հրաշա-
փառագոյն մեծացուցին և պայծառացուցին Ռ-
թուին Հայոց », 'ի 1551: Երեսուն տարի վերջը
Պ. Միխնոյ գործունեայ երէցփոխանը, ընդ կուլաֆ
տիկնօղ և 'ի ձեռն այլ բարերարաց՝ շատ աշխա-
տած է եկեղեցւոյս պայծառութեան մասին: Տա-
ճարիս զանձատան մէջ տեսայ վայելչաձև սկիհ մի
Ռ-Լ (1581) թուականով, որ Միխնոյի անունը
փրան կը կրէր: ՌՄԲ թուին գրուած յիշատա-
կարան մի այսպէս կը խօսի. « Աստուածային աւր-
հնութիւն և ողորմութիւն հանապազ եղիցի վրայ
Պր. Միխնոյ երեսփոխանին... Սուրբ Նիկողայ ե-
կեղեցւոյ վրայ զճակատն շինել ստուր ա փառաւոր
երևելի և գեղեցկաչէն զչիդ. և 'ի վերայ ոսկէզօծ
խաչ կանգնեց... դարձեալ Ս. Նիկողայ տաճարի
վրայ կայր մի մեծ և բարձրադիտակ քումպէթ և
առաւել ծանր էր, եկեղեցւոյ կամարի վրայ. զոր
տեսեալ զայն Պր. Միխնոյ երէցփոխանն հրամայ-
եաց իջուցանել զայն քումպէթն, և դարձեալ
երրորդումն շինել ստուր՝ այլ փաքրագոյն և գեղեցիկ
շինուածով, և բոլորովին պատուհան էր և կա-
մարակապ արար. և վերև ծածկեց սանով և
նկարել ետ ոսկով և 'ի վրայ ոսկէզարդ խաչ
կանգնեց... »: Շատ երկար կը լինէր եթէ ար-
դիւնաշատ երէցփոխանին բոլոր աշխատութիւնքը
յիշէինք:

1672ին Մէհմէտ Դի. կամենից առած ասեն՝
Հայոց շատ տներ նիւթ կամ ճարակ կրակի եղած
են. նոյն միջոց քանդուած է Հայոց վերափոխման

մայր եկեղեցին, որ հրապարակին միւս ծայրն եղած է, ընդդէմ Ս. Նիկողայ եկեղեցւոյն: Թրքած արապետութեան միջոց քանդուած են Ս. Աւետման և Ս. Նիկողայոս եկեղեցեաց դռներն, և պատուհաններն նիւթ կրակի եղած: Այժմեան Աստուածամօր Վերափոխման եկեղեցին՝ ոչ Սինանին շինածն է և ոչ Հրիհորի և ոչ Միխնոյի հրաշափառ և պայծառ զարդարածը, այլ ինչպէս կը վկայէ հին ճառոցին նոր յիշատակարանը, ԺԸ դարու վերջին կիսուն մէջ շինուած է, հանդերձ իւր լայնանիստ զանգակատամբ: Մեծամեծ հըրդեհներ և թշնամեաց յարձակումներ՝ այնպիսի զօրաւոր դաս եղած են կամենիցի հայկազանց՝ որ ստիպուած են ներկայ քարակարկառ շէնքը շինել որ կարենայ դիմանալ հրդեհի դէմ, և թշնամեաց յարձակմանց: Զի ինչպէս ճակատը՝ նոյն իսկ ամբողջ շէնքն ամբարտակ մի է սրբատաշ քարերով շինած և կրով մածուցած: Քարէ սանդուխներով վեր կ'ելնըցուի, սիւնազարդ ճակատը, ուստի կը մտնայ եկողն ընկարձակ գաւթի մէջ որ սրահի ձեով զեկեղեցին երեք կողմանէ կը պատէ: Եթէ շէնքս աւելի հին լինէր, կարելի էր ենթադրել որ այդ սրահը իրրև մատաղատուն շինուած լինի: Ըստ բերանացի վկայութեան Ռայլէ հնախօսին այդ ընդարձակ սրահը՝ հեռաւոր տեղերէ եկող ուխտաւորաց ապաստանարան շինուած է, ընդդէմ արևու և անձրևի. վասն զի ընդ համօրէն Լեհաստան հուշակեալ են հրաշք Աստուածամօրո չայոց՝ որ կը պաշտի այս սուրբ Տաճարիս մէջ. այն պատճառաւ ոչ միայն հարուստ ունևորներ ուխտադիր կը լինին առ Տիրամայրս, այլ և չքաւորներ ևս, որք հեռաւոր տեղերէ կու գան, որոց ծածք հարկաւորէ:

Այս լայն սրահը մեծամեծ պատուհաններ կը լուսաւորեն . յատակը՝ ինչպէս և եկեղեցւոյն՝ մեծ և տափարակ քարերով սալած է : Սրահիս միջէն երեք մեծամեծ դռներով եկեղեցին կը մտցուի հարաւային դրան մօտ, պատին վրայ մարմարիօնի վրայ արձանագրութիւն մի կայ, որ է շիրիմ Ովանէս Բարսեղեան, անունով Երեւանցի մեծ վաճառականին, որ վախճանած է ՌՃԿԶ ԹՎ. (1717) : Սրահին արևելեան պատին վրայ, հարաւային դրան անմիջապէս մօտ խորան մի շինուած է, որոյ պատկերը կը ներկայացընէ զԺնօղս Ս. Աստուածածնի, Յովակիմ և Աննա, և 'ի միջի նոցա մանկահասակ Կոյն Մարիամ . Թէպէտ և յիշատակարան կամ թուական չգտայ պատկերին վրայ, այլ ամենահին է պատկերը, հայկական նկարչի գործ, հաւանական է որ Հայաստանէ բերուած լինի : Ճակատի դրան վրայ, դէպ 'ի փողոց, գոգաձևի մէջ դրուած է պղնձաձոյլ ոսկէզօծ մարդաչափ մեծութեամբ Անարատ յղութեան կուսին արձանը, որ շատ վայելչագեղ է . իսկ վարով սիւներուն վրայ դրուած են երկուց հայրապետաց կիսանդրիք, որք անշուշտ կը ներկայացընեն զԼուսաւորիչ և զԱքանշեղագործ հայրապետները, պաշտպանք եկեղեցւոյս . ինձ յարգի արձաններ շերեցան :

Եկեղեցւոյս մէջը ընդարձակ է . վեց խորան ունի . մեծավայելուչ է աւագը, որոյ խաչկայը թէպէտ փայտաշէն է, այլ այնպէս ճարտար ներկում՝ որ չի տարբերիր մարմարիօնէ : Սեղանէն վեր՝ պատին մէջ գոգաձև շինուած է ոսկէզօծ, յորում դրուած է Հրաչադործ պատկերը, բազմաթիւ նուէրներով զարդարուած : Գոգաձևէն վեր կայ Լուսաւորչի մեծ պատկեր մի՝ հայրապետական

ձեռով, որոյ տարազը աւելի արեւմտեան է քան թէ հայկական, Լուսաւորչի առջև ծուներ դրած են Տըր-դատ Թաքաւոր և Ալիէն տիկին: Այդ պատկերին օրինակը կայ Խարատուի Ս. Լուսաւորչի եկեղեցւոյն մէջ, այլ բունը շատ գերազանց է քան զգաղափարը: Ունի եկեղեցիս բարձր վերնատուն մի, յորում վայելուչ կը հնչէ ներդաշնակ երգեհոնն: Երկարօրէն խօսեցանք երկու հայկական եկեղեցեաց վրայ. վասն զի արդէն հայ ճանապարհորդի համար այդ եկեղեցիքն են քաղցր յիշատակ ազգութեան, մինչդեռ նոցա ծուխն և ժողովուրդք օտարացած են և այլախօսք:

Զ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ա Ն Յ Բ

Ազգային պատմիչք որոշ չեն նշանակած ազգիս 'ի Ռուսաստան, 'ի Լեհաստան և Ղրիմ գաղթման ժամանակամիջոցը: Թէպէտ և 'ի Թէոդոսիա գրուած Յայսմաւոյր¹ մի գոհացուցիչ կերպով կը

1. ԺԷ դարուն մէջ մագաղաթեայ Յայսմաւուրք 'ի կաթա գրուած: Այս Յայսմաւուրքն նոր Նախիջևանցիք 1776 ին Ղրիմէ գաղթած միջոցնին հետերնին տարած են: Ա. Հ. Միխաս Բժշկեան՝ Նախիջևանու Նեովիթա գիւղին մէջ ձեռք ձգելով այդ Յայսմաւուրքը օրինակած և ապագրած է յիսրում ճանապարհորդութեան 'ի Լեհաստան այդ Թանկագին յիշատակարանը. Պարճաթիւն Անեցոյ Քեֆէի վերնագրով. տես 'ի ճանապարհորդութեանն, էջ 333: Այս տարի (1884) մայիսի մէջ գնալով 'ի Նեովիթա գիւղը՝ խնդրեցի տեսնալ այդ Յայսմաւուրքը, այլ 'ի զուր գի հոն չէր: Յաւալի է եթէ ձեռք ձեռք անցնելով կորսուի ուրպիտի հազուադիւս յիշատակարան:

պատմէ Թաթարաց Չարմա - ղանի Անեցւոց տուած կրտորածը, և նոցա փախուտը յԱխարայ, որ էր 'ի մէջ Աժտերխանի և Ղազանի. և անտի՝ յԱխարայէ 'ի Թէոզոսիա շուելը Անեցւոց 1330 ին: Սակայն օտարաց՝ նոյն իսկ և ազգիս յիշատակք՝ այդ աշխարհաց մէջ ցիր և ցան, յայտնի կը ցուցնեն՝ որ քան զայդ Թուականը շատ առաջ եղած են գաղթականութիւնք 'ի Հայաստանէ 'ի Ռուսաստան 'ի Լեհո և 'ի Ղրիմ:

Քարամզին՝ Ռուսաց պատմահայրը կը գրէ՝ որ Ղազան քաղաքէն 90 վերստ հեռուն, երբեմն Բուլղար կոչուած քաղաքին մէջ՝ գտնուած են հայ արձանագրութիւնք. այժմ այն քաղաքին տեղ կայ Սիլիթրեանը անունով քաղաքը: Օտեսայի Հնագիտական Յիշատակարանաց Ե հատորին մէջ, 'ի Ժ դարու կ'ըսուի Հայոց գաղթականութիւնը Սև ծովուն և Վոլկա և Տնեբեր գետոց եզերաց վրայ: Հին և թերակատար յունարէն գրուած Յայամաուր մի կը գրէ որ 1292 ին 'ի Սուտաղ Տաւրիոյ բնակող Հայք՝ համօրէն քրիստոնէից հետ 'ի միասին տօնած շեն Չատիկը, այլ մուտրած են (Մուազատիկ):

Հնագէտն Անտոնի, ինչպէս յիշեցինք քիչ առաջ կը գրէ՝ որ Հայոց առաջին գաղթականութիւնը 'ի Հայաստանէ դէպ 'ի Ռուսաստան պատահած է 1009 ին, հրաւիրեալ 'ի Նախարարաց Քիեւի յաջակցութիւն ընդդէմ պատերազմաց Խորխոս Բոլեշաւի՝ որ յարձակմամբ ոտնակոխ կ'առնէր նոցա երկիրը: Ի 1082 դարձեալ Քիեւի Նախարարն Թէոզորոս Դէմետրեֆն (Տիմթրիեւիչ) յօգ.

1. Ե հատոր Օտեսայի Հնագիտական Յիշատակարանաց:

նութիւն կը հօշէ զՀայս: Հայք նմա հաստ թիկունք կը լինին 'ի պատերազմունս ընդդէմ Փռլոկցի իշխանաց: Պատերազմէն վերջը թէողոր համոզած է զՀայս մնալ 'ի Ռուսաստան, շնորհելով շատ արտօնութիւններ:

Արքայդ երկիրներուն կը տիրեն Լեհք, ըստ վկայութեան Փիտոս Կարսիականի և Սևտոնիինոցա ևս վաւերացրնեն Հայոց առանձնաշնորհութիւնները:

1280 ին Լեւոն Դանելովիչ Կալիցիոյ նախարարը զՀայս թաթարաց հետ 'ի միասին օգնութեան կը կանչէ դրացի ազգաց հետ ունեցած պատերազմաց միջոց. և ապա մեծ հողերով կը վարձատրէ զՀայս: Անշուշտ կամենիցէ 10 վերստ հեռաւորութեամբ գտնուած Արմեանէ և Արմեանքի գիւղերը՝ նոյն ատենէն այդ անունները կը կրեն:

Չարմա - դանի արշաւանօք բոլորովին քարուքանդ կը լինի Մնի, և նորա ոստանիկ բնակիչքն՝ « թողլով զոսկէջօծ պալատս և զծաղկաւէտ դաշտըս, զվանորայս և զեկեղեցիս աւեր, շուեալ եկին՝ որպէս փախստական 'ի յԱխստղայ, որ է 'ի մէջ Հայտարխանու և Ղազանու, ոմանք զնացին 'ի Ճուղայ, ոմանք 'ի Վան և այլք 'ի Սիս »: Ախսարայի գաղթականութիւնը հոն ևս հանգստութիւն չգտանելով թաթարաց ձեռքէն, « Յղեն 'ի Արիմ առ իշխանն Չինիւիզաց, որ բնակէր 'ի մէջ Ֆանկ - Հիսարին Ֆէօզօսիու, ուխտ դնեն ընդ իշխանին Ֆէօզօսիու, ելեալք 'ի յԱխսարայէ իշխանք և հասարակ ժողովուրդք վառեալք զինու, պատերազմելով ընդ թաթարացն, ձեղքեալ գան 'ի Արիմ, և բնակին 'ի Ֆէօզօսիա: Ի կազարաթ 1 և

1. կազարաթ Հայոց մեծ աւան եղած է Հին-Արիմու և Սուտաղի մէջ:

'ի Սուրխաթ¹ և 'ի կողմանս սոցա . . . յայնժամ զօրացաք մեք և բազմացաք և շինեցաք զգրիզս և զգաւառոս իշխանք և ազնուականք . 'ի Ղարապազարէն սկսեալ մինչև 'ի Սուրխաթ և 'ի Ֆէօզօսիա, 'ի լեբրինս և 'ի գաշտս լի արարին վանօրէիք և եկեղեցեօք, շինեցաք տունք 100,000 և զեկեղեցիս 1000, և 'ի ահէ Հոնականաց պարսպեցին 'ի քաղաքին Ֆէօզոսիա » : Մեզ այնպէս կ'երևի որ այս 'ի Ղրիմ գաղթող բիրաւոր հայկազանց մի մասն, այսինքն 40,000 հոգի, գործածելու յարմար անձինք, կամ պարզ գրուցելով՝ զօրականք, Ղրիմէ դէպ 'ի հիւսիս դիմած են, ինչպէս յԱխսարայէ մինչև 'ի Ղրիմ պատերազմելով և ճեղքելով Թաթարաց խումբերը՝ կու գան, նոյնպէս աստի այսինքն 'ի Ղրիմէ մինչև ցկամենից՝ նոյն Թնամեաց դէմ սուր գործածելով կը հասնին : 1331 ին կը գնէ Անտոնի Հայոց մեծ գաղթականութիւնը 'ի կամենից : Յարմար միջոց կը գտնան Հայք՝ հայրենեաց (կործանեալ Անույ) քանդեալ և կործանեալ եկեղեցեաց և պալատից վրէժը հանելու 'ի տնաւեր Թաթարաց . կը խառնուին կորիաթովիչ իշխանաց զօրախմբին մէջ և հալածելով զԹաթարս՝ բնակութիւն կը հաստատեն կամենիցի մէջ . և տակաւ պատերազմական սուրերն վաճառականութեան տումարներու փոխելով՝ ձեռք կը զարնեն փոխանակ Անույ զկամենից շէնցընել : կորիաթովիչ իշ-

1. Սուրխաթ՝ այժմեան Հին-Ղրիմն է . ոմանք նմանաւայնութենէ շփոթելով զՍուլտաշ կը կարծեն, որ սխալ է : Սուլտազի հին անունը՝ 'ի Յունաց է Սոկոէա, 'ի շինեովաթոց՝ Սօլտայա (Soldaja), մեր ձեռագրաց մէջ կայ Սուրխազրուած :

խանաց այդ միայն հարկաւոր էր, որ 'ի թաթարաց' սրբեալ աշխարհքը նորէն շէննայ, ուստի կը շնորհեն Հայոց մեծամեծ արտօնութիւններ: Քէորդ կորիաթովիչ իշխանին կամենիցուց տուած պարգևագրին ներքոյ՝ Հայոց անուններ կան: Այլ հաւանական է՝ որ այդ հայկազունք առաջի գաղթականացմէ լինին: Հայք ինչպէս 'ի Ղրիմ' նոյնպէս և 'ի կամենից կը գործառն կը բազմանան, կը լնուն քաղաքը մեծամեծ շէնքերով, կ'ամրացընեն բերդերով, ազգային առանձին դատաստանով, իսկ վաճառականութեամբ ոչ թէ միայն կամենից քաղաքին, այլ բոլոր բովանդակ Փոտոլիոյ և անդր ևս քան զՓոտոլիա կը տիրեն:

Երբ Փոտոլիա Լեհաց իշխանութեան ձեռք կ'անցնի, Հայոց առաջին գործը կը լինի՝ իրենց արդէն ստացած առանձնաշնորհութիւնքը վաւերացընել տալ Լեհ թագաւորաց. որոց առաջինն կը լինի Վլադիսլաւ Եագելլոյ: Լաւրենտիոս Մարչինսքի³ 16 Լեհ արքայից ստորագրութիւնք կը հաշուէ, Հայոց զանազան ժամանակ տրուած արտօնութեանց ներքոյ:

Ա. 1496 ին խնդրած են Հայք Լեհաց Յովհաննէս Աւրերտոս թագաւորէն հաստատութիւն ազգային առանձնաշնորհութեանց. արքայն՝ 'ի նկատի ունենալով որ կամենից սահմանածայր քաղաք է և շատ անգամ զրկանք կրած 'ի թշնամեաց, կը հաստատէ Հայոց արտօնութիւնքը, և կը հրամայէ՝ որ Հայք 'ի մեծի և 'ի փոքու՝ ազգային դատաստ.

1. Հոյտ 'ի Փոտոլիա, Դորոնովիչ ուու երիցու:

2. Աւերհաբրաւան, Տելաբրաւան և Պապաւան Երկխառնիւն կոչուած զրքին մէջ:

տանին ենթարկուին և չդիմեն այլազգի դատաւորաց :

Բ. 1502 ին, Քրաքովի մէջ Աւեքսանդր Թագաւորն կը վաւերացընէ Հայոց ունեցած արտօնութիւնքը 'ի նախնեաց իշխանաց և արքայից :

Գ. Հինգ տարի վերջը, 1507 ին Սիգիզմունդ Թագաւորն նոյնպէս կը հաստատէ զՀայս իրենց առանձնաշնորհութեանց մէջ : Եւ այսպէս յաջորդաբար մինչև ց 1766. տասնուվեց Թագաւորք արտօնութիւններով կը ճոխացընեն զՀայս, իրենց աշխարհին օգտակար ծառայութեան փոխան. այնպէս որ շատ աւելի առանձնաշնորհութիւն կը վայելին Հայք քան զլեհս, և այլն :

Հայք այս ստացած առանձնաշնորհութեանց պտուղը ժամանակին կու տան, որով ինչպէս 'ի պատերազմական յասպարիզին սկզբան, ապա 'ի վաճառականութեան արուեստին, նոյնպէս յետոյ ասպետականութեան և ազնուականութեան մէջ՝ ճոխ և վայելչակենցաղ կը հանդիսանան : Առաջին գաղթականացմէ ոմանք ստացած են ասպետական պատիւ, և որոց ցեղը հին ազնուականաց կարգը մտած է, որպիսիք են Թէոդորովիչք և Սուլթանք : Դարձեալ նշանաւոր եղած են՝ Աւագք, Սեֆերովիչք, Շատպէչք և Խրիսթոֆովիչք՝ ցեղովին : Աւագամեծար քաղաքացեաց կարգն անցած են Ակորսովիչք և Աւդոստինովիչք և Ակսենտովիչք, Պոկտանովիչք և Պօղոսեանք (Պօկուչք), Բուտագովիչք, Եանովիչք¹ (Յովհաննիսեանք), Տօնա-

1. Այդ անուանի տոհմն շառաւիղ Պ. Թէոփիլէ Եւնովիչ, շատ մարդասիրութիւն ցըրուց մեզ. Թէպէտ հայերէն չի խօսիր, այլ կը խոստովանի որ ինքն իսկապէս հայ է :

պետովիչք, Քերեմնթովիչք, Աւլանովիչք, Սիմանովիչք, Ռուքան, Գարբելովիչք և Մըսրովիչք, և այլք:

Այս առագ մարդիկն իրենց միջէն կ'ընտրէին կառավարիչ պաշտօնեաներ, որոց զերազոյնն էր վոյք կամ ազգագլուխը, որոյ կա տային ընտրութեամբ ութ առաջիկայ կամ խորհրդական, որոց զլիաւորը երէցփոխանն էր և տեղակալ ազգագլխոյն: Բաց 'ի սոցանէ կ'ընտրէին ևս քառասուն ընկերք կամ Եղբարք, որոց ներկայութեամբ և խորհրդով կը վարէին դատաստանք, և վճիռները քարտուղարն 'ի գիր կ'անցնէր: Իստաստանական մատեաններէն կ'երկայ որ' վոյթն ընդհանուր օրինաց կամ արդարութեան պաշտօնեայ է, իսկ ազգային շահուց, Եկեղեցեաց և դպրոցաց վերակացու և պաշտպան՝ երէցփոխանն է, ութ առաջիկայից զլիաւորն: Անուանի և բազում զօվեստից արժանի է երէցփոխանաց կարգին Պարոն Միխնոյ, որդի Տօնուչի, իւր երկար և արդիւնական պաշտօնավարութեամբ: Կամենիցի Հայոց դատարանին մատեանք լի են սորա գործերով ԺԶ - ԺԷ դարերուն մէջ: Եկեղեցեաց և առաջնորդարանաց նորոգման և շինութեան միջոց, արգեամբ և աշխատութեամբ մեծամեծ ծառայութիւններ մատուցած է ազգիս պատուական երէցփոխանն: Նորա անուան մեծ փառք բերողը, 1604ին Կամենիցի մեծ հրդեհէն վերջը, դէմ ընդ դէմ միմեանց երկու երկսեռ դպրոցաց կանգնումն է, որպէս զի նոցա մէջ հայ մանկտին ուսանի իւր մայրենի լեզուով կրօնք և աստուածպաշտութիւն: Եթէ Միխնոյի՝ արժանաւոր երէցփոխանք զնա յաջորդած լինէին՝ ցայսօր կենդանի կը մնար 'ի Կա-

մենից հայութիւնն: Քաղաքիս՝ Հայոց կոչուած թաղին մէջ պտըտած միջոցիս. ուր ցարդ երկաթագիր սևացեալ տառեր՝ Հայ աչքերու հանոյ և միանգամայն տխուր տեսիլ կ'ընծայեն, աստ և անդ քարերու վրայ, կարծես իբր տկանջացս մէջ կը հնչէր Միխնոյի խօսածը երբեմն 'ի ժողովի տանուտեարց. « Ո՛վ Եղբարք իմ, առաւել ևս սքանչանամ և հիանամ վասն այս բանի՝ զի անուանիմք քրիստոնեայ, և ոչ կատարեմք զկարգ քրիստոնէից, և ոչ ողորմեցարուք դուք ձեզի... զի ահա քամ է, քանի այրեցաւ քաղաքն մեր, և դուք ոչ խորհիք զի մի դպրատուն շինել տայք՝ որ զձեր տղայքն ժողովեալ 'ի մի տեղ և ուսանին 'ի գիրս, և այլն »: Այս յորդորակս Պր. Միխնոյ խօսած է 1604, մայիսի 18, կամենիցի առաջաւորաց ժողովին մէջ. ճառիս աւանդողը կը յաւելու՝ թէ երէցփոխանի խօսածը դպրատանց մասին « յոյժ հանոյ թուեցաւ տանուտեարց և ժողովրդոց »: Պր. Միխնոյ յանձն կ'առնու դպրոցաց շինութիւնը. « Արկ զձեռն 'ի գործ, և ետ շինել ք տունս հանդէպ միմեանց փայտաշէն, մեծամեծ, վայելուչ և գեղեցիկ շինուածով, այսինքն է՝ զպատուհաններն ազնիւ ապիկի, որ կոչի վէնէտիկի, նկարած ծածկոյթներով... յոյժ գեղեցկազարդ, և ամրացոյց 'ի ներքոյ և արտաքոյ: Կատարեցաւ 'ի փառս արհնելոյն ք դպրատունս և սրահինս, նոյեմբեր Ը. 1604 »:

Ի պարծանս ազգիս պէտք է աւելցնել հոս, որ ազգայինք 'ի Լեհաստան, յարքայից ստացած արտօնութիւնքը արդիւնաւորելով և ճարտարութեամբ մեծամեծ գումարներ հաւաքած են, և այդ դրսովը

պէտք եղած տեղ խոհական առատաձեռնութեամբ գործածած :

Հայապատում լեհախօս հեղինակը, նախ Նէմ-
ցեւիշ և ապա Հ. Պարոնշ կը վկայեն, որ անուա-
նի հայ վաճառականն Կոստանդին, մեծազուճար
դրամով օգնութեան հասած է Լեհաց Ազգոստոս-
Սիգիզմունդ Թագաւորին. նոյնպէս Պոկտան Տօ-
նաւազովիշ՝ Սիգիզմունդ Գե. և նորա Թոռն Դո-
մինիկոս Պոկտանովիշ՝ Իլվովի հարուստ բնակչաց
մին եղած է, և 1707 ին վախճանելով 250,000
զլօրի արժողութեամբ կալուածներ Թողած Ժա-
ռանգաց: Բեռնարդովիշ Խրիսթոֆ-Աւետիք հա-
րըստութեամբ գերազանցած է քան զամենեւին,
Վլադիսլաւ Դ. երբ 100,000 ոսկի (չեւվոնեց) փոխ
կը խնդրէ, Աւետիք կը հարցնէ՝ Թէ որ տեսակ,
ոսկի. արծաթի Թէ պղնձի դրամով կամենայ ստա-
նալ: Արքայն տարակուսելով, կամ լաւ ևս՝ փոր-
ձել ուզելով, - Երեք տեսակովն ևս, կ'ասէ: Բեռ-
նարդովիշ իսկոյն կը կատարէ Վլադիսլաւ Դե. կամ-
քը: Այս գիպուածէս ետև արքայն մեծ յարգու-
թեան ցոյցեր կու տայ առ հասարակ Հայոց, և
Բեռնարդովչեանց տունը իջևան կը դառնայ ար-
քայից: Թէպէտ և յիշ գարու՝ առանձնականի
քով այդպիսի մեծ գումար գտնուիլը առասպել
երևի, սակայն պատմութիւնն յայտնի կը վկայէ:
1677 ին Ղիկոյայ անունով հայազգին 500,000 զլօթի
և այլ անշարժ կալուածներ կը Թողու աշխարհին

Յ. Չլօթի լեհաց դրամ է, որ սոցժ կը համապատասխանէ
60 հարիւրչէի:

բարեկարգութեան համար: Կամենիցի Հայք՝ այլ և այլ դարերու մեծ բարեգործութիւններ կ'առնեն հասարակաց բարոյն համար. ոմն 'ի ԺԴ. դարու՝ եկեղեցի շինել կու տայ, ինչպէս Սինան Խուժլու պէյ. Ներսէս ոմն 'ի ԺԷ դարու՝ իրոյ ազուգաներ շինել կու տայ Կամենիցի մէջ, իւր հաշուին. Զաքարիա Խրիսթոֆովիչ միջնարբոյր կ'ամրացնէ իւր հաշուով, սոցա նման և այլ շատեր:

Ընդհանուր Լեհահայոց պատմութենէն կ'երևայ՝ որ Լեհաց կառավարութիւնն միշտ լաւ և խոհական կերպով վարուած է Հայոց հետ, և Հայք շատ անգամ իրենց երախտագիտութիւնը ցուցած են առ Թագաւորս. այլ հասարակ ժողովուրդն՝ Հայոց ճոխութեան վրայ նախանձու աչօք նայած է. որով կէս արդարացի և կէս հեգնական բառը, այսինքն քապզան, որ կը նշանակէ մեծաքսակ, գործածած են առ Հայս: Սակայն զայս պէտք է խոստովանիլ, զոր և Լեհք լաւ կը ճանչնան, որ վաճառականու-

1. Կամենիցի Հայոց հարստանալուն պատճառն՝ արժուաւորեալութիւնը և չափաւորեալ ծախքով խոհական գիւղատնտեսութիւնը կը համարի նազէան Ռուլէ. միւս այլ պատճառ մի ևս կայ՝ որ ոմանց տկան լին թերևս ակործ չի ենչեր. այն է գերեաց վաճառականութիւնը. Թաթարացի Ռուսոստան և Լեհաստան արշաւած և կողողտած միջոցին: Քիելի գիւղանին մէջ ձեռքս անցաւ դատաստանական գործ մի Վլոկիի դաւառին Վլադիմիր քաղաքը գրուած ԺՁ դարու (1579) յորում խառն լեհ և առև լեզուով կայ գրուած Օվանէս Պոկասնովիչ կամենիցացի հայազգոյն 'ի կաթա (Ղրթմու) գնելը՝ Քուուիլ (Կիւրեղ) տնտեսով առև իշխանին կէնը, և ապա երկանը դարձնելը, մանրամասն պարտագաներով:

Թիւնը հարստութեան հետ մէկ տեղ Հայոց ձեռք եղած միջոց, չէն և բարօրութեան մէջ էր Փոտոլիա, այլ երբ վաճառականութիւնն տակաւ Հրէից ձեռքը կ'անցնի՝ Լեհք և Հայք 'ի միասին կը սնանկանան.

1672 ին Մէհմէտ Գ. Կամենիցի տիրելով, Ղըր-եայք՝ որոց արդիրուած էր 'ի Լեհաց Կամենիցի մէջ հաստատուն գործ բռնել, կամաց կամաց ստից հառուան կը գտնան. 1699 ին երբ Տաճիկք դարձեալ Լեհաց Թողլով զԿամենից կը հեռանան. Հրեայք ամենայն ջանք կը բանեցընեն մէջ Ֆալու, և իրենց նպատակին հասնելու՝ փող չեն խնայեր. 'ի զօր կը բողբեն Հայք, գուշակելով զապագայն: Տակաւ կը տեղաւորին Հրեայք, և ըստ տեղւոյն ստրկաբար խոնարհելով, և այլ երբեմն դաւով և խարդախութեամբ կամաց կամաց ցանցերը կուսիտեն, վաճառականութեան ձեռք կը զարնեն. Հայք կամայ և ակամայ տեղիք կուտան, և Լեհ ազնուականաց օրինակին հետեւելով գեղերը կը քաշուին: Յայսմ ևս կը յաջողին և ըստ վկայելոյ Անտոնիի, խելացի տնտեսութեամբ, չափաւորեալ կենօք, իրենց ձեռքը կը հաւաքեն հարաւային արեւմտեան Լեհաստանի գրամագլուխը. նոցա ճոխութեան անունը 'ի հեռաւոր տեղեր կը հռչակուի և Փոտոլիոյ բերք և ապրանք « Վաճառք Հայոց » անունը կը կրէ, Ժէ դարէ սկսեալ, որում կը վկայեն մաքսատանց մատեանք: Այլ տակաւ Հայք Լեհաց ձեռոյն և օրինակին հետեւելով, կամաց կամաց ամուսնութեամբ խառնուելով, և ամբողջ մի տեղւոյ վրայ (այսինքն Կամենիցի մէջ) միութիւն և ամփոփութիւննին քակուելով, ցիր և ցան կալուածներու և գեղերու մէջ, կը խառնուին Լեհաց

հետ, և թաթար լեզուներն լեհերէնի փոխելով՝ գրեթէ բոլորովին կը լեհանան:

Սակայն պէտք է այս ևս խոստովանինք՝ որ Հայք շատ երկար ժամանակ պատերազմած են այդ բանին դէմ, 600 տարի դիմացած են, իրենց ազգութեան մէջ 'ի հեռաւոր հիւսիսական աշխարհին; Ըրջապատեալ օտար տարրերով: Ժամանակին պատմիչ մի կը վկայէ (Վերդում), որ « Հայք իրենք զիրենք հեռու կը բռնեն, ինչպէս 'ի Լեհաց նոյնպէս և յայլոց ազգաց, յար և նման Հրէից, միայն այս տարրերութեամբ որ՝ Հրեայք աղքատ են և ծառայամիտ, այլ Հայք ճոխք և ինքնապանծք: Նոցա թխամորթ կերպարանքէն և դուրս ցցուած համարձակ հայուածքէն շուտով կարելի է զանազանել զնոսա այլ ազգերէ, ինչպէս զՀրեայս՝ իրենց տժգոյն և ապուշ կերպարանքէն: Հայք ոչ կամու կամ յօժարութեամբ կը կապուին ամուսնութեամբ օտարաց հետ »:

Մինչև ժՉ դար հայերէն խօսած են կամենիցի Հայք. այդ դարուն վերջերը, Սնեցոց կոկ հայերէնը փոխած են իրենց տունը արող-քանդող թաթարաց խոշորալուր բարբառին, և մինչև 1625 այդ խժալուր բարբառով խօսելէն և գրելէն վերջը, նաև առանց ամաչելու այդ լեզուաւ աղօթելէն վերջը, սկսած են Լեհաց լեզուն գործածել, մեր նախնեաց լեզուն Տէրտէրներու ժառանգութիւն թողով:

Լեզուի հետ անխտիր խնամութիւնը մտած է, որ եղած է պատճառ այս վերջին 200 տարուան միջոցին մերոց լեհանալուն: Վասն զի 1678 ին Լեհաստանի մէջ 4000 հայ ընտանիք կը համրուին, միայն կամենիցի մէջ 1200 տուն, որ քաղաքին

քնակչաց մեծամասնութիւնը կը կազմէ. ըստ իմ կարծեաց լեզուափոխութիւնը և անխտիր խնամութիւնը զօրաւոր պատճառներ եղած են ազգիս օտարանալուն. Թէպէտ և ըստ ոմանց՝ Թորոսեւիչ Նիկոլ եպիսկոպոսի ժամանակ եղած համարձակ ձեռնամխութիւնը մեր ժամական մատեաններուն մէջ և ամպէտ ծիսափոխութիւնը եղած են պատճառ ազգիս օտարութեան, այլ այնպէս կը կարծեմ՝ որ եթէ մերոնք լեզունին պահած լինէին և խորչէին, ինչպէս առաջ, անխտիր խնամութենէ, Նիկոլի բռնութիւնք ոչ միայն օտարանալու, այլ ազգութիւնին ամբողջ պահելու մի զօրաւոր պատճառ կը լինէր. ըստ առածին « բռնութեամբ գեղեցկութիւն չի լինիր »: Այլ մեք գառնանք դարձեալ առ Տիրաւայրն Հայոց:

Է

Տ Ի Ր Ա Մ Ա Յ Ր Ն Հ Ա Յ Ո Ց

Ութ հարիւր կամ արեւի կամ սակաւ մի պահաս տարիներէ մինչև ցայսօր, այդ սրբազան աւանդն ազգիս, որ ընդ համրէն Լեհաստան հռչակեալ է սրանչելօք, միշտ Հայոց անունը կրած է: Տէր Մովսէս Դորոնովիչ Ռուս երէցն կը գրէ. « Սրբազնագոյն և մեծագին աւանդ կամենիցի Հայոց կրօնական կենաց՝ եղած է և է միշտ մինչև ցայսօր, Հայոց Ս. Նիկոլայոս եկեղեցւոյ մէջ պատուեալ Տիրամօր Պատկերն »: Հեղինակն կամենիցի Յիշատակարանաց Անտոնի. « Կամենիցի

Հայոց եկեղեցւոյն մէջ, յանուն պրանչելագործին՝ Նիկոլայի, կը պահուի հնաւանդ յիշատակ մի. այն է պրանչելագործ պատկեր Սրբուհի Կուսին Մարիամաւ: Այդ պատկերը՝ մեզ անծանօթ հեղանիւթով ծածկուած մի տախտակի կտորի վրայ նկարուած է. Աստուծածին՝ ձախ ձեռքը Յիսուս մանուկը: Տիրամօր կուսին զլուխը ծածկուած է օւլաչակով, ըստ արեւելիայց, նոյնագոյն վերարկուն կրծոց վրայ հանգրիճած. լուսոյ ճառագայթք կը պատեն զլուխը: որոց մէջ կայ գրուածք մի՝ որ անընթեռնի է. պատկերին ստորին ծայրը գրուած կայ լատիններէն: O Maria, mater Dei Christi. Պատկերիս ծագումը, տեղին, նկարման միջոցը, և նկարիչն անծանօթ են մեզ: Հմուտք արուեստին, ըստ վկայութեան Կալանոսի և Զորբի, ոչ առանց հիման՝ Ժ դարու գործ կը համարին զայն, և կ'ասեն՝ որ Հայք բերած են այդ պատկերը 'ի Սեաստոպոլէ 1331 ին, Հայոց երրորդ և բազմաթիւ դաղթականութեան միջոց 'ի Փոստոլիա՞... Եւ որովհետև արդէն կար Կամենիցի մէջ Հայոց եկեղեցի, յանուն սրբոյ Կուսին, (այժմեան Ռուսաց Ս. Նիկոլա եկեղեցին) դրած են հօն: Ապա ԺԵ դարու (հարիւր տարի վերջը, 1495 ին) տեղափոխած է, ուր կայ ցայսօր: 1672 ին Տաճիկք տիրելով Կամենիցի, Լեհք՝ ըստ պայմանաց յաղթո-

1. Լեհք՝ առաւել ևս Ռուսք՝ Միւսոնայ հայրապետին լուսաւորելի ածականը կու տան. վերը ևս նոյնպէս դործածել է. Թարգմանութեան միջոց Սրբոյն յատկացեալ Սքանչելագործ ածականը դրի, միւսը ազգիս լուսատուին յատկանիչ պահելով:

2. Հեղինակն այս տեղ Հայոց երրորդ դաղթումը 1380 ին կը դնէ, թերևս սխալմամբ:

դին հեռացան 'ի կամենիցէ, այլ Հայոց շին թողուլ
ելնելու, որով և նոցա մայրապետք կը մնան 'ի քա-
ղաքին: Երկու ամիս հոն մնալէն վերջը, առանց
հալածանք կրելու 'ի յաղթականաց, հրաման կ'ել-
նէ՝ որ հեռանան քաղաքէն. քառթիւնք եղած են
պատճառը... 'ի թիւս Հայոց կային 16 մայրապետ
կուսանք: Սգբա ամսօրեայ մի ճանապարհորդելով
կը հասնին յափն ծովուն, և կը մանեն երեք նա-
ւերու մէջ, յորոց մին 'ի ճանապարհին կ'ընկղմի,
և այլ երկուքն կը հասնին 'ի Սիզոպուլ քաղաք
Տաճկաց: Անճար պանդուխտներն անմարդի կը
գանեն քաղաքը, զինախընթաց տարւոյն ժանտախ-
տը շարգել էր անոր բնիկիչքը, և ողջ մնացողնե-
րը թողել զնացել էին քաղաքը. սակայն Սուլթա-
նին հրամանն այն էր՝ որ Հայք ներքին գաւառ-
ները չգաղթին: Հոն կ'անցընեն բովանդակ ձմեռը,
գարնան (1673) կ'անցնին 'ի Մակեդոնիա գաւառն,
ուր և ազատ շունչ կ'առնուն: Կը շինեն իրենց
համար եկեղեցի, ուր կը զետեղեն հետերնին բե-
րած Հրաչագործ պատկերը: Այլ տէր Լեհաստան
(երկրորդ) հայրենեաց կը մաշէ նոցա սիրտը:
1673ին կ'որոշեն մայրապետք լոբելայն՝ գառնալ
վերսահն 'ի Լեհաստան: Յաջողութեամբ կը հաս-
նին 'ի Պուքարեշտ, ուր Ուլախաց իշխանուհին
իրեն մօտ կը պահէ զնոսա տասն ամիս: 1676ին
կը հասնին 'ի Սղանեսլաւով քաղաք: Իլվովի թո-
րոսեւիչ արքեպիսկոպոսին խնդրանօք, կ'անցնին
մայրապետք 'ի Սթանեսլաւովէ յիլվով, ուր Հայոց
գերիզմանատան անշուք վանքին մէջ կը պատըս-
պարին: Այն միջոցին կամենիցէն ելնող մայրա-
պետաց թիւը երեքի հասած էր. զի նոցանէ
երեքն Հայոց լեզուն չգիտնողնուն պատճառաւ՝

բաժնուած էին ընկերներէն . և այլ հինգն՝ պանդոզի-
տութեան միջոց վախճանած... Ինն տարիէ վերջը
1685ին, Հրաշագործ պատկերը Խլովի մայր եկե-
ղեցւոյ մէջ կը զետեղեն, և Եղբայրութիւն մի կը
հաստատեն Ս. Նիկոլայոսի անուամբ: Եղբայրու-
թեանս մատենաները կարգաւորեալ ձևով գրուած
են և ցարգ կը պահուին եկեղեցւոյ դիւանին մէջ:
Երբ Տաճիկ կառավարութիւնն ձեռքը կը քաշէ
Վամենիցէ, Եղբայրութեանս հոգաբարձու քահա-
նայք՝ Ոնոփրիոս Ասլանովիչ և Ստեփան Բարու-
քովիչ՝ կը բերեն Աստուածամօր պատկերը, 33
մայիսի 1700, մեծահանդէս թափօրով, և կը զե-
տեղեն Ս. Ստեփանոս մատրան մէջ, զոր առ ժա-
մանակեայ կը յարգարեն Ս. Նիկոլ եկեղեցւոյ զան-
գակատան ստորին յարկին մէջ. վասն զի նոյն
ատեն Հայոց երկու եկեղեցիքն ևս աւեր վիճակի
մէջ էին: Ար գտնուի նոր բարերար մի, Պոկտան
Լատինովիչ, որ շուտով նորոգել կու տայ Աստուա-
ծամօր Աւետման մատուռը և կարևոր սպասները
կը հայթայթէ: Աստ կը մնայ Տիրամօր Հրաշագործ
պատկերը, մինչև որ նորոգի Աքանչելագործ հայ-
րապետին եկեղեցին 1767 »: « Բամի տեառն 1767.
օրն 22 օգոստոսի, եղև բերումն թափօրով Հրա-
շագործ պատկերին երանուհւոյ կուսին, 'ի նոյն
եկեղեցին. » կը ծանուցանէ հին ճաշոցին նոր
յիշատակարանը. և այդ Ս. Նիկոլայոս եկեղեցւոյն
մէջ մինչև ցայսօր կը պաշտուի 'ի բազմախուռն
ժողովրդոց Տիրամայրս Հայոց: Բաց 'ի սովորական
լերմեռանդութեանց և ութօրեայ Վերափոխման
տօնին ցնծութեանց, տարւոյն մէջ բոլոր շարաթ-
օրերը նուիրեալ են Աստուածամօրս պաշտաման,
և միշտ խուռն բազմութիւն կը ժողովի նոյն օրերը

փառաւորելու և պատուելու պատարագք և երգօք զՏիրամայրս մեր: Առ Աստուածամայրն ջերմեռանդութեան համար կայ տպուած լեկ լեզուով աղօթամատոյց — երգարան մի, որ զայս վերնադիրս կը կրէ: « Երկրպագութիւն մեղաւորին 'ի պատիւ և 'ի փառս Սրբուհւոյ Կուսին Մարիամու, որ հասանէ յօգնութիւն հաւատացելոյն հրաշափառապէս առ պատկերին որ կայ 'ի ժողովրդապետական եկեղեցւոջ Հայոց 'ի Կամենից Փոտոլեան, յանուն Եփկոլայ սքանչելագործ եպիսկոպոսին Միւսոնայ »: որ է տպագրեալ 'ի Կամենից, 1860: Այդ երգարանը շատ անգամ տպագրուած է. 1860ին տպագրուածին սկիզբը հետեւալ տեղեկութիւնը կը կարդանք. « Մանօթութիւն զպատկերէ՛ Սրբուհւոյ Կուսին Մարիամու, որ համբաւեալն է հրաշագործութեամբ յեկեղեցւոջ Հայոց 'ի Կամենից »: — Մինչև ցարդ եղած մանր հետազօտութիւնք, ինչպէս եկեղեցւոյ դիւանին, նոյն և այլ տեղեր շտուին մեզի հաւաստի տեղեկութիւնք Հրաշագործ պատկերին ծագման կամ հնութեան մասին. վասն զի ամենայն դիւանական գրուածք Հայոց եկեղեցւոյն՝ կորսուած են Թուրքաց 'ի Փոտոլիա յարձակման միջոց: Ստիպուած եմ հաւաքելու հաւատացելոց աւանդութեամբ պահածը, մասնաւորապէս Հայոցը: Այդ աւանդութիւնք ցայսօր պահուած են անայլայլակ առ ջերմեռանդ հաւատացեալս: Հաւաստիք են աւանդութեանցս հին աղօթամատոյցք, նորատիպքն կրած են սակաւ այլայլութիւնք, մինչդեռ հինք՝ տասն տպագրութեամբ 'ի լոյս ընծայուած են անփոփոխ:

Հին աղօթամատոյցք միակ տպագրեալ յիշատա-

կարան են Հրաշագործ պատկերին. նոքա միայն որբազան աւանդապահք՝ անցելոց ժամանակաց, Եկեղեցական պաշտամունք, երգք և աղօթք կը յայտնեն մեզ ծագումն և սքանչելիք Պատկերիս. նոցա մէջ բացատրուած կը գտնենք նաև նշանաւոր դէպքեր: Յիրաւի՝ անոնք բացօթյ շին գրուած, ինչպէս կը փափաքէինք գիտնալ. սակայն և այնպէս լիուրի կը համաձայնին բերանացի աւանդութեանց արժանահաւատ մարդոց: Ահա այդպիսի աղբիւրներէ հաւաքեալ կ'ընծայի համառօտ տեղեկութիւնս՝ Հայոց Հրաշագործ Երանուհւոյ կուսին Մարիամու Պատկերին ո:

Չորս հարիւր ութսուն տարի առաջ¹, այդ Աստուածամօր պատկերը բերած են Հայք 'ի Սևաստօպոլէ 'ի Լյամենից Փոտոլեան. և դրած յեկեղեցին Աքանչելագործ հայրապետին, ուր կայ մինչև ցայսօր. վասն զի Հայք հալածուելով 'ի Մսիմանաց, և չկարենալով այլ ևս դիմանալ նոցա, ժողովելով իրենց կայքը և Հրաշագործ պատկերս գաղթած են 'ի Լյամենից: Այդ պատկերը կամենիցի մէջ միշտ նշանաւոր եղած է հրաշագործութեամբ, և երեք հարիւր տարուան միջոց եղած է անընդհատ առարկայ՝ ջերմեռանդն յարգութեան հաւատացելոց: Երբ 1672 ին, Աստուծոյ թոյլ տալով, Փոտոլիա՝ Կամենիցով 'ի միասին ընկաւ ընդ իշխանութեամբ Թուրքաց, այն ատեն ոմանք յեկեղեցեաց քրիստոնէից աւերեցան քանդեցան, և ամանք Մսիմանաց մզկիթ եղան: Բարեպաշտ

1. Եթէ յերրորդ գաղթականութեան իւրեանց 'ի Լեւաստան՝ բերած են Հայք հետերին այդ Հրաշագործ պատկերը (1331), մինչև ցայժմ 864 տարի կը լինի:

հայկազունք՝ վախճալով որ չըլլայ թէ զրկուին իրենց սրբազան գանձէն, 'ի պատկերէ Տերամօր, կեանքերնին վաանգի դնելով՝ պահպան եղան պատկերին։ Այլազգիք տեսնելով զՀայս՝ անձնանուէր իրենց սրբատեղոյն, ուր անպակաս էին, կասկածեցին որ հոն պէտք է լինի պահուած նոցա մեծ հարստութիւնը, ուստի ուզեցին քանդել, աւարել այդ եկեղեցին։ այլ Մայրն Ողորմութեան, Արամուհի Կոյսն Մարիամ, արգելք եղաւ նոցա, քանի քանի անգամ հրաշափառ, բոցանձանչ աստ և անդ երևցաւ, իբրև թէ պաշտպանելով իւր 300 տարուան սիրելի բնակարանը. և այնպիսի ահազդեց, որ քանի մ'անգամ ժօտենալով եկեղեցւոյ պատերուն, վախով և ամսթապարտ ստիպուեցան յետ դառնալու։ Հայք նեղուելով յայլազգեաց՝ որոշեցին առ ժամանակ մի հեռանալ 'ի Կամենիցէ...։

Այլ չուզելով բաժնուիլ իրենց սրբազան գանձէն, գաղտուկ մեկնեցան հետերնին առած Տերամօր պատկերը։ Ողորմածն Աստուած պահեց զնոսա 'ի ցամաքի թշնամեաց ձեռքէն. այլ երբ կը ճանապարհորդէին Ա Ժովուն վրայ, տեսան հետամուտ զթշնամիս, և արտասուօք գիմեցին առ Աստուածամայրն Հրաշագործ։ Այդ խեղճ վիճակին մէջ Աստուծոյ կամաց հպատակելով, կ'ընտրէին ամենայն ինչ կորսնցընել, միայն թէ Աստուածամօր պատկերն չլինի աւար։ Հասած էր ժամանակը որ Հայք ընկնին թշնամեաց ձեռք, այլ Աստուած գթութեան աչօք նայեցաւ առ ինքն յուսացեալս. յանկարծ փչեց մրրկախառն փոթորիկ, փրփրեցաւ ծովը, ալիք կը տատանէին զնաւերը, պատեց խաւարը, որոտմունք, փայլակք, ճարճատիւն առագաստից և

նառուն շունանաց՝ ասրտոփ կ'ազդէին, տարերց պատերազմի միջոց: Այլից ծովը օտարաց բոլոր նաւերը սցլ Հայոցը՝ յարում էր պատկեր Սրանուհւոյ Առսին, թէպէտ երկար միջոց պատերազմեցաւ մրրկին և աշեաց դէմ, և մեծապէս վտանգուած, առաջատաքն պատառ պատառ, մեծ կայմն միջարեկ, յիրաւի հրաշքով, յաջողութեամբ հասաւ 'ի ցամաք: Մեծ վտանգէն ազատած ջերմեռանդն պաշտօնարկուք հրաշագործ պատկերի Տիրամօրն, կրցան ազատ շունչ առնուլ. և շնորհակալ լինելով նորա գթալիբ բարեխօսութեան առաջի Աստուծոյ, հրաշագործ գանձովն անցան գնացին 'ի Մակեդոնիա: Հոն՝ ըստ ազդելոյ Տիրամօր, ապահով և յարմար տեղ մի պատրաստեցին սրբազան պատկերին, ինքեանք միշտ երկրպագուք և գոհարանիչք լինելով, զգուշութեամբ պահելով իրենց գանձը, գիշեր ցորեկ պաշտելով Սրկնից Քաղուհին: Սրկար ժամանակ մնացին նոքա 'ի Մակեդոնիա, ընդ պաշտպանութեամբ Տիրամօր: Եւտաով տարածուեցաւ Մակեդոնիոյ մէջ Ս. Պատկերին հրաշագործութեանց համբաւն. բազմութիւն ժողովրդոց՝ 'ի զանազան պէտս՝ ջերմ աղօթիւք կը դիմէին առ նա. և նա՝ Պաշտպանն յուսացելոց, ինչպէս մինչև ցայսօր, կու տար ցոյց իւր առատ ողորմութեան, և աղաչաւորք մխիթարեալ կը մեկնէին նորա խորանէն: Տասը տարիէն վերջը՝ ազդեցութիւն եղաւ ջերմեռանդն պաշտօնասիրաց Տիրամօր պատկերին՝ տանել զնա յիւլով: Որովհետև հոն արդէն տարածուած էր համբաւ հրաշից Պատկերին, այն պատճառաւ մեծ հանդիսիւ, 'ի ցոյցս ջերմ հաւատոց ընդունեցան իլլովցիք զՊատկեր Առսին, ինչպէս 'ի Մակեդոնիա: և անպակաս էին երկրպագուք:

առաջի պատկերին: Քիչ ատենէն Տիրամօրս հրաչք առ կարօտեալս և վշտացեալս՝ ՚ի գովարանութիւն դրդեցին նաև բոլոր քաղաքը առ Երկնից Թագուհին: Այն ժամանակ նաև (1699) տղորմելով Ասորւած քրիստոնէից՝ ազատեց զՓոտոլիա յօտարաց լուծէն: . . . Խորհեցան Հայք դառնալ ՚ի Կամենից, որպէս զի հանգչեցընեն Տիրամօր պատկերը իւր ընտրած տեղին: Մտանալով Կամենիցի - Հայք, կանգ առին Դուժքա կոչուած գեղը. վասն զի բարեպաշտ Կամենիցցիք կը փափաքէին պարտ ու պատշաճ յարգութեամբ և փառօք ընդունել Երկնից Թագուհին երկրաւոր խոնարհ բնակարանին մէջ: Անհամար բազմութիւն ժողովրդոց, ազնուականք և ռամիկք, դատաւորք քաղաքին, փառաւորեալ և չքեղ ասպետք՝ դիմաւորեցին Պատկերիս՝ ուրախութեան երգօք և նուագօք, և առաջնորդեցին ՚ի քաղաք: Բոլոր քաղաքացիք երկար միջոց թնդացուցին օղբ ուրախութեան և գովութեան երգօք, ՚ի պատիւ Մարիամու կուսին:

Եւ որովհետև տաճարն, յորում կը պատուուէր Պատկեր Աստուածամօրս ՚ի Կամենից, Թուրքաց քաղաքին տիրելէն առաջ, գրեթէ քանդուած էր, այն պատճառաւ դրին զնա ՚ի մատրան Աւետման Երանուհւոյ կուսին Մարիամու,՝ որ մօտ է Հայոց եկեղեցւոյն: Քանի որ պատկերս այդ մատրան մէջ էր, միշտ կը լինէին անդ հանգիստաւոր պաշտամունք և քարոզք, որովք հոչակէին հրաչք Պաշտպանիս մերոյ: Աւանդութեամբ գիտենք՝ որ այն միջոցին երաշտութիւնը մեծապէս վտանգած

1. Ըստ Արարիկի նախ դրած են ՚ի մատրան Նախավրկային, և ապա յեկեղեցւոյն Աւետման:

է դաշտաց, ցորենի և այլոց բուսականութեանց, որով մօտալուս սովը սարսափեցուցած է զժողովուրդը: Այլ Տիրամօր Պատկերն 'ի կամենից դանալուն պէս, բարեխօսութեամբ Երկնից Թագուհւոյն, ուրախարար ցօղը կ'իջնէ յերկիր, առատ անձրև կը թափեն ամպերն. կը յագի երկիրն, կը կենդանանայ և կը ծաղկի: Ուրախութեամբ կը լեցուի մարդկանց սիրտը, տեսնելով որ Բաշխողն երկնաւոր ողորմութեանց խնդրեց յԱստուածորդւոյն՝ ժողովրդոց կարևորը: . . .

Չեռք կը զարնեն Հայք նորոգելու Ս. Դիկոյայտ եկեղեցին. կարևոր ատաղձը արագ կը պատրաստեն, գործաւորք անվարձ կ'աշխատին, հարուստ և պաշտօնաւար անձինք իբրև վարձաւորք կը հայթայթեն կարևոր պէտքը: Նոյն իսկ կանայք և տիկնայք ամէն դասակարգէ պատիւ անձանց կը համարին մասնակցիլ գործոյն: Մեծի պատուոյ արժանաւոր մեր մամերն՝ յօժարութեամբ կրած են աղիւս, աւազ և կիր, շնայելով ամենեւին ոչ ամուսն տաքուն, ոչ անձրևի և ոչ այլ օղոց խառնակութեան: Տաճարիս վերանորոգութիւնն աւարտած է 1767/ին, և նոյն տարին բերուած է Աստուածամօր հրաշագործ պատկերն 'ի մատրանէ Աւետման. յեկեղեցիս Հայոց, յոր կը պաշտի ցայսօր:— Ազգիս աւանդութիւնք անընդհատ կը հռչակեն զդքանչելիս Երկնից Թագուհւոյն. — այն սքանչելիք կենդանի պահուած են ազգայնոց սրտին մէջ, և մշտնջենաւոր պիտի մնան աւանդութեամբ, թէ ինչպէս Սրբուհի կոյսն հասած է օգնութեան՝ ժանտամաշի միջոց, բժշկած է ախտաժետս և խեղանդամս, օգնած է զժբաղդութեան և ցաւոց միջոց, 'ի սովու և 'ի պատերազմի. դարձեալ թէ

որպիսի՝ մեղաւորք զարձեալ եկած են Պատկերիս զիմաց, և որչափ թերահաւատք զարձած են առ Քրիստոս՝ ազդեցութեամբ Տիրամօրս:

Հին լեհախօս աղօթագրքէն քանի մը հատուած թարգմանելով՝ կ'աւելցընեմք ստորեւ, որք ապացոյցք են վերը գրուած աւանդութեանց:

Ա. Զերմ հատալանք: « Մայր Աստուծոյ, պաշտպան ջրիստոնէից, պաշտպանեալ պահեա զրնակութիւն քաղաքիս և բովանդակ Փոտոլիոյ՝ ի թշնամեաց հաւատոյս մերոյ և թագաւորութեանս. Ունիմք մեք զհաւաստիս մայրենի հովանաւորութեան Քոյ, ոչ ՚ի կարծ դատեցեալ, այլ օտուգութեամբ հաւատարմացեալ. նախ ՚ի կամենից Ժամանակս ձիգս, սքանչելեքդ հովանաւորեալ, Աբրամաբուր Կոյս, և ապա ՚ի Մակեդոնիա, և ՚ի Լով քաղաքի: Դու ՚ի սրբել քաղաքիս ՚ի թշնամեաց, հրաշափառապէս դարձ արարեր այսրէն, ուր և հանապազ գործես սքանչելիս, ՚ի ցոյց ողորմութեան Քոյ »:

Բ. Գովորքիւն Մարիամնո: « Գովարանեցէք զՄարիամ, հոգմք և մրրիկք և ամպք. պարիսպք և հաստատութիւնք, ապառաժք և քարինք, որք շուրջ կայք կամենից քաղաքիս: Նա է ձեր պաշտպան. նա՛ որ բնակին յեկեղեցւոյ Հայոց պահպանէ զձեզ. նա՛ որ ունի ընդ ոտիւք զլուսին, զթշնամիս առ ոտս իւր խոնարհեցուցանէ: Կայ աներկեան դու Փոտոլիա յերեսաց անհաւատից: Մի երկիցուք մեք ՚ի լծոյ թշնամւոյն. Աստուածամայրս պահեսցէ և պահպանեսցէ միշտ զՓոտոլիա »:

Գ. Երգ: — « Զորեքհարիւր և այլ տասնեակք ամբ անցին՝ յորմէ հետէ թագաւորէն ՚ի կամե-

նից՝ Մարիամ. տեղի բնակութեան ընտրեաց նա զեկեղեցին Հայոց, ուր պաշտի պարտուպատշաճ յարգանքք ուստի սփռէ զմեծ զողորմութիւն »:

Դ. Երգ: — « Մինչդեռ կամօք Որդւոյ Քո, վասն մեղաց մերոց, էանց կամենից ընդ իշխանութեամբ այլազգեաց, և հաւատարիմ ծառայք Քոյին, անձամբ շափ պաշտպան կացեալ Քումդ պատկերի, ծովաշու գնացին ընդ Սեաւ ծով, 'ի խորտակել այլոց նաւուց, նաւն՝ որ բարձեալ տանէր զՔոյդ կենդանագիր, ժամանեաց յանքոյթ նաւահան, գիտ »:

Ե. Լիբանհա: — « Սրբուհի Մարիամ, հաստատութեանս այսմիկ (կամենիցի) հաւատարիմ պահպան. Սրբուհի Մարիամ, բազմապատիկ պաշտպան կողմանցս (Փոտոլիոյ) հարստահարելոց յայլազենից. Սրբուհի Մարիամ, որ յայտնապէս երևեցար այլազգեաց 'ի վերայ որման գաւթի եկեղեցւոյս Հայոց. Սրբուհի Մարիամ, որ գնացեր տարագիր 'ի ձեռն հաւատարիմ Քոց ծառայից և ընդ ծով հատեր զուղի. Սրբուհի Մարիամ, որ հրաշիւք զերծուցեր զծառայս Քո 'ի ծովակուր լինելոյ, և հաներ զնոսս 'ի մրկաց 'ի խաղաղ նաւահանգիստ:

Սրբուհի Մարիամ, 'ի Մակեդոնիա հռչակեալ սքանչելեօք:

Սրբուհի Մարիամ, որ յօտարութենէ հասեր յԵվով:

Սրբուհի Մարիամ, որ յելանելն թշնամեաց 'ի կամենիցէ, վաղվաղակի դարձ արարեր 'ի սիրեցեալ Քո տեղին:

Սրբուհի Մարիամ, որ մեծահանդէս պատուով և պաշտամամբ հանգեար 'ի սրբավայր Քոյին. Սըր-

բուհի Մարիամ, որ 'ի ժամու արածութեան՝ զապաւինեալս առ Քեզ՝ ողորմութեամբդ կեցուցեր. աղօթեա վասն մեր»:

Զ. Դարձեալ երգաս Սրբուհին Մարիամ: — « Սըրբուհի դու, որ ողորմութեանց ես բաշխող, որ զգլորեալ մեղաւորն անդէն կանգնես, առ քեզ համբառնամք զմիտս մեր և զսիրտ, զՔեզ փառաւորեմք. Դու ամուր և վահան կամենիցի՝ 'ի շորեք հարիւր և աւելի ամաց հետէ. Դու ես պաշտպան և բաղդ համօրէն Քոց ծառայից: Թշնամիք մեր խոստովան եղեն յայտնապէս՝ զի 'ի տալ մեզ Մարիամու զօգնութիւն, երկիւղիւ իբրև երկաթ կապեցան օջ բազուկք նոցա և խորտակեցաւ արութիւն: Տեսեալ զՔեզ բոցաճաճանչ՝ ըմբռնեալք մեծաւ երկիւղիւ 'ի փախուստ դարձան թշնամիք, և վարեալք անհնարին տագնապաւ՝ լքին զօրբաւայր Քոյին: Ի յարձակել թշնամեաց 'ի վերայ մեր խժդժութեամբ՝ հաւատարիմ սպասաւորք Քոյին փախուցեալ 'ի հալածչաց մտին 'ի նաւ, զՔեզ կրելով 'ի միասին: Դու քաջապէս պահեցեր զնոսա 'ի Սեաւ ծովուն, ընդդէմ մրրկաց և ալիաց խուռն կաւտակելոց. զի նոքա զՔեզ ընդ ինքեանս կրելով, Տիրուհի, անվտանգ զերծան: . . . Դու գեղեցկութիւն Հայոցս, գանձ անսպառելի, պարգևեալ մեզ յերկնից. 'ի Քէն է մեզ ողորմութիւն. դու կարօտելոց օգնութիւն. առ ո՞ որ ձեռք Քո յօգն կարկառիցին՝ նա երկնչի յումեքէ ոչ: Նենգութիւն և պատրանք թշնամեաց հալին որպէս մոմ առաջի Քոյոց խորհրդոց: Հրապոյրք շարին և փորձութիւնք՝ 'ի դիմելն մեր առ Քեզ, 'ի փոշի լուծանին: Թագուհիդ երկնաւոր, ըստ վաղեմի սովորութեան Քում, իշխեա 'ի վերայ մեր, և կառաւ

վարեա զաշխարհս մեր: Տուր մեզ զցանկալին խա-
զաղութիւն և զկերակուր չափաւոր 'ի սնունդս
որդեկաց Քոց »:

Ը

ԵՐԿ ԱՌՆՈՅՆ ՍՐԲՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ

Ո՛վ անըսպառ ողորմութեանց Տիրուհի,
Երես յերկիր անկանիմք Քո առաջի,
Աչք յարտասուս աղերսաւորք, անսասան
Պահել ըզմեզ ընդ հովանեաւդ յաւիտեան:
Դու ես պաշտպան հանուրց սեռիս մարդկութեան
Չարդ և պարծանք մեր աշխարհիս Փոտոլեան:
Կոյսդ համբաւեալ, յեկեղեցւոջրս Հայոց,
Երևեցար փայլակնացայտ 'ի հուր բոց,
Յառնուլ նոցա զայս մեր քաղաք 'ի մարտին:
Նոքա ինքեանք ոչ ուրացան, ասացին,
Չի բոցավառ ըզսըրբավայր Քո տեսին,
Ընդ որ ապշեալ, յահ և յերկիւղ պատեցան:
Դու փրկեցեր ըզՔո որեարդ հայկազեան,
Մինչ զընային հալածական 'ի ծովու,
Հետամուտ լեալ 'ի Թըշնամեաց ահարկու.
Բեկեալ կայմիւ հաներ զնոսա 'ի յանքոյթ
Նաւահանգիստ, ըզթշնամիս կորուսեալ,
Ըզնաւս նոցին ախիւ գանձիւ ընկըղմեալ:
Իսկոյն ծանեան մերըրն՝ զերծեալք հրրաշիւք
Չի Քո էին կոյս Տիրամայր այն արդիւնք:
Դարձ արարեալ այսրէն 'ի մերրս աշխարհ
Ի Լուլ քաղաք առեր հանգիստ և դադար:
Անդ համբաւեալ, աշխարհ վըկայ, ըստ որում
Ետուր կաղաց, կուրաց, խօթից բժըլկութիւն:

Անտի ապա, ասպետք Լեհաց պար առեալ
Ըզբև, երէցք 'ի Դրլուժքա ներրողեալ՝
Փառօք մեծաւ ածին ըզկոյսդ յայս քաղաք.
Ուր և իսկոյն եղին յայտնի Քոյին հրաչք.

Առատ անձրև՝ երաշտացեալն 'ի յերկիր
Յօղեալ՝ արար բազմապրտող կենսակիր:
Ծանեաւ երէցն ըսքանչելիսդ յայտնի.
Որ կայր յերկար, լոյծ անդամօք 'ի մահճի:

Պատգամ 'ի Քէն եղև նրմա 'ի տեսեան
Դիմել առ Քեզ յեկեղեցւոյս հայկական,
Ուր և թողեալ զմահիճ, ոտիւք զընայուն
Վազվազելով ըզկոյսդ օրհնեալ դարձ 'ի տուն:
Բազում են կաղք, կոյրք, գօսացեալք, հաշմանդամք,
Որոց զըսեալ ըզլոյս երկնից և զգընացք,
Թողեալ աստէն ցուպ գաւազան ընդ անթով
Վ՛ երադարձան՝ օրհնեալ ըզՔո մեծագով:

Սըրածութեան ժամուն՝ տեսին լուսաւոր
Ըզքոյ տահար շուրջ բընակիչք մերձաւոր.
Գիտեմք բիրիցըս մեք զըտակ հաւաստեաւ
Զըսքանչելիսդ ակն յանդիման աստ անբաւ:

Դու մըխիթար՝ որոց 'ի վիշտ տազնապին,
Ապաւէն դու մեղաւորաց գըրոհին.

Դու գանձ անգին մեր կամենից քաղաքի,
Հըզօր պաշտպան Փոտոլիացւոց գաւառի:

Կաս 'ի տախտակ, անաղարտ գոյն Քոց դիմաց,
Երկնաւորի, այս, մատանց ես կերտուած:
Լեր մեզ պաշտպան, դու մայր ամբիժ, կոյս զըթած.
Արա՛ ընդ մեզ ըստ սրբագոյն Քոց կամաց:

Յաւերժաբար երկըրպագուք եմք Քոյին,
Անտես արա ըզպարտիս մեր, թողութիւն
Մեղաց մերոց հայցեալ. խընդրեմք, Տիրամայր,
Եւ յետ մահուան լեր մեր հոգւոց կենարար:

Թ

ԱՐԿԱՄՔ ԱԿՈՐՄՈՅ ԿԱՄԵՆԻՑՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՒՆ

1872 ին Մէհմէտ Գ. Կամենիցի տիրելով, երբ քրիստոնեայ բնակիչքը թողուն, կը հեռանան քաղաքէն, այլազգիք մեծամեծ խոստմունքներ անելով՝ կ'առնուն կը մնան զՀայս. սակայն 600 հոգի, 'ի թիւս որոց և 14 կուսանք, կը հեռանան 'ի Կամենիցէ: Սոցա հետ կար տասուերկու տարեկան մանուկ մի, որդի Կամենիցցի Հայու, որ քիչ ժամանակէ 'ի վեր որբ և անտէր մնացել էր: Մայրը վաղուց մեռած էր, իսկ հայրը զեռ նոր՝ Կամենիցի առման միջոց՝ իւր տունը հրդեհէն ազատելու աշխատելով բոցոյն ճարակ եղել էր: Այս փոքր երախայն (որովհետև հայրը միշտ յարաբերութիւններ ունեցել էր Թաթարաց հետ), համարձակ կը խօսէր Թաթարաց, նոյն և Թրքաց լեզուով. այդ լեզուաց գիտութիւնը՝ վերջերը՝ մանկան մեծ Թարգմանի պաշտօնի հասնելու պատճառ եղաւ: Գաղթակունացս խուռն բազմութեան մէջ, մի միակ մերձաւոր անձն մի ունէր այս մանուկս, որ էր պառաւեալ Կոյան Հռիփօիմէ, չորեքտասան մայրապետաց մին, որ և իրեն մայրագիր եղած էր: Կուսանաց վանքին բեռները կրկին ուղտերու շարակ բեռնաւորած էին, և Ստեփանիկ մանուկն՝ այդ ուղտերէն մէկուն վրայ հեծած, որ կապոցներուն և պարկերուն միջէն հազիւ կ'երևար, և կանանց ճիչն,

խուռն բազմութեան կանչն և աղաղակն անտարբեր մտիկ կ'անէր. — ուր և ինչո՞ւ կ'երթան, արդեօք վերստին պիտի դառնայ իր ծննդեան տեղին, — ամենևին հոգը չէր: Երևակայութեանը մէջ խոր տպաւորած էր միայն Կամենիցի հրդեհը, որոյ զոհ եղած էր հայրը, ուր և ինքը յուսահատաբար լալուն և ճշելուն միջոց՝ անծանօթ ծերունի ձեռք մի զինքն ազատած էր կրակէն, և տարած յանձնած էր կուտանաց վանքը՝ Հռիփսիմեայ խնամոց:

Քաղթականաց Հայոց կարաւանն կամ Թափօրն կը հասնի Տնեսդեր գետին եզերքը. ուստի միւս կողմ անցնելու արգելք կը լինին. զի Խոթինի անցքը կամ կամուրջը՝ այլազգի զօրքն դէպ'ի ամբողջ անելու կը զործածէ: Հայոց բանակին գիշերօթելու տեղ կը նշանակուի զառիվայր տափարակ մի, ուր երբեմն Սոպիէպի Լեհաց Թագաւորը մեծ յաղթութիւններ զօրծել էր: Հայք ստիպուած էին ամէն տեղ այլազգի կառավարչաց ներկայանալ, և նոցա հրամանին համեմատ յառաջ վարել ճամբանին: Կ'որոշեն իրենց մէջ այս անգամ պատգամաւոր դրկելու առ այլազգի կառավարիչն՝ Բուտազովիչ անունով նշանաւոր անձը, որոյ՝ իբրև Թարգման՝ կը նշանակեն Ստեփանիկ Ակոբսոյ մանուկը. այս առթիւ նա՝ առաջին անգամ կը վարէ իւր ապագային պաշտօնը: Թէպէտ և Խոթինի բերդակալը Տէրիպալթա՝ կը մերժէ Հայոց խնդիրը, սայլեր չի տար, այլ տեսնելով Հայոց Կամենիցի փաշայէն առած անցազիրը, կը հրամայէ որ առանց մօտենալու արքունի սայլերուն՝ հեռուէն անցնին երթան:

Երկրորդ օրը՝ առաւօտը կանուխ՝ Հայոց բանակը

կը շարժի տեղէն, և երբ կը հասնին երկրորդ գիշերօթի տեղը, այլազգի խումբը՝ որ աղայի մի հրամանատարութեամբ՝ Հայոց հետ կ'երթար, համաձայն կամենիցի փաշային կարգազրուածան, կը հրաժարի մերոնցմէ. այլ այդ հրաժարականը մեծագին կը լինի մերոց. զի 'ի նշան շնորհակալութեան՝ ոսկւոյ մեծ քսակ մի պարգև կու տան աղային. ապա թէ ոչ՝ այդ աղային պաշտպանութիւնն աւելի ծանրագնի կը լինէր նոցա:

Հայք իրենք իրենց Ճաշով՝ ազատ այլազգի պաշտպանէ, համարձակ կը լինին պաշտելու իրենց Տիրամայրը. գիշերները՝ խուլ և անմարդի ճանապարհէ դուրս տեղուանք կը զարնեն իրենց բանակը. իրենցմէ պահապաններ կը դնեն բանակին շորս պոռոյտը. 'ի բանակամիջին՝ պարսիկ կապերուներով հովանաւորեալ սայլին վրայ է Տիրամօր Հրաշագործ պատկերն, պաշտպան պանդուխտ Հայերուն. Փոխան հրաբորբօք լահերու՝ փոքրիկ կանթեղ մի կը պըլպըլայ Պատկերին դիմաց, աղօսոյս ձգելով Տիրամօր թուխ դէմքին վրայ: Այդ շարժական վրանաձև տաճարին մէջ, ամէն օր պաշտամունք կը կատարուին. թերևս և ոչ մի փառաւոր տաճարի մէջ այնպիսի Չերմալերմ պաշտանօք չեն դիմած հաւատացեալք առ Աստուած, ինչպէս այս աղքատին խորանին դիմաց: Երեկոյեան ժամասացութենէն վերջը վանազուրկ և տխրատեսիլ մայրապետք ծունր դրած պատկերին առաջ՝ իրենց առանձին մրմունջը կը հեղուին յունկն Տիրամօր. քաղցր էր նոցա համար այն Աստուածամօր առաջ Անկեալ դիրքը. Անկեանիք առաջի Քոյ Աստուածածին, սրտանմիկ և խուլ ձայնով կը կրկնէին նոցա չէր կրնար Հրաշագործ Տիրամայրն անլսող լինել

այն սրտախօսիկ հառաչանայց. միտթարեալ՝ կը փակէին նոքա իրենց աչքը 'ի քուն հանգստեան, մինչդեռ նոցա հոգաբարձուն Տէր Մատթէոս, կանթեղին աղօա լուսով 'ի գիր կ'անցընէր օրուան պատահարքը: Գիշերուան հանգստենէն վերջը, վաղ առաւօտ երկրպագելով մեր Հայերն դէպ Աստուածամօր պատկերին կողմը, կը շարունակէին ճամբանին միշտ 'ի հարաւ բռնելով: Սոցա հետ էր և Ստեփանիկ Թարգմանիչ, որ Հռիփսիմեայ օրինակին հետեւելով Ներմեռանդութեամբ կը համբուրէր գետինը: Քայց ուր պիտի հանգչէր վերջապէս սոցա ճանապարհը. «Նա, Տիրամայրը կը ցուցընէ մեզ», կը հառաչէին Հայք, դէպ 'ի Տիրամօր տայլը աչքերնին վերցընելով:

Այս ձևով ամիս մի ճանապարհորդելով՝ կը հասնին յափն ծովու: Արդէն գրեցինք նոցա 'ի ծովու տազնապը, Մակեդոնիոյ մէջ երկար Ֆնալնին և անտի յիլով անցնելնին, իլվովի մէջ՝ կամենիցէ ելնող կուսանացմէ ոմանք կը բաժնուին յընկերութենէն: Անտոնի պատճառ կը բերէ նոցա հայերէն չգիտնալը: Այդ բաժնուող կուսանաց մին է պառուան Հռիփսիմէ, մայրագիրն Ստեփանի Ակորսոյ: Սոքա՝ Հռիփսիմէ և Ակորսոյ՝ ընկերութենէն բաժնուելով, հարկ էր որ ապրուստի ճամբայ մի գտնային, իրենց համար օտար և անծանօթ իլվով քաղաքին մէջ: Ստեփանիկ այն ատեն 16 տարուան էր: Սկսաւ անելանելի մտածութեան մէջ ընկզմիլ. յիլվով փողոցէ մ'անցնելուն միւրջ՝ պատահմամբ առջևը կ'եղնէ կամենիցի Խոցի, միրաքի մականունով մեծապատիւ հայազգին. աս (Խոցիմիրաքի) կամենիցի՝ այլազգեաց ձեռքը անմիջապէս անցնելուն միւրջ՝ տեղափոխուած էր

Իլլով. այս պատահմունքս կ'ապահովէ ինչպէս Ակորոսի՝ նոյն և Հռիփսիմեայ կեանքը և ապրուստը Իլլովի մէջ: Խոցիմիրաքի Ամենիցի ունեւոր և անուանի քաղաքացեաց մին էր, նորա փառաւոր տունն էր Հայոց հրապարակին արեւմտեան ծայրը. ուր այժմ Լեհաց փառաւոր եկեղեցին կանգուն կայ 'ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեան: Խոցիմիրաքեայ բարօրութեան բան չէր պակասել, ըստ արտաքնոյն. այլ որովհետև չկայ աշխարհիս վրայ կատարեալ երջանկութիւն, սա ևս ունէր իւր վիշտը. զի զաւակները չէին ապրել. այդոր դարման՝ նա բան չէր խնայած, առատ տուրք և ողորմութիւն, ջերմ աղաչանք պաղատանք և սուրբ տեղեաց ուխտագնացութիւն:

Իլլով անցնելուն պէս անմիջապէս կը ծնանի նորա կինը՝ Մարգարիտոս զստրիկը. այլ ինքն ճանապարհին վտանգուած լինելով շուտով կը վախճանի: Խոցիմիրաքի երկար ժամանակ կ'ողբայ իւր սիրելի ամուսինը, և բոլոր իւր սէրը փառքիկ Մարգարիտայի վրայ կեդրոնացընելով երկրորդ ամուսնութիւն մտքէն շանցընէր:

Նորա անկին տան՝ տանտիկին հարկաւոր էր, բարեպաշտօն, զգաստ, միանգամայն հայ, որ առաջնորդ և խնամակալ լինէր փառքիկ Մարգարիտային. Հռիփսիմէ պառւան այդ բանին շատ յարմար էր: Ստեփանի ալ հայր և առաջնորդ կը պակասէր: Խոցիմիրաքի սիրով բացաւ իր տան դռները այդ անտուն և անինչ պատանեկին դիմաց: Նորհակալութեամբ մտան նոքա իրենց նոր բունին մէջ, որով և երկու կողմէն մեծապէս զոհ եղան: Կը գտնան զիրար Ամենիցի Հայ պանդուխտները, 'ի թիւս որոց կ'աւելնայ ապա և այլ ոմն

հայ կամենիցցի, Գասպար Բուտագովիչ անուամբ, որ ըստ վկայելոյ Գարոնզի՝ նշանաւոր ոմն եղած է: Սա երկար ժամանակ ազգայնոց հետ 'ի Մակեդոնիա, 'ի Պալզանս պանդխտելէն վերջը, միշտ պահապան հսկելով Տիրամօր պատկերին, 1682ին կու գայ Իլլով, և հոն Ս. Նիկողայոս կոչուած Երբայրութեան խնամակալի պաշտօնը կը ստաննէ: Հայոց մէջ սա ճանչցուած է ճարտարախօս, Լեհաց Յոհան Գ. Թագաւորը Իլլով եկած միջոց՝ Գասպար յիշեցուցուցած է նմա բանաստեղծօրէն Փոտոլիոյ նուաստանայը յայլազգեսաց:

Խոցիմիրաքեայ խաղաղաւէտ բնակարանին մէջ կենդանացան հին ազգային և կամենիցեան յիշատակք. Բուտագովիչ շատ կը սիրէր նորանոր լուրեր պատմել կամենիցի տիրողաց մասին, թէ Նախախնամութիւնը զանազան պատիժներով կը հարուածէ զնոսա, տիրած են քաղաքին մեջ սով, ցաւ, շփոթութիւնք նաև այլ անսովոր երևոյթք: Այդ երկու հայ պանդուխտք գաւաթ մի մեզրաջուր խմելուն միջոց՝ շատ ու շատ խորհրդածութիւն կ'անէին. թէ ինչպէս, եթէ Աստուած տայ, վերադառնան 'ի կամենից՝ պիտի կարգաւորեն ազգիս գործերը, և առանց խնայելու պիտի դուրս վարեն քաղաքէն բոլոր Հրեայքը. նոքա լաւ գիտէին որ որդիք Խարայելի՝ Խամայելի իշխանութեան ներքոյ՝ իրենց տեղը բռնած էին կամենիցի մէջ: Խոցիմիրաքի ալ կը յիշէր զուարթախառն մորմուզմամբ իւր կամենիցի մէջ գեղայարմար բնակարանը, շուրջ պատեալ կռկղի ծառերով, դէպ 'ի փողոց երկնցած ճեմելեօք, ուր երեկոյեան « Հրեշտակ Տեառնի » զանգակին ձայնով կը ժողովէին քաղաքին և դաշտաց պաշտօնավարք, և երկար նստարաններու վրայ հանգչած՝

հանդարտութեամբ կը խօսէին, կը խորհրդածէին հասարակաց գործոց վրայ: Ճեմելեաց մէկ ծայրը բարձրացած էր կամենիցի անմատչելի բերդին պատը. մութը երթալով կը թանձրանար հորիզոնին վրայ. կակղիք քաղցրահոտ բուրմունք կը տարածէին օդոյն մէջ, և նոցա տերևոց խօշիւնն, իրրև մըրմունքը երեկոյեան աղօթից կը լսուէր: Բուտագովիչ պատմելով շեր կշտանար Հայոց Ս. Նիկողայոս եկեղեցւոյն փառաւորութիւնը, վայելչութիւնը, նորա ընդարձակ չրկապատ սրահը, և սիւնազարդ մուտքը. կը գովէր Հայոց ճարտարարուեստ և հոյակապ դատարանը, հաստաբետ կաղնի մարգակներով. որոց վրայ հայերէն տառերով փորագրուած էր ԺԻ դարու լինելնին: Փոքրիկ Մարգարիտա այդ հրաշալիքը լսելով, լռիկ մնչիկ նստած՝ երեսները կը կարմրէին, աչքերը կը փայլէին. իսկ Ակօբոյ մտադրութեամբ մտիկ անելով, կը փափաքէր օր մի առաջ երթալ տեսնալ այդ առասպելախառն և գեղեցիկ քաղաքը: Ուստի օր մի՝ երբ իմացանա՝ որ իլվով եկած Ս. Երրորդութեան կարգի միանձունք պիտի երթան ՚ի կամենից՝ Հայ, Ռուս, և Լեհացի գերեալներ յայլազգեաց գնելու և ազատելու համար, մեծ ուրախութիւն զգաց, և հաստատապէս միտքը դրաւ՝ որ անպատճառ ինքն ևս միանձանց ընկերանայ, գերեաց գերեհան լինելու:

Գերեհանաց ընկերութեան երկու անդամք հայ էին, մին դեռ նորընծայ կրօնաւոր, որ արևելեան ինց բարբառով կը խօսէր, աշխարհական Զաքարիա Միքայէլիչ, օր կամենիցի առման միջոց փոխադրուած էր յիլվով. սոցա գլխաւոր ընկերն էր ժմ Sancta Maria Միքայէլ վարդապետ Սպանիացի:

Ակորսոյ սկսաւ աղաչել սոցա՛ որ զինքն ևս իրենց ընկեր առնուն: Այս խնդրոյս համար հարկ եղաւ խորհուրդ մի գումարել Խոցիմիրսքեայ տան մէջ, ուր հաւանեցաւ գերական ընկերութիւնն ընդունել զԱկորսոյ իրեն ընկերակից: Տանուտէրը կը պատուիրէր Ակորսոյի՝ որ Կամենից հասնելուն պէս, երթայ նայի քննէ իւր տունը. խեղճ ծերը չէր գիտել՝ որ վաղուց իւր տունն՝ փայտի տեղ՝ կրակի նիւթ եղած էր յայլազգեաց, և եթէ կակղիք այդ փորձանքէն ազատել էին, ուրիշ պատճառաւ չէր, այլ զի կ'ախորժէին նոցա շուքին ներքև ծալապատիկ նստած՝ ժամանակ անցնելու. Բուտագովիչ զանազան առևտրական յանձնարարութիւնք տուաւ Ստեփանի. Հռիփսիմէ յանձնեց նմա, որ անպատճառ երթայ գտնէ նախնեաց գերեզմանքը, և նոցա վրայ մի Հոգշոց ստէ. այլ Մարգարիտայի սիրտը կտորեցաւ, և աշխարհք հայելու աչք չունէր:

Այս փոքրիկ՝ չորս անձով կազմեալ ընկերութիւնն՝ 1688 յունուարի 15 ին, վաղ առաւօտու պատարագ մի տեսնալով, ճամբորդ եղան յԿլովէ՛՛ի Կամենից: Կարգէ դուրս ձեռնարկ մի էր սոցա սկսածն, որոյ նմանը ոչ ոք չէր յիշել: Միանձուէք՝ արտերուն վրայ խաչ, գրպաննին ոչ լեցուն, զի միայն 400) զրոթի ունէին հետերնին, կ'երթային առ այլազգիս՝ իրենց հաւատակից եղբարց ազատութիւնը գնելու: Անվտանգ հասան Եանովա կողուած տեղը՝ Թերէսովլի մօտ, ուստի հարկ էր՝ որ իմաց տրուի Կամենիցի Փաշային սոցա զայլուտեան և նպատակին մասին: Եանովցի մէկը՝ որ միջնորդ պիտի լինէր սոցա և Փաշային մէջ, ուղեց նիւթականապէս շահուիլ այս առթովս. առաջարկեց սոցա որ փողերը իրեն յանձնեն, վասն զի

« Եստ վտանգաւոր է ձեզ, կ'ասէր, այդչափ փող հետերնիդ, առանց վտանգի կ'ամենից մտնելը » . — և կը խոստանար ինքն այդ փողերը անձամբ բերել և իրենց յանձնել: Այլ՝ զգաստ միանձունք այդ չահախնդրին ծուղակին մէջ շնկան. և միւս օր՝ առտու կանուխ՝ մինչդեռ սրտացաւ խորհրդատուն 'ի քուն կը խորդար, կամացուկ ելան գնացին ճամբանին: Փետրուարի երկուքին՝ յետ շատ սըրտազոզ քաշելու՝ հասան միանձունք 'ի կ'ամենից, և Ռոսսաց կոչուած դռնէն ներս մտան. պահպանք քաղաքին՝ արգիլեցին նոցա՝ որ բերդերուն վրայ շատ շնային, այլ շուտով անցնին: Գերեալ քրիստոնեայք լսելով միանձանց գալուստը, սրտերնին կռահեց, և անպատմելի ուրախութեամբ լեցուեցան. իսկ պահպանքն տեսնելով այդպիսի տարորինակ երևոյթն, կը գարմանան: « Սքա կախարդք պէտք է լինին, կը փսփսար ամբողն, գրպանին լեցուն ստակ, առանց պահպանաց՝ ոնկարելի բան էր քաղաք մտնալը »: Քաղաքին շնկոցը հասաւ Փաշային ականջը, հրամայեց որ բանտարկուին եկաւորներն. այլ Փաշային մերձաւորներէն մէկը գիտնալով նոցա նպատակը, խօսք անցուց Փաշային, ու ինքը մի այլ ուրացող աղայ հետը առած, գնաց միանձանց ցուցնելու արգելական գերիները: Երբ երեկոյեան դէմ միանձունք մտան գերեաց մտ, մորմոքեցաւ տրորեցաւ սըրտերնին, տեսնելով նոցա ցաւալի վիճակը, մանաւանդ երբ կը մտածէին որ իրենց քով գտնուած փողը, հազիւ գերեաց տասներորդ մասին ազատութեան փրկանքի կը բաւէր: Գերեվարք 'ի սկզբան մեծամեծ գիներ կը պահանջէին. մանկամարդ կնոջ փրկանք՝ փոքր երեսայիւ 'ի միասին՝ 1000

զրոքի. աշխատութեան գալու մարզուն համար՝ 800 զրոքի, ծերու գին՝ 300 զրոքի, իսկ պառուի համար՝ 200 զրոքի: Այլազգույ մը միջնորդելով կամաց կամաց գերեվարք պահանջներն իջեցուցին. այլ միանձանց փողը հազիւ կը բաւէր ՚ի փրկանս ութ գերեաց: Այլ երբ տեսան այլազգիք որ միանձունք յետ դառնալու կը պատրաստուին, աւելի իջեցուցին գերեաց գինը. սակայն ցաւալին այն էր՝ որ միանձանց դրամը բոլոր գերեաց ազատութեան չէր բաւել: Այլապէս կրօնաւորք փրկանաւորելով գերեաց մի մասը, խնդրեցին գերեվարներէն՝ որ մնացելոց հետ քաղցրութեամբ վարուին, և խոստացան վերստին դառնալ ՚ի Ամենից մեծ գումարով. և ազատած գերիներովն՝ մեկնեցան ՚ի Ամենիցէ վրդովեալ սրտով, զի կատարեալ չէր ուրախութիւններն, թէպէտ ազատեալ գերեաց վրայ հայելով՝ մեծապէս կը մխիթարուէին, այլ մնացելոց նեղ վիճակն կը ճնշէր նոցա սիրտը. տասնի չափ այլազգի հեծեալ զօրականք՝ զմիանձունս, ազատեալ գերեաց հետ՝ դուրս հանեցին քաղաքէն: Սոցա ընկերութենէն մին պակաս էր. Ակորոսյ չդարձաւ յիշով, նա ընտրեց գերեհանաց փառքէն աւելի՝ մնալ ՚ի Ամենից, և ձեռնտու օգնական լինել համազգի եղբարց, վասն զի վստահ էր նա իւր բնական ձրից վրայ, և հաստատութեամբ միտքը դրած էր՝ տիրողաց սիրտը չահելով տառապելոց նպաստամատոյց լինել. յորում և յաջողեցաւ:

Ակորոսյի առաջին ջանքն եղաւ Փաշային աչքը մտնալ, խոնարհութեամբ և ճարտարութեամբ կատարելով նորա հրամանները. Փաշայն և նորա մերձաւորք սկսան մասնաւոր ուշադրութիւն դարձընել այդ ճարտարախօս և աշխոյժ պատանւոյն վրայ:

չուտով ստացաւ Փաշային մտա՝ պաշտօն թարգմանի, և Փաշայն կը յուսացընէր նմա՝ որ եթէ լաւ վարէ այդ պաշտօնը, կարնոյ արքունի դրան մեծ թարգմանի պաշտօնին հասնի: Ակորսոյ նպատակին հասնելով ամենայն հաւատարմութեամբ և աշխրջութեամբ կը ծառայէր, և միջնորդութեամբ առ մեծամեծա՝ խօսքով և դրամով կը թեթևցընէր գերելոց դառն վիճակը, այլ ինչպէս առաքինի հօգի՝ կը զգուշանար որ չլինի թէ յիշով կամ այլուր իւր վրայ այլ ընդ այլոյ զրոյցքներ հնարեն նախանձոտ մարդիկ: Ուստի գրեց առ մի բարեկամն յիշով հետևեալ համառօտ նամակն, վկայ և ջատագով իւր ազնիւ սրտին: « Չկտուն կամ » սէր առ ծննդական տեղիս, ստիպեցին գիս հոս « մնալու. ստացայ պաշտօն 'ի Փաշայէն, այլ ես « իմ ծնողաց հաւատքը ամուր բռնած եմ, կը » ցանկամ միայն օգնական և մխիթար լինիլ՝ 'ի » գերութեան հեծող եղբարցս »:

Միանձունք հասնելով յիշով՝ կամենիցի քաղաքացիք, հայկազն ծերունիք Խոցիմիրաքի և Բուտագովիչ՝ զԱկորսոյ նոցա հետ չգտնալով՝ հարցուցին պատճառը. շախորժեցան անփորձ երիտասարդին յանդուգն գործոյն. այլ միանձունք միամիտ արարին զնոսա՝ թէ Ակորսոյ թէպէտ պատանի, այլ ամենայն բան հասուն խելքով կը գործէր, և թէ նորա նպատակն շատ առաքինական և զովելի էր: Մերունիք հարցմունք հարցմունքի կը յաւելուին. միանձունք քիչ ժամանակի միջոց ինչ որ տեսած էին և լսած՝ պատմեցին: Եւ մինչդեռ յիշով հարցափորձութիւնք կը լինէին, Ակորսոյ կամենիցի մէջ ամէն անկիւն կը քալէր, կը զննէր, և շատ անգամ կը զայրանար և սիրտը կը կօտրէր:

զի այն Կամենիցը չէր տեսածը, ինչ որ կ'երեւակայէր՝ լսելով երբեմն Բուտագովչի մեծարան գովեստները: Միայն բերդը՝ հասարակաց շինուածոց մէջ, բարեկարգ գտաւ. զի այլազգիք զայն նորոգելով, քանի մի ամրոցք ևս աւելցուցած էին. մնացեալ ամենայն ինչ աւերակի, դերրուկի երեւոյթ ունէր: Տասն և վեց տարուան միջոց անխնամ սալայատակք շատ տեղ աւրուած էին, չէն ու բազմամարդ քաղաքն ամայի և անմարդի կ'երևար. լեհաց կողուած հրապարակին կեդրոնը՝ անհեղեղ Կարաւան-Սարայ մի բարձրացած էր. քրիստոնէից չորս փառաւոր եկեղեցիքն՝ ՚ի մզկիթ փոխուած, որոց սևացեալ և ծեփաթափ որմունքն տխրագին տեսիլ կ'ընծայէին. նոցա գաւթաց մէջ կը վխտային խոցոտ և բորտեալ տնանկներ: Փրանկիակեանց վանքի երկղեցին, (որ այժմ եպիսկոպոսական եկեղեցի է Ռուսաց), նոյնպէս Ս. Կատարինէ եկեղեցին, զինուորական կահուց ամբարանոց եղած էին. Բիսուսեանց հոյակապ վանքն ախոռ դարձած, ուր քանի չափ նիհար ուղտեր և քանի մի վատոյժ ձիեր կապուած: Հայոց Ալետման և Ս. Նիկողայ փառաւոր եկեղեցին, աներդիք, անդուռն և անպատուհան բուռոց և ջղջկանց բոյն դարձած. պատերուն վրայ և գաւթաց մէջ՝ եղին և այլ մոլախոտեր բուսած. միւս երկու փայտաշէն եկեղեցիքն, մին մեծ՝ Վերափոխման Կուսին, հանդիպակաց Ս. Նիկողայ եկեղեցւոյն, Հայոց հրապարակին արևմտեան ծայրը, միւսը Ս. Ստեփանոսի, որ այժմեան Հայոց զանգակատան տեղը կը կարծուի, երկուքն ևս կրակի ճարակ եղած, տեղերնին, հետքերնին անգամ յայտնի չէր:

Ակորսոյի նշանակուած էր՝ ոչ ազգիս փառաց,

այլ թշուառութեան և տառապանաց ականատես լինել և վկայ. դեռ ևս փոքրիկ տղայ, գողցես հրաշքով ազատած հայրենի ծածֆին կրակին միջէն, այժմ ևս ոչ առաւել մխիթարական վիճակի մէջ կը գտնէր իւր ծննդեան քաղաքը: Ինչպէս ազգիւ շինութեանց աւերակները՝ նյնպոէս փնտոեց գտաւ նա՝ ազգիս փշրանք կամ խեղերանք քանի մի հայ ընտանիք, նոքա ևս հարստահարեալ և աղքատ վիճակի մէջ: Եւստ անգամ պատահեցաւ նմա մտնել Հայոց դատաւարանին մէջ, ուր աչքին ծայրով կը խուզէր գտնալ մնացորդ ինչ հայրենեաց: Նա իբրև թարգման՝ բան առ բան այլազգեաց քատրիկ ականջը կը հեղուր, դատելոց գրուցածները, իրաւունքները. ձեռքէն բան չէր գար, կամ խիստ քիչ բան կու գար պաշտպանելու իւր համազօրքը: Այն մեծ Հայոց հրապարակն, որոյ վրայ շինուած էր այդ դատարանն, որոյ երբեմն Հայոց առևտուրն և գործունեայ կեանքը մեծ շինութիւն և կենդանութիւն կու տային, խուլ և վայրենի փոզցոցի տեսիլ տւնէր: Նորա մեռելութիւնը երբեմն կը կենդանացընէին կեզտոտ որդիքն իսրայելի, և այլ երբեմն խեղճ քրիտոնեայ կախանաւորք, զորս յատեան հարցափորձի կը քաշէին չառաջներն:

Այս գրից մէջ մնաց կամենից 27 տարի մինչև 9 (169): Ակորսոյ տասը տարի ականատես եղաւ այդ սրտամաշ տեսարանին. այլ նորա ազնուական հոգին առաւել ընտրեց կալ մնալ հոն և վշտակից լինել ազգիս տառապանաց, քան ի վրովի մէջ հանգիստ կեանք վարել: Վարձատրեցին Երկինք նորա առարինութիւնքը. քիչ ժամանակէն պիտի տեսնենք զնա, սոյն այս աղետաւոր կամենիցի մէջ՝

միջանկապեալ կենօք և զուարթ, և բոլոր քաղաքը
պիտի օրհնէ զնա լիաքերան:

1693 ին Ամեննից Եորէն Լեհաց անցաւ, և ՚ի 18
սեպտեմբերի՝ նոյն տարին, ռատ և տնդ ցիր և ցան
Ամեննիցցիք մեծաւ ուրախութեամբ զարձան իրենց
ժննդեան տեղին: Սորա առաջնորդ և պարագլուխն
էր Մարտինոս Պօկուշ (Պօղոսովիչ) ծերունի հայ
գորավարն, սոցա հետ էր Հայր Միքայէլ վարդա-
պետը, որ իւր ծոցը կը կրէր երկու Հայ ազնուա-
կանաց կտակները, որք Ամեննիցի կարօտով,
յօտարութեան մէջ թողել էին ոսկործին, խոցի-
միրքի և Բուսազովիչ:

Սոցանէ առաջինն՝ օնփական տունը ՚ի Ամե-
նից՝ շրջապատ դեմնովը՝ կը թողուր Ս. Երրորդու-
թեան կարգի կրօնաւորաց, յորմէ էր և ինքն
Միքայէլ վարդապետ. այս պայմանով, որ իւր
ձեռատունի կակզի ծառոց խնամ տարուի՝ վասն
զի այլազգիք ևս խնայել, միանգամայն սիրել էին
նոցա հովանին: Մարգարիտէ իւր միակ գստեր կը
թողուր իլվովի տունը և այլ ամենայն շարժական
ստացուածք: Բուսազովիչ ծերունին ևս, որոյ
նոյնպէս խոստովանահայր եղած էր Միքայէլ վար-
դապետ, նոյն կարգին համար նոր շինուելու վան-
քին կը թողուր 500 զոքի: Այս ծերունի հայազ-
գիս՝ մեծ փափագ ունէր վերստին տեսնել Սմո-
լիթի գետոյն միջավայր կզգիացեալ Ամեննիցը, և

1. Խոցիմիրքի հայկազնոյն տան տեղը կայ այժմ դեղեց-
կաշէն եկեղեցի ՚ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեան, և
նորա ձեռատունի կակզիք ցարդ կու սփռեն իրենց մեծա-
տարած շուքը այդ եկեղեցւոյն և նորա շրջակայ քնակու-
թեանց վրայ:

մահուան անկողնոյն մէջ յիշած էր Փոտոզիոց պայծառ արեւը:

Բայց 'ի Պօղոսովէ և Միքայէլ վարդապետէ, նշանաւոր են Հայոց խմբին մէջ երեք այլ երիցունք՝ Ալանովիչ, Բարաքովիչ և Պօկտանովիչ: Առաջին երկուքն Ս. Նիկոլայ եղբայրութեան հոգաբարձուք եղած են, և նոցա յանձնուած է՝ կամենից մըտնելուն պէս՝ նայիչ պատրաստել Տիրամօր հրաշագործ պատկերին՝ պաշապանի ազգիս՝ վայելուչ և պատշաճաւոր տեղի. յետինս՝ Պօկտանովիչ մանր գրած է այլազգեաց 'ի կամենիցէ ելքը և մեծահանգէս կերպով եկեղեցեաց վերստին սրբուժը:

Հայոց 'ի կամենից վերադարձող խմբին մէջ, առանձին շուկ մի կը կազմէին կանայք, որոց վերակացուք էին շորս մայրապետք, այլ շատ բարեպաշտ այրիք, և ազնիւ օրիորդք, 'ի թիւն որոց՝ մեզ արդէն ծանօթ Խոցիմիրաքի հայազգւոյն դստրիկն՝ Մարգարիտէ, հասակակից և ընտանի Ակոբսոյ Ստեփանիկ հայ պատանւոյն:

Սա իր ազնուական ծնողացմէ ստացել էր ժառանգութիւն ոչ միայն նիւթական բարիք և ստացուածք, այլ և ազնուական սէր հայրենեաց և ազգին, այն ռաստիճանի՝ որ հաստատապէս միտքը դրած էր, որ եթէ օր մի արժանի լինի սուրբ պատկի, մի հայ երիտասարդի հետ, անպատճառ կամենիցի Հայոց եկեղեցեաց միոյն մէջ կատարուի այդ խորհուրդն իւր վրայ: Կամենից հասնելուն պէս՝ օրիորդից առաջին սրբազան գործն եղաւ՝ փնտռել գտնալ իւր սիրելի ծնողաց տան աեղը, և նստելով հայրատունկ կակղեաց հովանւոյն ներքեւ, ձեռն 'ի ծնօտի՝ լալ քաղցրիկ մօրը անդառնալի կորուստը, որ գինքն 'ի լոյս ընծայեա

լով՝ փակել էր աչքերը օտարութեան մէջ, Պետի պէս կը յորդէին արտասուք նորա նախշուն աչքերէն. առարինազարդ ծերունի հօր յիշատակը, որ զինքն անծայր սիրով կը սիրէր, միակ, որբ և անտէր, հայրենի տան դերբկին վրայ կը տեսնար ինք զինքը. նա չէր գիտել՝ որ նայն միջոցին՝ երբ ինք զինք իբրև թէ դերբուկին քարերէն մին, չէնքէ դուրս մնացած՝ անտէր և անոք կը կործէր, երկնաւոր՝ որոց և այրեաց խնամատ Հայրն, իրեն տէր և ապագայ կը պատրաստէր:

Փաշան պիտի մեկնէր Կամենիցէ. Ստեփանիկ նորանէ իւր հրաժարականն առնելով՝ զնաց դիմաւորելու եկաւոր կամ վերադարձող եղբարքը: Ամէնքն մեծ և փոքր, քահանայ և աշխարհական, պիտի կը թօթուէին այդ առաքինի երիտասարդին ձեռքը, ամէնքն պատիւ կը սեպէին իրենց նորահետ խօսակցիլը. անմիջապէս Միքայէլ վարդապետին մօտէն կը դառնար Ստեփանիկ, երբ նորա աչքին զարկաւ տխրագինն Մարգարիտէ, որոյ սրտին յուզմունքն և թափած արցունքներն՝ նոր գեղ, նոր շնորհք կու սփռէին նորա գեղեցիկ և պարկեշտ կերպարանաց վրայ. — « Այդ դու Մարգարիտէ », հարցական ձևով բացագանչեց Ստեփանիկ: Մարգարիտէ տեսաւ իւր դիմաց փառաւոր երիտասարդ մի, ծանօթ կերպարարանքով, այլ տասը տարուան միջոց մեծապէս փոխուած, այրական մեծամեծ պեխերն օյրած, կտրիճ նայուածքով, վայելչադէմ և վայելչահազմ, երեսը արևակէզ, զլուխը վայելուչ կարմիր ֆէս, որոյ ծոպը ետևի կողմէն կ'երերար: Խէպէտ և դա այն վայելչադէմ պատանեակն էր, որոյ հետ շատ տարի հայրենի ծածքին տակ անմեղութեամբ խաղացել էին. այլ

որչափ փոփոխութիւն: Սակայն և այնպէս Մարգարիտայի սիրաբը կռահեց, հագիւ կարողացաւ Ստեփանէ՛... անունը արտաբերել, ծունկքն երերացին, կապուեցան շրթունքը, արդէն սիրաբը յուզեալ էր: Այլ մեք թողլով առ այժմ այդ սրտագին տեսարանը՝ մտնենք Աամինիցի մայր եկեղեցին: Պայմանագիրը ստորագրուած էր, որոյ զօրութեամբ այլազգիք վերստին Լեհաց թողլով Աամինից քաղաքը՝ հարկ էր որ հեռանային, յետին անգամ ժողոված հին փառաշէն մայր եկեղեցոյն մէջ, զոր 'ի մզկիթ փոխած էին, կ'ստարեցին իրենց նամագը, յետոյ սանդուխներով դէպ 'ի կաթողիկէն վեր ելան մոլլաները, որ իջեցընեն հոն կախուած սրբազան դրօշակը: Երբոր հասաւ դրօշակը՝ վարը սփռած կերպասին վրայ, այնպիսի գոռում և գոչում վերուցին, որոյ նմանը շատ քիչ անգամ պէտք է լսուած լինի աշխարհիս վրայ: Ոմանք զգեստնին կը պատռէին, երեսի վրայ յերկիր կը կործանէին, մինչդեռ այլք պատկառանգը համբուրելով դրօշակը կ'ամփոփէին կերպասին մէջ, և տխուր եղանակաւ երգելով՝ կը հեռանային տանարէն:

Այնգին՝ քիչ հեռուն Լեհաց զօրքն կազմ և պատրաստ կանգնած էին, որոյ 'ի գլուխ ալևոր հին զօրավարն Պօկուչ, վար առնելով գլխէն ցցունսզարդ սաղաւարտը, կնքեց զինքը նշանաւ Ս. Խաչին, և ապա ծերունւոյն Սիմէոնի խօսքը կրկնեց. « Արդ արձակեա զժառայս քո, Տէր »:

Այս ամենայն կատարուեցաւ սեպտ. 22ին, երեքշաբաթի: Այս դէպքէս հինգ օր վերջը, այն է 27 սեպտ. 1699, առաւօտեան խուռն բազմութիւն ժողովեցան այս եկեղեցոյս մէջ, գրեաթէ

բարձր կամենիցի Հայկազունք և այլ ազգեր: Մի-
քայել վարդապէտ սրտաշարժ քարոզ մի խօսեցաւ
հաւատացելոց, որոյ աւարտման ժիշոց պարկեշտու-
թեամբ մօտեցան բեմին զոյգ մի, որոնք արդէն
իրենց առաքինութեամբ բազմութեան համակրու-
թիւնը գրաւած էին. Միքայել վարդապետ՝ աւե-
տարանին խօսքերով պատկեց և անլուծածնի կա-
պով կապեց զնսսա. համօրէն ժողովօրդք Հայք և
օտարք լիասիրտ մաղթեցին նոր պսակելոց՝ երջան-
կութիւն և բաղդ և շատ երկայն արև: Փետայն մեզ
ժանօթ Ակորսոյ հայ պատանին էր, որ կ'առնուր
Խոցիմիրքբի միակ դուստրը Մարգարիտէ: Հարս-
նետունն եղաւ Հայոց դատարանն, զոր հապճեպով
պատրաստեցին, փոխանակ աթոռներու՝ երկայն
երկայն նստարանները կապերաներով և գորգերով
յարդարելով. շատ էին հարսնևորքն, ամենեցուն
երեսին վրայ գոհութեան զուարթութիւն. շատ
մաղթողական բաժակներ պարպուեցան յերջան-
կութիւն հայ պսակելոց. դոպդոջուն ձայներով հայ
պառաւներ, յորդորարար հայերէն օրհնութիւններ
կը հեղուին պսակելոց գլխին. « Երկայն արև ինին,
ծլին ծաղկին. իրենց թոռներուն պսակները պազ-
նեն »: Եւ յիրաւի, հասած է նոցա լիաբերան
օրհնութիւնն. զի Ակորսոյ կամ Ակորսովիչ ցեղը՝
բազմածնունդ և երկար անուանի եղած է լեհա-
հայոց մէջ:

Պսակելոց արձանագրութեան մէջ, յետ գաղ-
թականաց դարձին, առաջին տեղ կը բռնէ Ակոր-
սոյի պսակման արձանագրութիւնն: Խոցիմիրքբայ
տնկած կակղիք՝ առիթ եղան ինձ ուշադրութիւն
գարձընելու այս դէպքիս, որոնք անբարբառ վկայք
երկու հարիւր տարի է որ կանգնած իրենց տեղը՝

եթէ լեզու ունենային՝ կարելի է ևս այսոր նման շատ դէպքեր աչ կը հաղորդէին, յանցեալ գնացեալ կամենիցի՝ Հայկազանց նկատմամբ:

Ժ

ՔԻԵՒ. ԵՒ ԱՆՏԻ ԴԱՐՁ Ի ԹԵՈԴՈՍԻԱ

Կամենիցի մէջ 12 օր շրջելէն վերջը՝ անկենդան, անցած, մարած Հայութեան հրաժարականս տալով, և յանձն լինելով Հրաշագործ Տիրամօրս Հայոց, համբայ ելայ դէպ 'ի Քիել՝ օեպտ. 1ին:

Կառօք 90 վերստ հարկ էր գնալ մինչև ցճրոսքուրով. այլ սրչափ տարբերութիւն քիչ օրուան մէջ. մէգ, մառախուղ, ցեխ. սահայն և այնպէս՝ երկրորդ կէս օրը հասոյց զմեզ կառավարն՝ Փրոսքուրովի հանգոյցին երկաթուղւոյն. ուստի և շուտով մեկնեցայ շոգեկառօք, և սեպտեմբերի երեքին՝ կէս օրը հասայ 'ի Քիել: Կայարանին տափածե բարձրաւանդակին վրայ կանգ առնելով կ'արժէ հայեաց մի տալ այդ Փղբը Ռուսաց մայրաքաղաքին վրայ, որ յիրաւի ականապարար և մոգակոն երևոյթ իմն կ'ընծայէ. բլրոց վրայ է քաղաքն, բուսականութիւնը ճոխ, որով կանաչութեան մէջ ընկղմած կ'երևի, վայելչաձև և նախշուն զանգահատունք գեղեցիկ կերպով աստի և՛ անտի 'ի վեր կ'ամբառնան, քաղաքին լայն և դարուվար սալալաստակներն՝ օձաձև կ'երևան, և այլ վիթխարի շէնքերն իբր 'ի մանրանկարի կը պատկերանան. ճշմարտապէս վիթխարի ասելու կ'արժէ մեծ և լայնանիստ համալսարանն՝ իւր պարտիզալ, որ

ամբողջ թաղ մի է: Համայնարանիս շէնքին մէջն է երից արևմտեան Ռուսոյ գաւառաց, այսինքն է Փիեւի, Փոտոլից և Վոլինի՝ հնութեանց զիւանն, յորում կը պահուին Հայոց կամենիցեան մագիստրատին գործերը՝ 104 տարուան միջոցի, այն է 1660—1664, միածալ, կաշեկազմն, լնամբով գրուած՝ 33 հատ կոճ հատորներ, սակայն որչափ կազմին և գրութեան ձևայն հոգ տարած են գրողք, կարծե՞ս նոյնչափ և աւելի ևս՝ անփոյթ եղած են լեզուին մաքրութեան. զի այդ գրուածքն անհնարին խաանուող մի են երեք լեզուաց՝ Հայու, թաթարի և լեհի: Առաջին երկու հատորքն՝ ազաւազ հայ լեզուով գրած են. 1693 էն կը սկսի թաթար լեզուն, խաան հայ և լեհ բառերով, սակայն միշտ հայ կոկիկ նօրոտգրով, 1695 էն տիրած է այդ գրուածոց մէջ լեհ լեզուն: Փիեւի մէջ մետասաներորդ դարէն սկսեալ՝ հարկաւ շատ հայ գաղթականներ բնակած են, այլ այժմ ոյնպէ՞ս բնաջինջ եղած են՝ որ և ոչ անգամ հետքերնին կ'երևի. քաղաքին հին փոտոլ կոչուած թաղին Ս. Նիկոլայ եկեղեցւոյն համար ինձ գրուցեցին, թէ հինէն Հայոց մնացած շէնք է. այլ ես զիտելով հայութեան ոչ մի նշոյլ չգտայ: Կան Փիեւի մէջ քանի մի հայ ընտանիք՝ սորս վերջին ատեններս 'ի Ղրիմէ՝ առևտրով հոն անցած են.

Փիեւ հին քաղաք է և առհասարակ Ռուսաց լուսաւորութեան կեզրոնն եղած է իւր հին ակադեմիայի. շատ անգամ մերթ լեհաց և մերթ Ռուսաց ձեռք անցած: Վերջին ժամանակներս մասնաւոր խնամք եղած է քաղաքին բարեկարգութեան վրայ. Գրեչաքիչ կոչուած՝ ընդարձակ և փառաշէն փողոցն՝ Աւրուպայի որ և իցէ քաղաքին

զարգ կարող է լինելու. փառաւոր է և մեծ Վլադիմիր փողոցն. ունի Քիեւ հարուստ և ճոխ եկեղեցիք՝ վերուստ 'ի վայր արժաթի խաչկալք. նշանաւոր են յայտ մասին՝ քաղաքէն դուրս՝ բերդին մէջ Լաւրայի վանքի եկեղեցիք, այլ արուեստ և ճարտարապետական ճաշակ կը պակասի սոցա:

Տներեր գետոյն եզերքը բարձրաբերձ նորաչէն եկեղեցին՝ հռչակեալ յանուն Նախակոչ Անդրէի առաքելոյ, իւր գեղեցիկ և չքեղ իտալական ճարտարապետութեան արուեստին և նկարուք՝ Եւրոպացի տաճարացմէ վար չի մնար: Հետաքննելի են քաղաքէն դուրս գետնափոր դամբաններու մէջ ամբողջութեամբ սրբոց տապանք, ուր Ռուսաստանի ամէն կողմէն ուխտաւորք կը յաճախեն. նշանաւորք են այդ նշխարաց մէջ Ռուսաց Նետտոր և Պիմէն ժամանակագրաց նշխարքն: Ընդարձակ է բարձրադիր Լեհաց եկեղեցին, այլ ներսի կողմէն անշուք, մանաւանդ աւագ խորանն, համեմատութեամբ Կամենիցի եկեղեցեաց:

Սեպտ. 9ին՝ ճեպընթացիկ շոգեկառօք ելայ 'ի ճանապարհ դէպ յՍտեասա: Քիեւի և Քերսոնի նահանգաց հացաշատ դաշտերն աշնանային տարազու մէջ էին. հունձք ժողոված, աստ և անդ յարդի և խոտոյ մեծամեծ դէզեր, անտառք և պարտէզք կիսամերկք, մնացեալ կարմիր և դեղին տերևներն կը սպասէին ցուրտ պախրցոյն՝ որ ազատէ գիրինք երերուն վիճակէն: Հասայ յՍտեասա սեպտ. 11ին, ուր քանի մ'օր մնալով, ամսոյն 17ին կանուխ առաւօտը հասայ շոգենաւով, երբեմն հայութեամբ նշանաւոր լիաֆայ, այժմ Թէոդոսիա: Ի վաղուց փափաքելի ճանապարհորդութիւնս՝ ամսուան մէջ կատարեցաւ, ցնորք և երևակայութիւնք աղետաւոր

իրականութեան մի դիմաց պարզեցան և ցրուեցան .
հարկ է ինձ, Աւարել պատմչին հետ, մեր կա-
մենիցցի եղբարց մասին ասել . « Եղեն վտարան ,
» գեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ
» այլաոսեռ և այլալեզու . . . և անդէն օր աւուր՝
» առ սահաւ սակաւ նուազին մահուամբ և կորըս-
» ռ տեամբ » , Աստուած ամուր պահէ՝ այլ տեղուանք
Քնացեալները : Անեցւոց մի ամբողջ մասն , քսան
հազարի շափ ժողովուրդ , հաւատարիմ իրենց նախ-
նեաց աւանդութեան , հայախօս և հայածէս Ղթն
գետոյն եզերաց վրայ կը դեգերին , մեծաւ մասամբ
կեդրոնացած հայահնչիւն Նոր-Նախիջեան քաղա-
քին մէջ :



Ց Ա Ն Կ Գ Լ Խ Ո Ց

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ո Ր Դ Ռ Ի Թ Ի Ի Ն

Ի Ն Ո Ր-Ն Ա Ի Ի Զ Ե Ի Ո Ն

Ա. Ի բրեւ յառաջաբանութիւն	1
Բ. Ի կերպէ մինչև ջրհայզան	4
Գ. Ազատու ժող	11
Դ. Հայոց է Ղրբմէ է Նախիջեւան դապիթեղուն պատ- ւանն	14
Ե. Գաղթականութիւն	24
Զ. Առաջնորդը գաղթական քրիստոնէից	26
Է. « Զք գեղեցիկ իմ կորուսեալ կայրեհիք . Ո՛վ յիշատակ աղետաւոր եւ քաղցրկ » :	31
Ը. Նոր Նախիջեւան	34
Թ. Եկեղեցիք և ուսումնարանք Նախիջեւանու	42
Ժ. Սուրբ խաչ վանք	48
ԺԱ. Գեղարեք նախիջեւանու	55
ԺԲ. Տօն կամբարձման դարձ է կաֆա	69

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Թ Է Ո Դ Ո Ս Ի Ո Ց

Ա. Յառաջաբանութիւն	77
Բ. Ընդհանուր տեսութիւն	82
Գ. Հին պատմութիւն կաւայի	85
Դ. Միջակ պատմութիւն կաւայի	90
Ե. Գեներացիք է կաֆա	94
Զ. Անեցի կայկազունք է Տաւրիա	96

Ե. Սուբզաթ, Բըսըժ և Կաֆա անուանց ծագման վերայ	106
Ը. Կաւա (Կաֆա-Քէֆէ) անունը	112
Թ. Մեծ դաղթահանութիւն հայոց ի Կաֆա առ գենուացւոյք	115
Ժ. Աշխարհաշէն գործունէութիւն հայոց ի Կաֆա	121
ԺԱ. Հին եկեղեցիք հայոց. — Սուբբ Սարգիս, Էն	124
ԺԲ. Վերափոխման եկեղեցի Հայ-Կաթողիկոսաց	134
ԺԳ. Կաֆայի քառասուն և չինգ եկեղեցիք	138
ԺԴ. Պարոն-Լոյս նոր նահատակ	142

Ո Ի Խ Տ Ա Գ Ն Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

Յառաջարանի տեղ	153
Ա. Ետլըթայէ մինչև յՕտեսաս	160
Բ. ՅՕտեսայէ մինչև ցԿամենից	165
Գ. Կամենից	169
Դ. Ութերորդ օր վերափոխման տօնին	173
Ե. Եկեղեցիք Հայոց	176
Զ. Պատմական անցք	186
Է. Տերամայրն Հայոց	198
Ը. Երգ առ նոյն սրբութեանց մայր	211
Թ. Արկածք Ակորսոյ կամենիցցի Հայազգի երիտաւ սարգին	215
Ճ. Քիււ ևւ անտի դարձ 'ի Թէոդոսիա	231

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

ՎՐԻՊԱԿԻՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջ	Ցույլ	ՍԻԱՆ	ՈՒՂԻՂ
30	5	հողեր	հողեր կան
43	30	այժմ	այժմ
45	31	զուսմար յօգուս	զուսմար ասուեր է յօգուս
106	8	Ֆայսրք	Ֆայսրք
158	11	կողմ	կողմ
168	12	ժողովրդապետն	ժողովրդապետն
168	22	Քերեհի	Քերեհ
184	2	Թրքած	Թրքաց
188	17	Մնի	Անի
188	29	ՍԱսարայ	ՍԱսարայ

